

Ժ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Խ Թ Յ Ո Խ Ն Ն Ե Ր

1. Ազրոսի վանքի մասին տե՛ս Առաջարանում, էջ VII:
2. Հոռմայեցիների կայսր Դիոկլետիանոս (284—305):
3. Միքայել I Ռանգարե (811—813):
4. Թեոփանեսի օգտագործած ժամանակագրության (խրոնոլոգիայի) մասին տե՛ս Առաջարանում, էջ XII—XIII:
5. Գեորգիոս Սինկելլոսը, VIII դ. վերջի և IX դ. սկզբի բյուզանդական մատենագիր: Դրել է «Ժամանակագրություն» աշխարհի արարչագործությունից մինչև Դիոկլետիանոս կայսրը (284): Նրա երկը պահպանվել է: Տե՛ս Georgius Syncellus et Nicephorus CP. Ex recensione Guillelmi Dindorfii, vol. I—II, Bonnae, 1829.
6. Տարասիոս պատրիարք Կոստանդնուպոլսի (784—806):
7. «Սինկելլոս» բառացի նշանակում է «խցակից», նույն խցում ապրող: Նա պատրիարքից հետո եկեղեցական առաջին անձնավորությունն էր: Նրա հիմնական պարտականությունն էր պատրիարքի և կայսեր միջև կապ պահպանելը:
8. Թեոփանեսի Առաջարանի մասին հատուկ տե՛ս Чучуров, К проблеме, էջ 206 և հտ.:
9. Փոկաս կայսր (602—610): Մազումով կապաղոպկացի էր:
10. Խոսրով II Ապրվեզ (590—628):
11. Կիրիակոս պատրիարք (595—606):
12. Իսահակ (կամ Հեսիֆիոս) պատրիարք (601—609):
13. Եվլոգիոս պատրիարք (581—608):
14. Անաստասիոս Բ պատրիարք (599—609):
15. Ինդիկատիոնի՝ 15-ամյա շրջանի մասին տե՛ս «Կոստանդին Միռանածին», էջ 230:
16. Այսինքն՝ Թեոփանեսի «Ժամանակագրության» մեր շնորհաբերած մասում:
17. Մավրիկիոս (հայկական աղբյուրներում՝ Մօրիկ, Մուրիկ) կայսրը (582—602), որին որոշ հեղինակներ (Կ. Տեր Սահակյան, Հայ կայսերք Բյուզանդիոնի, հտ. Ա, էջ 25—125: Adontz, Les legendes, p. 123—133: Grégoire, Maurice le Marcioniste, p. 395—396: Grousset, Histoire, p. 247) համարում են հայազգի: Հայկական աղբյուրներից Մավրիկիոսի ծագումով հայ լինելու ավանդությունները հիշատակում են Կեղծ Շապուհ Բագրատունին (Πсевδο-Μανυχ Βαγρατιου, стр. 47—49), որը նրան անեցի է համարում, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը (էջ 141), որի համաձայն նա օշականցի էր, և Կիրակոս Գանձակեցին («Պատմություն հայոց», էջ 46), որի ասելով կայսրն էր «Ի Հայոց, յՕշական գեղջէ, և այլք՝ թէ ի Տարօնոյ», մի այլ տեղում՝ «Կէսք ասեն զնա յԱրփսուս գեղջէ Կապաղովկացոց» (էջ 50): Ինչպես տեսնում ենք, միայն Գանձակեցին է հիշտ նշում նրա ծննդավայրը՝ Կապաղովկիայի Արաբիսոս քաղաքը (աղբյուր ունենալով Միքայել Ասորու «Ժամանակագրությունը»): Այս ավանդությունները ուշ շրջանից են գալիս:

Ժամանակագրական տեսակետից ամենամոտիկ Սեբեոսը ոչ մի խոսք չի ասում Մավրիկիոսի հայկական ծագման մասին: Ժամանակակից ասորի պատմիչ Հովհան Եփեսացին, Թեոփիլակտոս Սիմոկատտան նույնպես զաղափար չունեն Մավրիկիոսի հայկական ծագման մասին: Մավրիկիոսին անձնապես ծանոթ Եվագրիոսը (*Evagrii Historia*, col. 2832) նրան համարում է հռոմայեցի, ծննդավայր նշելով Կապադովկիայի Արաբիսոս քաղաքը, իսկ լատին պատմիչ Պոզոս Սարկավազը՝ հույն, առաջին հույն կայսրը բյուզանդական գահի վրա (*Pauli Diaconi Historia*, p. 100): Այսպիսով Մավրիկիոսին ժամանակակից և ոչ մի պատմիչ նրան հայ չի համարում: Այդ վարկածը հանդես է գալիս ավելի ուշ IX դ. բյուզանդական պատմիչ Գեորգ Վանականը նրան հայ է համարում (*Georgii Monochi Chronicon*, t. II, p. 656, 662): Նույն բանն է ասում նաև XIII դ. հեղինակ Յոհիլը (*Μετὰ Τιβερίον ἐβασίλευσε Μαυρίκιος, Ἀρμένιος: Ioelis Chronographia*, p. 45):

Նշենք այստեղ, որ Մավրիկիոսի ընտանիքի բազմաթիվ անդամներից և ոչ մեկը չէր կրում հայկական անուն: Այսպիսով միակ հավանականը Պ. Գուբերի տված բացատրությունն է: Արաբիսոս քաղաքը գտնվում էր Կապադովկիայում, որն աշխարհագրական առումով Հայաստան էր կոչվում: Հիերոկլեսի Սինեկդեմոսում (IX դ.) ցույց է տրված, որ Երկրորդ Հայքում են գտնվում հետևյալ քաղաքները. Մելիտինե, Արկա, Արաբիսոս, Կուկուսոս, Կոմանա և Արիարաթիա: (*Hieroclis Synecdemos*, p. 38: Հմմտ. Նեղոսի Դոքսագատոսի Կարգազրույթին, էջ 30: Տե՛ս նաև Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 69. «Իսկ զԿապադովկիայի, յորում մայրաքաղաքն է Կեսարիա՝ և Երկրորդ Հայք նախ անուանիր»): Աղբյուրներում սովորական բան է, երբ մի երկրի վարչական-աշխարհագրական անունը տարածվում է նաև այդ տարածքի վրա բնակվող բնակչության վրա: Մավրիկիոսը, ամենայն հավանականությամբ, ծագումով հռոմայեցի էր, բայց ծնվել էր Կապադովկիայում հաստատված և հունախոս դարձած ընտանիքում (*Goubert, Maurice, Նույնի. Byzance*, t. I):

18. Տրիբունալիոնի Կամպոսը (*Campus tribunalis*), այսինքն զորքերի հավաքատեղի: Գտնվում էր Հեբդոմոնում, ժամանակակից Բաքըրբյոյի (հնում՝ Մաբրիբյոյ) արևելքում: Կայսրերի հռչակման վայրն էր (*Janin, Const. byz.*, p. 412): Հետաքրքրական է նշել, որ Մավրիկիոսը, թեև իր իշխանության օրոք ատելի էր և՛ «սուղափառների», և՛ միաբնակների շրջանում, իր նահատակությունից հետո «սուղափառ» և հակորիկ եկեղեցիների կողմից սրբացվեց (հիշատակը նշվում է նոյեմբերի 28-ին: (*Σταυροῦ, Τὸ Βυζάντιον, Α΄, σελ. 44, 133*): Մավրիկիոսն ունեւ ինն երեխա՝ վեց տղա և երեք աղջիկ: Նրանց անուններն էին՝ Թեոդոսիոս, Տիրերիոս, Պետրոս, Պավղոս, Հուստինոս, Հուստինիանոս, Անաստասիա, Թեոկտիստե և Կլեոպատրա (*Chronicon Paschale*, vol. I, p. 693): Մահապատժի ենթարկվեցին Տիրերիոսը, Պետրոսը, Հուստինոսը և Հուստինիանոսը (նույն տեղում, էջ 694):

19. Թեոփանեոսը և՛ բյուզանդական կայսեր, և՛ պարսից արքային կոչում է βασιλεύς — թագավոր: Ելնելով հայկական ավանդությունից, մենք «կայսր» ենք կոչելու բյուզանդական βασιλεύς-ին, իսկ պարսից թագավորին՝ արքա: Նշենք, որ բյուզանդական վեհապետները պաշտոնապես βασιλεύς տիտղոսը ստացան 629 թ.: Տե՛ս *Ostrogorsky, Autokrator*, S. 98—99 (apud *DAI*, II, p. 9):

20. Այդ մասին դիտե և Սեբեոսը. «Եւ էր որդի մի կայսերն Մարկայ, անուն նորա Թէոդոս: Լուր համբաւոյն ելեալ տարածանէր ընդ ամենայն երկիր, եթէ զերծաւ Թէոդոս և զնաց առ թագաւորն Պարսից» (*Սեբեոս*, էջ 106): Երբ Փոկասի դեմ ապրս-

տամբեց նշանաւոր զորավար ներսեւը, ապա նա պարսից արքա Խոսրովի մոտ մի երիտասարդ ուղարկեց՝ «զարդարեալ թագաւորական հանդերձիւ...» ասելով. «Դա է որդի թագաւորին Մաւրկայ, Թէոդոս, և արասցես ի վերայ դորա ողորմութիւն», որպէս և հայր դորա ի վերայ քոյ» (նույն տեղում էջ 107): Խոսրովը հիշյալ անձնավորութիւնն օգտագործեց հետագայում: Նա Հերակլիոսի թագավորութեան սկզբում, դիմելով բյուզանդական կայսեր ասաց. «Ես զԹէոդոս զորդին Մաւրկայ նստուցի թագաւոր» (Սեբեոս, էջ 113): Երբ 608 թ. պարսիկները պաշարեցին Կարինը, հիշյալ Թեոդոսը դիմելով քաղաքի բնակիչներին, ասաց. «Ես եմ... թագաւորն ձեր», որի վրա Կարնո բնակիչները նրա առջև բացեցին քաղաքի դռները (Սեբեոս, էջ 111):

21. Բյուզանդական կայսրերը պաշտօնապէս իրենց կոչեցին «Հռոմայեցիների թագավոր» (βασιλεὺς Ῥωμαίων), իսկ պետութիւնը՝ «Հռոմայեցիների թագավորութիւն» (Ῥωμαίων βασιλεία) 812 թ. ընդգծելու համար բյուզանդական կայսեր գերազանցութիւնը՝ ֆրանկների թագավորի հանդեպ, որի «ֆրանկների թագավոր» (βασιλεὺς τῶν Φράγγων) տիտղոսը Բյուզանդիան ճանաչեց հենց այդ թվականին: *St' a DAI, II, p. 9—10:*

22. Այլ աղբյուրների համաձայն, այս դեսպանը կոչվում էր Լիլիոս: Նա էր Մավրիկիոսին և նրա որդիներին ձերբակալողն ու մահապատժի ենթարկողը:

23. Այսինքն՝ Մավրիկիոսի կնոջ:

24. Երրորդ դարից սկսած Ավգուստալիոս (praefectus Augustalis) էր կոչվում Եգիպտոսի փոխարքան:

25. Չշփոթել Հուստինիանոս I-ի ժամանակ անուն հանած Նարսես ներքինու հետ: Զինվորական ասպարեզ իջալ դեռևս Հուստինոս II-ի ժամանակ: Տիրերիոս կայսեր օրոք ասպագա կայսր Մավրիկիոսի փոխզորավարն էր և դեռ այն ժամանակ աչքի էր ընկել պարսիկների դեմ մղվող պատերազմում: Հավանաբար Հայաստանում կարևոր պաշտոն էր վարում, քանզի 595 թ. Մավրիկիոսի ժամանակ, զորավար Ֆիլիպպիկոսը նամակ է գրում Հերակլիոսին (ասպագա նույնանուն կայսեր հոր) իր զորքերով «զնա Հայաստան, Նարսեսի մոտ» (εις Ἀρμενίαν παραγενέσθαι πρὸς Ναρσῆν. *Theoph. Chron., I, p. 279*): Վահրամ Չուբինի ապստամբութեան ճնշմանն էլ (591) Նարսեսը, ստրատելատ Հովհաննես Մուստակոնի հետ մեծ դեր է խաղացել: Նարսեսը 6000 ապստամբների հանձնել է Խոսրով արքային և նրան դահի վրա հաստատելուց հետո ասել է. «Հիշի՛ր, Խոսրով, այս օրը, հռոմայեցիներն են քեզ շնորհել թագավորութիւնը» (նույն տեղում, էջ 267):

Նարսես զորավարի ապստամբութեան մասին տե՛ս և Սեբեոսի երկում. «Եւ յԱսորւոց կողմանէ ապստամբեալ ներսէս զաւրավար ի Միջագետս Ասորւոց, և հանդերձ զաւրու իւրով մտեալ բռնանայ յՈւրհայ քաղաքի» (Սեբեոս, էջ 106): Պատմիչը տալիս է բազում կարևոր մանրամասնութիւններ: Նրա ասելով Խոսրովը Դարայից գալիս է Եգիպտոս՝ ընդդէմ Ներսեսին պաշարած Փոկասի բյուզանդական զորքերի, ջարդում ու փախուստի մատնում նրանց: Պաշարյալները բացում են քաղաքի դարբասները պարսից արքայի առջև: Ահա սրանից հետո Խոսրովը երկրորդ անգամ գնում է Դարա, տարի ու կես պաշարում այն և գրավում: Սակայն այդ միջոցին բյուզանդական մի այլ զորք հարձակվում է Եգիպտոսի վրա, գրավում քաղաքը և ըստ հայ պատմիչի «կալեալ զՆերսէս սպանին և արին հեղին» (Սեբեոս,

էջ 107): Թեոփանեսի ասելով նարսեսը փախալ Հիերապոլիս, ապա խաբվելով եկավ Կոստանդնուպոլիս, ուր և մահապատժի ենթարկվեց (տե՛ս և ծանոթ. 39):

Ավելորդ չէ նշել, որ ըստ Ղ. Ալիշանի, ներսեսը ծագումով Կամսարական էր (Ալիշան, Շիրակ, էջ 5):

26. «Մագիստրոս» պատվաստիճանի մասին տե՛ս «Կոստանդին Միրանաձին» էջ 217: Այստեղ Թեոփանեսը Դոմենցիոլոսին համարում է Փոկասի եղբայր, մի քիչ հետո խոսում է «զարմիկ» Դոմենցիոլոսի մասին: Հավանաբար տարբեր անձնավորություններ են:
27. «էքսկուրիտորների կոմես»-ի մասին տե՛ս «Կոստանդին Միրանաձին» էջ 299—300, 310:
28. Կայսրերը սովորություն ունեին նշանավոր դեպքերի առիթով ժողովրդին դրամ բաշխել: Այդ բանը կոչվում էր *ἐπατεία*, հյուպատոսություն, քանզի հին Հռոմում հյուպատոս (կոնսուլ) հռչակվելու առթիվ նրանք ժողովրդին դրամ էին գցում: Այդ սովորությունն անցավ Բյուզանդիա և կայսրերը գահ բարձրանալու կամ այլ երևելի մարդիկ տիտղոս ստանալու առթիվ նույն բանն էին անում:
29. Կոստանտինեն (Թելլա դե Մաուզելաթ): Հին քաղաք Միջագետքում, Դարայից 75 կմ արևմուտք: Նրա ավերակ դարձած պարիսպները վերականգնել էր Հուստինիանոս I-ը: Տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», էջ 176—177:
30. Բնագրում *χίλδρος*: Խոսքը ավարների ցեղապետի մասին է: Բյուզանդական կառավարությունը երկիրն այդ բարբարոսների հարձակումներից զերծ պահելու համար տարեկան որոշակի գումար էր վճարում նրանց: Սերեոսը նրան անվանում է «Մեծն խաքան», «արքայ կողմանցն հիւսիսոյ» (Սերեոս, էջ 104):
31. Բնագրում *παχτα*: Բառը չենք թարգմանում, քանզի հանդիպում է և հայկական աղբյուրներում (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Սրբելի, Երևան, 1966, էջ 38): Այն ունի լատինական ծագում (*pactum*) և նշանակում է պայմանագիր, պայման, կարգադրություն, նաև հարկ: Պակտի մասին տե՛ս Բաբրիկյան, Հարկերի մասին, էջ 168—173:
32. Սահմանամերձ նշանավոր քաղաք-ամրոց: Գտնվում էր պարսից սահմանամերձ Մծբին քաղաքի դիմաց և կառուցվել էր Անաստասիոս կայսեր կողմից: Բյուզանդիայի համար ստրատեգիական խոշոր նշանակություն ունեւր: Պրոկոպիոս Կեսարացու ասելով «եթե որեւէ փորձանք պատահի Դարա քաղաքին, որը հոռմեական պետության պատվարն է և բացեիքաց կանգնած է թշնամու երկրին դեմ հանդիման, ապա աղետը այդքանով չի վերջանալու, դրա հետ միասին սասանվելու է ամբողջ պետությունը»: «Պրոկոպիոս Կեսարացի», էջ 167—168:
33. Կոչվում էր նաև Մենքիջ (Մամբիջ): Հնագույն քաղաք Ասորիքի հյուսիսարևելյան՝ Եփրատից մինչև Ամանոս լեռը ձգվող և հնում Կյուրեստիկե կոչվող մասում, Եփրատի աջ ափից ոչ հեռու Անտիոքից Եղեսիա տանող ճանապարհի վրա: Սկզբնական շրջանում կոչվում էր Բամբյուկե, Հիերապոլիս կոչվեց Սելևկոս թագավորի կողմից: III դարում դարձավ հոռմեական Եփրատ պրովինցիայի կենտրոնը և Ասորիքի խոշորագույն քաղաքներից մեկը: Հիերապոլիս ավերակները գտնվում են Հալեպի մոտ, ժամանակակից Մանբիջ գյուղում:
34. Բնագրում *Αρζαρούχ*, ասորերեն Խարզամ, այժմ՝ Թելլ Խարզեմ՝ Մերդինից հարավ-արևմուտք:
Զոնգոնս (պրսկ. Zengōl):

36. Կուրապաղատ պատվաստիճանի մասին տե՛ս «Կոստանդին Սիրանաժին», էջ 214: Սանրամասն՝ Guiland, Le Curopalate, p. 187—229: Այս հոդվածի մասին տե՛ս Բարթիկյան, Հայագիտական նյութեր, էջ 101—102: VII դ. կուրապաղատների մասին (հայկական աղբյուրների տվյալների լայն օգտագործմամբ) և Գիլյանի վերահիշյալ հոդվածում թույլ տված սխալների ուղղմամբ, տե՛ս Σ τ ρ á τ ο υ, Οἱ „Κουροπαλάται“, σελ. 51—56:
37. Կարդարիզանը անուն չէ, այլ տիտղոս (Justi, Iranische Namenbuch, S. 156): Ինքը՝ Թեոփանեսը գրում է, թե «Կարդարիզասն հատուկ անուն չէ, այլ բարձրագույն աստիճան պարսիկների մոտ» (Theoph. Chron., I, p. 253): Ընդունված էր բարձրաստիճան անձնավորության աստիճանը հիշատակել, քան անունը: Ավելի ուշ շրջանում նույն բանը հանդիպում է և հայկական աղբյուրներում, որտեղ որպես հատուկ անուններ են հիշատակվում «Դեմեստիկոսը», «Պարակամանոսը», «Տելիարիսը» (դամեստիկոս, պարակիմոմենոս, էտերիարիս): Մովսես Կաղանկատվացին նրան հիշատակում է Քրտակարին ձևով (էջ 152): Անունը, հավանաբար, նույնանում է ուշ միջնադարում մեկ անգամ հանդիպող «Քրտիկեարութիւն» անվան հետ: Տե՛ս Бармукаш, Об армянской памятной записи. Ըստ Ստրատոսի (Σ τ ρ á τ ο υ, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 156) տվյալ Կարդարիզանը նույնանում է Սերեոսի «Աշտատ Յեզտայար» զորավարի հետ (Սերեոս, էջ 111):
38. Բնագրում Ρουστιάζαν, որ համապատասխանում է Սերեոսի «Խոռեամ, որ Ըռագմանն անուանեալ, զաւրագլուխ»-ին (Սերեոս, էջ 110): Մի այլ տեղում՝ «զաւրավարն Նոցա անուանեալ Ռագմիսդան, որ է Խոռեամ» (նույն տեղում, էջ 115): Տարարին նրան անվանում է Ֆարուխան (Σ τ ρ á τ ο υ, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 152): Նա նույնանում է մի փոքր հետո հիշատակվող պարսիկ զորավար Շահրվարազի հետ, որ անուն չէ, այլ տիտղոս՝ «Կայսրության վարազը» (Σ τ ρ á τ ο υ, նույն տեղում): Տե՛ս և ծանոթ. 134:
39. Նարսեսին Դոմենցիսոսն ուղարկեց Կոստանդնուպոլիս, ուր և Փոկասի կողմից ուխտադրժորեն ողջակիզվեց Չիարշավարանում ժողովրդի աչքի առջև: Այս զեպքը տեղի ունեցավ 605 թ. վերջին կամ 606 թ. սկզբներին: Սերեոսի համաձայն բյուզանդական զորքերը գրավեցին Ուռհան, որտեղ «կալեալ զներսէս սպանին և արին հեղին» (Սերեոս, էջ 107): Տե՛ս ծանոթ. 25:
40. Պատրիարք Թովմաս Ա (607—610 թթ.):
41. Սկզբնական շրջանում սքոլաստիկոս (σχολαστικός) էին կոչվում 7 ազատ արվեստների ուսուցիչները, հետագայում՝ փիլիսոփայությամբ ու աստվածաբանությամբ զբաղվող, բնդհանրապես ուսումնական, եկեղեցու հայրերի փիլիսոփայությունն ուսումնասիրող մարդիկ:
42. Այս շրջանի պատրիկների մասին տե՛ս Guiland, Les patrices du VII^e siècle, p. 11—24: Իսկ առանձնապես լեոն III Իսավրացուց սկսած մինչև Միքայել II-ի թագավորությունն ընկած ժամանակաշրջանում աղբյուրներից հայտնի պատրիկների մասին՝ Guiland, Les patrices. Du règne de Léon III l'Isaurien au règne de Michel II, p. 317—360):
- Պատրիկների մասին բնդհանրապես՝ «Կոստանդին Սիրանաժին», էջ 212—213: Yannopoulos. La société, p. 48—50: Ամենահաճախ հիշվող տիտղոսն է աղբյուրներում: Այն կրում էին բարձրագույն պաշտոնյաները, փաստ, որ վկայում է տիտղոսի շատ պատվաբեր լինելը: Կար և պրոտոպատրիկ տիտղոսը, որը կրում էր

Օպսիկիոն բանակաթեմի զորավար հայազգի վարադ-Քակուրը (տե՛ս վերը, էջ 93)։ Այդ տիտղոսի էությունը դեռևս պարզված չէ։ Ամբողջ հարցն այն է, որ այդ տիտղոսը լեոն II կայսեր կողմից շնորհվել է և սահմանակից մի արար ցեղապետի։

43. Սբ. Սոֆիա տաճարը։

44. Կոստանդնուպոլսի բնակչությունը կազմակերպված էր միությունների մեջ, որոնք դեմոսներ էին կոչվում (δημοί)։ Սրանք իրենց հերթին բաժանվում էին «կողմերի» (μερτι), որոնք առաջացան որպես սպորտային միություններ՝ Զիարշավարանում։ Բյուզանդիայում կային չորս «կողմեր»՝ կապույտների, կանաչների, սպիտակների և կարմիրների։ Սպիտակները հանդես էին գալիս կապույտների հետ, իսկ կարմիրները՝ կանաչների։ Ժամանակի ընթացքում այս կողմերը վերածվեցին քաղաքական կուսակցությունների, ընդ որում կապույտները պաշտպանում էին բնակչության առավել բարձր խավերի շահերը, իսկ կանաչները՝ ցածր, գլխավորապես առևտրաարհեստավորական խավի։ Դեմոսների ռազմական պարագլխին նշանակում էր կայսրը։ Սովորաբար նա սխուրիի դոմեստիկոսն էր կամ էքսկուրիտորների կոմեսը (Στρατόν, Τό Βυζάντιον, Α', σελ. 38)։ Քաղաքացիները՝ դեմոսները արձանագրված էին ցուցակում (կատալոգում)։ Մավրիկիոսի ժամանակ արձանագրված պրասինոսները 1500 հոգի էին, իսկ կապույտները՝ 900 (Στρατόν, նույն տեղում, էջ 40, 110)։ Դեմոսներին ուժեղ հարված հասցրեց Հուստինիանոս I-ը՝ 532 թ. «Նիկայի» ապստամբության ճնշումից հետո։ VII դ. կեսերից «կողմերը» դադարում են զգալի դեր խաղալուց։

45. Զիարշավարանի մուտքի ոլորապտույտ աստիճաններից մեկն էր, որը ձիարշավարանը հաղորդակցում էր կայսերական պալատի հետ։

46. Դեմոսի, երկու հիմնական կազմակերպությունների ղեկավարները։ Կային վենետների (կապույտների) և պրասինոսների (կանաչների) դեմարքոսներ (Bury, IAS, p. 138)։

47. Բնագրում՝ τάλαντον։ Կոչվում էր նաև կենտինար։ Հավասար էր 160 լիտրի (մեկ լիտրը՝ 72 ոսկեդրամ) ոսկու, հետևաբար՝ 7200 ոսկեդրամի (դահեկանի)։

48. Բոնի հոգևորական, վանական «խուզելը» Բյուզանդիայում պատիժ էր, քաղաքական հակառակորդին հրապարակից վերացնելու միջոց։

49. Սերենոսի ասելով՝ «էր լեալ Փիլիպիկոսս այս փեսայ կայսերն Մաւրկայ, և բազում ժամանակաւ արարեալ զաւրավարութիւն գործէր զմարտից յաղթութիւն։ Եւ ապա յանկարծաւրէն արկեալ ի միտս իւր անդրէն յաւուրս Մաւրկայ թագաւորութեանն, կտրեալ զհերս գլխոյ իւրոյ և զգեցեալ զբահանայութիւն՝ զինուորեցաւ յուխտ եկեղեցւոյ» (Սերենոս, էջ 114)։ Բայց հետագայում զսա բռնադատեալ Հերակլի, կարգէ զաւրավար և արձակէ ի կողմանս արեւելից զաւրու մեծաւ» (նույն տեղում)։ Թեոփանեսը այդ մասին ոչինչ չգիտէ, ոչ էլ այն, որ նա բանակի գլուխն անցած եկավ Այրարատ գավառը և բանակից Վաղարշապատի դաշտում, ապա շարժվեց դեպի Շիրակ և Վանանդ, որտեղից էլ՝ Կարին։

50. Հնում Քաղկեդոնի մաս էր կազմում, XII դ. սկսեց կոչվել Սկուտարիոն, այժմ՝ Կոստանդնուպոլսի Ուսկյուդար թաղամասը։

51. Կայսեր գանձապետը։ Կոչվում էր նաև ταμία των βασιλικῶν χρημάτων (կայսերական գանձապետի գանձապետ)։ Աղաթիաքը պարզ դրում է, թե նա գործ ուներ ոչ թե հարկերից հավաքված գրամի հետ, այլ կայսերական գանձարանի

- Agathias, III, 2): Սակելարիոսը մտնում էր σεχρετικός. կոչվող դասի մեջ, որը հիմնականում ֆինանսներով էր զբաղված (Bury, IAS, p. 84—86):
52. Քեոդորոս Սկրիբոն (608—609):
53. Պալատն իր անունը պարտական է Արկադիոս կայսեր դուստր Մարինին: Գտնվում էր Կոստանդնուպոլսի Ակրոպոլսի մոտակայքում:
54. Տե՛ս ծանոթ. 44:
55. Քարգմանարար նշանակում է սշորս սյուն: Չորս սյուներով խորան կամ սրբարան:
56. Բնադրում՝ λαυράτον (հիշա՛ր՝ λαυρεάτον, լատ. laureatus): Դափնիներով հյուսված կայսեր պատկերը կամ արձանը (Σ τ ρ ά τ ο υ, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 184):
57. Ստաման (կոչվում էր և «Պի» հունարեն Π* տառի ձևից) Ձիարշավարանի այն տեղն էր, որտեղ կանգ էր առնում թափորը՝ կայսեր ողջունելու համար (Guilland, Etudes sur l'Hippodrome, p. 37—44): Բառը ծագում է ἵππῳ «կանգնել» բայից:
58. Պրոտոկուրսոր (πρωτοκουρσωρ, princeps cursorum): Պալատական պաշտոն, կուրսորների (կայսերական սուրհանդակների) առաջինը: Ըստ Շլյուսերի պրոտոկուրսորը և պրոտոմանդատորը (սրա մասին տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 309) նույն պաշտոնյայի տարբեր անվանումներն են, թեև ոչ մի աղբյուր չի հաստատում այս կարծիքը: Տե՛ս Yannopoulos, La société, p. 60. ծանոթ. 355:
59. Գրամմիստես՝ սրբապատկերների նկարիչ (Lampe, Lexicon, p. 322):
60. Էպարքոսի (քաղաքապետի) մասին տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 298:
61. Արևելքի էպարքոսը: Այստեղ, հավանաբար, խոսքը Praefectus Praetorio Orientis-ի մասին է:
62. Մի քիչ հետո (A. M. 6101) Քեոփանեսը գրում է, որ Փոկասը այդ թվին հրամայեց զիսատել Էլպիդիոսին, մոռանալով, որ 6099 թ. նա արդեն սպանված էր: Քեոփանեսը երկու դավադրություն է հիշում Փոկասի դեմ՝ 607-ին և 609-ին, այնինչ Ջատկական ժամանակագրությունը՝ մեկ և ցույց է տալիս, որ մահապատիժները ի կատար ածվեցին 605 թ. հունիսի 7-ին (Σ τ ρ ά τ ο υ, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 174):
63. Եվտրոպիոսի մոլոսը (նավահանգիստը) Քաղկեդոնի երրորդ նավահանգիստն էր: Անունը ըստ մի աղբյուրի պարտական է Կոստանդին Մեծի ժամանակ գործած պրոտոսպաթար և քվեստոր Եվտրոպիոսին, թեև հայտնի է, որ նավահանգիստը կառուցել է Հուստինիանոս I-ը:
64. Նախնական անունն էր Ակոնե կամ Ակոնիտիս: Թուրքերն այն այժմ կոչում են Կենալիադա (կարմիր կղզի) իր հողի գույնի պատճառով:
65. Ինչպես անունն է վկայում, պիտի որ ազգակցական կապ ունենա Հուստինիանոս I կայսեր ժամանակ անուն հանած հայազգի Սիստաս գորավարի հետ, որին 528—529 թթ. կայսրը նշանակել էր magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes: Նրա մասին տե՛ս Αδοικ, Армения, стр. 133—139:
66. Սուբադիուրա (լատ. subadjuva) նշանակում է օգնական, ծառա, թիկնապահ: Ըստ Կոստանդին Միրանաժինի մագիստրոսը նրա միջոցով կապ էր պահպանում օտար ղեկավարների հետ (De Cer., I, p. 403):
67. Բնադրում՝ χαρτοφύλαξ (խարտոֆիլաքս): Եկեղեցական պաշտոն, որ տրվում էր երեցների կամ սարկավազների: Կոչվում էր եպիսկոպոսի բերանը և աչքը: Վարում էր եպիսկոպոսի քարտուղարի պաշտոնը և եպիսկոպոսի մնայուն ներկայացուցիչն էր:

68. Նիկեփոր պատրիարքը գրում է, թե ժողովուրդը երգ էր հորինել, որի բովանդակությունն այն էր, թե պարսիկները հռոմայեցիների պետությունը դրսից են ավերում, իսկ Փոկասը՝ ավելի վատթարը ներսում է անում (*Nicephori Breviarium*, p. 3):
69. Նիկեփոր պատրիարքի համաձայն նրա անունը Գրիգոր էր և ոչ Գրիգորաս (*Nicephori Breviarium*, p. 4):
70. Խոսքը հացահատիկով բեռնված նավերը Կոստանդնուպոլիս առաքելու մասին է: Կոստանդնուպոլիսը հացահատիկ էր ստանում Եգիպտոսից:
71. Թեոփանեսը բյուզանդապարսկական պատերազմը Փոկասի թագավորության ժամանակ շատ համառոտ է նկարագրում: Նա գրեթե ոչինչ չի ասում Հայաստանի մասին, որը փաստորեն կոիվների թատերաբեմն էր: Դարայի կոիվներին նախորդող տարում մեծ ճակատամարտ տեղի ունեցավ Եղվարդում, որտեղ սպանվեց պարսից զորավար Զուան Վեհը և պարսիկները պարտություն կրեցին (Սեբեոս, էջ 108): Իսկ Դարայի մարտերի տարում պարսիկները Դատոյան զորավարի գլխավորությամբ ճակատամարտ տվեցին Գետիկ գյուղում և հաղթեցին: Ճակատամարտ է տեղի ունեցել նաև Մադկոտն գավառի Անգղ գյուղում, Արածանի գետի ափին, ինչպես և Բասենում (Սեբեոս, գլ. 1Բ. Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 73):
72. Սերգիոս Ա պատրիարք (610—638):
73. Զաքարիա պատրիարք (609—631):
74. Հովհաննես Գ պատրիարք (610—619):
75. Անտիոքի հրեաների խռովության մասին առանձին հոդված է գրել Յու. Կուլակովսկին, որը, սակայն, գտնում է, որ դրա ճշշումն ու հրեաների հալածանքները տեղի ունեցան ոչ թե Փոկասի ժամանակ, ինչպես գրում է Թեոփանեսը: Հենվելով Զատկական ժամանակագրության վրա, ինչպես և Միքայել Ասորու պատմական երկի, նա ցույց է տալիս, որ խռովությունը բռնկվեց և Անաստասիոս պատրիարքը նահատակվեց 610 թ. սեպտեմբերին, երբ Փոկասն արդեն ի վիճակի չէր պատժիչ արշավախումբ ուղարկել Անտիոք: Ինչ վերաբերում է Բոնոսոսի պատժիչ արշավախմբին, ապա Կուլակովսկին Հովհաննես Նիկիուսցու տվյալների հիման վրա ցույց է տալիս, որ այն ուղղված էր ոչ թե հրեաների, այլ Անտիոքի միաբնակ հոգևորականության դեմ: (Որ Բոնոսոսի բռնությունները քրիստոնյաների դեմ էին ուղղված վերկայում է և Անտիոքոս Զորավարը: *St' n Mapp, Антиох Стратиг, стр. 6—7*): Կուլակովսկին ցույց է տալիս, որ Թեոփանեսը Փոկասի թագավորության վերջին տարվա մասին խոսելիս ի մի է կցում տարբեր ժամանակների դեպքերը: Բոնոսոսի պատժիչ արշավախումբը Ասորիք մտավ 608 թ., իսկ Անաստասիոս պատրիարքը սպանվեց 610 թ. սեպտեմբերին (*Кулаковский, К критике, стр. 1—14*):
76. Ստրատելատի աստիճանը նախապես հավասարազոր էր *magister militum*-ի, այսինքն՝ դիոցեզի ռազմական ղեկավարի, որին էին ենթարկվում նահանգների զորավարները՝ դուքսերը: Հետագայում (IX դ.) ստրատելատ կոչվեցին տուրմարխները: Պատմիչ Գենեսիոսը, օրինակ, զորավարի՝ ստրատելոսի համար օգտագործում է ստրատելոսի բառը, իսկ տուրմարխի փոխարեն՝ ստրատելատ: Թեոփանեսը մինչև Մավրիկիոսի և Փոկասի ժամանակները ստրատելատ բառը օգտագործում է իր հին իմաստով՝ *magister militum*-ի: Նա 589 թ. հիշում է որպես Հայաստանի ստրատելատ Հովհաննես Միստակոնին (*Theoph. Chron. I, p. 266*): Բայց Հերակլիոսի ժամանակ բառը արդեն այլ իմաստ էր ստացել: Թեոփանեսը հիշում է Վահան ստրատելատին, որը սովորական տուրմայի հրամանատար է, և ոչ հին

ստրատելատ: Այդ բանը ավելի հստակ երևում է 667 թ. դեպքերի առնչությամբ, երբ Արմենիականների զորավար Սարգիստը, ապստամբելով Կոստաս II-ի դեմ, Մուս-վիայի մոտ ուղարկեց իր ստրատելատ Սերգիսին բանակցություններ վարելու: Այս-պիսով պարզ երևում է, որ զորավարին (ստրատելոսին) ենթակա անձնավորություն է ստրատելատը: Ստրատելատի աստիճանն այդ իմաստով Թեոփանեսը 667-ից հետո այլևս չի հիշատակում, այն վերստին է հանդես գալիս X դ., երբ արդեն Հովհաննես Զմշկիկի ժամանակ ստանում է Արևելքի կամ Արևմուտքի դոմեստիկոսի (սպարա-պետի) նշանակությունը: Այդ աստիճանը հավանաբար առաջինն ստացավ Վարդապետ Սկլերոսը, երբ գնաց ճեշելու Վարդապետ Փոկասի ապստամբությունը: Հովհաննես Սկլի-լիցեսը Արևելից ստրատելատ է անվանում (այսինքն՝ Արևելքի դոմեստիկոս) Կա-տակալոն Կեկավմենոսին (Κυρίακιστος, Παρατηρήσεις, σελ. 553—557):

77. Զիարշավարանի հարավ-արևմուտքում էր գտնվում և իրենից ներկայացնում էր 37 սյուներից բաղկացած կիսաշրջանակաձև մի շինություն, որի սյուներն հետագայում օգ-տագործվեցին սուլթան Սուլեյմանի իմարեթի կառուցմանը:

78. Բանտ էր, գտնվում էր քաղաքի հյուսիսարևմտյան մասում, Ավգուստենի և Կոս-տանդնի հրապարակի (ֆորումի) միջև:

79. Գրասենյակ, ժամանակակից տեղանքով՝ մինիստրություն: Սկզբնական շրջանում նշանակում էր կայսերական կոնսիստորիոնը կամ խորհուրդը: Պաշտոնյաները կոչվում էին սեկրետիկոսներ: Նրանց մեջ էին մտնում սակելարիոսը, գենիկոնի լոգոթետը, ստրատիոտիկոնի լոգոթետը, դրոմոսի լոգոթետը, սակելիոնի խարտուլարը, վեստիարիոնի խարտուլարը, պրոտոսակրետը, իդիկոնիքը, Մեծ և Մանգանո-նի կուրատորը և Օրֆանոտրոֆոսը (Bury, IAS, p. 78—105):

80. Սկրինիա էին կոչվում թանկարժեք առարկաներ պահելու դարակները, որ հետա-գայում պետական գրասենյակների իմաստ ստացան (բյուրո): Այնտեղ ծառայողները կոչվում էին սկրինիար, խարտոֆիլաքս, խարտուլար, նոտար:

81. Հերակլիոս զորավարը ծնվել է շուրջ 540 թ. և ծագում էր Կապադովկիայի արիս-տոկրատական ընտանիքից: Մավրիկիոս կայսեր լավագույն զորավարներից էր, Մավ-րիկիոսի՝ պարսիկների դեմ մղած բոլոր պատերազմների մասնակից: Մավրիկիոսն էր, որ 599—600 թ. նրան նշանակեց Աֆրիկայի էքսարքոս: Նրա տեղակալ Գրիգո-րոսը (կամ Գրիգորիոսը) իր, Հերակլիոս զորավարի եղբայրն էր (Στράτος, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 194—195): Գիտությամբ մեջ կարծիք է տարածված, որ ծա-ղումով հայ էր (տե՛ս Grousset, Histoire, p. 273: Diehl, L'Afrique Byzantine: Pernice, L'imperatore Eraclio, p. 25. apud Στράτος, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 227):

Պ. Խարանիսը, խոսելով հիշյալ Հերակլիոսի որդու, ապագա կայսր Հերակլիոսի մասին, գրում է, որ նա հայկական ծագում ուներ (տե՛ս Խարանիս, Հայերը, էջ 27): Այս կարծիքը հենված է Թեոփիլակտոս Սիմոկատասի մի տվյալի վրա, որի հա-մաձայն Հերակլիոս կայսեր հայրը ծնվել է Հայաստանի քաղաքներից մեկում (տե՛ս Theophyl. Simoc., Գիրք Գ, 1. Θεοφύλακτος Συμοκάκτου, στρ. 71): Հովհաննես Նիկիուսցու համաձայն նա կապադովկացի էր (Jean de Niklou, Chronique, p. 431): Նշենք նաև, որ Կ. Տեր Սահակյանը (հայ կայսեր Բյուզանդիոնի) հայ-ազգի կայսրերի ցուցակում Հերակլիոսին չի հիշատակում:

82. Ստրատոսը այս «պայմանավորվածությունը» հերիաթ է համարում: Նիկետասը այդ-պիսի ճանապարհով գնալիս հազիվ 1—2 տարուց հասներ Կոստանդնուպոլիս, այնինչ

- Հերակլիոսը ծովով կհասնեն 1—2 ամսում: Բացի այդ հազիվ թե էքսարքոս Հերակլիոսը համաձայնվեր, որ կայսր դառնար իր եղբորորդին և ոչ հարազատ որդին: Հովհաննես Նիկիուսցին պարզ վկայում է, որ Նիկեոսի պարտականությունը լոկ եգիպտոսի գրավումն էր ($\Sigma \tau \rho \acute{\alpha} \tau \omicron \upsilon$, $\Gamma \omicron$ Βυζάντιον, Α', σελ. 201—202):
83. Բնագրում՝ $\sigma \chi \rho \acute{\iota} \beta \omega \nu$: Սկզբնական շրջանում կայսեր թիկնապահներն էին և ենթարկվում էին էքսկուրիտորների դամբարանակոսին: Հետագայում բժիշկ ու բուժականներ դարձան, որոնք ռազմի դաշտից դուրս էին բերում վիրավորներին, իսկ ճակատամարտից հետո հավաքում և հանձնում կապուտը:
84. Կոստանդնուպոլսի թաղամաս: Թարգմանաբար նշանակում է Յոթերորդ (մղոն): Գտնվում էր Թեոդոսիոսի պարսպից դուրս, Պրոպոնտիսի ափի մոտ: Այստեղից դեպի Կոստանդնուպոլիս ձգվում էր նշանավոր էգնատիա ճանապարհը, որ Ոսկե դռների միջով ուղղվում էր դեպի քաղաք: Բոլոր ռազմական շքերթները սկսվում էին Հերդոմոնում: Այժմ այս վայրում գտնվում է Բաքերթյոյը (հնում՝ Մաքրիթյոյ):
85. Հավանաբար նկատի ունի Թեոդոսիոսի պարիսպը կամ աշտարակը պարսպի, որ իսկապես Հերդոմոնից էր սկիզբ առնում:
86. Այդպես էին կոչվում նորակոչիկները (լատ. $u\grave{r}o$), որոնք մարզումներ անցնելուց հետո դասվում էին զինվորների (miles) շարքը:
87. Քաղաքապետ: «Վասիլիկա»-յի, Մակեդոնական հարստության օրենսգրքի համաձայն, Կոստանդնուպոլսի բոլոր համբարությունները ($\sigma \omicron \mu \alpha \tau \epsilon \acute{\iota} \alpha$), բոլոր քաղաքացիներն ու դեմոսը ենթարկվում էին էպարքոսին: էպարքոսի գրասենյակը կոչվում էր $\epsilon \pi \alpha \rho \chi \iota \alpha \chi \acute{o} \nu$ $\sigma \epsilon \chi \rho \epsilon \tau \omicron \nu$: Նրա ենթակայության մեջ գտնվող պաշտոնյաներից ամենակարևորներն էին սիմպոնն ու պրետորյան լոգոթետը: էպարքոսի մասին տե՛ս *Καждан, Деревня и город*, стр. 326—330: „Византийская книга эпарха“, նաև՝ «Հովհաննես Սկիլիցես», էջ 291:
88. Այդպես էին կոչվում հնում՝ $\text{comes [sacrorum] largitionum}$, հունարեն՝ $\chi \acute{o} \mu \eta \varsigma$ $\tau \acute{o} \nu$ $\theta \epsilon \acute{\iota} \omega \nu$ $\theta \eta \tau \alpha \upsilon \rho \acute{o} \nu$, պետական գանձապահները: VII դարից հետո նրա պարտականությունն անցավ գենիկոնի լոգոթետին: Նա հսկում էր և հավաքում կայսրության հարկերը: *Sh' u Bury*, IAS, p. 86—90: *Karayannopoulos*, *Über die Reformatigkeit*, S. 68, ծանոթ. 95.
89. Հերակլիոս (610—641), հիմնադիրը Հերակլիանների հարստության, որ իշխեց մինչև 711 թ.:
90. Տե՛ս հաջորդ ծանոթ.:
91. Բնագրում՝ $\pi \lambda \omicron \tau \acute{\iota} \alpha$ $\chi \alpha \tau \epsilon \lambda \lambda \omega \mu \acute{\epsilon} \nu \alpha \iota$: Ստրատոսը այդ բառը բացատրում է հետևյալ կերպ, որ այդ նավերն ունեին աշտարակաձև ամրացված կամրջակ: Ինչ վերաբերում է $\epsilon \chi \omicron \nu \tau \alpha$ $\epsilon \acute{\iota} \varsigma$ $\tau \acute{\alpha}$ $\chi \alpha \tau \acute{\alpha} \rho \tau \iota \alpha$ $\chi \alpha \beta \acute{\omega} \tau \iota \alpha$, ապա դրանք փոքր աշտարակներ էին կայմերի վրա՝ նետաձիգների համար նախատեսված ($\Sigma \tau \rho \acute{\alpha} \tau \omicron \upsilon$, $\Gamma \omicron$ Βυζάντιον, Α', σελ. 216):
92. Սբ. Սոֆիայի տաճարի սարկավազ, դեպքերին ժամանակակից բյուզանդական բանաստեղծ, որ լավագույն ձևով գրեց Հերակլիոս կայսեր ողջ գործունեությունը: Թեոփանեսը լայնորեն օգտագործել է նրա «Հերակլիոս» խորագիրը կրող գործը:
93. Աֆրիկայի հյուսիս-արևմուտքում, ժամանակակից Մարոկկոյի և Ալժիրի տարածքում գտնվող երկիր: 534 թ. անցավ Բյուզանդիայի գերիշխանության ներքո, որը տևեց մինչև արաբական նվաճումները VII դ. վերջում:

94. Պենտապոլիս (Հեգաքաղաք) անունով բազմաթիվ քաղաքներ են հիշվում: Տվյալ դեպքում նկատի ունի Կիրենայիկայի Պենտապոլիսը, որ լիբիայում էր գտնվում և որի կազմում էին հետևյալ հինգ քաղաքները. Կյուրենե, Վերինիկե, Արսինոե, Պտոլեմայիս և Ապոլլոնիա: Հիմնադրվել էր Պտղոմյանների ժամանակ:
95. Բնադրում՝ Νέας μετανοίας μοναστήριον:
96. Հելլեսպոնտոսի (Դարդանելի) ափին, նրա ամենանեղ մասում, ժամանակակից Թուրքական Բովալը կալեսի գյուղի տեղում: Հիշվում է դեռևս Հոմերոսի կողմից: Թյուզանդական ժամանակաշրջանում մտնում էր Օպսիկիոն բանակաթեմի կազմում և նախաճումստինիանոսյան ժամանակներում կառավարվում էր «Արիդոսի կոմես»-ի կողմից, որի հիմնական պարտականությունն էր մաքսի գանձումը, Հելլեսպոնտոսի նեղուցով նավերի կանոնավոր նավարկության հետևելը (տես Ahrweiler, Fonctionnaires maritimes, p. 239—243):
97. Այդ անունով բազմաթիվ քաղաքներ են հիշվում: Ինչպես երևում է կոնստանդինյան Կյուզիկոսի մոտ պիտի լինի:
98. Արտակը Փոքր Ասիայի քաղաք էր, Պրոպոնտիսում (Մարմարայի ծով), Կյուզիկոսի արվարձան: Այժմ Թուրքերեն կոչվում է էրդեք, որի մեջ դժվար չէ տեսնել հունական Արտակը:
99. Բնադրում՝ Σοφίας, պիտի լինի τὸν Σοφίων (տես Στράβων, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 220): Այն համապատասխանում է ժամանակակից Կադրիզա լիմանին:
100. Բոյիոնը (նաև Βόως ἀγορά, Forum Bovis, «Ցլի հրապարակ»): Անունը պարտական է Պերգամոսից բերված և այդտեղ դրված ցլի հսկայական բրոնզե մի գլխի: Գտնվում էր ժամանակակից Աքսարայի տեղում: Նիկեփոր պատրիարքի ասելով, Փոկասին պալատում ձերբակալեց Փոտ անունով մի իշխանավոր և շղթայակապ բերեց Հերակլիոսի մոտ: Վերջինիս հարցին, թե «թշվառական, այդպե՞ս կկառավարեն պետությունը», Փոկասը պատասխանեց. «Դու դրանից լավ պիտի կառավարես» (Nicephori Breviarium, p. 5): Հերակլիոսը հրամայեց նրան թրատեն, որից հետո դին տարան Ցլի հրապարակը և այրեցին: Նույն բախտին արժանացան Փոկասի եղբայր Դոմենտիոսը, Բոնոսոսը և պետական գանձապահ Լեոնտիոսը (նույն տեղում):
101. Թագադրությունը տեղի ունեցավ 610 թ. հոկտեմբերի 5-ին, երկուշաբթի օր:
102. Այսինքն՝ կայսրուհի:
103. Խոսքը, հավանաբար, ոչ թե Եղեսիայի մասին է, այլ Եմեսայի (Հոմա): Մի ժամանակակից աղբյուր գրում է Եմեսա, որ գրիչները շատ հեշտությամբ կարող էին շփոթել Եղեսիայի հետ (Στράβων, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 252): Ապամիան և Եմեսան իրար մոտիկ էին գտնվում, Եղեսիան Ապամիայից շատ հեռու է բնկած. բացի այդ Եղեսիան գրավվեց 609 թ.: Թեոփանեսը գեպքերը դնում է 610 թ. մայիսին, բայց Հերակլիոսի օրոք, որը սակայն իրականում գահ բարձրացավ 610 թ. հոկտեմբերին: Ստրատոսի համոզմամբ Թեոփանեսի այս շրջանի վերաբերյալ բոլոր թվական տվյալները սխալ են (նույն տեղում, էջ 153):
104. Դեպքերը տեղի ունեցան 606—607 թթ.: Հետաքրքրական է նշել, որ Շահրվարազի կողմից Անտիոքի գրավման ժամանակ վիրավորվեց և Անանիա Շիրակացու ապագա ուսուցիչ նշանավոր Տյուրիկոսը: Այդ մասին գրում է Անանիան իր ինքնակենդան ուսուցիչ նշանավոր Տյուրիկոսը: Այդ մասին գրում է Անանիան իր ինքնակենդան ազդրության մեջ. «Իսկ ի ժամանակի յարձակման զաւրացն Պարսից ի վերայ զաւրացն Յունաց, որ եղև մերձ յԱնտիոք, պատահեցաւ և սա վիրաւորեալ ի պատերազ-

մին փախստեայ անկանի յԱնտիոք, և ամենայն ինչք իւր առան յաւարի» (Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 208): *Sb'a* նաև *Lemerle*, Notes, p. 195—202: Այս հոգւածը վերահրատարակվել է հեղինակի աշխատությունների միհատորյակում, որ կրում է «Le monde de Byzance: Histoire et Institutions» վերնագիրը, Փարիզ, 1978 (հոգւած երկրորդ):

105. Կոստանդնուպոլսի մի թաղամաս էր, քաղաքի հյուսիսային ծայրամասում: Այնտեղ էին գտնվում կայսերական մի պալատ, բաղանիք, Աստվածածնի, Սրբոց Անարծաթից, սբ. Թեկղեի, սբ. Պետրոսի և սբ. Մարկոսի եկեղեցիները:

106. Բնագրում՝ Θέμα, բայց տվյալ դեպքում՝ 611/612 թթ. առնչությամբ այդ բառը չէր կարող բանակաթեմ (վարչական շրջան) նշանակել (տես *Oikonomides*, Les mentions des thèmes, p. 1—8): «Թեմա» սկզբնական շրջանում նշանակում էր զորամաս: Այդպիսին է նա հանդես գալիս Հերակլիոսի ժամանակ գրված կամ խմբագրված «Մավրիկիոսի» «Ստրատեգիկոն»-ում: Ենթադրում են, որ դրանից առաջ նշանակել է զորակայան և հետագայում տարածվել է այնտեղ կանգ առած զորամասի վրա: Պերտուզիի կարծիքով, քանի որ բառը հունարեն է, ապա այն կարող էր հանդես գալ բյուզանդական ռազմական տերմինոլոգիայի հունացման ժամանակ, այսինքն Կոստանդին IV-ի ժամանակ, կարծիք, որի դեմ հանդես եկան Դյուլգերը և Կարայաննոպուլոսը, առաջ քաշելով տերմինի առկայութունը «Մավրիկիոսի ստրատեգիկոնում»:

Ժամանակի ընթացքում «թեման» ստանում է «բանակաթեմի» նշանակություն, այն տարածքի, որի վրա հաստատված է այդ զորամասը կամ զորաբանակը: Բազմաթիվ են և «թեմաների» (բանակաթեմերի) հանդես գալու ժամանակի շուրջ եղած վեճերը: Առաջին բանակաթեմերը ըստ ոմանց, կազմակերպեց Հերակլիոսը՝ պարսիկների, արաբների, ավարների և սլավոնների վտանգի առաջն առնելու համար: Բանակաթեմի գլխին կանգնած էր զորավարը (ստրատեգոս), որն սկզբում քաղաքական լիազորություններ չուներ, դրանք նա ձեռք բերեց հետագայում: Առաջինն է համարվում Արմենիականների բանակաթեմը, որը երևի հիմնադրվեց 622/623 թթ. (Στράτος, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 720): Ասենք այստեղ, որ Պերտուզին մերժում է բանակաթեմերի՝ Հերակլիոսի ժամանակ ստեղծված լինելու միտքը և գտնում է, որ 667—680 թթ. առաջ չի կարող խոսք լինել բանակաթեմերի մասին այն իմաստով, ինչ հասկանում է այդ բառի տակ Կոստանդին Միրանածինը: Թեոփանեսի գրածն այն մասին, թե 627 թ. կար Արմենիականների տուրմարիս, ամենևին էլ չի նշանակում, որ կար Արմենիականների բանակաթեմ: Խոսքը պարզապես հայերից բաղկացած զորամասի՝ տուրմայի մասին է: Նրա կարծիքով փոքրասիական առաջին բանակաթեմերն առաջացան արաբական արշավանքներից հետո, իսկ հյուսիսում՝ բուլղարների ներխուժումից (679) հետո: Բանակաթեմերի մասին եղած բազմաթիվ ու իրարամերձ կարծիքների վրա հնարավոր չէ մանրամասն կանգ առնել: Հետաքրքրիչի համար նշենք համեմատաբար նոր աշխատությունները. *Karayannopulos*, Contribution; *Նույնի*՝ Die Entstehung; *Κυριακίδου*, Πώς ή λέξις θέμα; *Dölger*, «θέμα»; *Pertusi*, La Formation des Thèmes; *Esslin*, Die Themenverfassung; *Lemerle*, Quelques remarques; *Ostrogorsky*, Sur la date; Στράτος, Τὸ Βυζάντιον, Β', σελ. 702—726:

107. Եվդոկիան ընկնավոր էր (*Nicephori Breviarium*, p. 8):

108. Բնագրում՝ Νέος (Նոր):

109. Հերակլիոսն իր որդուն կայսերակից հռչակելով, ցանկանում էր ամրապնդել իր դինաստիան: Այս կայսերակցության մասին գիտեւ և Սերեոսը. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Հերակղոս զորդի իւր զԿոստանդին, ետ զնա ի ձեռն սրնկշիտոսին, և յանձնեալ ամենայն մեծամեծացն պալատոյն՝ հաստատեաց զնա յաթոռ թագաւորութեան իւրոյ» (Սերեոս, էջ 114):
110. Տե՛ս ծանոթ. 31:
111. Մարտինան Հերակլիոսի քրոջ՝ Մարիայի դուստրն էր, առաջին ամուսնութիւնից ծնված: Այս ամուսնութիւնը, որ ապօրինի համարվեց ժամանակակիցների կողմից, երկար վեճերի տեղիք տվեց:
112. Αὐγουστέου-ը կամ Օգոստոսի տրիկլինը Դաֆնէի պալատի հանդիսավոր մեծ սրահն էր: Բյուզանդական հեղինակները հաճախ շփոթում են Ավգուստոսի հրապարակի հետ և հակառակը՝ վերջինս շփոթում են Ավգուստոսի հետ: Մանրամասն տե՛ս Guillard, L'Augusteus, p. 167—169:
113. Այսինքն՝ Երուսաղեմը Քաղաքի գրավումը պարսիկների կողմից մեծ տպավորութիւն գործեց ժամանակակիցների վրա: Արժեքավոր է դեպքերին ականատես սբ. Սարգսի վանքի վանական Անտիոքոս Ստրատեգոսի՝ դրան նվիրված երկը, որի հունարեն բնագրի հատվածներ են միայն պահպանվել: Այն հնում թարգմանվել է արաբերեն, իսկ X դարում արդեն կար արաբերեն թարգմանության վրացերեն թարգմանութիւնը: Արաբերեն թարգմանութիւնը ուսերեն է թարգմանել Меѡникос-ը. Заб еваніе Иерусалима, стр. 598—614: Վրացերեն թարգմանության բնագիրը և ուսերեն թարգմանութիւնը տե՛ս Mapp, Антиох Стратиг: Դեպքի մասին վկայում են և հայկական աղբյուրները, հատկապես Սերեոսը, ապա Մովսես Կաղանկատվացին և Թովմա Արծրունին:
114. Պարսիկները Երուսաղեմը գրավեցին 614 թ.: Այդ մասին բացի նախորդ ծանոթ թագրության մեջ հիշված գործերից տե՛ս և Peeters, La prise, p. 78—116: Սերեոսի տարբեր ձեռագրեր զոհվածների թիվը հասցնում են 17 կամ 57 հազարի: Գերիների թիվը ըստ նույն պատմիչի 35 հազար էր: Ինչ վերաբերում է Քրիստոսի խաչափայտին, ապա այդ մասին գրում է և Հովհան Մամիկոնյանը. «Ընդ Քրիստոսի խաչափայտին, ապա այդ մասին գրում է և Հովհան Մամիկոնյանը. «Ընդ Քրիստոսի խաչափայտին թագաւորութեանն Հերակլիայ,— գրում է նա,— դաւրացաւ Խոսրով պարսից արքայն. և զնաց մինչ յԵրուսաղեմ՝ և քաղաքն աւերեաց, և զկտակարանսն այրեաց և զսուրբ խաչն գերեաց, և առեալ զնաց ի Պարսիկս՝ եղեալ ի պահեստի զսուրբ խաչն հանդերձ սպասութն մինչև յեթն և ի տասն ամի թագաւորութեանն իւրում» (Հովհան Մամիկոնյան, էջ 279): Հետաքրքրական է նշել, որ հանապարհորդ Շարդենը Թավրիզում տեսել է ավերակները մի աշտարակի, որտեղ, ըստ ավանդության, Խոսրով արքան պահում էր սուրբ խաչափայտը (Chardin, Voyages, t. II, p. 326: Հմմտ. Στράβων, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 270):
- Քրիստոսի խաչի գերման, ինչպես և Հերակլիոսի պարսկական պատերազմի մասին հայկական աղբյուրների տվյալների լայն օգտագործմամբ հոգված է գրել Ֆրոյովը: Տե՛ս Frolov, La vraie croix, p. 88—105:
115. Թեոփանեսը գրում է Καρχηδών: Զշփոթել Աֆրիկայի Կարբեդոնի հետ, այստեղ խոսքը Քաղկեդոնի (այժմ՝ Քաղք բյոյ) մասին է, որ աղբյուրներում կոչվում է նաև Καλχηδών (Καρχηδών):
116. Թեոփանեսը սաստիկ կրճատել է իր աղբյուրի շարադրանքը: Նիկեիոս պատրիարքը շատ հետաքրքրական մանրամասնութիւններ է տալիս, նշում Քաղկեդոնը գրա-

վողի անունը՝ Շահեն (Σαῖτος), նրա ենթադրյալ խոսակցությունը Հերակլիոս կայսեր հետ, խոսքով արքայի բարկությունը Շահենի դեմ և վերջինիս մահապատիժը արքայից արքայի կողմից: Նիկեփորի տվյալների համաձայն, մինչ այդ Հերակլիոսը Շահենի հետ Պարսկաստան էր ուղարկել բանակցություններ վարելու համար պրետորյան պրեֆեկտ Օլիմպիոսին, Կոստանդնուպոլսի էպարքոս Լեոնտիոսին և սր. Սոֆիայի տնտես Անաստասիոսին, որոնք Տիգրանում բանտ նետվեցին (Nicephori Breviarium, p. 10—13):

117. Բնագրում՝ ὁπατεύσας, այսինքն հյուպատոս դարձավ:
118. Կեսարի մասին տե՛ս Կոստանդին Միքանաձին, էջ 256, ծանոթ. 291, «Հովհաննես Սկրիլիցես», էջ 285, ծանոթ. 83: Նաև Yannopoulos, La société, p. 39—40: Մեզ հետաքրքրող շրջանում տիտղոսը հազվադեպ է հանդիպում: Շնորհիվ էր նաև օտարերկրացիներին: Համաձայն Նիկեփոր պատրիարքի (Nicephori opuscula, p. 42) Հուստինիանոս II-ը այդ տիտղոսը շնորհեց բուլղարների խանին:
119. Իմա Քրիստոսին:
120. «Խաքան» թուրքերեն նշանակում է տեր, թագավոր: Սրա արխաիկ իգականն է «խաթուն», որ թագունի է նշանակում (տե՛ս Benveniste, Titres, p. 32—33): «Խաքան» տիտղոսը կոպաչաշ թուրքերը, միջնադարյան աշխարհագիրներն ու պատմիչները տալիս են ոչ միայն թուրք վեհապետներին, այլև ոչ մուսուլման տերերի, ինչպես, օրինակ, Զինաստանի կայսրին: «Խաքան» տիտղոսը հետադաշում ստացավ նաև «խան» ձևը:
121. Ավարների հարձակումը Կոստանդնուպոլսի վրա ուսումնասիրողները Թեոփանեսի տվյալներով թվագրում էին 619 թ.: Գերլանդը (Die Feldzüge, S. 330 և հտ.) հենվելով Զատկական ժամանակագրության վրա որոշեց 623 թ. հունիսի 5-ը, իսկ Ն. Հ. Բեյնզը գտավ, որ ճիշտ թվականը 617 թ. է (Baynes, The Date, p. 110—128):
122. Ալեքսանդրիայի մելքիտ Գեորգ պատրիարքը: Ենթադրաբար աթոռակալել է 620—630 թթ.:
123. Զատկի տոնը այդ տարի իսկապես ապրիլի 4-ին էր (Grumel, La Chronologie, p. 271): Հերակլիոսը այդ օրը սր. Սոֆիայի տաճարը մտավ սև կոշիկներ հագած: Ներկա գտնվող Գեորգ Պիսիդասին դիմելով նրան ասաց. «Սև կոշիկներ ես հագել եմքերիդ, թող պարսից արյամբ կարմիր ներկվենք»:
124. Թեոդոսիոս կայսրից հետո մինչև Հերակլիոսը բյուզանդական և ոչ մի կայսր անձամբ չէր գլխավորել բանակը պատերազմի: Մավրիկիոսը, որ գլխավորական էր, և Նախքան կայսր դառնալը Արևելից սպարապետն էր, զահ բարձրանալուց հետո այլևս պատերազմ չգնաց: Միայն Հերակլիոսն էր, որ դեռևս 613 թ. գլխավորեց զորքը:
125. Նիկեփոր պատրիարքը ավարների խաքանին անվանում է նաև «թուրքերի տեր» (τὸν Τούρκων ἡγέτην): Հերակլիոսը օգնություն տալու դեպքում խոստացավ նրան կնության տալ իր Եվդոկիա դստեր: Խաքանն իսկապես տվեց այդ օգնությունը (Nicephori Breviarium, p. 17—19): Այդուհանդերձ խնամիական կապերը չհաստատվեցին, քանզի խաքանը սպանվեց Նախքան Եվդոկիայի իր մոտ ժամանելը (նույն տեղում, էջ 25): Նույն հեղինակի ասելով, Հերակլիոսը Պարսկաստան շարժվեց Եվքսինյան (Սև) ծովով և Կադիկայի վրայով (էջ 17):
126. Սխալմամբ նույնացվում էր Կիլիկիայի Իսսոսի ծոցում գտնվողի հետ: Այժմ պարզված է, որ այն գտնվում էր Պոռպոնտիսի Աստակենի (Իզմիր) ծովածոցի ափին,

Նիկոմեդիայի հարավում: Սխալն առաջին անգամ ուղղեց Դ. Տաֆելը (Tafel, Theophanis Chronographia, Տե՛ս Մանահյան, Հնթացուղիները, էջ 143):

127. Այս կարճ նախադասութիւնը՝ ἐντεῦθεν δὲ ἐπὶ τὰς τῶν θειμάτων χώρας ἀφικόμενος συνέλεγε τὰ στρατόπεδα καὶ προσετίθει αὐτοῖς νέαν στρατείαν, որ Թեոփանեսը գրել է 810 և 815 թթ. արանքում, ուսումնասիրողների համար դայթակղութիւն վեմ է դարձել: Օստրոգորսկին միանգամայն վստահ գրում է, որ Թեոփանեսն այս տվյալը քաղել է դեպքերին ժամանակակից աղբյուրից, թե այս փաստը վկայում է այն մասին, որ 622 թ. արդեն սկսվել էր բանակների (թեմաների) հաստատումը Փոքր Ասիայի որոշակի շրջաններում: Այդ առթիվ նա նշում է Հատկական ժամանակագրութիւն մեջ 626 թ. տակ հիշվող Օստիկոնի (բնագրում աղավաղված՝ Ὀψαρίου) կոմեսին, Թեոփանեսի ժամանակագրութիւն մեջ 627 թ. տակ հիշվող Արմենիականների տուրմարխին: Օստրոգորսկին հանգում է այն եզրակացութիւն, որ բանակաթեմների սխեմայի ստեղծվեց ոչ թե Հերակլիոսի հաղթանակներից հետո, ինչպես ենթադրում են Ստեյնն ու էնսսլինը (տե՛ս Ostrogorsky, 'Ιστορία, Α', σελ. 167 καὶ 252—253: Հմմտ. նույնի Histoire p. 129: Տե՛ս նաև Toumanoff, Caucasia, p. 140. ծանոթ. 113),

Պ. Լըմերի կարծիքով այստեղ երկու հարց կարող է ծագել: Կամ Թեոփանեսը թեմա (այսինքն՝ բանակաթեմ) բառը օգտագործում է որպես անախրոնիզմ՝ օգտագործում է իր ապրած ժամանակաշրջանի տերմինը, կամ այդ բառը վկայում է, որ 622-ին արդեն Փոքր Ասիայում կազմակերպված էին բանակաթեմները: Թեոփանեսի աղբյուրը, Գեորգ Պիսիդասին, որ մասնակից է եղել այդ արշավանքին, «թեմա» բառը չի օգտագործում: Լըմերիը հանգում է այն եզրակացութիւն, որ Թեոփանեսը «թեմա» ասելով այստեղ նկատի չունի վարչական կամ ռազմական ռեժիմ, այլ պարզապես զորամասեր, որ Հերակլիոսը հասավ ռազմամասերի կենտրոնացման ավանդական շրջանները» (տե՛ս Lemerle, Quelques remarques, p 359: Այս հոդվածը վերահրատարակվել է հեղինակի աշխատութիւնների միահատորակում, որ կրում է «Le monde de Byzance: Histoire et Institutions» վերնագիրը: Փարիզ, 1978, հոդված երրորդ): Մատավորապես նույն կարծիքին է և Ստրատոսը: Նա գրում է, որ տվյալ դեպքում θείματα օգտագործված է «զորամասեր» իմաստով, որ Հերակլիոսը գնաց այն շրջանները որտեղ գտնվում էին թեմաները, բանակած զորամասերը (Στράτοσ, Τὸ Βυζάντιον, Α' σελ. 332): Հարցի մասին տե՛ս նաև Oikonomides, Les premières mentions:

Վեճերի տեղիք է տվել նաև «նոր զորքերով» (νέαν στρατείαν) բառերը: Գրում եմ են, որ նկատի ունի Հերակլիոսի իրականացրած զինվորական մի ռեֆորմ, բանակի վերակառուցում: Ասենք այստեղ, որ ուսումնասիրողների մի այլ խումբ գտնում է, որ Հերակլիոսին վերագրվող բազում ռեֆորմներ իրականում տեղի են ունեցել նրա հաջորդների օրոք: Բանակաթեմների կազմակերպման հարցում, օրինակ, հույն բյուզանդագետ Հակիթինոսը տալիս է հետևյալ ժամանակագրութիւնը (ոչ թե ստեղծման, այլ աղբյուրներում առաջին անգամ հիշատակման): Արմենիականների բանակաթեմը (և ոչ տուրմարխութիւնը) 667 թ., Անատոլիկոն բանակաթեմը՝ 669 թ., Օստիկոն՝ 680 թ., Կարավիսիանների (հետագայում՝ Կիբիրոսոտների) շուրջ 680 թ., Թրակիայի՝ 680/85 թթ. միջև, Հելլադայի՝ 695 թ. (Ζακὺθ γ γ ο ὅ, 'Η Βυζαντινὴ αὐτοκρατορία, σελ. 120):

128. Պարսիկների դեմ պատերազմի դուրս եկած բյուզանդական բանակի քանակի մասին միակ տեղեկությունը հաղորդում է Սերենուսը՝ 120 հազար (Սերենուս, էջ 124)։ Այդ թիվն ուսումնասիրողներն անհավանական են համարում, նշելով, որ շափազանցություն է (Հմմտ. Στράτων, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 320, 337)։ Պալով Հերակլիոսի գործի կազմի ազգային պատկանելության հարցին, ապա ըստ հաբանիսի այն բաղկացած էր վարձկան հայերից, լազերից, արխաղներից, իբերներից, խազարներից (Charanis, Ethnic Changes)։ Լեմերլը գտնում է, որ Հերակլիոսը վարձկան բանակը շփոխարինեց ազգային բանակով (Lemerle, Quelques remarques: apud Στράτων, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 321)։
129. Խոսքը Եղեսիայի Աբգար Թագավորին Քրիստոսի ուղարկած ավանդական վարչամակի մասին է, որի վրա պատկերված էր տերունական կերպարը։
130. Խոսքը եկեղեցիների սուրբ սեղաններին է վերաբերում, որոնց վրա է կատարվում հաղորդության խորհուրդը։
131. Այս շրջանում արարների մի մասը ենթարկվում էր Բյուզանդիային, մյուսը՝ պարսիկներին։ Դեռևս Հուստինիանոս I-ի ժամանակ նրանց Հիմյար մասամբ քրիստոնյա ցեղը ավելի հակված էր դեպի սասանյանները, իսկ մյուս մեծ ցեղը՝ զասանիդները, որ միաբնակ քրիստոնյաներ էին, ենթարկվում էին Բյուզանդիային։ Ավելի մանրամասն տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, էջ 326, 327 (ծանոթ. 148 և 158)։ Նաև ստորև, ծանոթ. 274։
132. Բնագրում՝ χλίμα, հայերեն՝ կղիմա կամ կլիմա, արար. իկլիմ։ Նշանակում է գավառ, եահանգ, շրջան։ Իմաստների մասին մանրամասն տե՛ս Βασιλευσκανῶ, Ζαννεκα, στρ. 195։
133. Բնագրում՝ εἰς τὴν Περσίδα εἰσβάλλει։ Տրամաբանական չէ, քանի որ մի քիչ հետո Թեոփանեսը գրում է, որ Շահը վարազը վախենում էր, որ կայսրը «Հայաստանի վրայով կներխուժի Պարսկաստան»։ Ստրատոսը առաջարկում է «Περσίδα»-յի փոխարեն կարդալ «Ἀρμενία», այսինքն՝ Հերակլիոսը ներխուժեց Հայաստան, որով սմբողջ նախադասության միտքը պարզ կլինի (Στράτων, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 344)։
134. Բնագրում՝ Σαρβαραζός (var. Σαρβάρος)։ Նա Ֆարուխանի (Ֆերրուխան), որ կոչվում էր նաև Ռոմեզան, տիտղոսն էր, նշանակում է թագավորական վարազ։ Այդ առումով արժեքավոր են Մովսես Կաղանկատվացու տվյալները. «...բուն անուն իւր Խոռիեան կոչէր. և վասն մղելոյ նորա և յօրինելոյ զճակատն պատերազմաց և զյաղթութիւնս կատարելոյ՝ ըստ խորագիտութեան Պարսից այլ և այլ պճնող անուամբ յորչորչէ զնա՝ երբեմն Ռազմիողան, և երբեմն Շահվարազ» (Մովսես Կաղանկատվացի, էջ 145—146)։ Թուվմա Արժրունին նրան կոչում է «Ռազմայուզան որ է Խոռեամ» կամ «Խոռեամ Սոազմայուզան» (Թուվմա Արժրունի, էջ 89)։ Տե՛ս և ծանոթ. 38։
- Ֆերրուխան Շահր Վարազը 605 թ. գրավեց Եղեսիան, 614-ին՝ Դամասկոսը, Երուսաղեմը, Հերակլիոսից պարտություններ կրեց 622-ին և 624-ին, իսկ 630-ի ապրիլի 27-ից մինչև հունիսի 9-ը հափշտակեց արքայից արքայի գահը։
135. χλίμα τον πόλεμον։ Հունարենում այդ դարձվածքը նշանակում է հաղթանակ տանել ոչ բաց մարտում, այլ խորամանկությամբ։
136. Բեյնզն ու Պերնիշեն գտնում են, որ լուսնի խափարումը տեղի ունեցավ 623 թ. հունվարի 23-ին (Στράτων, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 346—347)։

137. Ոչ մի ժամանակագիր չի տալիս ո՛չ ճակատամարտի վայրի անունը, ո՛չ ժամանակը: Ստրատոսի ենթադրությամբ տեղի ունեցավ Երկրորդ Հայքում, Սատաղի մոտ, Սատաղ-Թեոդոսուպոլիս մայրուղուց հարավ և եթե այն տեղի ունեցավ լուսնի խավարումից 15—20 օր հետո (տե՛ս Նախորդ ծանոթ.) ապա հավանաբար 623 թ. փետրվարի 7—12-ը (Σ τ ρ ά τ ο υ, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 348):
138. Զրադաշտականության պանթեոնում արեգակը (Hvar կամ Hvarə- Xšaēta-, տե՛ր արեգակ) գերագույն աստվածությունն է: Հազկերտ II-ը հայերին ուղղված իր ուղերձը սկսում է այսպես. «Երդուեալ եմ յարեգակն ի մեծն աստուած, որ ճառագայթիքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և շերմութեամբ կենդանածէ զամենայն գոյացեալսն» (Եղիշե, էջ 44—45): Եղիշեի ասելով, Հազկերտը այդ երգումը «երեքկնէր և շորեքկնէր զանսուտ երդումն յարեգակն» (նույն տեղում, էջ 47): Սասանյան շրջանում արեգակը այլևս Hvar-ը չէր, այլ Միհրը (Միթրան): Մովսէս արդերձապետը դիմելով հայերին արեգակի մասին ասում էր, թե նա «ճառագայթիքն, իւրով լուսաւորէ զամենայն տիեզերս, և շերմութեամբ իւրով հասուցանէ զկերակուր մարդկան և անասնոց. և վասն հասարակարաշխ առատութեանն և անաշառ մատակարարութեանն անուանեցաւ Միհր աստուած...» (Եղիշե, էջ 165): Նմամ. Christensen, L'Iran, p. 143 sqq.
139. Ո՛չ Թեոփանեսը, ո՛չ էլ Պիսիդացին չեն նշում այս զորավարի անունը: Ստրատոսը ենթադրում է, որ կարող է Հերակլիոսի եղբայր Թեոդորոսը եղած լինի (Σ τ ρ ά τ ο υ, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 353):
140. Այսինքն՝ Կոստանդնուպոլիս:
141. Բնագրում՝ Σαήν: Շահեն Վահմանզադադան, Արևմուտքի պատգոսպանը: Սերեսը նրան անվանում է «Շահէն պատգոսպան» (Սերես, էջ 124): Նա 609 թ. «հանդիպէր զաւրացն Յունաց ի Կարին գաւառի: Եւ արարեալ պատերազմ՝ հարկանէր զնոսա սրով սուտերի և փախստական արարեալ հալածական առնէր յաշխարհէն» (նույն տեղում): 610 թ. նա մուտք գործեց նաև Կեսարիա: Զատիկական ժամանակագրության մեջ հիշված է որպէս Σαήν Βαβρανζαδαγώ (Chronicon Paschale, p. 708): Ք. Պատկանյանը (տե՛ս История императора Иракла, стр. 205, прим. 173) կարծում է, որ Βαβρανζαδαγώ-ն Սերեսի հիշատակած «պատգոսպան»-ի աղավաղումն է (տե՛ս Սերես, էջ 287, ծանոթ. 359), այնինչ զա՜վահմանզադադան անունն է: «Վահմանզադադան» նշանակում է Վահմանզադակի (Վոհու-մանանհի) որդի (տե՛ս Justi, Iranisches Namenbuch, S. 274, 374):
142. Հունարեն բնագրում՝ φόνων φονεύτριαν (սպանություններ սպանող), որ անիմաստ է: Կ. Ամանտոսը ուղղում է φόνων φονεύτριαν «վախերն սպանող» (վախը փարատող), այսինքն հավատքը մարդուն արիությամբ է լցնում (տե՛ս Ἀ μ α ν τ ο υ, Ἱστορία, Α', σελ. 284, ծանոթ. 4):
143. Այսինքն՝ հանուն քրիստոնեության զոհվելը հավիտենական կյանք է շնորհում երկնային Թագավորության մեջ:
144. Խորին Պարսկաստան (ἐνδοτέρα Περσίς): Այս արշավանքի (624) ընթացուղումասին, ինչպես և արշավանքի մասին ընդհանրապես, Թեոփանեսի և բյուզանդական մյուս հեղինակների տեղեկությունները շատ աղքատիկ են: Հարուստ են հայկական աղբյուրների, առաջին հերթին Սերեսի, Մովսէս Կաղանկատվացու և Թովմա Արծրունու տվյալները: Հ. Մանանդյանը հետևյալ կերպ է գծում Հերակլիոսի այս արշավանքի ընթացուղին. Պոնտոսից և Փոքր Հայքից դեպի Կարին, այնտեղից

այժմյան Սարիղամիշի վրայով և Վանանդ ու Շիրակ գավառներով դեպի Դվին քաղաքը և ապա Նախիջևանի վրայով դեպի Գանձակ (Մանանդյան, Հնթացուղիները, էջ 145): Նշենք, որ Դվինը հավանաբար զիմադրութիւն ցուցաբերեց, այդ պատճառով Հերակլիոսը թույլ տվեց իր զինվորներին թալանել ու կրակի տալ այն: Գեորգ Պիսիդացին իր «Հերակլիաս» պոեմում, ջանալով արդարացնել Հերակլիոսին՝ քրիստոնեական քաղաք ավերած լինելու համար նշում է, որ ավելի լավ է բարեպաշտ կայսեր կողմից կործանվի մի քրիստոնեական քաղաք, քան թե անվնաս մնա ամբարիշտ խոսրովի ձեռքում («Հերակլիաս», Բ, տող 163—166. apud Στράτου, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 390):

145. Բնագրում՝ Γαλατῶ: Խոսքը Ատրպատականի Գանձակի (Շիղ, Գ. Աբգարյանը սխալմամբ նույնացնում է Թավրիզի հետ, տե՛ս Սեբեոս, էջ 291, ծանոթ. 427) մասին է: Այստեղ էր գտնվում զրադաշտականների խոշորագույն սրբություններից մեկը՝ Ատրվշնասպը: Քաղաքի լրիվ անվանումն էր Գանձ ի Շիղագան կամ Գանձ ի Շիղիգան: Հերակլիոսի ընթացուղին Սեբեոսը գծում է հետևյալ կերպ. Կոստանդնուպոլսից Քաղկեդոնի ու Կեսարիայի վրայով Կարին, այնտեղից Դվին, Նախճավան և վերջապես ի Գանձակ Ատրպատականի, որտեղ նա «կործանեց և զբաղինս Հրատին մեծի, որում վշնասպն կոչէին» (Սեբեոս, էջ 124):

Ուրմիայի շրջանում տեղի ունեցած պատերազմական գործողությունների և Գանձակի գրավումների վերաբերյալ կա հատուկ ուսումնասիրություն (ինձ անմատչելի) N. H. Baynes, The military operations of the emperor Heraclius. The United Services Magazine. 1913, vol. XLVI & XLVII (apud Minorsky, Campaigns in Atropatene, p. 109):

146. Տե՛ս ծանոթ. 131:

147. Ինչպես պարզվում է Զատիկյան ժամանակագրությունից, Հերակլիոսը Գանձակում մնաց 27 օր, այնտեղից Կոստանդնուպոլսի ուղարկած նամակում նա Գանձակի մասին գրում էր, թե այն կատարյալ քաղաք է (τελεια), բաղմամբ, անասուններով հարուստ, ունի շուրջ 3000 տուն: Քաղաքապետին կայսրն անվանում է Բարեսմանաս, որն իմանալով հոռմայեցիների Զարա (Ζάρα) լեռն անցնելու մասին, հեռացավ դեպի լեռներն ու ամուր բերդերը (Chronicon Paschale, p. 732) Հերակլիոսը Գանձակից հեռացավ ապրիլի 8-ին, նպատակ ունենալով շարժվել Հայաստանի վրայով (նույն տեղում, էջ 734):

148. Բնագրում՝ Βηθαρμαίς (հանդիպում է և Βιθαρμαίς ձևը): Արշակունյաց մի բերդ էր՝ Beth Aramaje (այժմ՝ Թախտ-ի Սուլայման): Սրբազան հուրը Ատրպատականի Գանձակից այդտեղ էր տեղափոխվել (տե՛ս Minorsky, Campaigns in Atropatene, p. 92): Թերաբմայսի վաղադույն հիշատակութիւնը հանդիպում է Մենանդրոս Պրոտեկտորի երկում (Menandri Excerpta, p. 365), որտեղ ասված է, որ բյուզանդացի զեսպան Պետրոս Պատրիկիոսը 562 թ. այցելել է պարսից արքային Βιθαρμαίς կոչվող վայրում: Այլ հիշատակութիւնների մասին տե՛ս Minorsky, Campaigns in Atropatene, p. 93: Թախտ-ի Սուլայմանի մասին տե՛ս Van der Osten, Naumann, Takht-i Suleiman:

149. Բնագրում՝ ἡ πλάνη τῶν ἰνθράκων: Հավանաբար նկատի ունի ատրուշանը:

150. Բնագրում՝ Δασταγέρδη, պարս. Գաստգարդ կամ Գաստգարդ-Խուսրո, արարական աղբյուրների էլ Գասկարան կամ Գասկարար-ի-Մալիքը: Գտնվում էր Տիգրոսից Համադան տանող ռադմական մեծ ճանապարհի վրա, մայրաքաղաքից 107 կմ

Հյուսիս-արևելք, հին Արտամիտա քաղաքի մոտ: Քաղաքի ավերակներն այժմ կոչվում են Զենդան (զնդան-բանտ): Մանրամասն տե՛ս Christensen, L'Iran, p. 454—455:

151. Նիկեփոր պատրիարքը ցույց է տալիս, որ խոսքովը Հրո տաճարներից մեկում, իրեն աստվածացրել էր: Նա իր գահը տեղադրել էր տաճարի գմբեթի տակ, կարծես երկնքում, շուրջը նկարել տվել կայծակներ, արեգակ ու լուսին, հրեշտակներ և այլն: Հատուկ հարմարանքով նա ցանկացած ժամանակ որոտ էր բարձրացնում ու անձրև թափում: Հենց այդ գահը գետին տապալեց ու ոչնչացրեց Հերակլիոսը (Nicephori Breviarium, p. 19):

152. Թովմա Արծրունին որոշակի գրում է, թե Հերակլիոսը բացի Դվինից, ավերել է «զնախճաւան և զՈրմի (Ուրմիա), և զիմեալ ի Գանձակն Ատրպատականի՝ բրէ զնա, աւերէ զԱհմատան և զՄայ, կործանէ զբազին Հրատին մեծի, որում Վշնապն կոչեն, և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զխօսուն և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի» (Թովմա Արծրունի, էջ 92—93):

153. Աղվանքում: Հերակլի Գանձակից Աղվանք վերադարձի ընթացողին տալիս է Սեբեոսը. «առ ամուր աշխարհաւն Մարաց» (Ղարաղաղի լեռներով) Փայտակարան, այն է Գանձակից, այժմյան Միանի և Արդաբիլի վրայով դեպի Արաքսի ներքին հոսանքի շրջանը, որտեղ գտնվում էր Փայտակարանը, որտեղից էլ, Մովսես Կաղանկատվացու տվյալներով, ուղևորվեց դեպի Ուտի և այնտեղ գտավեց Աղվանքի մայրաքաղաք Պարտավը: Ըստ Մանանդյանի կայսրն այնտեղ անցկացրեց 623—624 թթ. ձմեռը (Մանանդյան, Ընթացողիները, էջ 149—150), իսկ ըստ Ստրատոնի՝ 624—625 թթ. ձմեռը (Στρατόν, Το Βυζάντιον, Α', σελ. 402):

154. Բնագրում՝ ἀγνίσεσθαι: «Սրբվել» այսինքն՝ մաքրվել, այդ բառի և՛ ուղղակի և՛ անուղղակի իմաստով: Ստրատոսը բացատրում է «ծով սլահել» (Στρατόν, Το Βυζάντιον, Α', σελ. 399):

155. Բնագրում՝ Σαραβλαγᾶν: Սեբեոսը նրան անվանում է Շահրապղական (Սեբեոս, էջ 113): Հայ պատմիչի ասելով, Շահրապղականը պարսից մարզպանն էր և նրստում էր Դվին ոստանում: «Աս արար կոիւ մի ի Պարս և յաղթեաց» (նույն տեղում): Հմմ. Մովսես Կաղանկատվացի, էջ 150. «Ապա եկեալ... զօր պարսից, զորս նոր զօր անուանեն, և էր զօրագլուխ նոցա Շահրապղական», «զյօժարն և զքաջ պատերազմող զօրագլուխն իւր զՇարհապղայ» (Մովսես Կաղանկատվացի, էջ 156):

Շահրապղական թարգմանաբար նշանակում է «թագավորական հովազ»:

156. «Պերոզական» կոչվող գնդի մասին հիշատակություն ունի Սեբեոսը (էջ 96): Ք. Պատկանյանը թեև գրում է «չգիտեմ ինչ է նշանակում Պերոզական գունդ», բացատրում է «հաղթական» չոկատ, որովհետև Պերոզ նշանակում է «հաղթող» (История императора Иракла, стр. 200, прим. 271): Այլ (անընդունելի) կարծիքների մասին տե՛ս Սեբեոս, էջ 257, ծանոթ. 271: Այն փաստը, որ Թեոփանեսը կողք կողքի նշում է «խոսքովական» և «Պերոզական» զորագնդերը, նշանակում է, որ զորագնդերը կրում էին արքայից արքաների անունները և «Պերոզական» նշանակում է Պերոզ արքայի անունը կրող, ինչպես որ «խոսքովական» նշանակում է խոսքով արքայի անունը կրող: Միտքը հաստատում է Մովսես Կաղանկատվացին, «Ապա և բազումք ի գնդից գնդից՝ ի զոնապահաց և

ի թիկնապահաց, և յանուակրաց դրանն հոսորովու...» (էջ 167): Ք. Պատկանյանը «յանուակրաց»-ը թարգմանում է „колесничих“ երևի «անիւ» բառից բխեցնելով (տե՛ս Моисей Казанкаваццц, стр. 115) «անիւ կրող», բայց ավելի հավանական է «անոււր (հոսորովի) կրող» «հոսորովական»: «Յանուակրաց»-ը պետք է ուղղել «յանու[ան]ակրաց»: Այս զորագնդերը Ստրատոսի ենթադրությամբ գրեթե ամբողջում էր Մովսես Կաղանկատվացու հիշատակած (էջ 150) Գրանիկ Սաղարը:

157. Այսինքն՝ Շահր Վարազին և Շահրապղականին:

158. Բնագրում՝ τοῦλδον: Այս բառի տակ ենթադրվում են զինվորների հանդերձանքը և նրանց սպասարկող անձնակազմը՝ ծառաները, գրաստը և այն, ինչ նախատեսված է բանակի կերակրման համար, այդ թվում և բանակի անհրաժեշտ իրերը (տե՛ս Dain, „Touldos“, p. 161—169: նաև Луншца, Очерки, стр. 246—247):

159. Աղվանքում տեղի ունեցած դեպքերի մասին ավելի հստակ և բովանդակալից տեղեկություններ է պահպանել Սեբեոսը: Նա վկայում է, որ Հերակլիոսը, իմանալով հոռյամի (Շահր Վարազի) Կոստանդնուպոլսի պաշարումից հրաժարվելու և հոսորովի օգնության շտապելու մասին, «առնու զգաւրս իւր և գերութիւն, և դառնայ առ ամուր աշխարհուն Մարաց. զայ հասանէ ի Փայտակարան»: հոսորովը տեղեկանալով այն մասին, որ Հերակլիոսը, «եհաս ի Փայտակարան, և կամի ընդ Աղուանս անցանել ի Վիրս», հրամայում է իր զորավար Շահր Վարազին կտրել նրա ճանապարհը: Շահր Վարազը Այրարատի վրայով մտնում է Գարդման և Տիգրանակերտ ավանի մոտ իր Շահեն զորավարի 35 հազարանոց բանակով օղակում կայսեր: Հերակլիոսը կարողանում է նրանց պարտության մատենել, անցնել Վրչունիս ավանը, այնտեղից էլ Բագրևանդ և Ապահոնիք (Սեբեոս, գլ. 11: Տե՛ս և Մանանդյան, Ընթացողիները, էջ 151 և հտ.): Տիգրանակերտի ավերակները, ըստ Մանանդյանի, գտնվում են Տարնաուտ գյուղի Շահրույազ բերդի մոտ, Աղղամից 8—10 կմ հյուսիս-արևմուտք, Եվլախ-Շուշի ճանապարհի վրա:

160. Հունարեն բնագիրը տալիս է Οὐννοὶν χῶρα «հոների երկիր» ընթերցումը: Անաստասիոս բիրյիթեկարիոսի լատիներեն թարգմանությունը՝ in regione Hunnorum, որը, սակայն պիտի ուղղել Տուննոն χῶρα, որ, անկասկած, Սյունիքն է: Հայկական աղբյուրներում պարզ ցույց է տրված ռազմական գործողությունների Սյունիքում տեղի ունեցած լինելու մասին: Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 150: Մանանդյանն այդ ընթացողին գծում է հետևյալ կերպ. Տարնաուտի շրջանից Եվլախ-Շուշի ճանապարհով, Շուշիի և Գորիսի վրայով դեպի Սյունիքի Մղուկ տեղը և այնտեղից Անգեղակոթի և Բիշենազի լեռնանցքով դեպի Նախիջևան: Մանանդյան, Ընթացողիները, էջ 153:

161. Բնագրում՝ Περταμένια, այսինքն պարսից տիրապետության տակ գտնվող Հայաստան:

162. Տե՛ս ծանոթ. 135:

163. Բնագրում՝ χῶριον Σαλβανῶν: Ամենայն հավանականությամբ խոսքը Աղիովիտ գավառի Աղի ավանի մասին է, քանզի խնդրո առարկա ճակատամարտը, ըստ Սեբեոսի, այնտեղ է տեղի ունեցել (Սեբեոս, էջ 125: Մանանդյան, Ընթացողիները, էջ 157):

164. Հմմտ. Սեբեոս, էջ 126. «Բայց Շահր Վարազ գերծաւ՝ նստեալ ի վերայ նուաստ երկվարի... իսկ Երակլոս առ զաւար և զկապուտ բանակի նոցա, դարձաւ յաղթութեամբ մեծաւ»:

165. Այժմ՝ Դերենդե: Գտնվում էր Երկրորդ Հայքում: Սակայն ըստ Մանանդյանի, Թեոփանեսի բնագրում աղավաղում կա, նրա կարծիքով խոսքը ավելի շուտ կարիների շրջանի մասին է:
166. Բնագրում՝ Σύρων γῆν: Բայց ըստ Ստրատոնի ոչ մի կապ չունի Ասորիքի հետ, այլ Բիթլիս տանող ճանապարհն է (Στράτων, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 440):
167. Հայկական աղբյուրների Քաղերթը, այժմ՝ Բաթման-սու:
168. Այժմ՝ Մարաշ:
169. Ելնելով այս ընթացուղու անտրամաբանությունից, Ռամզեյը Ադանայի փոխարեն ուղղում է կարգալ Ադատա (Ramsey, HGAM, p. 311: apud: (Στράτων, Τὸ Βυζάντιον, Α', σελ. 448): Բոլոր դեպքերում Թեոփանեսի գծած ընթացուղին այստեղ համարվում է սխալաշատ ու անտրամաբանական (Στράτων, նույն տեղում, էջ 449):
170. Այժմ կոչվում է Սյունի կամ Սայհուն:
171. Բնագրում՝ μαγαρίτης: Տե՛ս նաև էջ 53 և 148: Թեոփանեսն այդ գոյականից բայ էլ է ստեղծում՝ μαγαρίζω: Տերմինի մասին տե՛ս Ерхштедт, Этимология глагола μαγαρίζω, стр. 120—121:
172. Բնագրում՝ Καίσαρ: Այդպես էին կոչում բյուզանդական կայսեր և հայերը:
173. Նեստորականությունն իր անունը պարտական է Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորին (428—431), որի վարդապետության էությունը կայանում էր նրանում, որ նա Քրիստոսի երկու բնությունները՝ աստվածային և մարդկային իրարից բաժան էր ընդունում, որով Մարիամին Քրիստոսածին էր համարում, և ոչ Աստվածածին: Նրա վարդապետությունը սկզբում տարածվեց Ալեքսանդրիայում, որի դեմ հանդես եկավ Կյուրեղ Ալեքսանդրացին և Հռոմի պապ Կելեստինոսը: Երբ վեճերը լայն ծավալ ստացան, Թեոդոսիոս II կայսրը 431 թ. գումարեց Եփեսոսի III Տիեզերական ժողովը և դատապարտեց Նեստորին ու պաշտոնանկ հայտարարեց: Նրա հետևորդները հալածանքների ենթարկվելով ապաստարան գտան Պարսկաստանում: Այնտեղ լայն գործունեություն ծավալեց 435 թ. Մծրինի եպիսկոպոս ձեռնադրված Թովմա Բարսուման: 489 թ. Զենոն կայսրը փակեց Եփեսոսի դպրոցը, իսկ նրա ուսուցիչներն ու աշակերտները փախան Պարսկաստան և հիմնադրեցին Մծրինի դպրոցը: 496 թ. Սելեկիայի նեստորական արքեպիսկոպոս ընտրված Բարեոսը 498 թ. ժողով գումարեց և Պարսկաստանի նեստորական եկեղեցին անջատեց ուղղափառ եկեղեցուց: Նեստորականներին հետագայում հովանավորեցին և՛ պարսիկները, և՛ արաբները: Նեստորականությունը տարածվեց նաև Հայաստանում, թեև եկեղեցու կողմից միշտ էլ հալածվեց: 554 թ. Ներսես Բ Բագրևանդցի կաթողիկոսը Դվինի ժողովում դատապարտեց նրանց: Այդ մասին մանրամասն տե՛ս Տեր-Մինասյան, Նեստորականությունը Հայաստանում, էջ 330—393:
174. Թեոփանեսը բուլղարներին առաջին անգամ հիշատակում է աշխարհի արարչագործության 5994 (502) թվականի տակ, Անաստասիոս կայսեր թագավորության 11-րդ տարում, ցույց տալով, որ նրանք ավարարել են Իլիրիկոնն ու Թրակիան: Նրանք 6006 (514) Անաստասիոս կայսեր դեմ ապստամբած ֆեդերատների կոմես Պատրիկիոսի որդի Վիտալիանոսի բանակում էին ծառայում և նրա զինավորու-թյամբ գրավում են Անթիալոսն ու Օդիսսոպոլիսը (Վառնան): 6031 (539) թվականին հիշվում են բուլղարները, որոնք իրենց ցեղապետների (բնագրում՝ ուեքս) գլխավորությամբ ավարարում են Սկյութիան, Մեդիան և Թրակիան: Հուստինիանոս I

- կայսրը գերի ընկած բուլղարներին ուղարկում է Հայաստան և կազիկա գինձորա-
կան ծառայութեան (ἐπεμψεν ὁ βασιλεὺς εἰς Ἀρμενίαν καὶ εἰς Λαζικήν, καὶ κατε-
τάχισαν ἐν τοῖς νομισματικοῖς ἀριθμοῖς. *Theoph. Chron.* I, p. 219): Վերջապես
նրանք հիշատակվում են և Մավրիկիոս կայսեր թագավորութեան 15-րդ տարում,
աշխարհի արարչագործութեան 6089 (597) թ.:
175. Ենթադրվում են սլավոնները: Նիկեիոս պատրիարքը ցույց է տալիս, որ պատե-
րազմական գործողություններին մասնակցում էին նաև սլավոն կանայք (*Nicephori*
Breviarium, p. 21):
176. Հունական աղբյուրներում Γήραιος են կոչվել գոթերին ազգակից և Արևմուտ-
քում գեպիդներ կոչվող ցեղը: Սկզբնական շրջանում բնակվում էին Կարպատ-
ների մոտ և վերստին հանդես եկան III դ. վերջում: Մասնակցություն ունեցան
Աստիլայի ներխուժումին, ապա գրավեցին Դակիան և բավական նեղություն պատ-
ճառեցին կայսրության:
177. Քաղաքի պաշտպանության ուղարկված զորքերի մեջ կային և հայեր: Ինչպես գրը-
ված է «Հատկական ժամանակագրության» մեջ, հայերը Վլախեոնայի պարսպից
դուրս եկան և սբ. Նիկողայոսի եկեղեցու մոտ գտնվող սյունաշարքը կրակի տվե-
ցին: Սլավոնները, ենթադրելով, որ ծովի ափին կանգնածները ավարներ են, ափ
դուրս եկան, բայց ընկնելով հայերի ձեռքը, սրի քաշվեցին (տե՛ս *Chronicon Pas-*
chale, p. 724):
178. «Արևելքի թուրք» է կոչում, որպեսզի շփոթվեն «Արևմուտքի (Պանոնիայի)
թուրքերի» հետ, որոնց տակ ենթադրվում են հունգարացիները: Խաղարներին
թուրք են կոչում նաև արաբները (տե՛ս *Артамонов, История хазар*, стр. 114),
որոնք, իմիջի այլոց ալ-Խստահին և իրեն Հաուկալը, գրում են, թե խաղարների
լեզուն նման է բուլղարների լեզվին (նույն տեղում, էջ 115): Իրենք խա-
ղարները իրենց ազգակից են համարում ուզրերի, ավարների, գուգերի, բարսիլ-
ների, օնոգուրների, բուլղարների և սալիրների (նույն տեղում):
179. Խաղարները (էթնոնիմը ծագում է թյուրքական «կազ» (թռել) բառահիմքից)
թրքախոս հունական ցեղեր էին, որոնք հաստատվեցին արևելյան Եվրոպայի հարա-
վային մասում: Նրանց առաջին հիշատակությունը իրենց սեփական անվամբ տա-
լիս է Մովսես Խորենացին (*Артамонов, История хазар*, стр. 17): Հայ պատ-
միչը գրում է. «Միաբանեալ ամբոխություն ի հյուսիսականացն, ղեազրաց ասեմ և
զԲասլաց, արտաքս բան զդուռն ձորայ ելանել...» (Գիրք Ա., գլ. 46): Խաղարների
մասին շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում «Աշխարհացոյցը»: Եղիշեն նը-
բանց հոներ է անվանում: Հարուստ են Մովսես Կաղանկատվացու, մասամբ՝ Ստե-
փանոս Տարսնեցու տվյալները: Բյուզանդական հեղինակներից առաջինը Թեոփա-
նեսն է նրանց հիշատակում՝ հիշյալ տեղում:
180. Հմմտ. «Եւ թագաւորն հիւսիսոյ է հականն՝ որ է տէր Խազրաց, և զշխոյն թա-
գուհի է, խաթունն, որ է կին հականայ...»: «Անանիա Շիրակացու Մատենագրու-
թյունը», էջ 348: Տե՛ս վերը, ծանոթ. 120:
181. Բնագրում՝ *Забѣла*: Նույնանում է Մովսես Կաղանկատվացու հիշատակած
Ջերու խաբանի հետ, որ «էր երկրորդ թագաւորութեանն նորա» (իմա խաբանի
Մովսես Կաղանկատվացի, էջ 160: «Առաջինը» Ջերույի եղբայր Թուն-Շեխուն էր):
Նշենք այստեղ, որ «Ջերու» անուն չէ, այլ տիտղոս («Ջարգու», այդպես էին կոչ-
վում արևմտյան թուրքերի հեղեմոնները: Տե՛ս *Marquart, Streifzüge*, S. 394 և

496—498. apud: Στρατόν, Τὸ Βυζάντιον, Β', σελ. 556: Հմմտ. Артамонов, История хазар, стр. 145, 146): Ջերուխաբանի անունը Մխո-շադ էր (նույն տեղում, էջ 146). Ջերուխաբանի մասին տես նաև Golden, Khazar Studies, էջ 51:

182. Բնագրում՝ Ἀδορηγάν (var. Ἀδορατηγάν): Նիկեփոր պատրիարքը գրում է Ἀδορσαδιγάν, ավելի հին աղբյուրներում՝ Ἀτροπατηνή: Բյուզանդական աղբյուրներում հանդիպում է նաև Ἀδοραδιγάνων ձևը: Հայկական Ատրպատականը, ասորերեն՝ Ադորբայզան: Այստեղ խոսքը պարսկական Ատրպատականի մասին է: Սասանյանների ժամանակ կոչվում էր Ադարբայջան և կառավարվում էր մարզպանի կողմից, որ պատկանում էր Ֆարուք-Որմիզդ ընտանիքին: Կենտրոնը Շիր (կամ Գանձակ) քաղաքն էր, ժամանակակից Հայլանի տեղում: Ուրմիայի լճից հարավ-արևելք: Այստեղ կար կրակի մի նշանավոր տաճար, որն այցելում էին սասանյան արքաներն իրենց գահ բարձրանալու առթիվ: Ավելի ուշ սրբազան կրակը տեղափոխվեց Արշակունիների Բիթարմայա կամ Թերարմայա (այժմ՝ Թախտ-ի Սուլայ-ման) վայրը: Մանրամասն տե՛ս J. Hell-ի հոդվածը Encyclopédie de l'Islam-ում, հտ. Ա, էջ 194 և հտ.:

183. Բնագրում՝ Τίφλις: Ասենք այստեղ, որ Մովսես Կաղանկատվացու տվյալներով քաղաքը պաշտպանում էր պարսիկ զորավար «բաշ պատերազմող» Շարհապաղան (Մովսես Կաղանկատվացի, էջ 156): Բայց, ինչպես Թեոփանեսից գիտենք, նա 6115 թ. սպանվել էր (բնագրում՝ «ընկավ Թիկունքից սրի հարված ստանալով»: Ստրատոսը գտնում է, որ «ընկավ» դեռ չի նշանակում սպանվեց, այլ հնարավոր է, որ նա վիրավորվեց: Στρατόν, Τὸ Βυζάντιον, Β', σελ. 561):

184. Արտամանովի կարծիքով, նա Ջերուխաբան Մխո-շադի կրտսեր որդի Բուլի-շադն էր (Артамонов, История хазар, стр. 147):

185. Իմա՝ Կոստանդնուպոլիս: Սերենուր Քաղկեդոնը գրավողի և Կոստանդնուպոլիսը պաշարողի անունն է տալիս՝ Խոռյամ, և ոչ տիտղոսը՝ Շահր Վարադ:

186. Իմա՝ Դանուբ:

187. Աղբյուրներում այդ նավերը (այստեղ՝ σχάφη γλοπτά) կոչվում են նաև μονόξυλα այսինքն միակտոր ծառի բնից պատրաստված նավեր:

188. Ոսկեղջյուր կոչվածի՝ Κεράτιος κάλπος:

189. «Պերատիկա» շրջանների տակ ենթադրվում են Անատոլիկոնն ու Օպսիկիոնը: Տե՛ս ծանոթ. 517:

190. Իմա՝ խազարների: Տե՛ս ծանոթ. 178:

191. Բնագրում՝ Παζάτης: Սերենուր Ռոճ Վեհան (var. Ռոճիկ Վեհան) գորավարը, որ խկապես սպանվեց Նինվեի ճակատամարտում (Սերենու, էջ 126): Մովսես Կաղանկատվացին նրան անվանում է Ռոճվեհ (էջ 163), Նիկեփոր պատրիարքը՝ Ροζάτης (էջ 21):

192. Բնագրում՝ Χαμαθιά: Անծանոթ շրջան, որ նույնացնում են Թեոփիլակոս Սիմոկատասի հիշատակած Խնայթա վայրի հետ, Արբելից հյուսիս:

193. Սկիզբիցսն այն կոչում է Ստրազնա: Հայկական աղբյուրներում հիշվում է Մեծ Զավ ձևով: Այժմ էլ այդպես է կոչվում (տե՛ս Նրեմյան, Հայաստանը, էջ 66): Տիգրիս գետի արևելյան վտակը, Մոսուլից (Նինվե) 40 կմ հարավ: Հերակլիոսը Մեծ Զաբն ան-ցավ 626 թ. դեկտեմբերի 1-ին: Փոքր Զաբը գտնվում է Մեծ Զաբից 95 կմ հարավ:

194. Նիկեի տեղում այժմ գտնվում է Մասուլ բաղաբը: Ճակատամարտը տեղի ունեցավ 626 թ. դեկտեմբերի 12-ին:
195. Բնագրում՝ Βιζντις ὁ στρατηαρχος: Հետագայում նա մասնակցեց Յարմուկի նշանավոր ճակատամարտին (20 օգոստոս 636 թ.):
196. Նիկեիոր պատրիարքը գրում է, որ կայսեր շրթունքը վիրավորվեց «նետաձգության մեջ վարպետ» Հոփղատեսի արձակած նետից: Հերակլիոսը վիրավորվեց նաև ոտքից՝ նույն Հոփղատեսի արձակած նետից (Nicephori Breviarium, p. 21—22):
197. Պարսից բանակում, հասկանալի է, բյուզանդական տերմինաբանությունը չէր ընդունված: Թեոփանեսը նրանց տուրմարխ է անվանում բյուզանդական ձևով: Տուրմարխը գլխավորում էր 500 նետածիգ, 300 վահանակիր և 100 նիզակակիր (տե՛ս Կոստանդին Միքանածին, էջ 233):
198. Ժամբ 11-ը չի համապատասխանում մեր այդ ժամին: Բյուզանդացիների առաջին ժամբ արևմտյան է, 6-րդ ժամբ՝ կեսօրը:
199. Դիշերվա առաջին ժամբ համապատասխանում է արևամուտի առաջին ժամին:
200. Սկարամանգիոնը զգեստի անվանում է, մի տեսակ քաֆթան: Տե՛ս Կոստանդին Միքանածին, էջ 300:
201. Կարելի է կարդալ նաև Վարսամուսես: Ըստ Մարկվարտի (Streifzüge, S. 401), նա Վահրամ Աշուշան է, Գուգարքի իշխանը (apud: Στραταριον, Το Βαζαντιον, Β', σελ. 911):
202. Բնագրում՝ ἐκ τοῦ Βαζαντιου, Բյուզանդիոնից: Քանի որ Շահր Վարադը Բյուզանդիոնը չէր գրավել, Տաֆելը «Բյուզանդիոնի» կողքին գրում է τῆς Χαλκηδόνος Բաղկեդոնից, որ թեև չկա ո՛չ Թեոփանեսի բնագրում, ո՛չ էլ Անաստասիոսի լատիներեն թարգմանության մեջ, համարվում է ճիշտ: Ստրատարը չէ Բազանտիս մեկնաբանում է «բյուզանդական հողերից» (Στραταριον, Το Βαζαντιον, Β', σελ. 592), որ անհավանական է, քանի որ այն ժամանակ «բյուզանդականը» չունեի այն նշանակությունը, ինչ այսօր:
203. Փոքր Զարի մասին տե՛ս ժանոթ. 193:
204. Դեսմեր (Յադդին): Ծագումով Զասորի քրիստոնյա էր և սասանյանների տերության ֆինանսների վարչության խոշորագույն գործիչներից մեկը: Տե՛ս Christensen, L'Iran, p. 123. 451 sqq.: Այդ պաշտոնը կրողը կոչվում էր vāstryōshān-sālār կամ vāstryōshbadh:
205. Դեկտեմբերի 25-ին:
206. Բնագրում՝ Δεζερμάν:
207. Ուսումնասիրողներից ոմանք նույնացնում են Քսենոփոնի հիշատակած Փյուսկոս գետի հետ («Անաբասիս», Բ, 25): Բխում է Կորդվաց լեռներից և թափվում է Տիգրիսի ձախ ափին: Հետագայում արաբներն անվանեցին Սդորնեհ, իսկ թուրքերը՝ Կատրիսու: Այժմ կոչվում է Ադեմ: Ըստ Ռոուլինսոնի Տորնան պարսկերեն Tur Nahr-ն է, կամ Kan-Tur-ը, արաբ. Katur, որ նշանակում է Տուրի ջրանցք: Այդպես է կոչվում Nahr-Wan ջրանցքի հյուսիսային բաղուկը (Στραταριον, Το Βαζαντιον, Β', σελ. 912):
208. Ըստ Ռոուլինսոնի, տառերի տեղափոխություն է տեղի ունեցել և ճիշտ ընթերցումը Սուրա է: Ընթարարար նույնացվում է ասորիների Սորի կամ Բեթ Սորիի հետ (Στραταριον, Το Βαζαντιον, Β', σελ. 950):

209. Վայրը Բեկդադ ձևով հիշատակում է Մովսես Կաղանկատվացին (էջ 201): Ըստ Թոուլինսոնի (Rawlinson, Memoir p. 94: Apud: Στράβων, Το Βουλγαντον, Β, σελ. 936) Belt Germa-յի աղավաղումն է, ժամանակակից Քիրքուքը:
210. Հմմտ. ծանոթ. 150: «Դաստակերտ» բառի նշանակությունների մասին տե՛ս Саркисян, Дастагерт, стр. 97—101:
211. Բնագրում՝ Βαρσάρ (Վարադ-առդ, «վարադների դեռ»): Այժմ կոչվում է Beled-Ruz: Թեոփիլակտոսի գրածը հավանաբար վերաբերում է դեռի անունը կրող մի ավանի (Στράβων, Το Βουλγαντον, Β, σελ. 935):
212. Այն է՝ Տիգրոն:
213. Բնագրում՝ Βαβδάρ: Թոուլինսոնի ենթադրությամբ գտնվում էր Դաստակերտի մոտ:
214. Բնագրում՝ ἄλσος (հայերեն՝ «հալուէ», երբ. «ահալիմ» և «ահալոթ»): Թուփ, նաև անուշահոտ յուղային փայտ: Սուրբ գրքում հաճախ է հանդիպում, որի տակ ենթադրվում է aquilaria agallocha-ն: Նրանից ստացվում է անուշահոտ յուղ, որով, ըստ նոր կտակարանի (Յովհ. ԺԺ, 39), թաղելու ժամանակ օծեցին Քրիստոսի մարմինը:
215. Լիտրը (12 ունկ) նաև ծանրությամբ չափ է: Կշռում է 326,4 գրամ: Մանանդյան, Կշիռները, էջ 29 և 129:
216. Բնագրում՝ χαρβίσις: Հունարեն լատինականացում բառը բացակայում է: Ամենայն հավանականությամբ պարսկերեն քարվաս (կերպաս) բառն է:
217. Հունվարի 6-ին:
218. Նրեի խոսքովի թիկնեղություն վրա:
219. Սելևկիա (Վեհ Արտաշիր) քաղաքը: Հիմնադրել էր Արտաշիր Պապականը հռոմեական զորավար Ավիդիոս Կասսիոսի կողմից 165 թ. ավերակ դարձված հին Սելևկիայի տեղում: Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, էջ 166. «առ խելս կամրջին Տիգրիս գետոյ՝ ընդ Վեհ Արտաշիր քաղաքի յանդիման դրանեն Տիգրոնի»:
220. Թեոփիլակտոս Միմոկատտասը Շիրինին համարում է հռոմայեցի և քրիստոնյա (Theophyl. Simocat., p. 231—232): Թաալիբին նրան անվանում է «գեղեցկության պարտեզ, ախոյանը լիալուսնի», (Christensen, L'Iran, p. 475): Այն պատճառով, որ նա քրիստոնյա էր, և՛ արևմտյան, և՛ արևելյան բաղում աղբյուրներ նրան հույն են համարում, սակայն անունը, որ նշանակում է «քաղցր», իրանական է: Սեբեոսը (էջ 85) ցույց է տալիս, որ նա ծագումով խուզիստանից էր («էին սորա (խոսքովին) կանայք բազում ըստ աւրինի մոզութեան իւրեանց, բայց առ սա և կանայս քրիստոնեայս, և սորա կին քրիստոնեայ յոյժ գեղեցիկ ի խուժատան աշխարհէ, անունն Շիրին: Սա է բամբիշն, տիկնաց տիկին...»): Խոսքովը ամուսնացել էր նրա հետ իր իշխանության սկզբում: Շիրինը ստորագասվում էր բյուզանդացի իշխանուհի Մարիային, որին խոսքովը կնության առավ զխալոբապես քաղաքական նկատառումներով: Հիշյալ Մարիան Տաբարիի ասելով իբրև թե Մավրիկիոս կայսեր դուստրն էր (Christensen, L'Iran, p. 475—476):
221. Մեղադրանքն անհիմն չէր: Ըստ Սեբեոսի, Հերակլիոսը սակամայ բարեկամանայ և մեծարէ զնոսա իբրև զվաստակաւորս և զսիրելի հիւրս. և ընդ առաջ նորա (կոստանդնուպոլիսը պաշարող Շահր Վարազի) պատարագաւք, և տայր զաւրավարին և իշխանացն մեծամեծ ընծայս: Եւ բաշխէր զաւրացն հոռոս, և ճաշ և ընթրիս ամենայն զաւրացն մինչև ցեւթն ար» (էջ 122):

222. Խոսքը այդ անունով գետի մասին չէ, այլ Nahr-Wan ջրանցքի, որ կապում է Տիգրիսը Դիալայի հետ, Տիգրոսից 12 մղոն առաջ։
223. Արմենիականների բանակաթեմի մասին տե՛ս Կոստանդին Սիրանածին, էջ 167—169, 231, 318—319։
224. Պարսկերեն՝ Shahrāzūr, ըստ Զատիկական ժամանակագրության Տարսուրա Հերակլիոսն այստեղ հասավ 628 թ. փետրվարին։ Ոմանց ենթադրությամբ գրտնրվում էր Զազրոս լեռան և Sirvan գետի միջև։ Մանանդյանը տեղադրում է ժամանակակից Սուլայմանիա քաղաքից հարավ-արևելք։
225. Բնագրում՝ Μεζιζιον, Համապատասխանում է Սերենոսի «զարափարն Յունաց Մժէժ Գնունին» անձնավորության (էջ 131)։
226. Բնագրում՝ Γουρδαβουδας (Գուշնասպ < Վշնասպ Ասպադ)։ Գուցե նույնանուն է Մովսես Կաղանկատվացու Գադ Վշնասպի հետ, որ «էր այլ յաղթանդամ և դորեղ ի տոհմէ գեղապետութեան ազգին իւրոյ» (էջ 178)։ Ըստ երևույթին անվան ավելի հիշատակը պահպանվել է Հերակլիոսի Կոստանդնուպոլիս ուղարկած նամակում՝ Γουρδαβουδας (Chronicon Paschale, p. 728)։ Թեոփանեսը նրան անվանում է χιλιάρχος, որ թարգմանաբար հազարապետ է նշանակում։ Ստրատոսը կասկածում է, ինչպես կարող է հասարակ հազարապետը ողջ պարսկական բանակի սպարապետը լինել, չէ՞ որ սպարապետությունը ազնվականական հայտնի ընտանիքների մենաշնորհն էր (Στράτων, Το Βούλευτον, Β', σελ. 625)։ Երեւի հակասություն չկա այստեղ, Թեոփանեսը լսելով պարսկերեն «հազարապետ», թարգմանել է χιλιάρχος, այնինչ «հազարապետ» պարսկական (և հայկական) բարձր տիտղոս էր, պէ՛ր. hazārapat հին պարսկ. hazahrapati, պարսկ. hazārbad (Անաոյան, Արմատական բառարան, հտ. III, էջ 6)։ Եղիշեից սարգվում է, որ «հազարապետ»-ի հոմանիշն է «հրամատարը», որ հասկանալի է, հազար զինվորից բաղկացած զորամասի հրամանատարը չէր։ Ինչպես ցույց է տալիս Բենվենիստը՝ հունարեն Աստվածաշնչի χιλιάρχος-ը և հայկական աղբյուրների հազարապետը տարբեր նշանակություն ունեն (տեղմինի մասին տե՛ս Benveniste, Titres, p. 67—71)։ Ընդ որում Թեոփանեսի «հազարապետ»-ը պիտի հասկանալ ոչ որպես որոշակի բանակությամբ զորքի հրամանատար, այլ հազարապետ պէ՛ր. hazārapat իմաստով։
227. Բնագրում՝ Μερδαβι (Մարդանշահ)։ Նա բրիտանյա Շիրինի որդին էր։
228. Բնագրում՝ Σαλαρδός։
229. Նկատի ունի խազարներին։ Տե՛ս Ժանոթ. 178։
230. Մեր համոզմամբ Թեոփանեսի բնագիրն այստեղ թերի է։ Հետևող նախադասությունները ամենևին էլ Շերոյեի և Վշնասպ Ասպադի միջև գնացող բանակցություններին չեն վերաբերում, այլ, ամենայն հավանականությամբ, բյուզանդական կայսեր մոտ Վշնասպ Ասպադի դեսպանի, որը տեղյակ է պահում կայսեր Վշնասպի և Շերոյեի միջև գնացած բանակցությունների մասին։
231. Տաքսատիոնը (նաև տաքսատոս, տաքսենոտես) զորավարի հրամանատարության ներքո գտնվող և ոստիկանական պարտականություններ վարող անձնավորություն էր և սովորական զինվորներից բարձր էր դասվում։ Մեկ անգամ հանդիպում է և հայկական աղբյուրներում. «Սատակեաց կորոյս զտաքսատոս զօրաց նորա վասն անարդանաց նորա» (Հմմտ. Անաոյան, Արմատական բառարան, հատ. IV, էջ 391)։

232. Յաղղեմի որդու անունը Շամթա էր (*Christensen, L'Iran, p. 493—494*):
233. Արաբական մի աղբյուրի՝ Guidi-ի Անանունի տվյալներով հոսորովին սպանեցին Շամթան, Յաղղեմի որդին և Նեվ-Որմիզդը՝ Նեմրոզի պատգոսպան Մարդանշահի որդին: Հայտնի է, որ և՛ Յաղղեմին, և՛ Մարդանշահին ժամանակին մահապատժի էր ենթարկել հոսորով արքան: հոսորովը սպանվեց 628 թ. փետրվարի 28-ին: Դրա վերաբերյալ մանրամասն գրում են Սերեոսը (գլ. 48) և Մովսես Կաղանկատվացին (էջ 165—170): Տե՛ս նաև՝ *Chronicon Paschale, p. 729 sqq.*:
234. Հերակլիոսի և Կալատ-Շերոյեի միջև տեղի ունեցած նամակագրության մասին (628), որ պահպանվել է Զատիկական ժամանակագրության մեջ (էջ 727 և հտ.) հատուկ տե՛ս *Oikonomides, Correspondence, p. 269—281*: Զատիկական ժամանակագրության մեջ պահպանվել է և Հերակլիոսի նամակը՝ ուղղված Կալատ-Շերոյեին, որն ընթերցվեց սբ. Սոֆիայում, 628 թ. մայիսի 15-ին: Այն գրվել է Ատրպատականի Դանձակում ապրիլի 8-ին: Մինչ այդ մարտի 24-ին Դանձակ էին ժամանել Կալատ արքայի դեսպանի երկու ներկայացուցիչները, մեկը պարսիկ, մյուսը՝ հայ, իսկ ապրիլի 5-ին՝ ինքը՝ դեսպանը, անունը հոսդան, աստիճանը՝ Ռասնան (*δυναστος Χροδαν και ἀσπίωλα Ρασνάν*), որը արքայի անունից տեղեկացրել էր Հերակլիոսին իր գահակալման մասին: Ապրիլի 8-ին դեսպանը տարուարիոս Եվստաթիոսի ուղեկցությամբ գնաց արքայից արքայի մոտ: Ահա այս դեսպանի մասին Հերակլիոսը նամակ գրեց Կոստանդնուպոլիս:
235. Այդ մասին տեղեկություններ է պահպանել և Սերեոսը (էջ 128), որը ևս նշում է պարսիկ դեսպանի «անունը»՝ Ռաշնան (Զատիկական ժամանակագրության մեջ՝ *Ρασνάν*), ինչպես և Հերակլիոսի դեսպանի՝ Յուստաթ (Զատիկական ժամանակագրության մեջ՝ *Εὐσταθίου*): Հայ պատմիչը գրում է. «արձակ է ղրաշնան ոմն իշխան», իսկ Հերակլիոսը իր հերթին արքայից արքայի մոտ ուղարկեց «զոմն իւրոց գլխաւոր նախարարացն, որում անունն էր Յուստաթ»:
236. Շերոյեն (Կալատ II, 25 փետրվար-սեպտեմբեր 628 թ.): Նա հոսորով II-ի և բյուզանդացի Մարիայի որդին էր, արքայազներից հավանաբար ավագը: Նրա մասին Մովսես Կաղանկատվացին ասում է. «Նւ էր բարեխորհ, ողորմած առ ամենայն աշխարհս և առ ծառայս իւր. արձակեալ իւրաքանչիւր տեղիս զամենայն կալանաւորս, որք էին ի դիպահոջ դրան հօր իւրոյ... Նւ զամենայն հարկս և մաքս արքունի երեքամեայ ժամանակաւ ընդ ամենայն տեղիս իւրոյ տէրութեան շնորհեալ ամենեցուն...» (էջ 169): Ըստ պատմիչի, նա թագավորեց 7 ամիս:
237. Նախքան Կոստանդնուպոլիս գալը, Հերակլիոսը մայրաքաղաք ուղարկեց իր հաղթանակն ավետող նամակը (տե՛ս ծանոթ. 234), որից պարզվում է, որ կայսրը մարտի 15-ին «Դանձակի մոտ գտնվող իր՝ Հերակլիոսի ամրությունից» մի նամակ էլ է ուղարկել Կոստանդնուպոլիս, որը բովանդակում էր իր արշավանքի նկարագրությունը՝ 627 թ. հոկտեմբերի 17-ից մինչև 628 թ. մարտի 15-ը, պատմվում հոսորովի փախուստի մասին՝ Դաստակերտից Տիգրոն և այլն (*Chronicon Paschale, p. 729*):
238. Իմա՛ կայսերակից:
239. Հիերիան ժամանակակից Ֆեներ բախշեն է, Կադրբոյից (Քաղկեդոն) հարավ, Կոստանդնուպոլսի ասիական ափին: Կար նույնանուն պալատ, կառուցված Հուստինիանոս I-ի կին Թեոդորայի կողմից:
240. Արտաշիր III արքա: Իշխեց 628 թ. սեպտեմբերից մինչև 630 թ. ապրիլի 27-ը:

241. Հրեաների մասին Բյուզանդիոնում հիշյալ ժամանակներում տե՛ս *Бенешевич К истории евреев*, стр. 197—224, 305—318:
242. Ինչպես տեսնում ենք, Քենոփանեսի տվյալներով Արտաշիրին սպանողը Շահը Վարազն էր: Արտաշիրի սպանության գործում, անկասկած, մատուցեցին Բյուզանդիան: Սերեոսի տվյալներով, Հերակլիոսը դիմեց պարսից զորավար Խոռյամին (Շահը Վարազին), առաջարկելով նրան զինական օգնություն և պարսից զահը՝ ժառանգար: Կայսրը անգամ անձնական տեսակցություն ունեցավ այդ զորավարի հետ: «Իսկ Խոռեմայ առեալ զբազմութիւն զարացիւրոց՝ զնացի Տիգրոն, և հրաման տուեալ ոմանց՝ սպանին զտղայ թագաւորն զԱրտաշիր, և ինքն երթեալ նստաւ յաթոթազաւորութեանն» (էջ 130): Հմմտ. Հովնանէս Դրասխանակերտցի, էջ 76:
243. Սերեոսը նրան անվանում է Բրոր բամբիշ (էջ 63, 130). «զԲրորն, դուստր Խոսրովայ, որ էր կին նորին» (իմա՝ Խոռեմի): Հմմտ. Թովմա Արծրունի, էջ 97: «Բամբիշ»-ը համապատասխանում է հայոց «տիկին» կամ «թագուհի» բառերին: Տե՛ս *Justi, Iranisches Namenbuch*, S. 62: Տե՛ս և Հովնանէս Դրասխանակերտցի, էջ 76. «Բրոր՝ դուստր Խոսրովու, որ էր կին Խոռեմայ»:
244. Խոսքը, հավանաբար, Որմիզդ Ե-ի մասին է, որ թագավորել է 630—632 թթ. միջև, բայց սա վերջին սասանյան արքայից արքան չէր, ինչպես ցույց է տալիս Քենոփանեսը, այլ Հազկերտ Գ-ը (632—651): Սասանյան վերջին արքաների մասին տե՛ս և Հովհաննէս Դրասխանակերտցու երկում. «Վախճանի Կաւատ Պարսից արքայ՝ թողլով զթագաւորութիւնն Արտաշիր տղայազիտակ որդւոյ իւրոյ: Իսկ ապա Հերակլ... թագաւորեցուցանէ Պարսից զԽոռեմ... ապա զօրքն Խոռեմայ սպանանեն զԽոռեմ... կացուցեալ թագաւոր զԲրոր՝ դուստր Խոսրովի, որ էր կին Խոռեմայ, որ յետ մահու նորա զԽոսրով ոմն յազգէ Սասանայ. իսկ յետ նորա զԱզրմիկ դուստր Խոսրովայ և յետ նորա զՈրմիզդ՝ թոն Խոսրովայ, զոր խեղղամահ արարին. և զկնի նորա թագաւորէ Յազկերտ՝ թոն Խոսրովայ» (էջ 76—77):
- Խոսրով II-ից հետո թագավորած արքայից արքաների, ինչպես և բյուզանդապարսկական պատերազմների մասին Փոկասի և Հերակլիոսի ժամանակ հատուկ տե՛ս *Колесников, Иран*:
245. Ասորիքի միաբնակները Հակոբիկ կոչվեցին Հակոբոս Բարադեսի անունով, որ VI դ. կազմակերպեց Ասորիքի միաբնակ եկեղեցին: VII դարից Հակոբիկները փոխնիփոխ ընկնում են Բյուզանդիայի և արաբական խալիֆայության զերիշխանության ներքո: Կայսրությունը, հետագայում նաև Հռոմի պապը եռանդուն աշխատանք տարան նրանց իրենց կողմը գրավելու համար՝ բայց առանց հաջողության: XI դ. բազմաթիվ Հակոբիկներ կային Ֆիլիստուպոլսում, որոնք բնակվում էին միաբնակ հայերի և պաղիկյան աղանդավորների հետ և հաճախ նրանց միանում՝ հակապետական ելույթների ժամանակ (տե՛ս *Anne Comnène, Alexias*, t. II, p. 180—181): Հակոբիկները մերժում էին 451 թ. Քաղկեդոնի ժողովը և ընդունում 449 թ. Նիքեոսի «ազնապալան» հորջորջվածը, մերժում էին Եվադիմոսին, բայց սրբացնում Սևրոսին, ընդունելով նրա վարդապետությունը: Հակոբիկյան համայնքներ գոյություն ունեն մինչև օրս: Հակոբիկները տվել են բազմաթիվ գիտական դեմքեր, որոնցից հիշատակելի է նշանավոր Գրիգոր Արուս-Յարաշը (Բար Հեբրեոս), վախճանված 1286 թ.:
246. Նկատելի է, որ այն ժամանակ (629) դեռևս «միակամության» հարց չկար: Միակամության վարդապետությունն առաջին անգամ հանդես եկավ 638 թ. Հերակ-

լիոսի հրապարակած «էկթեսիս»-ում (երա մասին տե՛ս ստորև, ծանոթ. 251): Տե՛ս Στράτων, «Ο πατριάρχης Πύρρος», σελ. 13):

247. Հովհաննես Դ պապ (640—642):

248. Փարանի եպիսկոպոս Թեոդորոսը, որ միակամական էր, դատապարտվեց VI Տիեզերական ժողովի կողմից (680): Այդ ժողովում լուծարքի ենթարկվեց Փարանի եպիսկոպոսութիւնը: Փարան վայրը գտնվում էր Ապառաժն Արարիայում, Սինա լեռան հյուսիսային լանջերին, և ենթարկվում էր Պետրայի մետրոպոլիտութիւնի:

249. Նկատի ունի Մարկիանոս կայսեր օրոք Կոստանդնուպոլսի Քաղկեդոն արվարձանում գումարված IV Տիեզերական ժողովը (451 թ. հոկտեմբերի 8-ից նոյեմբերի 1-ը), ուղղված ազանդապետ Եվտիքեսի վարդապետութիւն դեմ: Մասնակցում էին եկեղեցու 630 հայր, այդ թվում և Հռոմի եկեղեցու հինգ ներկայացուցիչներ: Նիստերը գլխավորում էր Կոստանդնուպոլսի պատրիարք Անատոլիոսը, Անտիոքի՝ Մաքսիմոսը, Երուսաղեմի՝ Յորնադիոսը և Հռոմի երկու ներկայացուցիչները՝ Պասքալիոս և Լուկենտիոս: Ժողովը դատապարտեց Եվտիքեսին և Դիոսկորոսին, արգարացրեց Փլավիանոսին, հաշտեցման եղանակով գտնելու համար ուղղափառ համարեց Կյուրեղին, Եղեսիայի եպիսկոպոս Իբասին և Կյուրոսի Թեոդորեոսին: Որպես հիմք ընդունվեց Հռոմի Լևոն պապի «առժամային» Քրիստոսի երկու՝ մի անձի մեջ միավորված բնութիւնների մասին: Ժողովը ընդունեց 30 կանոն: Ժողովին հայերը չմասնակցեցին, քանզի զբաղված էին սասանյանների դեմ պայքարով՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորութիւնով: Նրանք հետագայում դատապարտեցին այդ ժողովը և վերջնականապես բաժանվեցին հունական եկեղեցուց: Քաղկեդոնի ժողովի արձանագրութիւնները պահպանվել են: Տե՛ս Mansi, Collectio, t. VI—VII:

250. Երուսաղեմի կատաղի հակամիակամական պատրիարք Սոփրոնիոսը (633—638): Տե՛ս և նախորդ ծանոթագրութիւնը:

251. Միակամութիւնը (Μονοθελητισμός) Տիեզերական եկեղեցու կողմից որակված է որպէս հերձված: Հերակլիոսը, առաջ քաշելով այդ ուսմունքը, նախաձեռնեց կամքի միաբնականների (մոնոֆիզիտների) և երկաբնականների (դիոֆիզիտների) կամ քաղկեդոնականների) միջև բացված խոր անդունդը: Միակամականները առաջ քաշեցին Քրիստոսի երկու բնութիւն, բայց մեկ ներգործութիւն և կամքի մասին վարդապետութիւնը: Հարցը առաջ քաշեց Հերակլիոս վայսրը և Կոստանդնուպոլսի պատրիարք Սերգիոս Ա-ը (610—639), որոնք համաձայնութիւն եկան միաբնակ պատրիարքներ՝ Անտիոքի Աթանասիոսի և Ալեքսանդրիայի Կյուրոսի հետ: Բայց երկու վանականներ՝ Սոփրոնիոսը (հետագայում Երուսաղեմի պատրիարք) և Մաքսիմոսը եռանդազին նրա դեմ հանդես եկան: Հերակլիոսը հրապարակեց «էկթեսիս»-ը ի պաշտպանութիւն միակամութիւնի: Վեճը սրվեց, և Կոստանուպոլսի կայսրը հրապարակեց «Դեքր»-ը՝ արգելելով այդ հարցերի շուրջ վեճերը: Հռոմի պապ Մարտինոսը կատերանում 649 թ. ժողով գումարեց և դատապարտեց և՛ «էկթեսիս»-ը, և՛ «Դեքր»-ը: Կոստանուպոլսի կայսրը պապին հերոսն աքսորեց, իսկ Մաքսիմոսը մարմնական պատիժներ ստանալով, աքսորվեց Լազիկա: Կոստանդնուպոլսի V Տիեզերական ժողովը դատապարտեց միակամութիւնը: Գտնում են, որ միակամականների բեկորները հետագայում հանդես եկան մարոնիտների անվան տակ:

252. Խոսքը Գաբաղու եպիսկոպոս Սեբրիանոսի մասին է, IV դ. եկեղեցական նշանավոր գործչի, Հովհան Ոսկերեքեանի խոշորագույն հակառակորդներից մեկի: Մեծ հոկտոր էր, գրել է բազմաթիւ Մեկնութիւններ և Ճառեր, որոնց մեծ մասի հունա-

- րեն բնագրերը կորել են, պահպանվել են նրանց լատիներեն և հայերեն թարգմանությունները:
253. Կոստանդնուպոլսի պատրիարք, ծնված IV դ. վերջին: Սովորել է Անտիոքում, հավանաբար աշակերտել է Թեոդորոս Մոպսուեստացուն: 428 թ. Թեոդորոս II կայսրը նրան նշանակեց Կոստանդնուպոլսի պատրիարք: Կատաղի պայքար մղեց արիստականների, մակեդոնիոսականների և նովատյանների դեմ: Առաջ էր քաշում այն միտքը, որի համաձայն Քրիստոսի երկու բնությունները իրարից բաժանված են, Մարիամին անվանում էր ոչ թե Աստվածածին, այլ Քրիստոսածին: Նեստորի վարդապետությունը դատապարտեց Հռոմի պապ Կելեստինոսը (430) և Եփեսոսի III Տիեզերական ժողովը (431): Նեստորը արսորվեց Եգիպտոս, ուր և մեռավ 450 թ.: Նեստորի բազմաթիվ երկերը կորել են կամ ոչնչացվել: Պահպանվել են առանձին բեկորներ, այդ թվում և թարգմանություններ՝ լատիներեն, ասորերեն և հայերեն: Տե՛ս և ծանոթ. 173:
254. Կոստանդնուպոլսի պատրիարք Պյուրոսը (20 դեկտ. 638—641, 654 թ. հունվարից հունիս): Նրա մասին հատուկ տե՛ս Σ τ ρ ῑ τ ο υ, 'Ο πατριάρχης Πύρρος, σελ. 11—19):
255. Մարտինեն Հերակլիոսի երկրորդ կինն էր, թունավորվող Կոստանդինը՝ Հերակլիոսի որդին առաջին կին Եվդոկիայից և կոչվում էր նաև Հերակլիոս Նոր Կոստանդին: Նա Հերակլիոսի կողմից կայսերակից էր հռչակվել դեռևս 613 թ. հունվարի 22-ին: Միահեծան թագավորեց 641 թ. փետրվարի 11-ից մինչև նույն տարվա մայիսի 24-ը:
256. Հերակլիոսնաբ Հերակլիոսի որդին էր Մարտինեից ծնված: Թագավորեց 641 թ. մայիսի 25-ից մինչև նույն տարվա սեպտեմբերը:
257. Կոստաբ (Կոստանդին III Պոզոնատոս, 641՝ ըստ Ստրատոսի՝ 642—668 թթ.) Հերակլիոսի թոռն էր: Բյուզանդագետների մեջ տարածված էր այն թյուր կարծիքը, որ Պոզոնատոս (մորուքավոր) էր կոչվում Կոստանդին IV-ը (668—686): Այժմ ապացուցված է, որ Պոզոնատոսը իրականում Կոստանդին III-ն էր:
258. Կոստանդնուպոլսի պատրիարք Պավղոս Բ-ը (641—653): Որակված է հերձվածող, քանդի շարունակում էր պաշտպանել միակամությունը:
259. Թեոդորոս Ա պապը (642—649):
260. Ավետարանական դարձվածք է. «շուն դառնայ անդրէն ի փսխած իւր» (Բ թուղթ Պետրոսի, Բ, 20—22):
261. Այսինքն՝ հաղորդության գինուց:
262. Հռոմի պապ Մարտինոս Ա-ը (649—655):
263. Հռոմի պապ Ագաթոնը (678—681):
264. Բնագրում՝ 'Ιερμοουχάν: Հիշելով հակատամարտը (աշխարհի արարչագործություն 6126 թ. տակ) նա այս անգամ գրում է 'Ιερμοουχθᾶ ποταμοῦ: Զարմուկ գետի ափին տեղի ունեցած հակատամարտը (636 թ. օգոստոսի 20-ին):
265. Բնագրում՝ Παλαιστινῶν καὶ Καισαρείων: Հավանաբար καί-ն կրկնված է (Կեսարիան էլ Και-ով է սկսվում), չէ՞ որ խոսքը Պաղեստինի Կեսարիայի մասին է:
266. Նկատի ունի Կոստաս II-ի սպանությունը Սիկիլիայում: Տե՛ս վերը, էջ 63:
267. Աբու Բաբր, Աբդալլահ Ատիբ աշ-Շիդդիբ ռաշիդուն, «ուղղափառ» առաջին խալիֆան (632—634): Նրան հաջորդած մյուս երեք «ուղղափառ» խալիֆաներն են Օմարը, Օսմանը և Ալին: Մովսես Կաղանկատվացին նրան անվանում է «Աբուբեքր»:

Աբուհափայ որդին» կամ «Աբուբէքր Աբի Կահիեան»: Մոհամեդի մահվան մասին նույն հեղինակը գրում է. «...ինն տարի էր Մահմետայ իշխանութեանն: Ի տասներորդ ամին մեռաւ յաւուր երկուշաբթի յամսեանն շահաբի՝ աղաւաղի յնրկուցն, կալեալ զիշխանութիւնն ամս տասն: Եւ երեքտասան ամ զքարոզութիւն իւր հաստատեաց: Քառասուն ամ ունէր, մինչ երեքցան և ի վաթսուն և յերրորդ ամին մեռաւ» (էջ 332):

268. Իմա՛ նիզար, արաբների հյուսիսային ցեղերի նախահայրը:

269. Մուդար և Ռաբիյա:

270. Իմա՛ Կուրայշ, Քայիս, Քամիմ և Ասադ, արաբական հյուսիսային ամենահայտնի ցեղերը:

271. Հավանաբար նկատի ունի Մադիամ երկիրը, որտեղ Հին կտակարանի համաձայն փախալ Մովսես մարգարեն եգիպտացու սպանությունից հետո: Կար և Մադիանեքաղաք Արաբիայի հյուսիս-արևմուտքում, Կարմիր ծովի մոտ:

272. Բնագրում՝ ἐνδοτέροι:

273. Իեկտանի (Yakzan) տակ ենթադրվում է Քահթանը, որը մահմեդական ավանդության համաձայն հանդիսանում է հարավային արաբական (կամ եմենական, Քեոփանեսի երկում՝ Ամանիտ) ցեղերի նախահայրը, այդ թվում և հիմյարների, որոնց Քեոփանեսը և բյուզանդական այլ հեղինակներ Հոմերիտներ են անվանում: Իեկտան-Քահթան անունը երբայական Յոկտան անվան (Հին կտակարանի Յոթանասնից թարգմանության մեջ՝ Ἰεζάβη) արաբացված ձևն է, որին նման զեք է տրված Ծննդոց գրքում (Ժ, 25: Հմմտ. DAI, II, p. 70):

274. Հոմերիտները (Հիմյար) Արաբիայի հարավում բնակվող արաբական ցեղ: Անաստասիոս կայսեր ժամանակ մասամբ քրիստոնյա էր դարձել: Բյուզանդիան սերտ կապեր էր հաստատել նրանց հետ դեռևս VI դ.՝ իր առևտրական շահերից ելնելով և իր սահմանները սասանյաններից ապահովելու համար: Նրանց մասին տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», էջ 53—55, 57, 58, 78, նաև *Пугачевская, Эфиопия и Химьяр*, стр. 87—97: *Vasiliev, Notes*, p. 306—316:

275. Կամ՝ Խադիջա: Մոհամմեդի առաջին կինն էր, դուստրը Խուվայլիդի, Մեքքայի Կուրայշ ցեղից: Մինչև Մոհամմեդի հետ ամուսնանալը երկու անգամ ամուսնացած է եղել: Աղբյուրների տվյալների համաձայն Մոհամմեդը այս ժամանակ 25 (կամ 23 և կամ 21) տարեկան էր, իսկ Խադիջան՝ 40 (կամ 28): Մոհամմեդը Խադիջայից ունեցավ 5 երեխա, 4 դուստր (Ջայնաբ, Ումմ Կուլթում, Ֆաթիմա և Ռուքայյա) և մեկ (հնարավոր է երկու) որդի (ալ-Կասիմ և Աբդ Ալլահ, որոնք չի բացառված նույն մարդու երկու անունները լինեն):

Մոհամմեդի հանդես գալու մասին հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Վարդան Արևելյին. «...այր մի ի յորդոցն Իսմայելի, որում անուն էր Մահամթ (sic!) թանգար, որ էր ծնեալ ի քաղաքին Մադինա, մերձ ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ, յազգէն՝ որ կոչի Կորէշ որդի Արդլայ, որ մեռաւ որք թողեալ զնա. որ և յարեցաւ ի վաճառական մի, և եղև ի տան նորա յառաջադէմ. մեռաւ վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ, առեալ զկին նորա. և երթայր ուղտօք յնգիպտոս ...» (*Muyldermans, La domination arabe*, p. 41):

276. Քեոփանեսը առաջին հեղինակն է, որ վկայում է Մոհամմեդի ընկնավորության մասին:

277. Այս վանականին Կոստանդին Միրանաթինը արիանոս է համարում: Դա հաստատվում է Հովհան Գամասկացու տվյալներով: Նրա ասելով (de Haeresibus, 101, Migne, Patrologia graeca, t. XCIV, col. 764—765) Մոհամմեդին էր օգնում մի արիանոս վանական Հին և Նոր կտակարանները ուսումնասիրելու: Թեոփանեսն այստեղ ըստ երևույթին իրար է միացրել երկու տարբեր մուսուլմանական ավանդություններ, որոնցից մեկի համաձայն մի ոմն Վարաքա իրն նավթալ, խաղիչայի տարեց մի կուզենը խաղիչային վկայում էր Մոհամմեդի տեսիլքների իսկությունը: Մյուս ավանդությունը հիշում է Բահիրայի կամ Բուհայրայի, ասորի մի վանականի մասին, որ հանաչել է Մոհամմեդին, երբ նա առևտրական քարավանի հետ Ասորիք էր եկել, որպես ապագա մարգարե (տե՛ս DAL, II, p. 71):
278. Արար. Յաթրիբ (Պաղոմեսոսի Լաթրիպական, Ստեփանոս Բյուզանդացու՝ Իաթրիպական), այն է Մեդինա: Միքայել Ասորու ժամանակագրության մեջ տվյալ շրջանը կոչվում է «Աթրապէ» («Յայսմ ժամանակի երեկցաւ Մահմէտ որդի Արդալայի յԱթրապէ Արարիայ»: Միխայել Ասորի, 1871, էջ 293—294):
279. Խոսքը չիհադի՝ սրբազան պատերազմի մասին է:
280. Թեոփանեսը հավանաբար հղում է Ղուրանի 56-րդ սուրային (տե՛ս DAL, II, p. 71):
281. Նրուսաղեմի Մոզեստոս պատրիարքը (632—634): Իրականում նա տեղապահ էր Պահլավանվել է այս Մոզեստոսի մի նամակը, ուղղված հայոց Կոմիտաս կաթողիկոսին և վերջինիս պատասխանը նրան (տե՛ս Սեբեոս, գլ. 15):
282. Քրիստոնյա արարներ էային և նախքան մահմեդականության հանդես գալը: Հիմյար ցեղի արարները, օրինակ, մասամբ քրիստոնյա էին դարձել դեռևս Անաստասիոս I կայսեր ժամանակ: Տե՛ս ծանոթ. 274:
283. Արևմտյան եկեղեցում վիկարիոս (vicarius) է կոչվում եպիսկոպոսի կողմից նշանակվող և նրա թույլտվությամբ եպիսկոպոսի իրավասության մեջ մտնող պարտականությունները վարող անձնավորությունը:
284. Արաբական կուրայշ ցեղին պատկանող, որից էր ծագում և ինքը, Մոհամմեդը: Տե՛ս ծանոթ. 270:
285. Ժիշտը՝ Կուտայր:
286. Տալիս է «Մայֆուրա»-ի թարգմանությունը:
287. Իմա՛ կայսրը:
288. Արաբները Գազային տիրացան 633 թ.: Սրան հաջորդեց Աջնադայնի հաղթանակը (634 թ. հուլիսի 30), որով արաբները տիրացան Պաղեստինի մեծ մասին:
289. Թեոփանեսը գրում է՝ «Ἡρα, րայց Բալադուրիի տվյալներից պարզվում է, որ խոսքը Հիրայի մասին է: Լեռ էր Մեքքայից հյուսիս-արևելք: Այդ անունն էր կրում նաև արաբական Լախմիդ ցեղի նշանավոր մայրաքաղաքը, ժամանակակից Նաջաֆից (Իրաք) հարավ-արևելք: Այնտեղ կար նեոտորական եպիսկոպոսություն: Հետագայում նրա տեղում կառուցվեց մուսուլմանական Ալ-Քուֆա քաղաքը: Մանրամասն տե՛ս I. Shahid-ի al-Hira հոդվածը Encyclopédie de l'Islam-ի երրորդ հատորի 478—479 էջերում:
290. Գազայի շրջանը, րայց ոչ քաղաքը: Թեոփանեսը շրջանի նվաճումը թվագրում է 633 թ., Բելադուրին՝ 634: Բայց Գազա քաղաքը գրավեց միայն 637 թ.: Տե՛ս Guillou, La prise de Gaza, p. 400. Apud: Βραυονόου, Byzantinoarabica, σελ. 14:
291. Գիսափոր աստղի մի տեսակ: Կոչվում էր նաև Նուշ և Նուշ:

292. Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարք (633—638)։
293. Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարք (630—643)։
294. Օմար իրն ալ-Խաթթար ալ-Ֆարուք, իշխեց 634—644 թթ.։ Մովսես Կաղանկատվացին՝ նրան անվանում է «Օմար ի Խատարեան» (Խատարի որդի) և գտնում, որ Կա իշխեց 7 տարի (էջ 333)։
295. «Արարիա զորք ուղարկելով», բառերը Թեոփանեսի ժամանակագրության հունարեն բնագրում բացակայում են։ Ամենայն հավանականությամբ կրճատել է գրիչը՝ չկարողանալով բացատրել շարաքների հարձակումը Արարիայի վրա։ Սակայն հիշյալ բառերը կան Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի լատիներեն թարգմանության մեջ (qui destinat exercitum adversus Arabiam), որտեղից հրատարակիչը վերականգնել է հունարեն բնագրում։ Եթե այդ բառերը չլինեն, նախադասության իմաստը կատարելապես փոխվում է։ Թեոփանեսը գրելով «Արարիա» նկատի լուրի արարական թերակողին, այլ բյուզանդական «Արարիա» նահանգը։ Դեորգ Կիպրացու տվյալներով Արարիա նահանգը գտնվում էր Երուսաղեմից արևելք, Պաղեստին II և Պաղեստին III պրովինցիաների միջև։ Արարիա նահանգում էին գտնվում Բոստրա, Դերասա, Ֆիլադելֆիա, Հիերապոլիս և այլ քաղաքներ։ Դրա օգտին է վկայում և Սերեոսը, որը գրում է, թե արարները «հասնալ յՀոարովթ Մովաբու ի սահմանս Ռուբէնի. զի բանակն Յունաց բանակեալ էին յԱրարիա» (էջ 135)։ Մանրամասն տե՛ս В р а в о о с т ь, Byzantinoarabica, թւ. 15—16։
296. Բոստրա քաղաքը գտնվում էր բյուզանդական Արարիա նահանգում, Հիերապոլիս քաղաքից մի փոքր հարավ։
297. Դաբիթա քաղաքը նույնացվում է Ղասսանիների մայրաքաղաք Ջաբիյայի հետ, Դամասկոսից 80 կմ հարավ։
298. Դեռևս դե Գուեն ցույց էր տվել, որ «Եղեսիան պետք է ուղղել «Եմեսա» (այժմ՝ Հոմս)։ Ծիշտ ընթերցումը հանդիպում է Թեոփանեսի ժամանակագրության մի շարք ձեռագրերում, թեև Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի թարգմանության մեջ սխալ Edessa ընթերցումն է հանդես գալիս (В р а в о о с т ь, Byzantinoarabica, թւ. 11 ծանոթ. 5)։
299. Այժմ Հոմս, Պալմիրայից արևմուտք, Հալոդիկիայից փոքր հյուսիս։ Տե՛ս նախորդ ծանոթ.։
300. Ենթադրվում է, որ խոսքը Մարշ ալ Սուֆֆար-ի ճակատամարտի մասին է, որտեղ, ըստ Բալադուրիի և ավելի վաղ արաբական բանաբաղների, սպանվեց իր քաջությամբ անուն հանած Խալիդ իբն Սալիդը։ Արտահայտվել է կարծիք, որ ամիրան կարող է լինել Իբրիմահ իբն արի Ջահլը (տե՛ս В р а в о о с т ь, Byzantinoarabica, թւ. 17—18)։
301. Խոսքը Արարիա նահանգի մասին է (տե՛ս ծանոթ. 295), որի կազմում, ըստ Հիերոկլեսի Սինեկդեմոսի, կար 17 քաղաք (Hieroclis Synecdemos, p. 42)։
302. Բոննի հրատարակության մեջ՝ հուլիսի 23-ին։ Քննական բնագրում նշված է անտիոքացոց լոոս ամիր, որ նույն հուլիսն է։
303. Տե՛ս ծանոթ. 264։
304. Արարները Եգիպտոսը վերջնականապես նվաճեցին 642 թ., որից հետո սկսեցին Տրիպոլիտանիայի նվաճումը (Чураков, Завоевание Северной Африки, стр. 107—126)։

305. Ըստ մուսուլմանական ավանդության Օմար խալիֆան համարվում է Իսլամի խոշոր օրենսդիր, խալիֆայի տիպար: Նա առաջինն էր, որ ստացավ Ամիր ալ-մումինինի («հավատացյալների իշխան») տիտղոսը (տե՛ս Gaudefroy-Demombynes, Le monde musulman, p. 155):
306. Օմարի և Սուփրոնիոս պատրիարքի միջև կնքված հաշտության մասին հիշատակում են նաև արևելյան քրիստոնյա հեղինակները (Միքայել Ասորի, Բար Հեբրեոս, Ագապիոս Մանրիչացի), ինչպես և արաբ տարեգիրները (DAI, II, p. 74):
307. Մարգարեություն Դանիելի, ԺԲ, 10—11. «Եւ անօրինեացին անօրէնք, և ոչ առնուցուն ի միտ ամպարիշտք. և իմաստունք իմացին: Ի ժամանակէ փոփոխմանն յախախութեան, և տացի պղծութիւն աւերածին աւուրս երկերիւր երեսուն և հինգ»:
308. Օմարի զորավար Իյադ իբն Ղանմը սկիզբ դրեց Մեծ Հայքի նվաճմանը, նրան ենթարկվեցին Կորճայքի Կորդուք և Տմորիք գավառները, իսկ Անձեացյաց իշխանը (Սահիր ալ-Ջաուազան) նրան հնազանդություն հայտնեց: Իյադը 640 թ. մտավ Հայաստան և ասպատակեց Դվինը (Տե՛ր-Ղևոնդյան, Ամիրայությունները, էջ 51—52):
309. Բնագրում՝ ἐπιτροπος:
310. Իմա՛ Քիննասրին: Քաղաք հյուսիսային Արարիայում: Հիշատակված է «Աշխարհացոյց»-ում. «[Քա]ղկեղիկէ, յորում քաղաք Քալկիսա, որ է նիկորիա» (Նրեմյան, Հայաստանը, 112):
311. Օմայանների հարստության ապագա հիմնադիր խալիֆա Մուավիա I-ը, կուրայշ ցեղից, Աբու-Սուֆիանի որդին: Մուհամեդ մարգարեի գրազիրն էր: Երբ խալիֆա Աբուրաքրը Ասորիքի նվաճման համար բանակ ուղարկեց, Մուավիան իր եղբայր Եզիդի հետ գլխավորեց այն: Օմար խալիֆայի կողմից նշանակվեց Դամասկոսի և Պաղեստինի կառավարիչ: Դլխավորեց արաբների սլայքարը Բյուզանդիայի դեմ, Իսավրիան ու Հայաստանը նվաճելու փորձեր կատարեց: Մուավիան 660 թ. Երուսաղեմում իրեն խալիֆա հռչակեց և մայրաքաղաքը Դամասկոս փոխադրեց:
312. Կամ Կոստանդինե (Թելլա դե-Մաուղելաթ): Հին քաղաք Միջագետքում, Դարայից 75 կմ արևմուտք: Այստեղ մեծ բերդաշինություն էր կազմակերպել Հուստինիանոս I կայսրը (տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», էջ 176—177):
313. Կոստանդին Միրանաժինը ցույց է տալիս, որ Ստեփանոս Մաթեմատիկոսը իրր գուշակել էր, թե կայսեր մահվան պատճառը ջուրն է լինելու և կայսրը դրանից վախենալով, Կոստանդնուպոլսի Հիերիա պալատի ջրավազանը հողով լցրեց (Կոստանդին Միրանաժին, էջ 111—112):
314. Աշխարհի թվականը սխալ է: Ինչպես Առաջարանում ցույց տրվեց, 607 և 714 թվականների միջև Թեոփանեսն ունի մեկ տարվա սխալ: Ինդիկտիոնը սակայն ճիշտ է: Ստացվում է՝ 30 տարի և 10 ամիս՝ 641 թ. օգոստոս, մի անհնարին բան, նրկատի ունենալով, որ նա գրում է «մարտ ամսին»: Ենթադրվում է գրչի սխալ, որ է՝ (5) ամիսը արտագրել է (10) ամիս: Դրանով ստացվում է 641-ի մարտ (Σ τ ρ α τ ο υ, Πότε ἐξεθρονίσθη ὁ Ἡράκλειος Β', σελ. 181):
315. Կոստանդնուպոլսի Պավղոս II պատրիարքը (641—653):
316. Վալենտինոսը, որն, ըստ Սերեոսի, հայ Արշակունի էր (էջ 140), իրականում նշանակվելով էքսկուրիտորների կոմես, 642 թ. սկզբում ուղարկվեց արաբների դեմ: Գրեթե ժամանակակից Սերեոսի տվյալներով Հերակլեոնասին և Մարտինեին տապալելու և Կոստասին դա՛ րարձրացնելու գործում գլխավոր դերակատարը իրականում Վալենտինոսն էր: Նրա ասելով Վալենտինոսը «զնայ ի վերայ նորա (Հերակ-

լեռնասի) գաւրու իւրով ի Կոստանդնուպոլիս: Եւ կալեալ զՄարտինէ՝ կտրէ զլեզու նորա և ապա սպանանէ զնա հանդերձ երկու որդեւոր նորա: Եւ նստուցանէ թագաւոր զԿոստաս զորդի Կոստանդինի, և անուանէ յանուն հաւրն իւրոյ Կոստանդին: Եւ ինքն գումարէ զգաւրսն, և գնայ ընդ արեւելս» (նույն տեղում): Հովհաննես Նիկիուսցու ասելով, Վալենտինոսը իր դստեր կնութեան էր տվել Կոստանդին III կայսեր (Կոստասին): Տե՛ս Στράβων, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 18, ծանոթ. 45):

317. Կոստաս II (Կոստանդին III Պոդոնատոս, 641 (ըստ Ստրատոսի՝ 642)—668 թթ.: Իսկական անունը Փլավիոս Հերակլիոս էր: Երբ 641 թ. սեպտեմբերի վերջին կայսերակից հռչակվեց, քանի որ կայսր էր հորեղբայր Հերակլիոս II-ը, վերանվանվեց Կոստանդին, ի պատիվ իր հոր, հատկապես, իր հորեղբոր հետ շշիոթվելու համար: Կոստաս նշանակում է փոքր (փոքրահասակ) Կոստանդին: Գահ բարձրացավ 11 տարեկան հասակում:

Գահաժառանգութիւնը Բյուզանդիայում երբեք ժառանգական չէր: Կայսրը ընտրվում է անգամ եթե դա ձևական բնույթ էր կրում և խոսքը որդու՝ հորը ժառանգելու մասին է: Միշտ պահանջվում էր ընտրութիւն, թեկուզև ձևական: Թեոդոսիոսի հարստութիւնից հետո (450-ից հետո) կայսեր հռչակման իրավունքը բանակից անցել էր սենատին: Անաստասիոս I-ից թագադրութիւնը կատարում է պատրիարքը և դա եկեղեցական խորհուրդ չէր: Թագադրութիւնը տեղի էր ունենում ոչ եկեղեցում (Στράβων, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 117) Առաջին բյուզանդական կայսրը, որը թագադրվեց եկեղեցու կողմից, եկեղեցու մէջ՝ Փոկասն էր, և այդ ժամանակվանից է, որ թագադրութեան արարողութիւնը ստացավ կրօնական բնույթ (նույն տեղում, էջ 120): Կոստաս II-ի կայսերակիցներն էին Կոստանդին IV-ը՝ 654-ից, Հերակլիոսն ու Տիրեքիոսը՝ 659-ից: Բյուզանդական աղբյուրներն այս կայսեր Հայաստանում ունեցած գործունեութեան մասին քիչ բան են ասում: Հայկական աղբյուրները տալիս են արժեքավոր տեղեկութիւններ: Մովսէս Կաղանկատվացու ասելով, հայոց կաթողիկոս Ներսէս Գ-ը (641—661) կայսեր «հայրադիրն» էր և «գանձիւք նորա շինեաց զբաղմապայծառ փարախն բանաւոր հօտից ի Քաղաքուղաշտի ի սուրբն Գրիգոր» (էջ 363): Խոսքը Զվարթնոց եկեղեցու մասին է: Այդ եկեղեցու նախկատիքին կաթողիկոսը հրավիրեց Կոստաս կայսեր, որ «յաւէժ հիացեալ ընդ շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր, զի նոյնաձևն յարմարեացէ ի պալատանն» (նույն տեղում, էջ 364): Զվարթնոցի կառուցման մասին տե՛ս նաև Հովհաննէս Էրասխանակեւոցի, էջ 83—84: Վարդան Արևելցու տվյալներով կայսրը լինում է նաև Դվինի կաթողիկոսարանում և նրա ճնշման տակ Ներսէս Գ-ը քարոզում է Քաղկեդոնի ուսմունքը (տե՛ս Muyldermans, La domination, p. 47):

318. Բյուզանդիայի VII դարի պատմութեան հմուտ մասնագետ Ա. Ստրատոսը Թեոփանէսի 6133 թ. տակ բերած տվյալները անճիշտ է համարում: Նրա ուսումնասիրութեան արդյունքը հետևյալն է. Հերակլեոնասին (Հերակլիոս II) և Դավիթ-Տիրեքիոսին գահընկեց արեցին 642 թ. հունվարին: Մարտինէն գահընկեց չարվեց, քանզի կայսրուհի (ավգուստա) չէր, այլ պարզապէս կայսերամայր: Պյուրրոսին կարգաւոյժ չարեցին, նա պարզապէս հեռացավ: Վալենտինոսը չհեռացվեց, այլ նշանակվեց էքսուրիտորների կոմես և ուղարկվեց ընդդէմ արարների: Կոստանդինը (Կոստաս) սենատի կողմից կայսր չհռչակվեց, քանի որ արդեն կայսր էր թագադրվել 641 թ. սեպտեմբերին, իր հորեղբայր Հերակլիոս II-ի (Հերակլեոնասի) կողմից: Ստրատոսի եզրակացութիւնները հիմնված են զեպքերին ժամանակակից

- հեղինակների՝ այդ թվում և Սերենոսի տվյալների վրա (տե՛ս (Σ τ ρ α τ ο υ, Ποτα εζεσθ-
ρονισθη ο Ηρακλειος Β', σελ. 191: Տե՛ս նաև նույնի Ο πατριάρχης Ηρόδος, σελ. 13):
319. Աղեքսանդրիայի Պետրոս III պատրիարքը (643/644—651 թթ.):
320. Նույնանում է 6133 թ. տակ հիշված Վալենտինոսի հետ, որ ըստ Սերենոսի հայ
Արշակունի էր և կայսեր աները՝ ըստ Հովհաննես Նիկիուցու: Նրա ապստամբության
զրգապատճառների մասին խոսում է Սերենոսը. «Եւ եղև յերկրորդում ամի Կոստանդի,
թոռին երանելոյն Երակլի՝ խորհէր Վաղենտին ի միտս իւր՝ ճարտարությամբ խա-
բել զսինկզիտոսն, և համբառնալ զինքն ի պատիւ Թագաւորութեանն» (էջ 142): Մի
շարք ծանրակշիռ աղբյուրներ նշում են, որ Վալենտինոսը նույնիսկ հաղավ կայ-
սերական ծիրանին (Σ τ ρ α τ ο υ, Το Βυζάντιον, Δ', σελ. 19): Սերենոսը վկայում է
և նրա մահապատժի մասին. «յեղաւ ամբոխն ի վերայ նորա, և բարշեալ արտաքոյ
տանցն՝ զխատեցին. և տարեալ... ալրեցին... զնա» (նույն տեղում): Հետաքրքրա-
կան է նշել, որ կայսրը հայադղի Վալենտինոսի փոխարեն զորավար նշանակեց «զթէո-
ղորսս զսմն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի Յովնաց կող-
մանէ» (նույն տեղում):
321. Դիոս ամիրս համապատասխանում է նույններին:
322. Օթմանը (Օսման) — Ուլմանդի իրն Աֆֆան, Դու-ն-Նուրույին (644—656 թթ.):
323. Բնագրում՝ «Αφρων: Թեոփանեսը այդ բառը հաճախ է օգտագործում Աֆրիկա-
յի բնիկներին նկատի ունենալով և ոչ Աֆրիկայի հոմանիցի բնակիչներին (Σ τ ρ α τ ο υ, Το Βυζάντιον, Δ', σελ. 72, ծանոթ. 220):
324. Արարական արշավանքները Կիպրոսի վրա Օթմանի իշխանության օրոք տեղի
ունեցան հիշրայի 28-րդ և 33-րդ տարիներին (648/9, 653/4 թթ.):
325. Հնում կոչվում էր Սալամիս, երկրաշարժերից ավերվել էր և վերականգնվել
345 թ., Կոստանդիոս I կայսեր կողմից, որի պատվին էլ կոչվեց Կոստանդիա:
326. Սենեկապետ կամ սենեկապան: Վարում էր պարակիմոմենոսի պաշտոնը (Υαποπο-
oulos, La société, p. 72—73):
327. Բնագրում՝ πανταίς παρχαίς χρωμένοι: Կարելի է թարգմանել նաև «ամեն տե-
սակի մեքենաներ դործի դնելով»:
328. Արադոս անունով մի քանի կղզի է հայտնի: Այստեղ խոսքը, հավանաբար, Ասորի-
քի Արադոսի մասին է: Արաքները կղզին գրավեցին հիշրայի 29 (650) թ.:
329. Մարտինոս սրտալի, նրա՝ միակամականների դեմ գումարած ժողովի և Կոստաս
կայսեր՝ նրա հանդեպ գրաված դիրքի մասին տե՛ս նաև Անանիա Շիրակացուն օխալ-
մամբ վերագրված ժամանակագրության մեջ. «ի սորա (Կոստաս կայսեր) աուրս եղև
ժողով ի Հոովմ քաղաքի՝ հարևր տասն եպիսկոպոսաց, և մոնաղոնաց բաղմաց,
զոր արար Հոովմայ հայրապետն, որ ասէր ի վերայ Քրիստոսի երկու կամս և
երկու ներգործութիւնս՝ ըստ երկուց բնութեանց. և գրեցին անափորայ առ Թագաւորն,
կոչեցեալ ի միաւորութիւն ինքեանց: Իսկ Թագաւորն ոչ հաւանեցաւ Կոստանդնու-
պոլսացւոյքն և Աղեքսանդրացւոյք և Փարանացւոյք՝ Հոովմայեցւոցն... Եւ յետ սա-
կաւ աուրց առաքեցին Կոստանդնուպոլսեցիքն ի Հոովմ, և ետուն ամել կապանաւք
զմարտինոս Հոովմայ և Կոստանդնուպոլսիս. և ձաղեալ բաղում թշնամանաւք արսո-
րեցին ի Բոսփորայ...» (Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 398):
330. Βουτάνρ: Հայկական աղբյուրներում արարական հիշյալ անունը բերվում է Բշր
ձևով: Այստեղ խոսքը Բիշր իրն Արի Արթատի մասին է (Σ τ ρ α τ ο υ, Το Βυζάντιον,
Δ', σελ. 41, ծանոթ. 141):

331. Իսավրիան մարդ էր Փոքր Ասիայում: Ըստ Պաղատանի «Աշխարհագրության» գտնվել է Տավրոսի հյուսիսային ստորոտում: Հյուսիսում սահմանակից էր Լիկաոնիային, արևմուտքում՝ Պիսիդիային, հարավում՝ Լեոնային Կիլիկիային: Գլխավոր քաղաքն էր Իսավրան (այժմ՝ Զենգիմար կալե): Կոստանդին Մեծի ժամանակ օտեղծվեց Իսավրիա նահանգը, որի կենտրոնը Սեղեկիա քաղաքն էր: Կոստանդին Միքանածինը Անատոլիկոն բանակաթեմի սահմանները նշելիս սահմանակից է հիշատակում նաև Իսավրիան:

332. Պասագնաթես պատրիկի անունը աղավաղված ձևով հիշված է նաև Աղապիոսի Տիեզերական պատմության մեջ: Ա. Վասիլեր (Patrologia Orientalis, vol. VIII, fasc. 3, p. 482) կարդում է հետևելով Թեոփանեսին (Պասագնաթես), իսկ P. L. Cheikho-ն (Աղապիոսի բնագրի հրատարակիչը, Բեյրութ, 1907, էջ 347, ծանոթ. 2) կարդում է Ամրատ: «Հայոց պատրիկ Պասագնաթես»-ի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեց դեռևս Մ. Զամչյանը (Հայոց պատմություն, հտ. Բ, էջ 354): Նա հիշյալ անունը համարեց հայկական Վասակը, ենթադրելով, որ հաջորդել է Մովսես Գեունուն՝ կայսր Կոստանդինի հրամանով: Հ. Աճառյանը կրկնում է Զամչյանին («Հայոց անձնանունների բառարան», հտ. Ե, էջ 45—46): Բյուզանդագետ Պ. Պետերսը (տե՛ս նրա «Παπαγναθης Παροχης» հոդվածը, էջ 405—423) ենթադրում է, որ Παπαγναθης մականունը նույնանում է Թեոփանեսի հիշատակած մի այլ զորավարի՝ Շապուհի մականվան՝ Παροχης (Պարսկածին), քանզի Միքայել Ասորու ժամանակադրությունը Παροχης-ի փոխարեն տալիս է Aprastigan, որը, ըստ Պետերսի, վրացերեն «սպարստգանի»-ն է («սպարսկաստանցիներին»): «Պասագնաթես»-ը համարելով նույն «պարսկածին»-ի թարգմանությունը, նա ցույց է տալիս, որ Պասագնաթեսը վրացերեն «սպարստգանի»-ի թարգմանությունն է: Նա եզրակացնում է, որ Պասագնաթեսի տակ թաքնված է Թեոդորոս Ռշտունին:

Գ. Արզարյանը, համաձայնվելով Պ. Պետերսի այս եզրակացության, առաջ է քաշում այն վարկածը, որ իբր «Պասագնաթես»-ը հունարեն «παροχης» (ուրացող) բառի աղավաղումն է, որ Թեոփանեսը Թեոդորոս Ռշտունուն համարում է ուրացող, դավաճան («Սերեոսի» Պատմությունը, էջ 195, ծանոթ. 19: Հմմտ. Սերեոս, էջ 344—345): Առաջ անցնելով, նա ցույց է տալիս, որ «իրականությունն այն է (!), որ գրիչն իր առջև ունեցել է մաշված ու անճանաչելի παροχης բառը (սխառից դիտե այդ «իրականությունը»), որը նրան՝ գրչին, ոչ մի հունարեն բառի իմաստ չի հուշել և թվացել է օտար մի անուն: Եվ իսկապես, շարունակում է նա, հայի անունը հույն գրչի համար օտար էր, դրա համար էլ նա ստացել է Παπαγναθης անվանաձևը, շիմանալով, որ նման անուն հայերենում չկա» (Սերեոս, էջ 345): Նշենք այստեղ, որ Թեոփանեսի ժամանակադրության Անաստասիոս Բիրիթոթեկարիոսի լատիներեն թարգմանության մեջ մեզ հետաքրքրող նախադասությունը թարգմանված է այսպես. «Anno imperii Constantis decimo simultatem excitavit Imperatori Pasagnathes, Armeniorum patricius», Theoph. Chron., II, p. 216: Ուրեմն παροχης չի եղել դեռևս այն ժամանակ: Անաստասիոսի ձեռքում եղած օրինակը, որ Թեոփանեսի ինքնագիրն էր, կամ նրանից անմիջապես կատարված արտագրությունը, չէր կարող «մաշած և անճանաչելի» դարձած տեղեր ունենալ: Չէր էլ կարող լինել, քանզի հակառակը հնարավոր է (անհասկանալի հատուկ անունը դառնար հասկանալի հունարեն παροχης-ը),

- բայց միանգամայն հասկանալի այդ բառը ոչ մի կերպ չէր կարող անհասկանալի անուն դառնալ: Թեոփանեսը παρὰ τῆς բառն իր ժամանակագրության մեջ օգտագործում է Հուլիանոս էպյսեր անվան կողքին: Նշենք այստեղ, որ Պասագնաթեսը «ասյրասիթգանի»-ի, παρὰ τῆς-ի, կամ վասակի հետ որևէ առնչություն չունի: Հավանաբար իրանական ծագում բունցող և որևէ պաշտոն, աստիճան նշանակող բառ է, որ Թեոփանեսը լնդունել է որպես հատուկ անուն (այդպիսի սխալներ սովորական են և՛ հին հայկական, և՛ բյուզանդական մատենագրության մեջ): Միջին պարսկերենում և պահլավերենում կա pasāgriv, pasagriv տիտղոսը, որ Թարգմանվում է ἀρχηγός — առաջնորդ և բաղկացած է երկու արմատից pasā և griv: Հայաստանի համար այդպիսին էր Հայոց իշխանը: Բոլոր դեպքերում, եթե «Պասագնաթես»-ը ամբողջությամբ pasāgriv-ն էլ չէ, նրա մեջ պարսկերեն pasā-ի առկայությունը ակնհայտ է (pasāgriv-ի մասին տե՛ս Benveniste, Titres, p. 58—65): Հիշյալ պայմանագրի մասին կահատուկ ուսումնասիրություն: Տե՛ս M. Jinbashian, The arabo-armenian peace treaty of a. D. 652: «Հայկազեան հայագիտական հանդես», հտ. 2, Պեյրութ, 1977—1978, էջ 169—174:
333. Խոսքը Բաալրեկի մասին է՝ Սիրիայում: Հելիոպոլիս Թարգմանաբար նշանակում է Արևի քաղաք: Հմմտ. «...և հասանելար (Հովհաննես Զմշկիկ կայսրը—Հ. Բ.) մինչև ի վատուվէքն, որ անուանեալ կոչի Իլուպօլիս, որ է Արեգ քաղաք, երևելի և ահա՛վոր պարսպեալ մեծ յոյժ և հարուստ» (Մատթեոս Ոսեայեցի, էջ 21):
334. Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարք (654—666):
335. Հռոդոս կղզու կոլոսոսը (κολοσσός τῆς ‘Ρόδου) հները համարում էին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Շինված էր պղնձից և պատկերում էր Հելիոսին (Արևին): Սկսեց կառուցել քանդակագործ Խարեսը մ.թ.ա. 304 թ. փոքր հետո և նրա վրա աշխատեց 12 տարի: Մ.թ.ա. 225 թ. փլվեց երկրաշարժից և, հավանաբար, շվերականգնվեց: Բարձրությունը 70 կանգուն էր (32 մետր): 657 թ. արաբները վաճառեցին արդեն վաղուց քանդված, զետին տապալված արձանի բեկորները: Արաբները Հռոդոս կղզին նվաճեցին 654 թ. դորավար Աբուլ-Ավարի գլխավորությամբ:
336. Թեոփանեսը դեպքերը թվագրում է 652/653 թթ.: Այստեղ խոսքը ոչ թե արաբական առաջին արշավանքին և նրա ժամանակ Դվինի առմանն է վերաբերում, այլ Դվինի առմանը և Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի նվաճմանը VII դ. 50-ական թվականների սկզբին (տե՛ս Մանանդյան, Արաբական արշավանքները, էջ 185): Արաբների դորավար Հաբիբը (‘Αβιβος) Հաբիր իրն Մասլաման է, Մուավիայի դորավարներից մեկը: Պատկանում էր կուրայշ ցեղին: Մասնակցել է Ասորիքի նվաճմանը: Դառնալով հյուսիսային Ասորիքի կառավարիչը, պայքարել է մարդայիսների և բյուզանդացիների դեմ: Օթման խալիֆայի մահից հետո նա պաշտպանեց Մուավիային Ալիի դեմ: Հաբիբը վախճանվել է 662 թ. (թեև մի շարք արաբ պատմիչներ ցույց են տալիս, որ նա զեն 671 թ. կենդանի էր: Տե՛ս Encyclopédie de l’Islam, t. III, p. 13):
337. Միջնադարում Բյուզանդական կայսրությունը կոչվում էր Ռոմանիա:
338. Թեսաղոնիկե տեղանվան ժողովրդական ստուգաբանությունը՝ Θέσ ἀλλω νίκην («հաղթանակը ուրիշին տո՛ւր»):
339. Տե՛ս ծանոթ. 278:

340. Ալի իբն Աբի-Թալիբ ալ-Մուրտադա: Խալիֆա Հուլակվեց 656 թ. հունիսի 23-ին և սպանվեց 661-ին: Թեոփանեսը նկատի ունի իսլամի մեջ առաջին քաղաքացիական պատերազմը (656—661): Ալիի կողմն էր Մեդինան (Յաթրիբ) և արևելքը, Մուավիայի՝ Ասորիքը, Պաղեստինը և Եգիպտոսը: Մուավիան իշխեց 661-ից՝ Ալիի սպանութունից հետո և հիմնադրեց Օմայան կոչվող (իբ պապ Օմայի անունից) հարստութունը: Իրենից առաջ իշխած Աբուբաքրը (Մոհամմեդ մարգարեի աները), Օմարը, Օսմանը և Ալին հարստութուն շտեղծեցին: Այս առաջին շորս «հաջորդները» (արաբ. խալիֆա) համարվում են «ուղղափառ» (արդար) խալիֆաներ (ալ-խուլաֆա-առ-ռաշիդուն):
341. Բարբալիսոս (կամ Բարբարիսոս): Քաղաք Եփրատ գետի աջ ափին, Հիերապոլսից հարավ: Դեռ հռոմեական ժամանակաշրջանում կայազորի կենտրոն էր և ուներ կարևոր բերդ, որ վերանորոգեց Հուստինիանոս I-ը: Նրա տեղում այժմ գտնվում է Բալիս (կամ Քալաաթ բալի) ավանը: Տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», էջ 108, 183, Երեմյան, Հայաստանը, էջ 44:
342. Ալիի և Մուավիայի զորքերը հանդիպեցին իրար Սիֆֆինում, հռոմեական ավերված մի քաղաքում, Եփրատի մոտ, 657 թ.:
343. Թեոփանեսն այստեղ օգտագործում է եզակի, հետադալում՝ հոգնակի (Սկլավենիաներ): «Սկլավենիա» տերմինը գործածվում է VII—IX դդ., որի տակ ենթադրվում են սլավոնների կողմից գաղութացված հողերը: Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, թե դա Դանուբի ձախ ափն է, կամ Թրակիան, Մակեդոնիան և այլն: Լիպշիցի և այլոց ենթադրությամբ Սկլավենիան Մակեդոնիան է (Липшиц, Очерки, стр. 33 և հտ.: Տե՛ս նաև DAI, II, p. 35): Հետաքրքրական է նշել, որ Թեոփալակտոս Սիմոկատոսը Սկլավենիա ասելով ենթադրում է ժամանակակից Ռումինիայի տարածքը (Σ τ ρ ά τ ο υ, Τὸ Βουλαντιον, Α', σελ. 75): Չեխ պատմաբան Դվորնիկը (Dvornik, Les Slaves) գտնում է, որ ողջ հին Մակեդոնիան այնքան էր սլավոնացել, որ VII դ. այնտեղ գոյութուն ունեին բացարձակապես սլավոններով բնակեցված շրջաններ, որոնք էլ բյուզանդական աղբյուրներում կոչվում են «Սկլավինիա» (Հմմտ. Липшиц, նույն տեղում, էջ 30 և հտ.): Հույն պատմաբան Կիրիակիդիսը Սկլավենիաները տեղադրում է Թեսաղոնիկեից հյուսիս, Ստրիմոնի լեռնային շրջաններում: Հենց այստեղից Հուստինիանոս II կայսրը 688 թ. նրանց մի մասը հաստատեց Օպսիկիոն բանակաթեմում (տե՛ս վերը, էջ 76): Κυριαξιθου, Τὸ Βολερὸν, σελ. 398: Հարցի վրա մանրամասն կանդ է առել և Ստրատոսը (Σ τ ρ ά τ ο υ, Τὸ Βουλαντιον, Δ', σελ. 191—192): Ըստ երևույթին Սկլավենիան մի տեղ չպետք է որոնել: Տարբեր ժամանակներ, ըստ սլավոնների առաջխաղացման և Բյուզանդիայի տարբեր շրջաններում հաստատման, այդ շրջանները կոչվել են Սկլավենիա: Դա է պատճառը, որ Թեոփանեսը եթեման, այդ շրջանները կոչվել են Սկլավենիա: Դա է պատճառը, որ Թեոփանեսը եթեմակորնական շրջանում գիտե մեկ Սկլավենիա, հետադալում գրում է մի բանի Սկլավենիայի մասին: Հարցի մասին տե՛ս նաև Yannopoulos, La société, p. 253:
344. Սբ. Մաքսիմոսը վանական էր, միակամականության կատաղի հակառակորդ: Նրա մասին տե՛ս նաև սխալմամբ Անանիա Շիրակացուն վերագրվող ժամանակագրության մեջ. «Իսկ յետ սուղ ինչ ժամանակի երկեցաւ Մաքսիմոս ոմն՝ փիղիսոփայ, միայնակեաց՝ ի Կոստանդնուպուղիս, նորին աղանդովն Մաքսիմոսի, որ երկուս կամս և երկու ներգործութիւնս ասէր ի վերայ Քրիստոսի: Եւ ըմբռնեալ

դեռ, բազում շարշարանաւոր շարշարեցին հրամանաւ թագաւորին, ծայրատեցին զոտս
և զձեռս և արսորեցին, երկու բնկերաւքն յաշխարհն Ղաւօղիկեցոց, որք անդէն
սատակեցան» (էջ 398)։ Այլ աղբյուրներ նրանց արսորաւայր են համարում լա-
ղիկան։

345. Ա. Սարատուսի ենթադրությամբ խոսքը քրիստոնյա գերիների մասին է, կամ
արարների կողմից նվաճված շրջանների քրիստոնյա բնակիչների (Σ τ ρ α τ ο υ, Το Βυζάντιον, Δ', σελ. 196, ծանոթ. 693)։

346. Անտիոքացոց Դեսիոս ամիրս համապատասխանում է հունիսին։

347. Իմա՝ Սիֆֆին։ Տե՛ս ծանոթ. 342։

348. «Խաւարիչ» բառից, որ «ապստամբներ», «խռովարարներ» է նշանակում։ Իսլամի
հնագույն աղանդը, որի հետևորդները կոչվում էին նաև արսորիաներ (տե՛ս Ա. Մ.
6236-ի տակ)։ Շարժումը սկիզբ առավ երբ 657 թ. խալիֆա Ալիի զինվորներից
սմանք հանդես եկան ավագանու քաղաքական տիրապետության ուժեղացման և
մուսուլմանական համայնքի հողերի գրավման դեմ։ Ալ-Հասան իրեն Մուսա ան-
նաուրախտին, IX դ. շիյա աղանդի պատմարաններից ու գաղափարախոսներից
մեկը, հրում է, թե ըստ խարիջիանների «համայնքը կարիք չունի ոչ իմամի, ոչ
որևէ ուրիշի։ Մեր հարաբերություններում մենք և բոլոր մարդիկ պարտավոր են
հենվել միայն Ալլահի դրքի վրա» (Իմա՝ Ղուրանի։ Տե՛ս an-Haybaxmi, Шинитски.
секты, стр. 119)։ 658 թ. խալիֆա Ալին ճնշեց նրանց շարժումը, բայց այն շարու-
նակվեց Բասրայի և Քուֆայի շրջանում՝ 660-ից մինչև 680 թթ.։ VII դ. վերջում (684)
աղանդը արժեզվում է մի քանի հոսանքների։ Խարիջիդները հանդես էին գալիս բո-
լոր մուսուլմանների հավասարության, համայնական հողատիրության պահպանման,
խալիֆայի՝ համայնքի կողմից բնորության կոչով։ Հարցի մասին տե՛ս Беляевъ
Мусульманское сектантство։ Նաև Чураков, Хариджитские восстания. Նույնի՝
Магриб, стр. 66—84։

349. Այսինքն՝ սլավոնները։

350. Քաղաք II Ասորիք պրովինցիայում, հավանաբար նույնանում է Ապամիայի հով-
տի Սկլերիյի վայրի հետ (Панченко, Памятник славян, стр. 14։ Кулаковский,
История III, стр. 210։ Σ τ ρ α τ ο υ, Το Βυζάντιον, Δ', σελ. 244)։

351. Կոստանդնուպոլսի Թովմաս II պատրիարքը (667—669)։

352. Հերսապոլիսը (Բարգմանաբար նշանակում է վեց քաղաք), ըստ Ռամզեյի գրա-
նքվում էր հին Փոյուզիայում և նրա ենթադրությամբ նույնանում է Պարոքեյոս քա-
ղաքի հետ։ Նույն հեղինակի ասելով Հերսապոլսի մեջ էին մտնում հետևյալ վեց
քաղաքները. Յուլիա-Իպսոս, Ֆիլոմելիոն, Հաղորիանուպոլիս, Տիրիեյոն, Սինեթան-
դոս և Կալօղիկիա (HGAM, p. 142)։ Հերսապոլսի տեղադրման մասին այլ
կարծիք է հայտնել V. Tournier-ը (L'Hexapolis arménienne, p. 947—952)։ Նրա
ասելով, թե ուրիշների հիշատակած Հերսապոլիսը երբորդ Հայքն է, Մելիտենեի
շրջանը։

353. Բնագրում՝ Փռնալն։ Հիշյալ անունը հայկական աղբյուրներում հանդես է գալիս
Փաղուն (Փատուն) ձևով։

354. 663 թ. Իսալիայում տեղի ունեցած դեպքերի ամօրոքյամբ Պողոս Սարկավազը
ցույց է տալիս, որ Կոստանդին կայսեր բանակում ծառայում էր զորավար

Saburus-ը: Ուսումնասիրողները նրան նույնացնում են 666—667 թթ. նույն կայսեր դեմ ապստամբություն բարձրացրած Արմենիականների բանակաթեմի զորավար Սարգսիոս Պարսկաձնի հետ (հմմտ. Σ τ ρ ἄ τ ο υ, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 220, ծանոթ. 772: Տե՛ս նաև՝ նույն տեղում, էջ 246 և հտ.): Միքայել Ասորին Կաստանդին կայսեր նույն՝ 26-րդ տարում ցույց է տալիս, որ նրա դեմ ապստամբող Արմենիականների զորավար Շառուրը, մականունը Aparasitgan: Շառուն գրություն է, որ Թեոփանեսի Περσευενγς-ը (Պարսկաձին) ասորերեն Ապարասիտգանի ազավադումն է կամ փոփոխությունը: Նա կարծում է, որ դա ավել կամ պակաս ձևափոխված հայկական անունն է այն ապստամբի, որ Թեոփանեսն անվանում է Պասագնաթես հայոց պատրիկ: Նա ելնում է նրանից, որ Միքայել Ասորին այդ երկուսին նույնացնում է (Michel le Syrien, t. II, p. 451, և ծանոթ. 8): Ենթադրությունը ճիշտ չէ: Ինչպես Պ. Պետերսն է ցույց տալիս, Միքայել Ասորու Պասագնաթեսի մասին ոչինչ չի գրում: Պետերսը կարծում է, որ Միքայել Ասորու Ապարասիտգան «անունը» առանձին վերցրած Թեոփանեսի Պասագնաթեսն է կամ Պասագնատեսը, որ Միքայել Ասորին տեղյակ է այդպիսի մականվան կամ էթնոնիմի և Արմենիականների զորավար Շապուհի վրա է տարածում: Իսկ քանի որ Շապուհը Պարսկաձին է կոչված, ապա Պետերսը ենթադրում է, որ Միքայել Ասորու «ապարասիտգան»-ը դա տառացի վրացերեն «սպարսթագանի»-ն է, որ թարգմանում է «ի Պարսից» (հետևաբար՝ հունարեն Περσευενγς): Տե՛ս և ծանոթ. 332:

Սա Արմենիականների բանակաթեմի առաջին հիշատակությունն է բյուզանդական աղբյուրներում: Կան ավելի վաղ հիշատակություններ արաբական աղբյուրներում (տե՛ս Ասատանդին Սիրանաձին, էջ 167—169, 318—319, Հովհաննես Սկիլիցես, էջ 297):

355. Ինչպես տեսնում ենք, այս շրջանում ստրատելատի աստիճանը ավելի ցածր էր, քան զորավարինը՝ ստրատելատի: Ստրատելատը հնում magister militum-ն էր՝ ազգական մեծ շրջանի հրամանատարը, իսկ տվյալ դեպքում, ըստ ոմանց, համապատասխանում է տուրմարիսի աստիճանին: Տե՛ս և ծանոթ. 76:

356. Ակնարկում է նրա ներքինի լինելուն, քանզի կուրիկուլարիոսները ներքինի էին լինում:

357. Այժմ՝ Արար-սու, կամ Յարպուզ: Գտնվում էր Հուստինիանոս I-ի կաղմակերպած Նրրորդ Հայքում (նախկին Ներքորդ Հայքում):

358. Նդիդ I իրն Մուամլիա (680—683):

359. Կաստանդնուպոլսի Հովհաննես V պատրիարքը (669—675):

360. Ինչպես վերևում տեսանք, Կաստաս կայսրը սպանել էր իր եղբոր Թեոդոսիոսին:

361. Բայց բազմաթիվ աղբյուրների համաձայն կայսեր գաշունահարեցին: Դույլով նրան սպանելու վարկածը արքունիքի հնարածն էր, որի նպատակն էր սքողել բանակում զավաղություն անկայությունը (տե՛ս Σ τ ρ ἄ τ ο υ, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 264, 266):

362. Բնադրում՝ Μελιζιός: Այս Մժեժը տարրերվում է Հերակլիոս կայսեր մի նույն-անուն զորավարից, որ Հայաստանի կուրապաղատ էր նշանակված, քանզի Մժեժ (Գնունին) արդեն սպանվել էր 635 (ըստ ոմանց՝ 648) թ., այնինչ այս Մժեժը կայսր հռչակվեց 668 թ.: Տե՛ս Ալիշան, Շիրակ, էջ 142: Աճառյան, Անձնանունների բառարան, հտ. III, էջ 330: Σ τ ρ ἄ τ ο υ, Τὸ Βυζάντιον, Ε', σελ. 14:

Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության մեջ այդ մասին գրված է հետևյալը. «Իսկ թագաւորն Կոստաս նենգեալ ի զօրացն սպանաւ ի բաղանիսն յԷնդրէասայ ստրատելատէ ի Սիւմիս: Եւ թագաւորեցուցին զՊատրիկն Մաժժ. այր քաջ և կորովի յիր և ի բան հայ ազգաւ և բարեպաշտօն» (Միխայել Ասորի, 1870, էջ 339, 1871, էջ 323—324: Հմմտ. *Michel le Syrien*, t. II, p. 450—451) Միքայել Ասորին մի փոքր հետո (էջ 455) հիշում է և կայսեր դեմ ապստամբություն բարձրացրած Մժեժի որդուն, որին նաև անվանում է Իվանիս (Հովհաննես): Նրա ապստամբությունը տևեց 7 ամիս և ի վերջո նա սպանվեց Սիկիլիայում՝ կայսեր կողմից: Ավելորդ չէ այստեղ նշել, որ դեռևս VI դարից Սիկիլիայում կար բազմամարդ հայկական գաղութ: (*St'us Orsi, Bizantina Siciliae: նաև Bréhier Les colonies: Apud: Στράβων, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 224*): Իսկ այս ժամանակ Սիկիլիայում գտնվող բյուզանդական բանակը Արմենիականների և Անատոլիկոն բանակաթեմերի զորքն էր (*Brooks, The Sicilian Expedition: Apud: Στράβων, Τὸ Βυζάντιον, Δ', σελ. 265*): Ավելի ուշ շրջանի մի աղբյուր՝ Գրիգոր II սկսպի նամակը Հեոն III կայսեր (726) նշում է, որ Մժեժը կայսեր սպանեց, երբ, իբր, իմացավ, որ նա միակամական աղանդավոր է (*Στράβων, նույն տեղում*):

363. Մժեժի գեղեցկությունը հատուկ ընդգծում է Զոնարասը, նրան «արձան» անվանելով (*ἡ γὰρ αὐτῆς ὄντα καὶ ὠραϊότατον*): նման նկարագրության հանդիպում ենք և այլ աղբյուրներում, որոնք ավելացնում են և նրա մեծ ուժը (*Στράβων, Τὸ Βυζάντιον, Ε', σελ. 13, ծանոթ. 30*):
364. Կոստասի որդի Կոստանդինը (IV) թագավորեց 668—685 թթ.: Նրա կայսերակիցներն էին Հերակլիոսը և Տիբերիոսը՝ մինչև 681 թ., Հուստինիանոս II սկսած 681-ից: Վերջինս թագավորեց 685-ից:
365. Այժմ Սկյուդար (հունարեն՝ Սկուտարի, որ վկայված է XII դարից): Անտիկ շրջանում Քաղկեդոնին էր ենթակա: Այստեղ էին գտնվում Սկուտարիոնի կայսերական սպալատը, Զիլիպպիկոսի և սբ. Եղիայի վանքերը:
366. Սիկեոնը (նաև Σικεον) թաղամաս էր Կոստանդնուպոլսի ասիական ափին, այժմ՝ Գալաթիա:
367. Փոքր Ասիայի հնագույն քաղաք, Հելլենսպոնտոսի Փոյուզիայում:
368. Բիշր իբն Աբու Արթախ:
369. Իմա՝ արարները:
370. Աբդալլահ իբն Կայս:
371. Իմա՝ Մոհամմեդի և Կայսոսի:
372. Նիկեփոր պատրիարքը նրան անվանում է հայկ (*Nicephori Breviarium, p. 36*):
373. Երկու շարք թիերով նավեր:
374. Հեղուկ կրակով մեծ նավեր: Հեղուկ կրակի մասին ավելի մանրամասն տե՛ս Կոստանդին Միրանաժին, էջ 282, ծանոթ. 183: Միքայել Ասորին հիշում է այդ զենքի գյուտարարին. «Յայսմ ամի այր մի ի Բալրաքոյ Կալանիկէ անուն, Ասորի ազգաւ, առաջին իմացաւ զնափտն (նավթ), և այրեաց զնաւսն ի վերայ ծովուն՝ լցեալ զօրօք Տանկաց» (Միխայել Ասորի, 1871, էջ 324: Հմմտ. 1870, էջ 339):
375. Տեղադրվում է ժամանակակից Զեյթին բուռնու տեղում:
376. Միրանաժինը տեղադրում է Կիրիորեոսների բանակաթեմում, Աստալիայի և Պերգեի միջև (Լիկիայի և Պամփիլիայի միջև): Ատեփանոս Բյուզանդացին ցույց է տա-

լիս, որ ոմանք տեղադրում են Փոյուզիայում, ոմանք էլ Պամփիլիայում: Այժմ տեղադրվում է ժամանակակից Ասարքյոյ վայրում:

377. Հետաքրքիր մանրամասնություններ է տալիս Վարդան Արևելցին. «Իսկ Մաւի իշխանն Իսմայելի խորհեցաւ բառնալ զթագաւորութիւնն Յունաց, որպէս և զՊարսիցն, և կազմեաց երեք հարիւր նաւ մեծ, և յամէն նաւ հազար այր. և հազար նաւ փոքր, և յամէն նաւ հարիւր այր. և արձակեաց զնոսա ընդ ծովն. և ինքն ընդ ցամաքն հասանէ ի Քաղկեդոն. և կորեան ամենայն նաւքն, և ինքն փախեաւ ի գիշերի և զերծաւ, և մեռաւ յԱսորիս» (Muyldermans, La domination, p. 50):

378. Կոստանդնուպոլսի պատրիարք Կոստանդին I (675—677):

379. Կոստանդնուպոլսի պատրիարք Թեոդորոս I (677—679):

380. Մարդայիտները (սրանց վերաբերյալ Թեոփանեսը գլխավոր աղբյուրներից է), արար Ջարաշիմա (եզակի՝ Ջուրջումանի): Ամանոս լեռան մոտ գտնվող Ջուրջումա քաղաքի, ինչպես և Անտիոքից հյուսիս բնկած ճահճոտ շրջաններում էին հաստատված: Նրանք իսլամի սկզբնավորման ժամանակաշրջանում կարևոր դեր էին խաղում արաբա-բյուզանդական պատերազմներում: Քրիստոնյա էին ու կիսանկախ: Կոստանդին Միրանածինը ցույց է տալիս, որ նրանք դեռ X դ. անկախ կյանք էին վարում (DAI, I, p. 242): Միքայել Ասորին մարդայիտներին մի քանի անուն է տալիս՝ «Մարիդայե» կամ «Լիփուրե» կամ հունարեն ձևով «Մարիդայիտե» և ցույց է տալիս, որ Ասորիքի բնակիչները նրանց կոչում են Գարգումայե: Ըստ Շարոյի «Մարիդայե» արամեերեն է և նշանակում է «խոտվարար», «ապստամբ», իսկ «գարգումայե»՝ «անխիղճ», «անամոթ» (Michel le Syrien. t. II, p. 455 և ծանոթ. 4, 5: Նաև էջ 469): Մարդայիտների մասին Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության մեջ ասված է հետևյալը. «Ի յինն ամի Կոստանդեայ ելին ի Յունաց զօրք և բնակեցան ի լեառն Լիրանանու և կոչեցան ապստամբք, և Ասորիք կոչեցին զնոսա ճուռճանք. և առին ի Լիրանանու լեռնէն՝ մինչև ի Սեաւ լեառնն» (Միխայել Ասորի, 1871, էջ 324): Սրանից հետո, հավանաբար հայ թարգմանիչը կամ գրիչը, գաղափար չունենալով նրանց էություն մասին և ելնելով ճուռճանք անվանմանահնչունությունից, գրում է. «թուի թէ՛ այսու պատճառաւ կոչին վրացիք ճուռճանք, զի ապստամբեցին ի Հայոց ծառայութենէ և ի հաւատակցութենէ» (էջ 325): Միխայել Ասորին շարունակում է. «Եւ ելին Տաճիկք և շնչեցին զապստամբսն» (էջ 325: Հմմտ. նաև Միխայել Ասորի, 1870, էջ 340, ուր գրված է. «Յերեք հարիւր ինն ամին Կոստանդեայ. ելին սրիկայք և բնակեցան ի լեառն Լիրանանու և կոչեցան ապստամբք...» (էջ 340):

Մարդայիտների մասին տե՛ս Մ. Կանարի հոդվածը Encyclopédie de l'Islam-ում, հտ. II, էջ 468—469, նաև Yannopoulos, La société, p. 147: "Αγρυπτοί, Μαρδαίται, σελ. 130—136: Στρατιώται, Τὸ Βυζάντιον, Ε', σελ. 46 և հտ.

Ամենայն հավանականությամբ, մարդայիտների անվան մեջ առկա է «մարդ» արմատը: Մարդերը հայտնի էին դեռևս Քսենոֆոնի ժամանակ, Տիգրան Բ-ի օրոք ծառայում էին հայկական բանակում, հետագայում Կորբուլոնի (58 թ.), ինչպես և Տրայանոսի (115 թ.) արշավանքների ժամանակ հռոմայեցիներին համառ դիմադրություն ցուցաբերեցին: Նրանցից կազմված էր «մարդապետական գունդը», որ բաշկովողի համբավ ուներ: Մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում այս մարդերը անկասկած հայացած էին, պահպանելով իրենց ռազմատենչ նկարագիրը և ծառայում

էին բյուզանդական բանակում: Նրանց Մարդաստան գավառը կոչվում էր նաև Մարդուցայք կամ Մարդուցէք: Այդ տեսանկյունից շատ կարևոր է ն. Ադոնցի դիտողութիւնը, որի համաձայն «էք» և «եայք» մասնիկները ցույց են տալիս «բնակիչներ» հասկացութիւնը, այնպես էլ Մարդոցէք կամ Մարդուցայք, կազմված լինելով այդ մասնիկներով, նշանակում են «Մարդոցի բնակիչներ», այսինքն «մարդեր» (տե՛ս Αδοσιζ, Армения, էջ 417, նաև ծանոթ. 5): Հետևաբար սխալած չենք լինի եթե ընդունենք, որ «մարդուցայք» մարդայիտներ է նշանակում: Սերենուր 653 թ. դեպքերի առնչությամբ գրում է. «Վասն հարուածոց՝ որ եղեն ի Մարդուցէսն»: Այստեղ «Մարդուցէսն» ամենայն հավանականությամբ մարդայիտներ է նշանակում և ոչ Մարդուցայք երկրամաս: Զմոռանանք ասել, որ մարդայիտների գոնդը 687 թ. լուծարքի ենթարկելուց հետո, բերվեց Հայաստան, որտեղից պիտի գնացած լինեին «Մարդուցայք»-ը հիշատակում է Ղևոնդը Թեոդորոս Ռշտունու հետ կապված դեպքերի առնչությամբ: Բյուզանդացի զորավար Պրոկոպը, պատմիչի ասելով «...էր բանակեալ ի գաւառին Կոզովտի ի սահմանս Բազուձորոյ և Մարդուցայից» (էջ 7):

381. Բնագրում՝ ἀρχαιογενή «հին բնականիքը» կամ «հին տոհմը» հավասարազոր էր ազնվականի: Yannopoulos, La société, p. 17—18:

382. Կորասենները (կուրայշ) արաբական ցեղ էր, որին էին պատկանում Մոհամմեդը և Մուավիան: Նրանց գիտե և Մովսես Կաղանկատվացին («կուրեշիկ»): Մովսես Կաղանկատվացի, էջ 333:

383. Այսինքն՝ Հովհաննես Պիցիգավդիսը: Բայց նրան Թեոփանեսը ընդամենը մեկ անգամ է հիշատակում:

384. Բյուզանդիայում ուքս (tex) էին կոչում արևմտյան պետութիւնների թագավորներին, քանզի βασιλεύς-ը որպես կանոն իրենց վեհապետներին էին վերապահում: Կարոլոս Մեծին Թեոփանեսը կոչում է ուքս և միայն 812 թ. առաջին անգամ նրան βασιλεύς է անվանում:

385. Բյուզանդիայում IV դ. դարձաւ հրամանատար էր, VI դարից այդպես էին կոչվում բարձրաստիճան ղինվորականներ, որոնք ղիսավորում էին Խալիպայի և Հյուսիսային Աֆրիկայի էքսարքատները: Էքսարքոսները դարձել էին կայսեր տեղակալներ, նրանց իշխանութիւնը տարածվում էր ֆինանսների, արդարադատության, հանրային գործերի, սահմանների պաշտպանության բնագավառների վրա, նրանք հրապարակում էին և ի կատար ածում էլայսերական հրովարտականքը, նշանակում քաղաքացիական, ղինվորական և եկեղեցական պաշտոնյաներին: Ռալեննայի էքսարքոսը մասնակցում էր Հռոմի պապի ընտրութեանը և հաստատում այն:

386. Կաստալդ (castaldi, gastaldi) էին կոչվում լանգոթարդների դուքսերն ու իշխանները, որոնք օժտված էին ղինվորական և քաղաքացիական իրավունքներով:

387. Կոստանդնուպոլսի պատրիարք Գեորգ I-ը (679—686):

388. Անաստասիոս Բիրիսոթեկարիոսը տվյալ տեղը թարգմանել է. «... quo ruit Hedesene ascensus et trullus ecclesiae»:

389. Անտիոքացոց Արտեմիսիոս ամիսը համապատասխանում է մայիսին:

390. Բոննի հրատարակութեան մեջ՝ «սարակինոսների առաջին թագավորը», ըննական բնագրում՝ πρωτοσουλτανος՝ «առաջին խորհրդական»:

391. Եղիգ I իբն Մուավիա (680—683):

392. Դեպքերը տեղի ունեցան 680 թ.։ Բուլղարները, ավելի էիշա՝ սլոնոսրուդարներն առաջին անգամ ներխուժեցին Քրակիա 538 թ. և շարք տալով բյուզանդական զորքերին, վերադարձան։ Երկրորդ անգամ նրանք ներխուժեցին 540 թ.։ Անցնելով Դանուբ գետը, նրանք ասպատակեցին բալկանյան հողերը։ Ազրիատիկ ծովից մինչև Կոստանդնուպոլիս (Тыпкова-Запкова, Нападения варваров, стр. 4)։
393. Թեոփանեսի τῶν Οὐνογευόνδεσθρων Βουλγάρων καὶ Κοτράγων-ի տեղ նիկեփոր պատրիարքը գրում է Οὐνογῶν καὶ Βουλγάρων (հոներ և բուլղարներ — Nicephori Breviarium, p. 38)։ Ուսումնասիրողները գտնում են, որ երկու հեղինակներն էլ օգտագործել են միևնույն, այժմ կորած մի աղբյուր (Moravcsik, Byzantinoturcica, I, S. 535)։ «Աշխարհացոյց»-ում հիշվում են «Ունո|դիսանսոր Բ[ուլ]ղար եկն» (Երեմյան, Հայաստանը, էջ 101), որոնց նույնացնում են Թեոփանեսի Ուննոգունդուրների հետ (Артамонов, История хазар, стр. 168)։ Արամանովը կորենացու (Ա, 6) Վլդնդուր բուլղարին էլ նույնացնում է մեր աղբյուրի ուննոգունդուրների հետ (նույն տեղում, էջ 168)։ Կոստանդին Միրանաժինը իր «Բանակաթեմերի մասին» աշխատություն մեջ (էջ 85), խոսելով Քրակիայի մասին, ցույց է տալիս, որ բուլղարները Կոստանդին Պոպանատս կայսեր թագաժորության վերջում անցել են Իստրոս (Դանուբ) գետը և հաստատվել Քրակիայում։ Նրանք նախապես կոչվել են Օնոգունդուրներ։
- Ուննոգունդուրներն ու կուրազները թուրքական ծագում ունեցող ցեղեր են, սլոնոսրուդարներին աղգակից։ Նրանց մասին տե՛ս Златареки, История I, т. I, стр. 72—97։ Бурмоя, Към въпроса, с. 298—302.
394. Ազովի ծովը։
395. Ատել գետը նույնանում է Վոլգայի հետ։
396. Այժմ՝ Դոն։
397. Էնթադրարար Կուրան գետը (Извори, VI, стр. 261, ծանոթ. 6)։ Ըստ Մարկվարտի (Streifzüge, S. 32, An. 1) Կամա գետը։ Ըստ Արամանովի՝ Բուլղ գետը (История хазар, стр. 166)։ «Աշխարհացոյց»-ի՝ «Կուփի-Բուլղար»-ի տակ (տե՛ս Երեմյան, Հայաստանը, էջ 101) Ք. Պատկանյանը հենց Կուփիս գետն է տեսնում (Патканов, Из нового енисека, стр. 29)։
398. Նեկրոպելեն հիշատակում է և Կոստանդին Միրանաժինը (DAI, I, p. 182)։ Նույնացվում է հին շրջանի Կարկինիսական ծոցի հետ (այժմ Պերեկոպ)։ Ուրիշների կարծիքով Դանուբի գետաբերանի մոտ էր գտնվում (Извори, VI, стр. 261, прим. 7)։
399. Բնադրում՝ Крѣсѣ прѣстѣпѣн։ Թամանյան թերակղզին, Կերչի նեղուցի արևելյան ափին (Извори, VI, стр. 261, прим. 8)։
400. Բոսպորոս երկիրը (Կիմերյան Բոսպորոս) նույնանում է Կերչի հետ։
- 400ա. Ղրիմի հրեական հնազույն գաղութը գոյություն ուներ մ.թ. առաջին դարից։ Թեոփանեսից բացի, այն հիշատակում է և Իրն ալ-Ֆակիհը և կոչում Սամերշ ալ-Յահուդ։ Տե՛ս Golden, Khazar Studies, էջ 20։ Հենց այս հրեաների տոկայությունը կարելի է բացատրել խազարների հրեադավանությունը (նույն տեղում)։
401. Խոսքը բուլղարների խան Կուրրատի մասին է (մեռ. 642-ից հետո)։ Նիկեփոր պատրիարքը նրան անվանում է «Ուննոգունդուրների տեր» (Nicephori Breviarium, p. 27)։ Նույն հեղինակի ասելով Կուրրատը Հերակլիոս կայսեր հետ հաշտություն էր կնքել և վերջինից ստացել պատրիկի պատվաստիճան։ Կարծիք է հայանվել, թե «Աշխարհացոյց»-ի խուրբազը հենց Կուրրատն է (Артамонов, История хазар, стр. 169)։

Այստեղ ասենք, որ նա աղբյուրներում կոչվում է և *Խուրրաստ* (նույն տեղում): Բյուզանդական հեղինակները բուլղար խաներին «տեր» (κύριος) են անվանում: Այդ մասին տե՛ս *Beševliev, Κύριος Βουλγαρίας, 289—298*:

402. Բատրայանին նիկեփոր պատրիարքը անվանում է *Բալանոս* (Βαλανός), իմա՝ Բոյան:

403. Համարվում է բուլղարական պետության հիմնադիրը (681—701): Հին բուլղարական թագավորական ցուցակներում կոչված է Իսպերիխ: Նրա կենսագրական տվյալները շատ կցկտուր են, անգամ նրա անվան ծագումն է անորոշ: Վրաց գիտնական Գ. Վ. Մերեթելին Արմազիի հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերել է մի գեմմա, որի վրա նկարված էր տղամարդու ֆիգուր հունարեն արձանագրությամբ՝ Ἀσπαυρούχας πιτιάξης (Церетелу, Эпиграфические находки, стр. 50): Գեմմաների հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Ասպալրուկ» անունը միջին իրանական է, որով այդպիսին է համարվում և բուլղար խան Ասպարուխի անունը (տե՛ս *Dujčev, Quelques notes, p. 76*): Անունը իրանական-ալանական է համարում Բ. Սիմեոնովը և մեկնաբանում «Սպիտակ ձի» (Симеон, Происход на личното име, стр. 41—46): Բացառված չէ, որ Ասպարուխ անունը հայերի մեջ տարածված իրանական Ասպուրակ[ես] անունն է, որ Յուստին ծագեցնում է պարսկ. *suwār* (հեծյալ, ձիավոր) բառից (*Justi, Iranisches Namenbuch, S. 47*):

404. Դանապրիսը Դենպրն է, Դանաստրիսը՝ Դենստրը:

405. Թեոփանեսը Օգլոսը գետ է համարում՝ Դանուբից հյուսիս գտնվող: Մի փոքր հետո նա Օգլոսը հիշում է որպես վայր: Բուլղար պատմական Դրինովը գտնում է, թե դա այն փոքր տարածությունն է, որ ընկած է Պրուտի, Դանուբի և Սև Սովի միջև: Նա բյուզանդական աղբյուրների Օգլոսը կապում է սլավոնների «УГОЛЬ»-ի (ածուխ) բառի հետ, որից է ծագում սլավոնական «ուգլիշ» ցեղը: Հետագայում այդ վայրը թաթարներն անվանեցին «բուլգա», որ դարձյալ «ածուխ» է նշանակում (տե՛ս *Съчинения на М. С. Дринова, том 1, София, 1909, стр. 45, 46*: *М. Н. Тухомиров, Исторические связи России со славянскими странами и Византией, М., 1969, стр. 103*): Այժմ ուսումնասիրողների մեծ մասը Օգլոս է համարում Դանուբի գետայնում գտնվող ամրությունը: Հարցի մասին տե՛ս և *Bănescu, "Ογλος-Oglu; Σ τ ρ ά τ ο υ, Το Βυζάντιον, Ε', σελ. 102—107*:

406. Նիկեփոր պատրիարքը գրում է *Βερσιλίας, Βερυλίας*: Աղբյուրները երկու տարբեր տեղեր են նշում այս տեղանվան վերաբերյալ, ավելի վաղ աղբյուրը տեղադրում է հյուսիսային Կովկասում, ավելի ուշը՝ Վուլգայի շրջանում: Ուսումնասիրողներից ոմանք Բերդիլիան նույնացնում են հայկական աղբյուրների Բասիդը-Բարսիդը տեղանվան հետ՝ հյուսիսային Կովկասում: Տե՛ս *Golden, Khazar Studies, էջ 143—147*:

407. Այժմ՝ նեսերը քաղաքը Բուլղարիայում, Սև ծովի ափին:

408. Կարծում են, թե Օդյուսոսից (տե՛ս հաջորդ ծանոթ.) հարավ-արևմուտք գտնվող վայր էր (*Извори, VI, стр. 263, ծանոթ. 3*):

409. Թեոփանեսը Օդյուսոսը տեղադրում է Վառնայի մոտ: Դ. Անգելովը, Պ. Լըմբրլը և ուրիշներ Օդյուսոսն ու Վառնան նույնացնում են: Կոչվում էր նաև Օդյուսոպոլիս՝ «Վերանվանումների» բյուզանդական ցուցակում Օդյուսոպոլիսի դիմաց գրված է, «որ այժմ Վառնա է կոչվում» (տե՛ս *Diller, Byzantine Lists, p. 30*):

410. Մասնագետների մեջ որոշակի կարծիք չկա այս «Յոթ տոհմերի» վերաբերյալ: Նը-
շենք այստեղ, որ թուրքերի խաբանի՝ Մավրիկիոս կայսեր ուղարկած նամակում, խա-
բանն իրեն անվանում է «մեծ տեր յոթ տոհմերի, աշխարհի յոթ կղիմաների հրա-
մանատար»: Հմմտ. *Феофилакт Симокатта*, стр. 159: Է. Ն. Գումիլևը գրու-
նում է, որ տվյալ դեպքում յոթ թիվը ինչ-որ մոզական նշանակություն ունի: Այն
հանդիպում է Կյուլ-տեղիների և Տոնյո-կուկի արձանագրություններում (*Гумилев, Био-
графия тюркского хана*, стр. 69): Հարցի մասին հատուկ տե՛ս *Dujčev, Les
sept tribus*, p. 55—65): Ավելացնենք այստեղ, որ Կոստանդին Միրանաժինի համա-
ձայն հունգարացիներն էլ յոթ ցեղ են: Տե՛ս *DAI*, էջ 170:
411. Սկերները բնակվում էին Դնեպրից արևելք: Նրանց մասին տե՛ս *Dujčev, Les sept
tribus*, p. 55 sqq.:
412. Միասնական կարծիք չկա Բերեգար անունը կրող լեռնանցքի տեղագրման շուրջ:
Նույնացվում է ժամանակակից Զարլրկավաշ կամ էլ Բայրամդերե լեռնանցքների
հետ (*Цанкова-Петкова, О территории*, стр. 124, прим. 1, 127: Տե՛ս *Извори*,
VI, стр. 264, ծանոթ. 2):
413. Նորաստեղծ բուլղարական պետության հարավ-արևմուտքում ընկած Ավարիան կապ
չունի ժամանակակից Հունգարիայի տարածքում գոյություն ունեցած Ավարական
խաբանության հետ: Խոսքը ավար զաղթականների մասին է, որոնք հաստատված
էին Բալկանյան լեռների կենտրոնական մասի հյուսիսային փեշերին: Հենց այս
ավարների օգնության դիմեց Կրումը (*Цанкова-Петкова, О территории*, стр.
139—140):
414. Կոստանդնուպոլսի Տիեզերական VI ժողովը գումարվեց Տրսուս (գմբեթակիր) կոչ-
վող պալատում, 680 թ. նոյեմբերի 7-ից 681 թ. սեպտեմբերի 16-ը: Ժողովը գլխա-
վորում էր Կոստանդնուպոլսի պատրիարք Դեոդոր: Մասնակցեցին Անտիոքի Մակա-
րիոս պատրիարքը, Հռոմի պապի, Ալեքսանդրիայի և Երուսաղեմի պատրիարքների
ներկայացուցիչները: Ժողովի մասին մանրամասն վկայում է և սխալմամբ Անանիա
Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրություն»-ը (էջ 398—399). «Եւ հիմնա-
դրեալ զհայհոյութիւն պղծոյն Ղեւոնի շինեցին ի վերայ դաւելադրեալ ուրացութիւնն
Մարտինոսի և Մաքսիմոսի, երկու բնութիւնս, եւ երկու կերպարանս, եւ երկու ներ-
գործութիւնս եւ երկու կամս ի վերա Քրիստոսի ասելով»:
415. Մուխտար իբն Աբու Օրեյդ ալ-Թաբաֆի: Միքայել Ասորու տվյալներով ապստամբու-
թյուն բարձրացրեց Աբուլայում՝ այն է Բաբելոնում (*Michel le Syrien*, t. II, p. 468—
469): Նախապես հարել էր իբն Զուբեյրին:
416. Մովսէս I իբն ալ-Խաթամ (683—685):
417. Արաբական աղբյուրների Աբդ Ալլահ իբն ալ-Զուբայրը, որ Աբդալմելիքի ժամա-
նակ, հիշրայի 66 թ. (685/686 թթ.) ապստամբություն բարձրացրեց և իրեն խալի-
ֆա հռչակեց: Պատկանում էր կուրայշ ցեղին: Մականվեց 692 թ. հոկտ./նոյ. ամսին:
Էթրիքի արարների ղեկավարն էր՝ Իսլամի երկրորդ քաղաքացիական կռիվների ժա-
մանակ (680—692): Տե՛ս նաև Տե՛ր-Ղևոնդյան, Ամիրայությունները, էջ 43:
418. Հասան իբն Մալեք իբն Բահդալ, եզիդ I-ի քեռին:
419. Աբդ ալ-Մելիք (685—705 թթ.), Օմմայան հարստության 5-րդ խալիֆան: Նրան
բազմիցս հիշատակում է Մովսէս Կաղանկատվացին:
420. Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարքը երկրորդ անգամ աթոռակալեց 686—
687 թթ.:

421. Հուստինիանոս II (685—695, 705—711):

422. Պալմանագիրը հախապես կերված էր 678 թ., 688 թ. այն վերանորոգվեց (տե՛ս M. Canard, Bull. d'Et. orient. de l'Inst. fr. de Damas, 13 (1949—1951), էջ 62—69): Կիպրոսը առաջին անգամ արաբների հարձակման դո՛չ դարձավ 643/649-ին, ապա 653/654 թթ: Մի շարք ուսումնասիրողներ ենթադրում են, որ condominium-ը (Ostrogorsky, Histoire, p. 160) անեց մինչև 965 թ., երբ այն վերջնականապես ազատագրվեց արաբների ձեռքից (տե՛ս Jenkins, Cyprus, p. 1006 և հա.։ Χαρακτηριστικά. 'Η Κύπρος: Apud: Ζαχαριαδην, Η Βυζαντινή Αυτοκρατορία, τ. 104, Ժանոթ. 3): Հետաքրքրական է նշել, Միքայել Ասորու ավյայներով բյուզանդացիները և արաբները կիսում էին Կիպրոսի հարկերը միայն, որ Կիպրոսն էր երկուսին ենթակա ու հպատակ, Հայաստանը, Վրաստանը (Գուրգան) և Առանը (Արդան) և Մեդիայի հյուսիսային մասը, այն է Ասորդատականը (Աղարբիզան) պիտի ենթարկվեին միայն Բյուզանդիային (Michel le Syrien, t. II, p. 469): Ենթադրում են, որ այս պալմանագրով Արղարմելիքը հանաչեց Բյուզանդիայի տիրապետությունը ամբողջ Հայաստանի վրա (կամ երա մի մասի): Տե՛ս Στρατσου, Το Βυζάντιον, ΣΤ', տ. 33: Հմմտ. նույն տեղում, էջ 36, որտեղ վստահ խոսք է լինում Հայաստանի մի մասի Բյուզանդիային ենթարկվելու մասին: Հարցի մասին տե՛ս Τωμαδίου, Κυπροκρατία, տ. 27: Costantino Porfirogenito de Thematicis, p. 26—27: Οικονομικά, 'Η εν Κύπρω Δραβοκρατία, տ. 193—200: Այս աշխատություններում հեղինակները ցույց են տալիս, որ 648—695 թթ. միջև Կիպրոսում կատարյալ արաբական տիրապետություն չի եղել: Նշենք այստեղ, որ Կիպրոսում այս ժամանակ կար հայկական բաղմամարդ գաղութ, որ հայերը գաղթեցվել էին այստեղ դեռևս 578 թ. Աղանիքից (Kyrri, Military colonies, p. 157):

423. Այս տիտղոսը կրողները դրաղվում էին դիվանագիտությամբ և ներքին անվտանգությունից: Ենթադրվում էին magister officiorum-ին և կոչվում էին agentes in rebus: Պաշտոնը հարատևեց մինչև VIII դ., որից հետո նրանց պարտականությունները կատարող մարդիկ կոչվում էին «վասիլիկոս» (DAI, II, p. 79):

424. Մ. Յա. Բյուզյունովը մարդայիտների, ինչպես և առանձին արաբական ցեղերի անցումը Բյուզանդիա բացատրում է բյուզանդական կատալաթության՝ գյուղական համայնքների պաշտպանության ուղղությամբ տարած բազարականությամբ (Сюзюмов, О характере, стр. 45): Ավելի ուշ աղբյուրներում, նախ և առաջ Կոստանդին Միքանաձին կայսեր երկերում, մարդայիտներ են հիշվում Բյուզանդական կայսրության այլևայլ շրջաններում՝ Պելոպոնեսում, Կեֆալոնիայում, Էպիրոսի նիկոպոլիս քաղաքում, Ատտալիայում, սակայն նրանք VII դ. մարդայիտների հետ որևէ առնչություն չունեն, պարզապես նրանց անունը կրողներ են:

425. Ուրեղուլլահ իբն Զիյադը Մուավիան սրա հորն էր հայտարարել իր եղբայրը և ոչ Զիյադին, ինչպես գրում է Քեոփանեսը (Στρατσου, Το Βυζάντιον, ΣΤ', տ. 38, Ժանոթ. 118):

426. Բնագրում՝ Βουζαντινός:

427. Միջագետքի հին բազար Եփրատի ձախ ափին, այս գետի Արորա (Խարուր) վտակի խառնման տեղում: Գտնվում էր Հռոմեական կայսրության ժայռամասում և պարսպապատվել էր Դիոկլետիանոսի և Հուստինիանոս I-ի կողմից: Զորավարի աթոռանիստ էր: Վահրամ Զուրինի ապստամբության ժամանակ պարսից արքա Խոսրովն այստեղ ապաստանեց:

428. Հուստինիանոս I-ի կողմից Ասորիքի հին մայրաքաղաք Անտիոքին տրված նոր անունը, որ «Աստվածային» (աստծո) բաղադր է նշանակում: Նիկեիոս Փոկասի գրավումից հետո Անտիոքը պաշտոնական փաստաթղթերում Անտիոք-Քեուպոլիս է կոչվում:
429. Կոստանդնուպոլսի Պափղոս III պատրիարքը (688—694):
430. Քեոփանեսն այստեղ տեղանվան հոգնակի ձևն է օգտագործում, երկու տող հետո՝ եզակի: 6250 թ. տակ նա հիշում է Մակեդոնիայի Սկլավենիաները: Տե՛ս էջ 142:
431. Օպսիկիոն բանակաթևմը գտնվում էր Փոքրասիական թերակղզու հյուսիս-արևմտյան ծայրամասում: Նրա մեջ էին մտնում. Նիկիա, Պրուսա, Կոսիեոն, Դորիլեոն, Միդեոն, Ապամիա, Կյուզիկոս, Աբիդոս և այլ քաղաքներ:
432. Բնագրում՝ Ἀβδελαῖς և Ζουβείρ: Զուեար է նույնանա 6175 թ. տակ հիշված Ἀβδελαῖς οἶκος Ζουβείρ-ին, քանզի նրան արդեն սպանել էր Աբդալմելիքը, թեպետև այնտեղ հնարավոր է, որ խոսք է լինում հետագա դեպքերի մասին:
433. Ոչ թե Զուբեյրի (բնագրում՝ Ζουβείρ), այլ Զուբեյրի որդի Աբդալայի (Աբդալլահ իբն Զուբայր): Դեպքը տեղի ունեցավ 692 թ.: Հմմտ. ծանոթ. 432:
434. Բնագրում՝ Χαῖαν: Շաբոն առաջարկում է ուղղել Χαῖαν (Խափադ): Միքայել Ասորին տալիս է Հաջջաջ ընթերցումը: Խոսքը էլ-Հաջջաջ իբն Յուսուֆի մասին է (Michel le Syrien, t. II, p. 470):
435. Քեոփանեսը ճիշտ չէ: Կիպրացիները 690/691 թթ. հաստատվեցին Կյուզիկոսում, որ և քաղաք հիմնադրեցին՝ նոր Հուստինիանուպոլիսը (Στράβων, Το Βυζάντιον, ΣΤ', σελ. 69):
436. Բնագրում՝ μονήσαν:
437. Գեթսեմանիի տաճարը Քրիստոսի գերեզմանից հետո քրիստոնյաների գլխավոր սրբավայրն է նրբաաղեմում, քանզի նրա մեջ էր Աստվածածնի գերեզմանը: Գրտնվում էր Զիթենյաց լեռան արևմտյան փեշերին: Տաճարում բացի հույներից, մասունեն նաև դպտիները, հայերը և ասորիները: Կառուցվել է Կոստանդին Մեծի և նրա մայր Հելենի կողմից, բայց հետագայում բազմիցս վերանորոգվել ու վերակառուցվել:
438. Ռ. Գիյանը կարծում է, որ Մանսուրը հնարավոր է հայրն է Հովհաննես Մանսուրի՝ մականունը Ոսկեհոս (Հովհան Դամասկոսցի), որն աչքի ընկավ սրբապատկերների պաշտպանության դիրքերում՝ Կոստանդին V-ի օրոք (Guilland, Les logothètes p. 12):
439. Սլավոնների բյուզանդական բանակում ծառայության ընդունվելը ցույց է տալիս, որ նրանք օգտվում էին ազատների իրավունքներից: Բանակում ծառայելը ազատ քաղաքացիների իրավունքն էր: Այս հանգամանքը, որ Քեոփանեսի ասելով Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեաոսը (766—780) ծագումով օրավոն էր, նույն բանն է հաստատում (Yannopoulos, La société, p. 253):
440. Բնագրում՝ λαόν περιούσιον:
441. Նիկեիոս պատրիարքը նրան անվանում է Γεβούλον (Nicephori Breviarium, p. 41): Բուլղար պատմաբանները գտնում են, որ քաղաքական Բսվուլ անունն է: Այն հանդիպում է IX դ. արձանագրություններում (Извори, т. VI, стр. 266, прим. 3):

442. Ոմանք կարծում են, որ խոսքը Կիլիկիայի ծովափնյա Սերաստիա քաղաքի մասին է, հետազայի Այաս նավահանգստի: Կարծիք կա նաև, որ Առաջին Հայքի Սերաստուպոլիսն է, այժմ՝ Սուլու սարայ (Չիֆթլիկ) (Maricq, Notes sur les Slaves, p. 350 և հտ.: Հմմտ. Ostrogorsky, Histoire, p. 162: Извощи, т. VI, стр. 266, ծանոթ. 4): Առաջին Հայքի Սերաստուպոլիսի մասին է կարծում նաև Ջակիթի-նոսը: (Ζ. α. α. 0 0 η γ ο 0, Η Βυζαντινή Αυτοκρατορία, σελ. 105): Բայց Առաջին Հայքի Սերաստուպոլիսը ծովափնյա՝ էր: Տարօրինակ կարծիք է հայտնել Թեոփանեսի ժամանակագրության հրատարակիչը: Ցանկերում Սերաստուպոլիսի մասին նա գրում է. Urbs maritima (Colchidis), vol. II, p. 700, այսինքն նույնացնում է ժամանակակից Սուխումիի հետ: Հարցի մասին տես Στ ρ α τ ο ο, Το Βυζαντιν, ΣΤ', σελ. 44—45, որտեղ ասված է նաև, որ «ծովափնյա» բառը Թեոփանեսի սխալն է:
443. Նույնանում է հայկական աղբյուրներում հիշված «Մահմետ իշխան զօրուն իսմայելի» անձնավորության հետ, որ ճնշեց հայոց 703 թ. ապստամբությունը: Հենց սա էր Նախճավանի և Խրամի եկեղեցիներում հայ նախարարներին ողջակեզ անողը (Ղևոնդ, էջ 32—33: Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, էջ 366—367): Թեոփանեսը մի քիչ հետո այդ բանը հաստատում է:
444. Թեոփանեսն այստեղ վկայում է Փոքր Ասիայում (Օպսիկիոն բանակաթեմում) գաղթեցված սլավոնների բնաջնջման մասին: Բայց հետազայում (762) Կոստանդին V-ը դարձյալ սլավոններ գաղթեցրեց Արտանա (Բյութանիայում): Նիկեփոր պատրիարքի տվյալներով նրանք 208 հազար հոգի էին: Կոստանդին Միրանաձինի վկայությամբ 949 թ. Կոնգրիեսի Կրեաթի արշավանքին մասնակցեցին Օպսիկիոնի սլավոններն իրենց նրեք հրամանատարներով (տես Կոստանդին Միրանաձին, էջ 148—149):
445. Այս մեքատին Ղևոնդը համարում է Վարադաիրոցի որդի և մանրամասն խոսում նրա պայքարի մասին ընդդեմ կայսրության (էջ 19):
446. Կոստանդնուպոլսի պատրիարք Կալլինիկոս I-ը (694—706):
447. Անտիոքացոց հյուպերբերեսայոս ամիրսը համապատասխանում է հսկամբերին:
448. Հուստինիանոս II-ի տրիկլինոնը կամ Ոսկե տրիկլինոնը (խրիստոտրիկլինոն) շրջապատող շքեղ շենքերից մեկն էր, կառուցվել է 694 թ.: Տոնախմբությունների գահի՜ճ էր:
449. Բնագրում՝ էպիկտես: Նշանակում է որևէ գործի վերականգու: Այդ պաշտոնի անվանումը հետազայում ընդունվում է որպես հատուկ անուն: Մատթեոս Ուռհայեցին հիշատակում է Անտիոքի կառավարիչ հայազգի էպիխտին:
450. Սա գեներկոնի լոգոթետի առաջին հիշատակություններից մեկն է բյուզանդական աղբյուրներում (Guiland, Les logothètes, p. 12): Ընդհանրապես լոգոթետների մասին նույն տեղում, էջ 5—115: Նաև՝ Կոստանդին Միրանաձին, էջ 291—292:
451. Բոսֆորը նկատի ունի:
452. Բնագրում՝ βάσεις: Անաստասիոս Բիրիլիոթեկարիոսը թարգմանել է bases:
453. Կոստանդնուպոլսի թաղամաս Ոսկեղջյուրում: Այստեղ կային պալատ, բաղանիք, տաճարներ և վանքեր, այդ թվում և սբ. Եվփեմիայի վանքը:

454. Հաժանաբար հենց այս արշավանքը ամենայն մանրամասնությամբ նկարագրված է Ղևոնդի կողմից: Պատմիչը գտնում է, որ զեպքերը տեղի ունեցան Արղալմեխի իշխանության 16-րդ տարում (ըստ Թեոփանեսի՝ 12-րդ) և զորավար Մահմեդը մուտք գործեց Ջերմաձոր գավառը (Մոկաց գավառ): Սա ծուր ի գործ արարեալ կոտորէր զարսն և զկանայս, և զմանկունսն վարէր ի գերութիւն. և տազնապ հասուցանէր աշխարհիս» (էջ 20): Ղևոնդը ցույց է տալիս, որ զորավար Մահմեդը երկրորդ անգամ արշավեց Հայաստան՝ Արղալմեխի 18-րդ տարում:
455. Երուրը կարծում է, որ այստեղ խոսքը ոչ թե Կոստանդնուպոլսի ամբողջ ղեմախմբին է խոսքը, այլ վենետիկների (կապույտների) արիստոկրատական կուսակցության պատկանող ղեմախմբին (Cambridge Medieval History, II, 1913, էջ 400): Այդ միտքը Գեորգ Վանականի և այլ աղբյուրների, այդ թվում և Կիրակոս Գանձակեցու տվյալներով հաստատում է Մ. Վ. Լեշենկոն (Лешченко, Венеты и православные, стр. 182):
456. Ըստ Կոստանդին Միրանաժինի արևմտյան 5-րդ բանակաթեմն էր: Հիերոկլեսի Մինեկղեմոսի համաձայն նույնանում է Աքայայի հետ: Ընդգրկում էր հյուսիսային և կենտրոնական Հունաստանը՝ մինչև Պելոպոնես: Բանակաթեմը ստեղծվեց VII դ. վերջում: Կենտրոնը կարիսա բաղաքն էր: Տարբեր ժամանակներում Պելոպոնեսը մտնում էր Հելլադա բանակաթեմի կազմի մեջ:
457. Իրականում Սոֆիեի (կամ Սոֆիենների) նավահանգիստը լրիվ չի համընկելում Հուլիանոսի նավահանգիստին: Սոֆիեի նավահանգիստը թուրքերն անվանում են Կադր-գայիմանը: Գտնվում էր Կոստանդնուպոլսի եվրոպական մասի հարավարևելյան ափին:
458. Գտնվում էր Սոֆիանի նավահանգստից արևմուտք:
459. Տե՛ս ծանոթ. 78: Նաև Կոստանդին Միրանաժին, էջ 283, ծանոթ. 193:
460. "Υπαρχος τοῦ στρατοπέδου: Այսպես էր կոչվում արշավանքի ղուրո և կառավարական զորարանակի մատակարարման պետը: Կոչվում էր նաև Մեծ ստրատոպեդարք: Սակայն բացառված չէ, որ այստեղ խոսքը Կոստանդնուպոլսի բաղաքապետի՝ էպարքոսի մասին է:
461. Բնագրում՝ ὑόρος հրապարակ, բայց ավելի որոշակի՝ Կոստանդինի հրապարակը: Գտնվում էր սր. Սոֆիայից արևմուտք, ձիարշավարանից հյուսիս-արևմուտք:
462. Կոստանդնուպոլիսը բաժանված էր 14 ռեգիոնների (regiones, ρεγεῶνες, χλίσματα), շրջանների (տե՛ս Janin, Cons. byz., p. 49—64), որոնցից 13-ը գտնվում էին բաղաքի եվրոպական մասում, 1-ը՝ Սիկե կոչվածը՝ ասիական:
463. Անեծք է, մոտավորապես՝ «զյտորա-գյոռ լինես»:
464. Աֆենդոնեի մասին տե՛ս ծանոթ. 77:
465. Հնում՝ Խերսոնես, բյուզանդական Խերսոն բանակաթեմի կենտրոնը: Կոստանդին Միրանաժինի որոշ կայսրության եվրոպական 12-րդ բանակաթեմն էր: Խերսոնը Կորսուն բաղաքն է՝ Սև ծովի ափին՝ Ղրիմում, Սևաստոպոլից արևմուտք:
466. Տե՛ս ծանոթ. 100:
467. Լեոնտիոս կայսր (695—698):
468. Բնագրում՝ "Αλιόος, հայկական աղբյուրների Վլիթը (Վալիդ իրն Արղալմեխի):
469. Հյուսիսային Աֆրիկայի նվաճումը, որը սկսեց նշանավոր Ուրբան, շարունակեց 697 թ. Հասան իրն ան-Նումանը: Հաջորդ տարին նա գրավեց Կարթագենը: Արար-

- ներք Աֆրիկան վերջնականապես նվաճեցին 711 թ., Մուսա իրն նուսայրի գլխավորությամբ:
470. Բնադրում՝ πρωτοεπισκοπος:
471. Կիրյուրեոսների քանակաթեմը գտնվում էր Փոքրասիական թերակղզու հարավ-արևմուտքում: Կենտրոն ծովային քանակաթեմ, այն կադավարում էր ոչ թե զորավարը, այլ ծովակալը՝ տվյալ դեպքում դրունգար:
472. Ոսկեզյուրի նավահանգիստներից մեկը, հավանաբար նույնանում է նեորիոնի հետ:
473. Դեմատոսի (կամ Դալմատոսի) վանքը, որի անունով էր կոչված Կոստանդնուպոլսի մի թաղամաս, գտնվում էր Կոստանդնի պարսպի հարավային մասում, ժամանակակից Սամաթիայից արևելք:
474. Ապսիմարոս (Տիրերիոս III): Թագավորեց 598—705 թթ.:
475. Տե՛ս վերը, ծանոթ. 434:
476. Հավանաբար Արդալլահ իրն Արդալմալիք իրն Մրվանը, խալիֆա Արդալմալիքի որդին, քանզի հիշվում է, որ 701—702 թթ. նա Բյուզանդիայի վրա արշավանք է կատարել: Հետագայում նա դարձավ Շարպտոսի կառավարիչը:
477. Հեպտադեմոն թարգմանաբար ճշանակում է յոթդեյան:
478. Բնադրում՝ ἀρχιεπισκοπος:
479. Եռսքը հայոց իշխան Սմբատ Բագրատունու գլխավորությամբ հայերի 703 թ. ապստամբության մասին է: Հայ նախարարները ողջակեզ արվեցին Խրամի և Նախճավանի եկեղեցիներում: Այդ մասին մանրամասն տե՛ս Ղևոնդ պատմիչի երկում (էջ 32—33): Մովսես Կաղանկատվացին (366—367), Հովհաննես Դրասխանակերտցին (էջ 97—98), Վարդան Արևելցին (Muyldermans, La domination, p. 51), Միքայել Ասորին (Michel le Syrien, t. II, p. 474), նույնպես անդրադարձել են այդ դեպքերին: Ուսումնասիրություններից տե՛ս Առաֆելյան, Հայերի ապստամբությունը, էջ 55—62, Тер-Гевондян, Армения, стр. 75—78:
480. Բնադրում՝ Σισιον χριστον: Միքայել Ասորին գրում է Sizé (Michel le Syrien, t. II, p. 489): Նույնպես է և հայերեն թարգմանություն մեջ, «զանառիկ բերդն յերկրին Կիլիկիոյ, որ կոչի Շիզէ» (Միխայել Ասորի, 1871, էջ 338):
481. Այս Դարաս բերդը նիկեիոս պատրիարքը անվանում է Դորոս և տեղադրում Դոթաց աշխարհում (Nichepori Breviarium, p. 46): Ավելի ուշ աղբյուրներում Դորոսի փոխարեն հանդիպում է Թեոդորոս ձևը: Վասիլեսկու կարծիքով նույնանում է Մանգուպի հետ: Տե՛ս Васильевский, Житие Иоанна Готского, стр. 417—418: Դեպքերի մասին՝ նույն տեղում, էջ 388—390:
482. Բյուզանդական աղբյուրները խաբանին անվանում են Իրուզիր Դլավան (Артамонков, История хазар, стр. 196):
483. Ըստ Ղևոնդի՝ խաբանի դստեր, և ոչ քրոջ. «Յուստինիոս գնացեալ յաշխարհն Խաղրաց՝ առնոյր իւր կնութեան զդուստրն Խաբանայ՝ արքային Խաղրաց» (էջ 17): Հասկանալի է, նա Թեոդորոս կոչվեց ամուսնանալուց և մկրտվելուց հետո: Մեզ հայտնի չէ նրա իսկական անունը:
484. Հին հունական դադութ էր և գտնվում էր ժամանակակից Թամանյան ծովածոցի տեղում: Նրա ավերակները գտնվում են Կրասնոդարի երկրամասի Տեմրյուկի շրջանի Սեննալա կայարանից 3 կմ արևմուտք, որտեղ այժմ հնագիտական պեղումներ են կատարվում:

- 484ա Հայտնի չէ, Պապացիսը անուն է, թե տիտղոս: Ինչ վերաբերում է Բալգիցիսին, ապա այդ մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ: Գուգենը կարծում է, թե Belgici/Bälgiči-ն է և նշանակում է «կնիքի պահապան» և համապատասխանում է Կենտրոնական Ասիայի թուրքերի «տամդաշի»-ին, Օսմանցիների «նիշանչի»-ին: Գուգենից առաջ Կոկովցովը բացատրել էր Bälgiči, քաղաքապետ, որ ավելի է հարմարվում Թեոփանեսի Բալգիցիսի էությանը: *St'a Golden, Khazar Studies*, էջ 165—167, 204—205:
485. Ժամանակակից Կոստանդա նավահանգիստը Ռումինիայում: Հին հունական դադար էր: Մ. թ. 8—17 թթ. այստեղ էր ապրում արաբական Օմիյդիսը: Կոստանդին Մեծը Տոմիսը վերանվանեց Կոստանդինիանա: Թուրքական տիրապետության ժամանակ կոչվում էր Քյուստենդե:
486. Տեղն անորոշ: Բազմաթիվ կարծիքներ են արտահայտվել, որոնցից մեկի համաձայն Ղրիմի թերակղզու արևելյան ծայրն է, որ կոչվում էր Ասպերա թերակղզի (տե՛ս Γρασυρόποσις, Βαρσβαζούριος, ժա. 293):
487. Հունարեն բնադրում՝ Βαρσβαζούριος. Անաստասիոս Բիրիսթեկարիոսի լատիներեն թարգմանության մեջ՝ Barisbacurius: Նիկեիոս պատրիարքը տալիս է ճիշտ քննարկումը: Βαρσβαζούριος (Nicephori Breviarium, p. 47, 54): Հույն բյուզանդագետ Յաննոպուլոսը, որ հատուկ հոգիով է նվիրել այս անձնավորության (Γρασυρόποσις, Βαρσβαζούριος, ժա. 294), ընդգծելով նրա անվան ոչ հունարեն, հնաեւրոպ. և այն կրողի ոչ հույն լինելը, նրան խեղճացրել է համարում: Բայց նա, անկասկած, հայկական վարդապետուն է՝ բարդված Բակուր անվամբ: Գտնված են նրա արձնե կնիքները: Մեկի վրա նա պատրիկ տիտղոսն է կրում (Schlumberger, Sigillographie, p. 3, 249: *St'a նաև Zacos et Veglery, Byzantine Lead Seals*, I, 1730—1731: Apud: Yannopoulos): Վարադարադուրի արձնե կնիքներ պահվում են նաև Լենինգրադի էրմիտաժի հարուստ հավաքածուում (Иландровская, Памятники, стр. 247): Նշենք, որ կնիքների վրա դրված է Βαρσβαζούριος: Վարադարադուրի Օպսիկոն բանակաթեմի գորավար լինելու հանգամանքը վկայում է նրա հանդեսը բյուզանդական կայսրերի ունեցած հնկայական վստահությունը, քանզի Կոստանդնուպոլսին ամենամոտիկ այդ բանակաթեմի գործերը միակ ամենավստահելի ուժն էին, որոնց վրա անմիջականորեն հենվում էին նրանք: (*St'a Γρασυρόποσις*, նույն տեղում, էջ 294): Մի այլ տեղում Թեոփանեսը նրան «պրոտոպատրիկ» է անվանում, դեռևս անձանոթ բովանդակությամբ տիտղոս: Ոմանք պատրիկների դասի դիտավոր» են բացատրում (Bury, IAS, p. 28): Յաննոպուլոսը մերժելով այդ մեկնաբանությունը, Վարադարադուրին պատրիկ է անվանում, ելնելով նրա կնիքների վրա կարգացվող «պատրիկ» գրությունից: Բայց պատրիկը չէր կարող հետազայում պրոտոպատրիկ դասնալ: «Պրոտոպատրիկ» տիտղոսը հանդիպում է նաև հայկական աղբյուրներում՝ «պրոտոնպատրիկ», «պոտոնապատրիկ» ձևով: Բյուզանդական Կոստանդին կայսրը Աղվանից իշխան Զիվանշիրին «առնէ... պոտոն պատրիկ» (Մովսես Կաղանկատվացի, էջ 208): *St'a* և Դեիգուր Մազիստրոս, էջ 225: Հմմտ. Անադյան, Հայերեն նոր բառեր, Բ, էջ 203:
488. Պերեկոպի ծովածոցը: Ուշ շրջանում իտալացիները կոչում էին Նիգրոպոլի (Βασιλευσκιῦ, Записки греческого тэпарха, стр. 193—194): *St'a* և ծանոթ. 398:

489. Բնագրում՝ Μοῦαλγας: Մի քիչ հետո (6205 թ.) Կրկում է, որ Միակիսը նրա ազգանունն է, քանզի անունը Թեոդորոս է: Թումանովը Միակիսը համարում է հայկական Հմայակ անունը (Toumanoff, Caucasica, p. 149):
490. Նրան հիշում է նաև Ղևոնդը Տրուէղ ձևով, որը՝ սխալմամբ գրում է, թե Հուստինիանոսին գահ բարձրացրեց խաբանը, նրան տալով զորք «Տրուէղ»-ի գլխավորութեամբ, որն, իբրև թե «մեռանէր ի պատերազմին» (Ղևոնդ, էջ 17):
491. Այս անունը Թեոփանեսը բերում է 'Αλκιός (6189 թ.) և Ούαλίδ (6197 թ.) ձևով: Այսպիսի խալիֆա Վալիդ I-ը (705—715): Հայկական աղբյուրներում կոչվում է Վլիթ:
492. Կոստանդնուպոլսի Խարսիու կամ Խարիսիու դարբասը գտնվում էր դեպի սր. Առաքելոց եկեղեցին տանող մեծ ճանապարհի վրա և համապատասխանում է ժամանակակից էդիրնեկապրին (Ազրիանուպոլսի դռան): Անունը պարտական է «կապույտների» կուսակցության ղեկավար Խարիսիոսին (Խարսիոսին):
493. Տե՛ս 705—711: Հուստինիանոս II-ի երկրորդ թագավորության մասին կա հատուկ ուսումնասիրություն: Տե՛ս Head, The second reign of Justinian II, p. 14—32:
494. Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարք (706—712):
495. Նիկեևոր պատրիարքի ասելով, Հուստինիանոսը Տերվելիսին կեսարի պատվաստիճանն էլ շնորհեց (Nicephori Breviarium, p. 48), որի կրողը կայսրից հետո երկրորդ մարդն էր պետության մեջ, թեև տվյալ ժամանակ կորցրել էր իր սկզբնական նշանակությունը: Տերվելիսը առաջին օտարազգի անձնավորությունն էր, որ արժանանում էր այդ տիտղոսին (Ostrogorsky, Histoire, p. 172): Հուստինիանոս II-ի Տերվելիսին տված «նվերների» մասին գրում է և բառարանագիր Սուիդասը (Սուիդա), ելնելով նրա տվյալներից, բուլղար պատմաբանները գտնում են, որ խոսքը սոսկ «նվերների» մասին չէ, այլ ըստ էության հարկի, վերականգնումը տարեկան հարկի, որ Բյուզանդիան վճարում էր Կոստանդին IV-ի ժամանակ: Վ. Զլատարսկու համաձայն, Հուստինիանոս II-ի Տերվելիսի հետ կնքած պայմանագրի պայմաններն էին. 1) տարեկան հարկի վճարում, 2) Տերվելիսի ճանաչում Բուլղարիայի օրինավոր կառավարիչ, իսկ Բուլղարիայի՝ անկախ պետության, ընդ որում, նկատի առնելով Գեորգ Վանականի տեղեկությունները, Հուստինիանոս II-ը Տերվելիսին զիջեց և «այժմ Զագորա կոչված» շրջանները: Հարցի մասին տե՛ս Баласчев, Българският господар Тервел, стр. 55 и сл.; Златарски, История на българската държава, т. I. Бешевлиев, К вопросу о награде, стр. 8—13; Дуйчев, Юстиниан II Ринотмит:
496. Ապոլլոնիաս անունով բազմաթիվ քաղաքներ են եղել, որոնք իրենց անունը պարտական են տեղում պաշտվող Ապոլլոն աստծուն: Տվյալ դեպքում հավանաբար նկատի ունի Թրակիայի Ապոլլոնիասներից մեկը:
497. Միջերկրյայք (հունարենում՝ Μεσολαγας) ասելով բյուզանդական հեղինակները նկատի ունեն Փոքրասիական թերակղզու մեջտեղում գտնվող տարածքը: «Աշխարհացոյց»-ում վկայված է այն. «Եւ ունի Ասիա կողմունս կողմունս: Եւ նախ զկողմն Մէջերկրեայս» (Անանիա Շիրակացու Մատենադարանությունը, էջ 345): Ղևոնդ պատմիչը ավելի հստակ է գրում. աշխարհն Միսիգիոն, որ թարգմանի Միջերկրեայք» (էջ 103):
498. Հմմտ. Սաղմոս ՂԱ, 1—3. «Ի վերայ իժից և բարբից գնացես դու, առ ուն կոխես ցես դառնե՞ն և զվիշապն»:

499. Կյունեգիոնը գտնվում էր Մանգանայի պալատի մոտ, ժամանակակից Սերայլի վերջավորությունում, Կոստանդնուպոլսի եվրոպական մասի արևելյան ծայրամասում և որպես կանոն մահապատիժն ի կատար ածելու վայր էր։ Այն հիշատակում է և ՍԷՐԵՆՍԵՐԻ Մավրիկիոս կայսրը հրամայեց իշխան Սմբատ Բագրատունուն և այլ հայ նախարարներին՝ «մերկադուցանել և բնակեցնել ի կիսիկն» (Սերենոս էջ 92, 93)։
500. Խոսքը Ամաստրիդայի մասին է։ Թեոփանեսն այն կղզի է անվանում, բայց իրականում Փոքր Ասիայի թերակղզու վրա գտնվող ծովափնյա քաղաք է՝ Պափլագոնիայում, Պանդերակլիայի և Սինոպի միջև։ Մանրամասն հիշատակվում է Ստրաբոնի կողմից (Βασιλευσκειῦ, Жития, стр. XXI—XXVII)։
501. Երուսաղեմի Հովհաննես V պատրիարքը (705—735)։
502. Բնագրում՝ γλωσσῆ (լեզվով)։
503. Քաղաք Եվքսինյան Պոնտոսի թրակական ափին, այժմ՝ Պոմորիե քաղաքը Բուլղարիայում։
504. Մասլամա իրն Աբդ ալ-Մալիք, Վալիդ I իրն Աբդ ալ-Մալիքի եղբայրը։ Նա Մովսես I-ի թոռն էր և ոչ Մուավիայի, ինչպես ասվում է այլ աղբյուրներում։ Վալիդ I-ի իշխանություն սկզբում գրավեց ալ-Թուլանա, Կապպադովկիայի ամենակարևոր բերդը ըստ արաբական աղբյուրների՝ 707 թ. մայիսին, ըստ բյուզանդական՝ 709 թ.։ Բերդը Թեոփանեսը կոչում է Տիանա։ 712-ին նա գրավեց Պոնտոսի Ամասիա քաղաքը։ Նրան հիշում է և Ղևոնդը, համարելով խալիֆայի եղբայր (Ղևոնդ, էջ 102)։ Հավանաբար նրան նկատի ունի Մովսես Կաղանկատվացին «Մսլիման»-ի տակ (էջ 368)։
505. Ալ-Աբբաս իրն ալ-Վալիդ, Վալիդ I խալիֆայի որդին, նշանավոր ժամայան գորահրամանատար, նախորդի՝ Մասլամայի եղբորորդին։ 712 թ. Աբբասը գրավեց Կիլիկիայի Սերաստուպոլիս քաղաքը, իսկ հաջորդ տարին՝ Պիսիդիայի Անտիոքը։ 720 թ. խալիֆա Օմար II-ի մահից հետո, երբ Իրաքի կառավարիչ Եգիպ իրն ալ-Մուհալլաբը Բասրայում խռովություն բարձրացրեց, նրա դեմ ուղարկվեցին Աբբասն ու Մասլաման։ Նիկեիոս պատրիարքը Աբբասի փոխարեն գրում է Սուլեյման (Σουλμαν, Nicephori Breviatium, p. 49)։
506. Մայումայի ինքնությունը պարզում են արաբական աղբյուրները։ Նա Մուավիայի բրոշ ստրուկն էր և բարձր աստիճանի արժանացավ խալիֆայի եղբայր Մասլամա իրն Աբդ ալ-Մալիքի կողմից (Στράβων, Τὸ Βυζάντιον, ΣΤ', σελ. 155—156)։
507. Արաբական աղբյուրների ալ-Թուլանան, Կապպադովկիայի կարևորագույն բերդը, որ փակում էր Տավրոսի անցումները։
508. Բնագրում՝ Καρτερούνας, որ կարելի է կարդալ նաև Βαρτερούνας (Կ-ի և Β-ի գրություն ձևը այս շրջանում նույնն է, համեմատիր Թեոփանեսի Καριστερότης (Կարիստերոցես-Վարադտիրոց)։ Այդ գեպում կարելի է կապել Վարդ (Վարդիկ) անվան հետ։ Բյուզանդական աղբյուրներում հայկական—օւնազ վերջավորություններ անունների (Γαχνούνας, Ταυτούνας, Πατζρατούνας) մասին տե՛ս Schmitt, Armenische Kosenamen, S. 179—183։
509. «Սալիք» արաբերեն նշանակում է «խաչ»։ Հնարավոր է, որ նա քրիստոնյա արաբ էր։
510. Գարիսն այստեղ քաղաքի տպավորություն է թողնում։ Հետագայում Թեոփանեսը հիշում է «Գարիս կոչվող դաշտը»։
511. Իմա՝ Մավրոս և Ստեփանոս պատրիկներին։

512. Տուղունոսը անուն է, այլ պաշտոն: Թուրքերը «Տուղունոս» են անվանում տեղապահներին: Տե՛ս Theoph. Chron. t. II, p. 716: Հմմտ. Артамонос, История хазар, стр. 198: Մովսես Կաղանկատվացու համաձայն խաբանը Հերակլին ռազմական օգնություն էր ուղարկել իր եղբորորդու՝ Շաթի գլխավորությամբ: Սա էր Տփղիսը գրավողը: Շաթի մոտ ծառայում էին անվանի մարդիկ, որոնց, Կաղանկատվացու ասելով, խաղաբները կոչում են «թնդեանք»: Գուղենը կարծում է, որ այս բառը նույնանում է Թեոփանեսի «Տուղունոսի» հետ: Golden, Khazar Studies, էջ 215—216:
513. Բնագրում՝ էք. πρὸς ὁπλίταις:
514. Հավանաբար կենդանակերպի (զոդիակի) Ցլի համաստեղությունը (Տավրոս) նկատի ունի:
515. Հմմտ. Թագաւորութեանց Թ., 8:
516. Փիլիպպիկոս-Վարդանը, որ մի քիչ հետո կայսր հռչակվեց (711—713), նիկեփոր պատրիարքը գրում է Βαρδάνην Ἀρμενίου τῷ γένει (Nicephori Breviarium, p. 50):
517. Պերատիկա կողմեր ասելով բյուզանդացիները նկատի ունեն Պերատիկա բանակաթեմերը՝ Անատոլիկոնն ու Օպսիկիոնը: Դա պարզվում է հենց Թեոփանեսի տվյալներից: Անտիոս զորավարը «իր ձեռքում ունեւ Պերատիկա բանակաթեմերը՝ Անատոլիկոնն ու Օպսիկիոնը» (տե՛ս վերը, էջ 188):
518. Դամասորիսը ըստ ոմանց Զամլըջան՝ Ուսկուդարում կամ Սամանդըրա գյուղը Քայիշղաղի և Պենդեկի մոտ՝ Կոստանդնուպոլսի ասիական ափին: Այստեղ կային կայսերական պալատ և Սպիրայի վանքը:
519. Հուստինիանոս II-ի կրտսեր որդի և գահաժառանգ Տիրերիոսի սպանությամբ սպառվեց Հերակլիոսների հարստությունը (610—711), որ համարվում է առաջին իսկական «բյուզանդական» հարստությունը (Ostrogorsky, Histoire, p. 173): Սրա օրոք Բյուզանդիան վերածվում է միջնադարյան հունական մի պետության (Ostrogorsky, История, сел. 217):
520. Վեցերորդ Տիեզերական ժողովը գումարվեց 680 թ. Կոստանդնուպոլսում և ուղղված էր միակամականների դեմ: Ավելի հանգամանորեն տե՛ս ծանոթ. 414:
521. Ֆիլիպպիկոս-Վարդանի կենսագրությունը տե՛ս Ալիշան, Երազ Վարդան կայսեր, էջ 294—309, նաև Տեր-Սահակյան, Հայ կայսերք, հտ. Ա, էջ 129—151:
522. Կոստանդնուպոլսի Հովհաննես VI պատրիարքը (712—715 թթ.):
523. Այս դեպքերի մասին հետաքրքիր մանրամասնություններ է տալիս Միքայել Ասորին: «Այն ժամանակ (1025 թ. ասորոց), — գրում է նա, — հոռմայեցիների կայսր Ֆիլիպպիկոսը իր երկրից վտարեց հայերին: Նրանք դուրս գալով փախչում են տաճիկների (իմա՝ արաբների) մոտ, որոնք նրանց բնակեցնում են Մելիտենեում և նրա շրջակայքում, ինչպես և Զորբորդ Հայքում: Հայերը շատ բաղձանալով, ամրանում են այս վայրերում, դառնալով տաճիկների թագավորության օգնականները և հոռմայեցիների կայսրության հակառակորդները» (Michel le Syrien, t. II, p. 482): Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ մի քանի տասնամյակ անց Մելիտենեի հայերին Կոստանդին V-ը գաղթեցրեց Թրակիա (տե՛ս վերը էջ 140), որտեղ նրանք տարածեցին պալլիկյան աղանդը, ապա պարզ է դառնում, որ Ֆիլիպպիկոսը ոչ թե ընդհանրապես հայերին էր արտաքսել երկրից, այլ, ավելի որոշակի, պալլիկյան հայերին: Ավելացնենք այստեղ,

- որ Միքայել Ասորու հայերեն թարգմանության մեջ դեպքերը վերագրվում են Հուստինիանոս II-ին, բայց զործողությունները կատարված են Ֆիլիպպիկոսի ձեռքով. «Յայսմ ժամանակի հալածեաց Յուստինիանոս զազգս Հայոց յիշխանութե-
նէն իւր ի ձեռն Փիլիպպիկոսի, և խնդութեամբ ընկալան զնոսա Տաճիկք ի Մելիտինի և ի Միջագետս: Եւ եղև մեծ ամբոթիւն ուղղափառաց Ասորւոց՝ կալով ընդդէմ երկաթնակացն, և շինեցին վանորայք և անապատք և գիւղօրէք Հայաստանեայց, և կան մինչև ցայսօր» (Միխայել Ասորի, 1871, էջ 332):
524. Սկզբնական շրջանում սովորական աղոթարան էր: Նրա տեղում այժմ գտնվում է XII դարում կառուցված նշանավոր մի եկեղեցի, որ Կոստանդնուպոլսի առու-
մից հետո մղկիթի վերածվելով կոչվեց Քահրիե չամի:
525. «Կապկոդիակոն» բառի իմաստը Սոփոկլեսի բառարանում անհայտ է համարվում: Բառի երկրորդ կեսը՝ «դիակոն», բացի սարկավագից, նշանակում է նաև ծառա-
յոգ, սպասավոր:
526. Քաղաք (և թերակղզի) Թրակիայում, Աև ծովի արևմտյան ափին: Ժամանակակից Կարա-բուռնու թերակղզին:
527. Անտիոքացոց Պիրիտիոս (Պերիտիոս) ամիրսը համապատասխանում է փետրվա-
րին:
528. Պրասինոսների օրնատորիոնը, այսինքն Կոստանդնուպոլսի կրկեսային պրասինոս-
ների (կանաչների) կուսակցության ղինանոցը:
529. Արտեմիոս (Անաստասիոս II) կայսրը (713—715):
530. Մի փոքր վերևում նա կոչվել էր Բորաֆոս:
531. Օմմայյան խալիֆա Սուլեյման իբն Աբդալմելիքը (715—717): Ղևոնդը մանրամասն
նկարագրում է այս ամիրապետի Մսլիմ զորավարի գլխավորությամբ Գերբեն-
դում հոների դեմ մղած պատերազմների մասին (Ղևոնդ, էջ 40—42: Նաև Մով-
սես Կաղանկատվացի, էջ 368): Սուլեյմանը ըստ Կաղանկատվացու Վալիդի եղ-
բայրն էր. «յետ Վլիթայ՝ Սղիման եղբայր նորուն սակաւաղեցութեամբ» (էջ
98—99):
532. Կոստանդնուպոլսի պատրիարք Գերմանոս I-ը (715—730): Նա սերտ նամակա-
գրությույն ուներ Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի հետ՝ դավանաբանական
հարցերի շուրջ: Պահպանվել է հիշյալ Ստեփանոսի պատասխան թուղթը Գերմա-
նոսին: Տե՛ս Մատենադարանի № 8194 ձեռագիր, էջ 136 ա-164 ա:
533. Ապոկրիսիարիոս (լատ. ad responsum, միջնորդ, ներկայացուցիչ, պատգամավոր):
Հանդես եկան Թեոդոսիոս I-ի հարստության ժամանակ:
534. Թուրքերեն էդրեմիտ: Մովսիսյա քաղաք Փոքր Ասիայի արևմտյան ափին, Լևոնոս
կղզու դիմաց:
535. Թեոփանեսը նկատի ունի 379 թվականից Փոքր Ասիայում (Օպսիկիոն) հաստատ-
ված օստգոթերին, որոնք իր ժամանակ արդեն հունացած էին:
536. Կոստանդնուպոլսի եվրոպական մասում գոյություն ուներ երկու կարևոր նավա-
հանգիստ: Սբ. Մամասի նավահանգիստը գտնվում էր այժմյան Բեշիկթաշում:
Կառուցել էր Լևոն I կայսրը:
537. Նավահանգստի մասին տե՛ս և ծանոթ. 472:
538. Ապագա կայսր Լևոն III Բաավրացին, Բաավրական (Ասորական) հարստության
հիմնադիրը:

539. Սա Լեոն III-ի փեսան էր, որ հետագայում, Լեոն III-ի մահից հետո Կոստանդին V-ի դեմ ապստամբություն բարձրացրեց և իրեն կայսր հռչակեց:
540. Մասլամայի կողմից Կոստանդնուպոլսի պաշարման մասին աղբյուրների տվյալների ամբողջ կոմպլեքսի հիման վրա տե՛ս Guillard, L'expédition de Maslama, p. 109 sqq:
541. Չշխոթել Սուլեյման խալիֆայի հետ (715—717), խալիֆան պաշարմանը չի մասնակցել և իրականում նա վախճանվել էր պաշարման սկզբից մի փոքր հետո (տե՛ս DA1, II, p. 78):
542. Ստրատորների (և նրանց պարագլուխ պրոտոստրատորի) մասին տե՛ս «Կոստանդին Միրանաթին», էջ 257, 258: Աղբյուրներում կոչվում են «ստրատոր» և «կայսերական ստրատոր»: Սբ. Թեոփանեսի վարքում նրանց մասին գրված է. «Կայսերական զարդարված ձիերի սպասավոր, որոնք սովորաբար ստրատոր են կոչվում»: 899 թ. կազմված Ֆիլոթեոսի «Կլետորոլոգինում» (Գահնամակում) սակայն ասված է, թե ստրատորը որևէ պաշտոնից անկախ պատվաստիճան է: Հարցը շատ է խճճված, բանգի հիշատակություն կա, որ բյուզանդական պոեֆիկոսներն ունեին «schola stratorum» (ստրատորների զորամաս), որին զլխավորում էր ստրատորների ղոմհատիկոսը, այլ կերպ ասած՝ պրոտոստրատորը (տե՛ս Yannopoulos, La société, p. 57—58):
543. Ըստ Թեոփանեսի Մասսալեոնը գտնվում էր Անատոլիկոն բանակաթեմում: Ռամզեյը գտնում է, որ այն ընկած էր Լիկաոնիայում, Կիլիկիայից Ակրոյինոն տանող ճանապարհի վրա (Ramsey, HGAM, p. 356):
544. Բնադրում՝ ὁπτικός (լատ. consul): Բարձր պատվաստիճան, ստեղծված Հռոմում 500 թ. մ. թ. ա.: Պատմողական աղբյուրներում հազվադեպ է հանդիպում, բայց բավականին հաճախ՝ կնիքների մակագրություններում: Մանրամասն տե՛ս Guillard, Le consul, և ὁπτικός, p. 545—578: Yannopoulos, La société, p. 55—56: Հյուպատոսը մի քանի անգամ հանդիպում է հայկական աղբյուրներում, ամենատարբեր իմաստներով: Տե՛ս Աճառյան, Արմատական բառարան հտ. III, էջ 100:
545. Ենթադրում են, որ Թեոդոսիանուպոլիս բաղաբն է Պակատյան Փոլուգիայում: Հիշատակվում է Փաղկեդոնի և Կոստանդնուպոլսի V Տիեզերական ժողովների արձանագրություններում: Ռամզեյը տեղադրում է Ակրոյինոնի մոտ, Կիլիկիայից Ակրոյինոն տանող ճանապարհի վրա (Ramsey, HGAM, p. 356):
546. Փաղաք Բյութանիայում: Այստեղ 740 թ. Լեոն III-ը իր որդու՝ Կոստանդին V-ի հետ զլխավոր պարտության մատնեց Հիշամ խալիֆայի որդի Սուլեյմանին:
547. Այսինքն երաշխիք այն մասին, որ 680 թ. VI Տիեզերական ժողովի ընդունած որոշումները պիտի պաշտպանի:
548. Լեոն III Իսավրացի, ավելի հիշտ՝ Սիրիացի, Իսավրական (հիշտը՝ Սիրիական) հարստության հիմնադիրը (717—741): Այդ մասին տե՛ս Առաջաբանում, էջ XLI:
549. Այժմ՝ Մարաշ:
550. Անաստասիոս Բիրլիոթեկարիոսի լատիներեն թարգմանության մեջ բացակայում են «բայց իրականում Իսավրիայից» բառերը: Նրա թարգմանության մեջ Լեոնի մասին գրված է, թե նա ծագումով ասորի էր (genere Syrus): Նկատի ունենալով այս հանգամանքը, և այն, որ Թեոփանեսի հունարեն բնագրում Լեոնը ոչ մի տեղ Իսավրացի չի կոչված, այլ միայն ասորի, Կ. Ն. Ուսպենսկին «բայց իրականում Իսավրիայից» բառերը համարում է հետագա շրջանի ընդմիջարկություն:

Այդ բանը ցույց էր տվել Ուսպենսկուց առաջ և Շենկը: Տե՛ս Успенский, Очерки, III, стр. 401—402:

551. Լևոն սպաթարի, ապագա Լևոն III կայսեր Կովկասյան զործունեության մասին հատուկ տե՛ս Canard, L'aventure caucasienne, p. 353—357, որտեղ և հարցին նվիրված աշխատությունների մատենագիտություն:
552. Ժամանակակից Փոթի քաղաքը Վրաստանում:
553. Երկիր Ափխազիային հարևան: Այն հիշատակում է նաև Պրոկոպիոս Կեսարացին («Պրոկոպիոս Կեսարացի», էջ 255—258):
554. Վրաց Յիխե-Գոչի քաղաքը, այժմ Նաքալաքեի գյուղը: Հազիկայի թագավորության մայրաքաղաքն էր: Տե՛ս Նոեմյան, Հայաստանը, էջ 41:
555. Երկաթե բերդի (χατρυον Σιδηρόν) մասին տե՛ս Ժանոթ, 635:
556. Բյուզանդական բարձրագույն տիտղոսներից: Ըստ Ֆիլոթեոսի «Կլետորոլոգիոնի» և Ուսպենսկու «Տակտիկոնի» հերարխիայի երրորդ աստիճանը: Աղբյուրների տրվյալներով Կուրապաղատի տիտղոսը VII դարից մինչև Մակեդոնական հարստության հիմնադրումը (867) կրել են վեց հոգի, դրանցից չորսը հայեր էին՝ Համադասպ Մամիկոնյանը (տե՛ս Սեբեոս, էջ 175), զորավար Թեոդորոսը («զոմն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի Յոնաց կոչմանէն» Սեբեոս, էջ 144), Լևոն III կայսեր փեսա Արտավազդը և Միքայել III կայսեր մորեղբայր Վարդասը՝ նախքան Կեսար դառնալը: Դա վկայում է այն մասին, որ Ռանսիմենի և Գիյյանի կարծիքը, որ իբր այդ տիտղոսը տրվում էր կայսերական ընտանիքի անդամներին միայն, ճիշտ չէ: Կուրապաղատի մասին տե՛ս Guillard, Le curo-palate, p. 185—249, Oikonomides, Lists, p. 293, Σ τ ρ ά τ ο υ, Οἱ «Κουροπαλάται» 49—56, Yannopoulos, La société, p. 41—42:
557. Հավանաբար նկատի ունի հռոմեական Ասիա պրովինցիան, Փոքրասիական թերակղզու արևմտյան մասում, Լյուդիայի և Կարիայի շրջանում:
558. Լևոն III-ը իր թագավորության սկզբում, երևի քաղաքական նպատակներով, արարների հետ հաշտություն կնքեց, որը, սակայն, կյանք չունեցավ: Այդ հաշտության մասին վկայում է VIII դ. երկրորդ քառորդին ասորերեն գրված, իսկ հետո հունարեն թարգմանված Նուսադեմի 60 սրբերի վարքաբանությունը: Այնտեղ գրված է, որ Լևոն III-ը 717 թ. արարների հետ յոթամյա զինադադար կնքեց, որի համաձայն «երկու պետությունների վաճառականներին թույլատրվում էր առանց խոչընդոտների միմյանց հետ շփման մեջ մտնել (տե՛ս Липман, О городе, стр. 114):
559. Բնագրում՝ πρωτοσύμβουλος (հմմտ. և էջ 68): Թեոփանեսն այստեղ, ինչպես և այլ հեղինակներ (Միքայել Ասորի) Սուլայման զորավարին շփոթում է Սուլայման խալիֆայի հետ: Տե՛ս Michel le Syrien, t. II, p. 483—484; Տե՛ս և վերը, Ժանոթ, 541:
560. Իմա՝ Կոստանդնուպոլիսը: Եթե չի նշված ո՛ր քաղաքի մասին է խոսքը, ապա նկատի ունի Կոստանդնուպոլիսը:
561. Կատենան նավի տեսակ է: Անաստասափոս Բիրիթթեկարիոսը թարգմանել է «մեծ նավեր»:
562. Մագնավրա էր կոչվում բացի հայտնի պալատից, որտեղ ընդունում էին օտարերկրացի դեսպաններին և որտեղ IX դ. բացվեց համալսարան, նաև Հերդոմոնի արևմրտյան ափամերձ ծայրամասը:

563. Անունը պարտական է շրջանաձև բերդին: Գտնվում էր Հերդոտոսից արևելք, ժամանակակից Ջեյթին-բունուն՝ Պրոպոնտիսի ափին:
564. Ժամանակակից Կալամիշը, Ֆեներ-բախչեից հյուսիս գտնվող մի փոքրիկ վայր, որտեղ 602 թ. մահապատժի ենթարկվեցին Մավրիկիոսն ու նրա որդիները:
565. Անթեմիոսի թաղամասը գտնվում էր Կոստանդինի պարիսպներից դուրս, սբ. Մակիոսի չրամբարից փոքր հյուսիս: Այդտեղ էին գտնվում սբ. Թովմասի եկեղեցին, բաղանիք և ծերանոց:
566. Գալատների (կամ Գալատի) բերդը գտնվում էր Գալատայում (այժմ՝ Ղալաթիա): Արևմտյան հեղինակներն այն անվանում են Պերա (Janin, Cons. byz., p. 418): Գալատի բերդի տեղում այժմ գտնվում է Ֆերալտը ջամին:
567. Բնագրում՝ Κλειδίον: Տեղադրվում է ժամանակակից Դեֆտերբունու վայրում, Բոսֆորի եվրոպական ափին, Օրթաթյոյից (Միջագյուղ) փոքր հյուսիս:
568. Օքսիան այժմ թուրքերն անվանում են Սիվրիադա, որ Օքսիա (Սուր) կղզու բառացի թարգմանությունն է, իսկ Պլատիան՝ Յասըադա (կայն կղզի), որ դարձյալ հունարենի բառացի թարգմանությունն է: Օքսիա կղզին գտնվում էր Պլատիայից 2 կմ հյուսիս-արևմուտք: Իշխանաց կղզիների թվին են պատկանում:
569. Տե՛ս ծանոթ. 566: Գալատի բերդից շղթան երկարում էր դեպի արևմտյան ափը՝ ժամանակակից Սերայլի ցամաքակեղվակը և փակում Ոսկեղջյուրի ճանապարհը:
570. Սոսթենիոսի ծոցը, ժամանակակից Ստենիան, թուրքերեն՝ Իստինյե, Բոսֆորի եվրոպական ափին:
571. Օմար II իրն Աբդալ Ազիզ (717—720):
572. Կալոս ագրոս (Գեղեցիկ ագարակ) նավահանգիստը գտնվում էր Բոսֆորի եվրոպական ափում, Սոսթենիոսից հյուսիս: Համապատասխանում է ժամանակակից Բույուկդեբեին:
573. Սատյուրոսը տեղադրվում է Քյուչուկյալում, Բոստանջիից 2 կմ արևելք, Բրիան ժամանակակից Մալթեփեից այն կողմ, իսկ Կարաալիմենը՝ ժամանակակից Կարտալի տեղում: Բուլոբն էլ Կոստանդնուպոլսի ասիական ծովածոցին՝ Քաղկեդոնից (Քաղրթյոյ) հարավ:
574. Պիտի հասկանալ՝ Եգիպտոսի հույներ:
575. Սոֆոնը լեռ է Բյութանիայում, Նիկոմեդիայից արևելք, ժամանակակից Սաբանջա գաղի լճի հարավային մասում: Լեռը այժմ էլ կոչվում է Սաբանջա գաղի: Լիվոսն էլ, հավանաբար, նույն շրջանում էր գտնվում (տե՛ս Ramsey, HGAM, . 88
576. Պյուլեն ծովափնյա քաղաք էր Բյութանիայում, Հելենոպոլսից փոքր արևմուտք: Կոստանդին Միրանաթինի համաձայն (De Cer., I, p. 474) Պյուլեն կայսերական զորակայան էր, երբ կայսրը պատրաստվում էր արշավանքի դուրս գալ դեպի արևմելք: Տե՛ս և ծանոթ. 126:
577. Բուլղարների մասնակցությունը՝ արարների դեմ մղվող պայքարում նվիրված է Վ. Գյուզելեի հատուկ հոդվածը (Гюзелев, Участие то на българите, стр. 28—47): Հեղինակը բուլղարների նպաստը վճռական է համարում, մի բան, որ մերժում են հույն և եվրոպացի ուսումնասիրողները:
578. Այսինքն այս Սերգիոսը, լինելով Սիկիլիայի զորավար (բանակաթեմի զորավար), ուներ պրոտոսպաթարի աստիճանը (Yannopoulos, La société, p. 50—51): Նման պատկերի հանդիպում ենք Զմշկիկի ժամանակ Տարոնի կառավարիչ Լեոնի առնչու-

- թյամբ: Ըստ Մատթեոս Ուռհայեցու Չմշկիկի նամակն ուղղված էր «պոստոսպաթրին Դերջնայ, Լեոնի և Տարօնոյ զօրավարին» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 27: Հավանաբար ուղղելի՝ «Պոստոսպաթրին Լեոնի, Դերջնայ և Տարօնոյ զօրավարին»):
579. «Կարգադրութիւն» և «Հրովարտակ» ենթ թարգմանում քնադրի չեղեւսէիս և սάκρα բառերը, որոնք որոշակի տերմիններ են: Թեոփանեսը գրում էր մի ժամանակ (813-ից հետո), երբ «սակրա»-ն կայսեր կողմից ուղարկվում էր խստագոյնա երկրի ներսը, իսկ չեղեւսէիս-ը (հրամանք)՝ արտասահման: Բայց իր նկարագրած դեպքերի ժամանակ՝ (Լեոն III-ի), վիճակը հակառակն էր, այդ իսկ պատճառով նա այնտեղ, որտեղ պետք է սակրա գրի, գրում է չեղեւսէիս, իսկ որտեղ չեղեւսէիս գրում է սակրա (տե՛ս Λουγγή, Διπλωματικά καὶ διπλωματικά, σελ 71—72): Թեոփանեսը (հտ. I, էջ 244—245) ցույց է տալիս, որ սակրան ունենում էր կայսեր կնիքը: Հարցի մասին տե՛ս և Beševliev, Die Botschaften, S. 75—76: Նշենք այստեղ, որ սակրան հանդիպում է և հայկական աղբյուրներում: Տե՛ս Անանյան, Արմատական բառարան, հտ. IV, էջ 161:
580. Մոնոստրատեզոս (μονοστράτης) էր կոչվում, ինչպես պարզվում է Թեոփանեսի մի այլ շարադրանքից, մեկից ավելի բանակաթեմերի զօրավարը: Անտիոս պատրիկն իր եղբոր նշանակեց «Թրակիայի և Մակեդոնիայի մոնոստրատեզոս» (տե՛ս վերը, էջ 188):
581. Կղզի Պրոպոնտիսում (Մարմարայի ծովում): Ունի մարմարի հանքեր, որի պատճառով այժմ հույներն անվանում են Մարմարա, իսկ թուրքերը՝ Մերմեր աղասը: Հենց այս կղզուց ամբողջ ծովը կոչվում է Մարմարայի ծով:
582. Խնդրո առարկա նամակի քնադիրը չի պահպանվել: Այն կրճատ («համառօտ ի ներքոյ զորոմեցից»—Ղևոնդ, էջ 42) պահպանվել է Ղևոնդ պատմիչը իր «Պատմության» մեջ և նրա ասելով թարգմանված է հունարենից (էջ 43—45): Պահպանվել է նաև Լեոն կայսեր ընդարձակ պատասխանը նույն պատմիչի երկում (էջ 45—98): Սարակինոսների առաջնորդ Օմարին ուղղված Լեոն կայսեր նամակը պահպանվել է երկու տարբերակներով: Առաջինը լատիներեն թարգմանութիւնն է և հրատարակվել է Լիոնում 1501 թ. Symphorien Champère-ի կողմից: Վերջին անգամ արտատրվել է Migne-ի Patrologia graeca-ում (հտ. 107, սյունակ 315—324): Այստեղ քնադիրը վերագրվում է Լեոն VI կայսեր (886—912) և վերնագրված է. Leonis Imperatoris Augusti, cognomento Philosophi, ad Omarum Saracenorum regem, De fidei Christianae veritate et mysteriis, et de variis Saracenorum haeresibus et blasphemis Epistola: Երկրորդ տարբերակը, ինչպես ասացինք, պահպանվել է Ղևոնդի Պատմության մեջ և վերագրվում է Լեոն III-ին: Նրանց մանրամասն հետազոտութիւնը տե՛ս Khouy, Les théologiens byzantines, p. 200—218: Նշենք այստեղ, որ առանձին հեղինակներ, ելնելով բովանդակութիւնից և լեզվից (!) Ղևոնդի երկում պահպանված Լեոն III-ի նամակը՝ Օմար խալիֆային համարում են XI—XIII դդ. «հայկական», «օրիգինալ» գործ, մտցված Ղևոնդի երկի մեջ, և ոչ թե VIII դ. սկզբի բյուզանդական փաստաթղթի թարգմանութիւնը (տե՛ս Gero, Notes, p. 26): Նամակում վխտացող հունարանութիւնները չեն հաստատում այս կարծիքը:
583. Ապագա կայսր Կոստանդին V-ը (741—775):
584. Ավգուստեոնը Կոստանդնուպոլսի գլխավոր հրապարակն էր, գտնվում էր սբ. Սոփիայի եկեղեցուն կից, այժմ Այասոֆյամեյդանը: Հրապարակը շորս կողմից շեր-

- շապատված էր սյունաշարքերով, այստեղ կային բազմաթիվ կարևոր շենքեր, այդ թվում Մազնավրան, Սենատը, սր. Իրենեի բազիլիկան, բազմաթիվ հիշատակներ:
585. Հիսուն կենտինար ոսկին հավասար է 360.000 դահեկանի:
586. Մազիստրոսի մասին տե՛ս Կոստանդին Միքանածին, էջ 217, ծանոթ. 26: Վերջին գործերից՝ *Yannopoulos, La société*, p. 44—47:
587. Այլ աղբյուրներ, այդ թվում Գեորգ Վանականը, Լևոն Քերականը, Կեղրենոսը հիշատակում են Անատոլիոն բանակաթեմի գորավար ոմն պատրիկ Սիսինիոսի, որ գործել էր նույն ժամանակներում, և ուսումնասիրողների կողմից նույնացվում է Թեոփանեսի Սիսինիոս Հոենդակեսի հետ (տե՛ս *Γεανγόπουλος, Σισίνιος Ρενδάζης*, σελ. 579—593): Ուսումնասիրողները չեն պարզել մականվան նշանակությունը: Դա, անկասկած հայերեն ժողովրդական «սինդ» (լավ, գեղեցիկ) բառն է, ծագումով պարսկերեն, պահլավերեն-ակվերջավորությամբ: Որպես հայերեն անձնանուն հանդիպում է մեկ անգամ ուշ շրջանում (Անադյան, Անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 320): Բացառված չէ, որ այս Սիսինիոս Հոենդակեսը հայազգի էր:
588. Բնագրում՝ *Ἰσότης*: Հավանաբար ասորի էր, քանզի անունը՝ Իշոխ ասորական է:
589. Բնագրում՝ *ἀρχοντα τοῦ τειχεῖου*: Նկատի ունի Կոստանդնուպոլսի Երկար կոչված պարսպի պահպանությանը նշանակված ղումնաստիկոսին: Պաշտոնը ստեղծվել էր Անաստասիոս I կայսեր ժամանակ: Այն ժամանակ գլխավորում էին երկու հոգի՝ Երկար պարսպի վիկարիոսները (տե՛ս *Guilland, Le compte des murs*, p. 17—25):
590. Ակուբիտը (լատ. *accubitus*) հին Հռոմում բազմոց էր, որի վրա բազմում էին հաշելու համար: Երեք այդպիսի ակուբիտներ Ստաոի ձևով դասավորված կազմում էին մեկ տրիկլին (երեք բազմոց): Տրիբունալիոն այստեղ նշանակում է դահլիճ: Հետևաբար 19 ակուբիտներով ընդունելությունների մի դահլիճ էր:
591. Եզիդ II իրն Արղալմալիք (720—724):
592. Միքայել Ասորին գրում է Եզիդ, որդին Մուհալլաբիի (*Michel le Syrien*, t. II, p. 489):
593. Մոնտանոս աղանդապետի հետևորդները: Հերձվածը ծագել է II դ. երկրորդ կեսին Փոյուզիայում՝ եկեղեցու փշացած բարձրի դեմ պայքար մղելու կոչով: Հարցի մասին հատուկ տե՛ս *Sharf, The Jews, The Montanists*, p. 37—46: Հատուկ հրեաների մասին այս շրջանում՝ նույնի, *Byzantine Jewry* (գլուխ շորրորդ): Լճահանրապես այս շրջանի աղանդավորների (պավլիկյանների, մոնտանյանների, փոյուզիացիների, աթինգանների, արբատյանների, տետրագիտների և այլն) մասին տե՛ս *Guillard, L'hérésie*, p. 299—324:
594. Հմմտ. «Իսկ գլուխ փոխել Իզիտ... որ զխաչ և զպատկեր երարձ յերկրէ. և զխոզն սպանանէր. մինչ խեղդեցաւ...» (*Muyldermans, La domination*, p. 54):
595. Նկատի ունի Լևոն III-ի պայքարը սրբապատկերների դեմ, որի համար նա և իր հետևորդները ստացան պատկերամարտ մականունը: Պատկերապաշտները Լևոնին և պատկերամարտներին ընդհանրապես մեղադրում էին տվյալ հարցում արարներին աշակերտելու, հետևելու մեջ: Հարցի մասին տե՛ս *Vaslliev, The iconoclastic Edict*, p. 23 և հտ.: *Grabar, L'iconoclasme*, p. 94 և հտ. (apud: *Лунин, Очерки*, стр. 174):
- Պատկերամարտական շարժումը շատ ուժեղ էր Հայաստանում: Այն կար արդեն VI դ. վերջում և VII դ.: Պատահական չէ այդ առթիվ գրված և Վրթանես Քերթոզին վերագրվող երկը՝ ի պաշտպանություն սրբապատկերների: Հովհան Մայրա-

- րըստության առաջին թագավորը, որ կարողացավ 747-ին միացնել ֆրանկների պետությունը իր իշխանության ներքո:
602. Ագաթիասը ֆրանկ իշխանավորների արտաքինի վերաբերյալ բերում է մի հետաքրքիր պատմություն: Նրա ասելով ֆրանկներին թագավորներն իրենց մազերը երբեք չեն կտրում, մանուկ հասակից մազերին ձեռք չեն տալիս: Նրանց խոսքերը հասնում են մինչև ուսերը: Ինչ վերաբերում է հպատակ ժողովրդին, ապա նրանք իրենց մազերը խուզում են շրջանակաձև (Agathias, I, 3):
603. Իմա՝ Ռոնա գետի:
604. Կարոլոմագնոս գրելով, Թեոփանեսը Կարոլոս Մեծին շփոթում է նրա եղբայր Կարոլմանի հետ: Տե՛ս Theophanis Chronographia, ex. rec. Classeni, vol. II, p. 525:
605. Այս շրջանում իրար են հաջորդել Գրիգոր անունը կրող Հռոմի երկու պապ՝ Գրիգոր II-ը (715—731) և Գրիգոր III-ը (731—741): Գրիգոր II-ը աթոռակալել է 16 տարի, III-ը՝ 10 և քանի որ Թեոփանեսը Գրիգորի աթոռակալության ժամանակը 9 տարի է համարում, ապա նկատի ունի Գրիգոր III-ին: Բայց մյուս տվյալներից ելնելով՝ Լևոն կայսեր 9-րդ տարին (726), Հիշամի 2-րդ տարին (726), Գերմանոս պատրիարքի 11-րդ տարին (726), Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 20-րդ տարին (725), ապա կարծես ավելի Գրիգոր II պապին է հարմարվում: Սակայն Թեոփանեսը Գրիգորի հաջորդ է համարում Զաքարիային, որ իրականում հաջորդել է Գրիգոր III-ին:
606. Ուսումնասիրողները Թեոփանեսի այս խոսքերը տարբեր ձևով են մեկնաբանում: Ոմանք գտնում են, որ խոսքը վերաբերում է սրբապատկերների վերացման մասին Լևոն III-ի էդիկտի հրապարակմանը (725 կամ 726 թ.), ոմանք էլ ենթադրում են, որ Թեոփանեսը նկատի ունի պատկերամարտական զաղափարների նախնական ժողովրդականացում (տե՛ս Лунин, Очерки, стр. 177):
607. Բնագրում՝ εἰς τὸν ἀγίον Ἡλίαν:
608. Էգեական ծովի հրաբխային կղզիներ:
609. Նիկեոսի պատրիարքը գրում է ավելի հստակ, թե կայսրը բնական այդ երևույթը, համարելով աստծո՝ պատկերների պաշտման առթիվ ցասման ապացույց, սկսեց պայքարը պատկերների երկրպագության դեմ (Nicephori Breviarium, p. 64):
610. Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ սպաստամբության բռնկումը Հունաստանում պայմանավորված էր սրբապատկերների պաշտամունքի լայն տարածմամբ այնտեղ: Ե. է. Լիպշիցը դա կասում է Հունաստանի սլավոնական բնակչության հակապետական հլույթների հետ (Лунин, Очерки, стр. 179—180):
611. Այսինքն՝ Բյուզանդիոնի, Կոստանդնուպոլսի բնակչության:
612. Այս զորավար Ամերին (Ամր) Թեոփանեսի բնագրի հրատարակիչ Դե Բոորը ենթադրաբար նույնացնում է 6231 թ. տակ հանդես եկող զորավար Ղամրի հետ, որ Ա. Գրեգուարը ճիշտ է համարում (Grégoire, Sayyid Battal, p. 573—574):
613. Օպսիկիոն բանակաթեմի զորավարի, Լևոն III-ի փեսայի:
614. Այսինքն բովադակության և ոչ նյութին:
615. Հիշամ ամիրապետի որդին:
616. Թեև հիշված է բազմաթիվ բյուզանդական պատմիչների կողմից, հաստատ չի տեղադրվում: Բոլոր դեպքերում գտնվում էր Փոյուզիայում:

617. Այս դեպքը ամենայն մանրամասնությամբ նկարագրել է Ղևոնդ պատմիչը: Նրա ասելով խաղարների բանակը գլխավորողը ոչ թե խաբանի որդին էր, այլ զորավար Թարմաշը: Նրանք ներխուժեցին Ճորա պահակով, իջան Փայտակարան և Երասխ գետի վրայով անցան Պարսկաստան: Արաբ զորավար Գարախին (Ջառախ իբն Աբդալլահ Խալ-Խաբիմի, նրա մասին տե՛ս և *Michel le Syrien*, t. II, p. 490) Ղևոնդն անվանում է Ջառախ (մանրամասն տե՛ս Ղևոնդ, էջ 101—103), իսկ Մովսես Կաղանկատվացին՝ Ջառահ. «Ջառահ երկրորդ անգամ (729)՝ մտան է ընդ Ափսազս ի Խազիրս: Եւ ի միւսումն ամի ել Խազրաց տեառն որդին և սպան զ Ջառահ...» (էջ 368): Ճակատամարտը տեղի ունեցավ Արդաբիլում 730 թ.: Տե՛ս *Тер-Гевондян, Армения*, стр. 87—88:
618. Այսինքն՝ խաղարների Մասլամային Ղևոնդը համարում է ամիրապետի եղբայր. «առաքէ իշխանն Իսմայէլի զՄսլիմ զեղբայր իւր բազմութեամբ զօրաց» (Ղևոնդ, էջ 102): Մասլամայի այս արշավանքի մասին մանրամասն խոսում է Կաղանկատվացին. «Եւ զկնի հնգից ամաց (163 + 551 = 714 թ.) եկն Մսլիման, աւարեաց զԴարբանդ և եմուտ ի Խազիրս» (Մովսես Կաղանկատվացի, էջ 368): Նրա փախուստի մասին տե՛ս նույն տեղում. «Այսպէս զերծեալ Մսլիման՝ ելանէր ընդ Վրաց կողմն»:
619. Դիլիպիոնը Կոստանդնուպոլսի մի թաղամաս էր, ձիարշավարանին մոտիկ: Թեոփանեսը հիշատակում է այն նաև Կոստանդին V-ի 743 թ. Արտավազդի դեմ տարած հաղթանակի առթիվ կատարած շքերթի կապակցությամբ: Դիլիպիոնի մասին տե՛ս *Mango, Le Diippion*, p. 152—161:
620. Կոստանդին V կայսեր, Լևոն III-ի որդուն:
621. Գաղանանուն է անվանում, բանդի Լևոն (Λεων) հունարեն առյուծ է նշանակում:
622. Նկատի ունի Հովհան Դամասկացուն: Մնվել է շուրջ 675 թ. Դամասկոսում՝ մելքիս քրիստոնյաների ընտանիքում: Նրա պապը՝ Մանսուր իբն Սարջունը, 635 թ. սեպտեմբերին Դամասկոս քաղաքի արաբներին հանձնվելու վերաբերյալ տարվող բանակցությունները վարողն էր: Հովհանի հայրը՝ Սարջունը ծառայել է Մուավիա խալիֆայի արքունիքում: Հետագայում Օմար II խալիֆայի օրոք (717—720) հոր պաշտոնը վարել է Հովհանը, որ այնուհետև վանական է դարձել սուրբ Սաբրայի վանքում: Նրա գլխավոր երկասիրությունն է Սողոմոն Վառդգես (սիմապոսյան աղբյուր)։ Մեռել է 753 թ. առաջ: Կա կարծիք, որ վախճանվել է 749 թ. գեկտեմբերի 4-ին: Նրա բազմաթիվ գործերը թարգմանվել են հայերեն: Կան այնպիսիք, որ պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Տե՛ս Ջաբրհանալյան, Հայկական թարգմանությունք, էջ 575—580: Հովհան Դամասկացու իսլամի մասին ասույթները տե՛ս *Khoury, Jean* *Damascène et l'Islam*:
623. Խոսքը 729 թ. ժողովի մասին է:
624. Խոսքը Հովնան մարգարեի մասին է: Հմմտ. Մարգարէութիւն Յովնանու, Ա, 12. «Առէք ընկեցէք զիս ի ծովդ, եւ դադարեացէ ի ձէնջ ծովդ. զի գիտեմ ես եթէ վասն իմ է մրրիկս այս մեծ ի վերայ ձեր»:
625. Լիրելլն այստեղ, հավանաբար, պամֆլետի իմաստ ունի:
626. Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքը (730—754):
627. Խարսիանոն բանակաթեմի (այդ ժամանակ դեռևս տուրմարխության) կենտրոնը՝ արաբներն Հիսն Խարշանա: Հոնիգմանի կարծիքով նույնանուն է Մուշալիմ քալայի հետ (*Honigmann, Die Ostgrenze*, S. 50):
628. Նկատի ունի Խաղարիան:

629. Խաղարների խաբանի:
630. Նախապես կոչվում էր Ջիշակ (Ծաղիկ): Հետագայում «շիշակ» կոչվեց բյուզանդական կայսեր պաշտոնական հանդերձանքի մի տեսակը: Տե՛ս Կոստանդին Միրանաձին, էջ 134, 301: Հմմտ. Артамонов, История хазар, стр. 233:
631. Սա ցույց է տալիս, որ մինչ այդ Բյուզանդիայում գլխահարկ գոյութուն չուներ: Նրա գանձումը Թեոփանեսը համարում է արաբական ազդեցության հետևանք:
632. Մայրագույն առաքյալների (իմա՝ Պողոսի և Պետրոսի) անձնական սեփականությունը համարվող:
633. Հոռմի պապ Զաքարիա (741—752):
634. Սուլեյման իբն Հիշամը: Նա էր գլխավորում 740 թ. արշավանքը Բյուզանդիայի դեմ:
635. Բնագրում՝ Σιδηροῦν καὶ στρού: Այս «ծրկաթե բերդը», ամենայն հավանականությամբ, չի նույնանում 104-րդ էջում հիշված «ծրկաթե բերդի» հետ, քանզի նախորդը գտնվում էր Վրաստանում, սարակինոսներին ենթակա, հավանաբար, վրացու ձեռքում, այնինչ այս ծրկաթե բերդը գտնվում է բյուզանդացիների ձեռքում և Բյուզանդական կայսրության տարածքում:
636. Մարիանոս պատրիկը հիշատակվում է և մի փոքր հետո (էջ 124): Վ. Գ. Վասիլևսկին կարծիք է հայտնել, որ նա կարող է նույնանալ պատկերամարտների «էկլոգա» օրենսգրքի հեղինակներից մեկի՝ հյուպատոս, պատրիկ և անտիգրաֆևս Մարինոսի (կամ Մարիոսի) հետ: Հմմտ. Лунин, Право и суд, стр. 196—197:
637. Ըստ Լը Ստրենջի (*Le Strange, The Lands*, p. 152 և ծանոթ. 2) Աֆիոն Կարահիսարը: Ակրոյինոնի ճակատամարտը տեղի ունեցավ 740 թ. մայիսին: Արաբների հրամանատարներն էին ըստ արաբական աղբյուրների Սուլայման իբն Հիշամը, Ղամր իբն Յազիդը, Մալիք իբն Շուայբը՝ Մալաթիայի ամիրան և ալ-Բատտալը: Արաբական աղբյուրները ճակատամարտի մասին խոսում են շատ ավելի մանրամասն ու հանգամանալից: Ճակատամարտում սպանվեցին Մալիքն ու Բատտալը: Վերջինս հռչակվեց Իսլամի նշանավոր նահատակներից մեկը և ըստ Գրեգուարի տեղ գտավ Մալաթիայի ամիրա Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտայի (+863 թ.) մասին ստեղծված արաբական էպոսում (*Grégoire, Sayyid Battal*, p. 574—575):
638. Մալաթիայի ամիրա Մալիք իբն Շաբիրը (Շուայբը):
639. Ալ-Բատտալ Աբդ Ալլահ, նշանավոր «ղազի» (հերոս, քաջ) Օմմայյան շրջանի, որ մասնակցել է բյուզանդացիների դեմ մղված բազմաթիվ կռիվների: Նա 728 թ. Մուավիա իբն Հիշամի առաջամաս ղորքի գլուխն անցած գրավեց Պափլագոնիայի Գանգրա քաղաքը: 731/732 թթ. մասնակցեց մի այլ արշավանքի, որտեղ սպանվեց նշանավոր Օմմայյան «ղազի» Աբդ ալ-Վահհաբ իբն Բուխտը: 732/733 թթ. (կամ հաջորդ տարին), Մուավիա իբն Հիշամի՝ Փոյուզիայում կատարած արշավանքի ժամանակ Ակրոյինոնի շրջանում գերի վերցրեց Կոստանդին անունով մի բյուզանդացի զորավար: Վերջին անգամ հիշվում է 740 թ. դեպքերի առնչությամբ, երբ Սուլայման իբն Հիշամը հարձակվեց Բյուզանդական կայսրության արևելյան տարածքի վրա: Նրա մի զորամասում, որը գլխավորում էր Մալաթիայի կառավարիչ Մալիք (Թեոփանեսի Մեխիքը) իբն Շաբիրը (կամ Շուայբը), ծառայում էր և Բատտալը: Նրանք գլխավին պարտություն կրեցին Ակրոյինոնում Լևոն III-ի և նրա որդի Կոստանդինի կողմից և ընկան ռազմի դաշտում: Ալ-Բատտալը հետագայում դարձավ էպիկական հերոս: Մանրամասն տե՛ս M. Canard-ի al-Battal, և Dhu-l-

Himma և I. Melikoff-ի al-Battal հոգվածները Encyclopédie de l'Islam-ում,
հտ. I, էջ 1136—1137 և հտ. II էջ 240—246)։

640. Փոյուզիայի ամուր քաղաք, Գալատիայի սահմանին մոտ, Եփեսոսից Կապադովկիա տանող առևտրական մեծ ճանապարհի վրա։ VI դ. Հիերոկլեսը Սիննադան համարում է Փոյուզիա Սալուտարիա կոչված նահանգի 23 քաղաքներից մեկը։ Նրա տեղում այժմ գտնվում է էքսի Կարահիսար քաղաքը։
641. Լեոն Իսավրացին համարվում է ասորի։ Այդ մասին տե՛ս Առաջաբանում։
642. Հիերակիտների մասին տե՛ս վերը, ծանոթ. 348։
643. Անտիոքացիների Պերիտիոս ամիսը համապատասխանում է փետրվարին։
644. Վիմագիր մի արձանագրության մեջ ասված է, որ Նիկիայի պարիսպները վերականգնվել են Լեոն և Կոստանդին կայսրերի կողմից 727 թ. արարների դեմ կայսրության տարած հաղթանակի առթիվ։ Արձանագրության մեջ, ի միջի այլոց, գրված է, որ հիշյալ կայսրերը «բարձրացրին հարյուր ոտք բարձրություն ունեցող աշտարակ, որը դժվարությամբ կառուցեց փառավորյալ պատրիկ և կուրապաղատ Արտավազդը»։ Խոսքը Լեոն III-ի փեսա հայազգի Արտավազդի մասին է, Օպսիկիոն բանակաթեմի գործավարի։ Արձանագրության մասին տե՛ս Успенский, Две надписи, стр. 180—183։ Հմմտ. Лунинц, Очерки, стр. 115, прим. 105։
645. Աղբյուրներում բառը օգտագործվում է որպես զինարի հոմանիշ։ 12 միլիարեսիոն մեկ ոսկեդրամի է հավասար, իսկ մեկ միլիարեսիոնը՝ 12 ֆոլլի (փող)։
646. Բերդաշինությունը, այնպես ինչպես և կամրաշինությունը և նման աշխատանքներ պետական իրավասության մեջ էին մտնում։ Բերդաշինության ֆինանսավորման և կոնկրետ Թեոփանեսի այս տեղի մասին տե՛ս Trojanos, Κατασκευασια, S. 53։
647. Թեոփանեսը նշում է մի բանի տոմար։ Հռոմայեցիների (իմա՝ Կոստանդնուպոլսի) տոմարի համաձայն աշխարհի արարչագործության 6248 թ. համապատասխանում է մ.թ. 740 թ., Ալեքսանդրացվոց տոմարի 6232 թ.՝ նույնպես։ Ինչ վերաբերում է Փիլիպպոս Մակեդոնացու 1063 թ., այն է Սելևկյան տոմարի, ապա այն համապատասխանում է 752 թ.։ Թեոփանեսը, պարզ է Սելևկյան թվականը հաշվում է ոչ թե 312 թ. մ.թ.ա., այլ մ.թ.ա. 323 թ.։
648. Փակագծերի մեջ առնված նախադասությունը վերականգնված է Անաստասիոս Բիրիոթեկարիոսի Թարգմանության հիման վրա։
649. Հավանաբար մատաղը նկատի ունի։ Նույն բանի մեջ Թեոփանեսը մեղադրում է և Նիկեիոս I կայսեր։
650. Հայազգի նշանավոր պետական գործիչ։ Նիկիայում, Ստամբուլ քաղաքի և Գյուլ քաղաքի միջև, «Արտավազդի աշտարակ» կոչված պատի վրա պահպանվել է Արտավազդի հունարեն արձանագրությունը. որտեղ նա կոչվում է «փառավորյալ պատրիկ և կուրապաղատ»։ Տե՛ս Успенский, Две надписи, стр. 180—182 (apud Mapp, Аркаун, стр. 26)։
651. Օպսիկիոն բանակաթեմի Կրասոս քաղաքը Թեոփանեսը մի այլ տեղում (էջ 192) տեղադրում է Փոյուզիայում։ Հավանաբար գտնվում էր Տեմրրիս գետի ափին, Դորիլեոնից (էսքի շեհիր) արևելք, ռազմական ճանապարհի վրա, Մեղեոնից արևելք (Ramsey, HGAM, p. 435)։
652. Քաղաք էին Փոյուզիայում, այժմ կոչվում է էսքի շեհիր։
653. Տես. ծանոթ. 596։

654. Արտավազդը թագը կրեց 16 ամիս: Նրան կայսր հանաչեց անգամ Հռոմի պապը: *Sk'u Ostrogorsky, Histoire, p. 196:*
655. Անտիոքի պատրիարք Ստեփանոս III-ը (742/743—744/745 թթ.):
656. Թեոպոլիսը Անտիոքի մյուս անունն է: *Sk'u վերը, ծանոթ. 428:*
657. Վալիդ II իրն Նզիդ (743—744):
658. Սարան հին երկիր էր նրջանիկ Արաբիայում (Եմենում): Իր դարդացման բարձրակետին հասավ Հիմյարների ժամանակ: Հաճախ է հիշվում Հին կտակարանում:
659. Մայումայի տակ ենթադրվում է Գազայի նավահանգիստը, որը դեռևս Կոստանդին Մեծի ժամանակներից եպիսկոպոսություն էր՝ Կոստանդիա անունով:
660. Խոսքը Հովհան Դամասկացու մասին է:
661. Պատմական Սարդիս քաղաքը Փոքր Ասիայի Լիդիա նահանգում, Զմյուռնիայից մոտ 80 կմ արևելք:
662. Կելբիանոս վայրը գտնվում էր Լիդիայում, Նեոկաստրոնի շրջանում:
663. Իմա՝ Կոստանդնուպոլսում: *Sk'u ծանոթ. 560:*
664. Այժմ Մուդուրնու, քաղաք Բյութանիայում:
665. Բնագրում՝ *ἐξ ἀβελφον*, որ նշանակում է նաև մորեզբորորդի:
666. Այսինքն՝ Արմենիականների բանակաթեմի ղորքերը: Ինչպես տեսնում ենք, հայազգի Արտավազդի կողմում էին մարտնչում գլխավորապես հայերը:
667. Վալիդի սպանության մասին տե՛ս և Մովսես Կաղանկատվացի, էջ 333. «զնա սպանին և շփոթումն եղև Տաճկաց»:
668. Նզիդ III իրն ալ-Վալիդ: Իշխեց 744-ին:
669. Հմմտ. «Մրուան, Մահմատայ որդի՝ ամս շորս» (Մովսես Կաղանկատվացի, էջ 333): Կառավարել է 732—744 թթ. (*Тер-Гевондян, Армения, стр. 273*):
670. Թեոփանեսը նախապես հիշել էր այդ վայրը (տե՛ս ծանոթ. 510), որ կարծես քաղաք էր Հիերապոլիսի շրջանում:
671. Անտիլիբանանը Ասորիքի Լիբանան լեռան արևելքում հյուսիսից-հարավ ձգվող լեռնաշղթան է: Սկսվում է Հորդանան գետի ակունքներից Մեծ Հերմոն լեռով:
672. Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, էջ 333. «Սա սպան զԿուրիշիկս գլխաւորս Տաճկաց արս վաթսուն՝ զսպանողս Վլիթայ ամիրային...»:
673. Լատ. *A secretis*: Նիկեոսի պատրիարքը պարզաբանում է. «քարտուղար (գրադիր՝ *γραμματίας*), որ իտալերեն լեզվով ասեկրեստ են կոչում» (*Nicephori Breviarium, p. 55*): Գեորգ Ամաստրիդացու վարքում պաշտոնի մասին ասված է. «Կայսերական գաղտնի ծառայություն կատարողը, որ իտալերեն լեզվով ասեկրեստ են կոչում» (տե՛ս *Васильевский, Житие св. Георгия, стр. 29*):
674. Ըստ Շիրակացու «Զափ ի՞նչ քսեստաց լինի մոդ մի» (Մանանդյան, Կշիռները, էջ 69): Հռոմեական և պոնտացոց մեծ մոդի կշռորդը 9 կգ 792 գրամ էր (նույն տեղում, էջ 133):
675. Ըստ Շիրակացու «Կշիռ 12 ունկոյ կոշի լիտր»: Հավասար էր 326,5 գրամի (Մանանդյան, Կշիռները, էջ 30):
676. Մեկ քսեստենը հավասար էր մոդի 1/22 մասին (տե՛ս ծանոթ. 674): Կային տարբեր քսեստեսներ (Մանանդյան, Կշիռները, էջ 136):
677. Սեմիսիոն, այսինքն կես սոլիդ՝ դահեկան (ոսկեդրամ): «Կշիռ 12 կերատաց լինի սիմէս մի»: «Սիմէս կէս դահեկան է» (Մանանդյան, Կշիռները, էջ 21): Կշռում էր 2,262/3 գրամ: Նույն տեղում, էջ 22:

678. Նիկեիոս պատրիարքը վայրը կոչում է *Πρόβαντις* (*Nicephori Breviarium*, p. 70): Գտնվում էր Նիկամեդիայից և Նիկիայից հարավ:
679. Արտավազդը թեև ուղարկատու էր, հասցրեց հինգ կամ վեց տեսակի ոսկեդրամ հատանել (տե՛ս *Καждан, Деревня и город*, стр. 268, прим. 55):
680. Միլիոնը (միլոն) հուշարձան էր, որտեղից սկիզբ էին առնում եվրոպական նահանգները ձգվող ճանապարհները: Այնտեղ կային բազմաթիվ արձաններ: Գտնվում էր սր. Սոֆիայի հրապարակից հյուսիս-արևմուտք:
- 680ա Նիկեիոս պատրիարքը բացատրում է, թե ինչ էր դա: Պելագիոսի գերեզմաններում, գրում է նա, թաղում էին հեթանոսներին, շմկրտվածներին և մահապատժի ենթարկվածներին:
681. Մրվան II իրն Մուհամմադ (744—750):
682. Անտիոքի Թեոփիլակտոս Բար-Փանրարա պատրիարքը (744—750):
683. Հմմտ. ծանոթ. 994:
684. Նույնանում են նույն հեղինակի մի այլ տեղում հիշատակած խարուրգիտների հետ (տես ծանոթ. 348): Խոսքը ալ-Գահաբ իրն Կայս ալ-Շայրանի մասին է, խարիջիտների պարագլխի, Մրվան II-ի հակառակորդի: Արուրիտներն իրենց անունը պարտական են Խարուրա (ըստ Յակուտի՝ Խարավրա) տեղանվան, ալ-Քուֆայի մոտ, որտեղ հակառակարտ տեղի ունեցավ (տե՛ս *Дж-Наубахтн, Шнитские секты*, стр. 115, 199):
685. Բնագրում՝ *Χαλβενσις*:
686. Վալիդ II խալիֆայի (743—744):
687. Հայկական աղբյուրների Տլուքը, արար. Դուլուկ, այժմ՝ Թել Դյուլուկ: Ռամզեյը կարծում է, որ Դուլիխիան Դուլիխեի մոտ բնկած շրջան է (*Ramsey, HGAM*, p. 277): Գտնվում էր Կիլիկիայում:
688. Խոսքը հակորիկ ասորիների մասին է: XII դ. նրանց հիշատակում է Աննա Կոմնենեն, չույց է տալիս, որ Թրակիայի Ֆիլիպպուպոլիս (այժմ՝ Պլովդիվ) քաղաքում բացի պավլիկյաններից ու միաբնակ հայերից, կային բազմաթիվ հակորիկ ասորիներ, որոնք հակապետական ելույթներում միշտ միանում էին պավլիկյաններին: Ինչպես պիտի տեսնենք ստորև (A. M. 6247) Կոստանդին V կայսրը նրանց Թրակիա բռնագաղթեցրեց Կարինից և Մելիտենեից:
689. Խոսքը երեքսրբյան աղթքի («սուրբ աստված, սուրբ և հոգի, սուրբ և անմահ») վերջում «որ խաչեցար վասն մեր» նախադասության մասին է, որը բազմաթիվ և սուր վեճերի պատճառ է դարձել հայադավանների և երկարնականների միջև: Պետրոս Թափիչը՝ (*Πέτρος ὁ Κναφεύς կամ Γναφεύς կամ Φούλων*), Անտիոքի պատրիարք Պետրոս II-ն է (465—466 և 474—475 թթ.):
690. Բնագրում՝ *δυνατοι* (բառացի նշանակում է հզոր, ուժեղ): Տեխնիկական տերմին է, որ նշանակում է մեծատուն, կալվածատեր:
691. Քաղաք Պելոպոնեսի արևելքում:
692. Այսինքն՝ Հելլադա բանակաթեմը՝ Տե՛ս ծանոթ. 456:
693. Հունարեն բնագրում է՝ (հինգերորդ), որ սխալ է:
694. Բնագրում՝ *ὁποτετρακανθίλους πανίδας*: Նշանակութունն անհայտ:
695. Մի այլ տեղում Թեոփանեսը նրան անվանում է դրուեզար, քանզի բանակաթեմը ծովային լինելով, կառավարվում էր ծովակալի (դրուեզարի) կողմից:

696. Ակնարկ Արրասյանների հանդես գալուն հորասանում և նրանց կողմից Օմմայանների տապալման: Արրասյան ապստամբները կրում էին սև գույնի զգեստներ և զրոշներ, որոնք համարվում էին հարստության նշանակներ: Իշխանության տիրանալուց հետո սև զգեստը դարձավ խորասանյան զորքերի պաշտոնական հանդերձանքը (DAI, II, p. 76):

Այս մավրոֆորները (սևազգեստները) հնարավոր է նույնանում են «Դիդենիս Ակրիտաս» էպոսում հիշված «սևազգեստներին» (μαυροχίτωνται, հավանաբար ուղղելի՝ μαυροχίτωνται): Ինչպես ցույց է տալիս Թեոփանեսը մի քիչ հետո, մավրոֆորները զրադաշտական պարսիկներ էին: Ղևոնդը չի հիշատակում նրանց, բայց խոսելով ապստամբ Աբու Մսլիմի մասին, նրան համարում է «խորամանկ աստեղագիտական աղանդով» (էջ 125):

697. Բնագրում՝ λαιο (ժողովուրդներ), որ զորքեր էլ է նշանակում:

698. Նկատի ունի Օմմայան հարստությունը:

699. Բնագրում՝ Έχρη (Άχρη, Έχιν):

700. Այս Աբումուսլիմին նկատի ունի Ղևոնդ պատմիչը՝ Տե՛ս հաջորդ ծանոթագրությունը: Կաղանկատվացին նրան հիշում է «Աբու Մսլեմայ խորասանայ իշխանին...» ձևով (Մովսես Կաղանկատվացի, էջ 333): Նա գիտե նաև նրա վախճանի մասին, «...սպանեա (իմա՝ Աբլ Աբասը) գաղտուկ զԱբու Մսլիմ, յորժամ եհաս յիշխանութիւնն» (էջ 334):

701. Նրան գիտե Ղևոնդը. «Ապա յետ այնորիկ միաբանեալ զզօրս խորասան աշխարհին՝ կացուցանէին զօրավարս ի վերայ նոցա զԿահաթբա և զԱբու-Մսլիմ ոմն, որ էր խորամանկ աստեղագիտական աղանդով» (Ղևոնդ, էջ 125):

702. Բնագրում՝ Ἰβινδάραι:

703. Բնագրում՝ Ἰβινδουβερῆ (իբն Նուբայրա):

704. Բ Օրինաց, լԲ, 30:

705. Մովանի սպանության մասին մանրամասնություններ ունի Ղևոնդ պատմիչը. «Եւ զօրացեալ զօրք Աբդլայի՝ յարձակէին ի վերայ նորա գաղանաբար, դիմեալ հասանէին ի բանակն Մրուանայ, և հարեալ սատակէին ի նոցունց հարուածս սաստիկս յոյժ յոյժ: Զի ասեն լինել զթիւ տնկելոցն ի միում նուադի 300 (300.000) արանց հեծելոց... և հասանէին մինչև ի դղեկաձև կազմած պարտակին և ի վրանն Մրուանայ, և զնա ինքն հարեալ սատակէին» (Ղևոնդ, էջ 126—127): Տե՛ս նաև Մովսես Կաղանկատվացի, էջ 333. «Մրուան, Մահմատայ որդի՝ ամս շորս. սա սպան զԿուրիշիկս գլխաւորս Տաճկաց արս վաթսուն՝ զսպանողս Վլիթայ ամիրային՝ առաջի իւր ակնարկեալ սպանողացս: Եւ եկն Աբլ Աբաս ի Մարաց օգնականութեամբ և զօրօք Աբու Մսլեմայ խորասանայ իշխանին և սպան զՄրուան և կալաւ զիշխանութիւնն ամս եօթն»:

706. Հունահռոմեական ժամանակաշրջանում Տրախոնիտիս էր կոչվում Պաղեստինի՝ Դամասկոսից հարավ բնկած գավառներից մեկը:

707. Աբուլ Աբբաս Աբդալլահ առ-Մաֆֆահ իբն Մուհամմադ, Աբբասյան հարստության հիմնադիրը: Հմմտ. «Աբլ Աբաս էր Աբդալլահ Մահմադայ որդի» (Մովսես Կաղանկատվացի, էջ 333):

708. Աբու Զաֆար Աբդալլահ ալ-Մանսուր իբն Մուհամմադ: Ղևոնդը նրան նախորդից տարբերելու համար անվանում է «միւս Աբդլա» (էջ 127): Սրա գաղանաբար զործունեության մասին Հայաստանում գրում է նույն Ղևոնդը (էջ 127—128):

709. Իմա՝ Թումիս:
710. Նկատի ունի Գիրքալտարը (Զիրքալտար), որին դեռևս 711 թ. տիրացել էր Տաշ-րիք իրն Սալիդը: Մերձակա լեռան վրա նա ամրություն կառուցեց, որն իր անու-նով կոչվեց Զեբել աս-Տարիք (Տարիքի լեռ), որից և աղավաղված ձևով այժմ Զիրքալտար:
711. Իսպանիան Նկատի ունի: Մուտք գործողը Հիշամի թոռ Աբդ առ-Ռահմանն էր՝ 755 թ. և 756-ին գրավեց Կորդովան:
712. Նույն բանն է ասում Ղևոնդը. «Եւ զայս ամենայն շարիս և զղղղմունսս պատերաղ-մաց և զառմունսս քաղաքաց և հեղմունսս արեանց կատարեալ ամս զ՝ վախճանի» (Ղևոնդ, էջ 127):
713. Միջնադարում եպիկուրյաններին ավտոմատիստ էին անվանում, քանզի նրանց փիլիսոփայության համաձայն ամեն ինչ ինքնաբերաբար, բախտի բերմամբ է առա-ջացել և ոչ կանխագիտությամբ: Գրիգոր Մագիստրոսը (Թղթեր, էջ 158—159) թոն-դրակեցիների ամենաձախ թևի առնչությամբ գրում է, թե նրանք «ի շարն կատա-րելագոյնք են և կարող են ընդունել զմահացու դեղն... քարոզեն իբրև անյուսութեան ամենևին և անաստուածութեան իբրու զեպիկուրեանցն»:
714. Այսինքն դարձրեց կայսերակից: Լեոն IV միահեծան թագավորեց 775-ից:
715. Խոսքը Աբբասյան հարստության հիմնադիր Աբու Աբբաս Աբդալլահ աս-Սաֆֆահի մասին է (750—754):
716. Գեաիոս ամիրսը հունիսն է:
717. Անտիոքի պատրիարք Թեոդորոսը (750/751—774 թթ.):
718. Խոսքը Կարին-Թեոդոսուպոլսի և Մելիտենեն (Մալաթիա) քաղաքի մասին է (բուլ-ղար պատմաբանները սխալմամբ կարծում են, որ խոսքը վերաբերում է Օսրոենի Թեոդոսուպոլսին, արար. Ռաս-ուլ-Այն քաղաքի տե՛ս Извори. том VI, стр. 269, прим. 13): Մի քիչ հետո (6247 թ.) ինչպես ցույց է տալիս Թեոփա-նեսը, այս հայերին, ինչպես և ասորիներին, կայսրը գաղթեցրեց Թրակիա, որոնք այնտեղ տարածեցին պավլիկյան աղանդը: Ասել է, գաղթականները պավ-լիկյան աղանդավորներ էին: Պակաս կարևոր չեն և նիկեիոս պատրիարքի հաղոր-դածները: Նախ նա ցույց է տալիս, որ Թեոդոսուպոլիսն ու Մելիտենեն կայսրը գրա-վեց հայ և ասորի բնակիչների օժանդակությամբ (ὁμολογία τῶν προσο-չουσῶν), որ այդ բնակիչները գաղթեցվեցին Թրակիա և պատճառ դարձան պավ-լիկյան գաղափարների տարածմանը (Nicephori Refutatio, col. 508—509): Իբ-ր «Համառոտ պատմության» մեջ նիկեիոսը հաղորդում է, որ Կոստանդին կայսրը Թրակիայում քաղաքաշինություն կատարեց, որտեղ բնակեցրեց Մելիտենեից ու Թեոդոսուպոլսից գաղթեցրած հայերին և ասորիներին՝ սիրով հոգալով նրանց կարիքները (Nicephori Breviarium, p. 74): Հետաքրքիր տվյալների կարելի է հանդիպել Գեորգ Վանականի պատմական երկում: Նրա ասելով Կոստանդին V-ը, արարական խալիֆայության մեջ զնացող գահակալական պայքարից օգտը-վելով, արշավում է Ասորիքի կողմերը և «վերցնելով իր ազգականներին՝ հայ և ասորի հերետիկոսներին, Բյուզանդիոն վերաբնակեցրեց, որոնցից շատերը հաս-տատվելով Թրակիայում, մինչև օրս դավանում են թշվառական Պետրոսի թեո-պասքիտների [աղանդը]» (Georgii Monachi Chronicon, p. 752): Մի այլ տե-ղում նույն հեղինակը «Ասորիքի կողմերի» փոխարեն գրում է «Հայաստանի և Ասո-րիքի կողմերը» (էջ 763):

Բացի բյուզանդական աղբյուրներից, այս դեպքերի մասին մանրամասն խոսում են և հայ ու ասորի հեղինակները: Ղևոնդ պատմիչը գրում է, թե «...շարժեալ թագաւորն Յունաց ի կայսերական արքունեան մտիցն՝ բազում և ծանր ամբոխիս գայր հասանէր յաշխարհն Կարնոյ ի քաղաքն որ կոչի Թէոդուպոլիս: Եւ իբրեւ յական թափել կործանէր զգղեակ պարիսպ ամրոցին արքայն Կոստանդին որ էր որդի Ղևոնի, և բացեալ գտուն գանձուցն՝ բառնայր բազում կշիռ ոսկւոյ և արծաթոյ. գտանէր ի գանձի անդ զնշան տէրունեան խաչին, զոր առեալ տանէր ընդ ինքեան: Նա և զգօրսն քաղաքին և զքնակեալսն ի նմա Սառակինոսն բառնայր նոցին ընտանեօքն յաշխարհն Յունաց: Եւ բազումք ի բնակչաց գաւառացն խնդրեալ յարքայէն զի ընկեսցին զանուր լծոյ ծառայութեանն Իսմայելի յանձանց և զնացին զկնի նորա:

Եւ նորա տուեալ հրաման, վաղվաղակի հանդերձեալ զաղիս իւրեանց՝ խաղացին յառաջ, ապաւինեալք ի զօրութիւն տէրունեան խաչին և ի փառս արքային. թողին զերկիր ծննդեան իւրեանց, և հատուածեալք անկան ի կողմն արքային բարեպաշտի» (Ղևոնդ, էջ 129):

Նշելով արաբական խալիֆայության մեջ գնացող գահակալական պայքարի մասին, Ագապիոս Հիերապոլսեցին ցույց է տալիս, որ «կայսրը հարձակվում ու գրավում է Մալաթիան և, գերեվարելով բնակիչներին, վերադառնում է»: Շարունակելով իր պատմությունը, նա գրում է, որ նույն տարին հայոց հրամանատար Քուշանը, վերցնելով Հայաստանի բնակիչների մեծ մասը, տեղափոխում է հունաց կողմերը (էջ 531): Դրանից հետո Կոստանդինը հարձակվում է Քալիքալայի (Կալինի) վրա, գրավում այն և գերեվարում նրա բնակիչներին: Սալահ իբն Ալին, արաբական ու պարսկական զորքերով արշավում է հույների դեմ և վերադառնում առանց որևէ հաջողության: Նա միայն քշեց տարավ հայերին ու ալաններին, որոնց հույները Հայաստանից էին տարել, իրենց սլատրիկ Քուշանի հետ, և հաստատեց Ասորիքում: Այդ օրվանից սկսած հույների թագավորները ջանում են իրենց կայսրության մեջ հայեր հաստատել՝ ամենուրեք սահմանի մոտիկ վայրերում, (Agapius, p. 544):

Ինչպես երևում է Միքայել Ասորու տվյալներից, 752 թ. առաջ, երբ Կոստանդին V-ը գրավեց Թեոդոսուպոլիսը, Մելիտենեի վրա մի հարձակում էլ է եղել «Արմենիականների զորավար Աշկիրաշի» կողմից: Այս զորավարն այն ժամանակ առաջատակել է քաղաքի ողջ շրջանը և Ռոմանյա փոխադրել քաղաքի հայ ու հույն բնակչության մեծ մասը (Michel le Syrien, t. II, p. 506): Իսկ այս արշավանքի մասին, որ Միքայել Ասորին թվարկում է 1066 (775) թ., նա գրում է. «Հռոմայեցիների կայսր Կոստանդինը արշավեց Հայոց Թեոդոսուպոլիսի վրա, որին հայերն իրենք անվանում են Գարնոխաղաք (Կարնոյ քաղաք), արաբները՝ էրզերում, իսկ հույները՝ Քալոնիքալա (իմա՝ Կալիկալա): Նա գրավում է այն, գերեվարում ամբողջ բնակչությանը և քաղաքը թողնում ավերակ: Կամախի բերդում կայազոր հաստատելով, նա վերադարձավ Կոստանդնուպոլիս» (Michel le Syrien, t. II, p. 521—522): Հմմտ. Միխայել Ասորի, 1871, էջ 348, 1870՝ էջ 359):

Կոստանդին կայսրը ավերեց Կարինը, քանզի հույների նպատակն էր մի ավերակ շեզոք գոտի ստեղծել, որը նրանց կանչատեղ և կամեկուսացներ խալիֆայությունից, իսկ արաբները, ընդհակառակը, աշխատում էին այս սահմանային գոտում

Բյուզանդիայի դեմ ուղղված բերդեր ու ամրություններ կառուցել (Տեր-Ղևոնդյան, Ամիրայությունները, էջ 47, նույնի՝ Армения, стр. 100):

Ամենայն հավանականությամբ այս հայերից Կոստանդինը զորամասեր կազմա-
կերպեց, որոնց մասին հիշատակություն կա Ստեփանոս Նորավկայի վարքում (στέφανος
τῶν Ἀρμενίων: Տե՛ս Vita sancti Stephani, col. 1156: Հմմտ. նաև Բարբիկ-
յան, Հայ-բյուզանդական նոթեր, էջ 129—131): Ավելացնենք այստեղ, որ հայերը Ֆի-
լիպպուպոլսում առանձին համայնք էին կազմել, նրանց շրջանում այլ ազգության
ներկայացուցիչներ չեն եղել, քանզի այդ բանը օրենքն արգելում էր: XII դարի վեր-
ջում ապրած Կիտրոսի եպիսկոպոս Հովհաննեսին Դյուրախիոնի արքեպիսկոպոս Կոս-
տանդին Կավասիլասը հարց է տվել, «իրավունք ունե՞ն արդյոք հայերը այն քաղաքնե-
րում, որտեղ բնակվում են, եկեղեցիներ կառուցել»: Հովհաննես եպիսկոպոսը դրան պա-
տասխանել է. «Սկզբանե անտի քրիստոնյաների (իմա՝ քաղկեդոնականների) շրջան-
ներում ու քաղաքներում թույլատրելի է այլալեզու ու այլազավան ժողովուրդների,
այն է հրեաների, հայերի, իսմայելացիների, հազարացիների և այլ նմանների բնա-
կությունը, բայց ոչ քրիստոնյաների (քաղկեդոնականների) հետ խառն, այլ նրան-
ցից անջատ: Այդ նպատակով ահա այդ ժողովուրդներից յուրաքանչյուրին հատ-
կացվում են վայրեր՝ կամ քաղաքների մեջ, կամ դրսում, այն հաշվով, որ ներ-
փակված լինեն և դրանցից դուրս չընդարձակեն իրենց բնակությունները... Այդ առու-
մով ահա հայերն էլ որ շրջանում որ ներփակված են, իրավունք ունեն առանց խոչ-
ընդոտի և՛ եկեղեցիներ կառուցել, և՛ իրենց հերձվածը դավանել» (տե՛ս Ρ α λ λ η-
Π ο τ λ η, Σύνταγμα κανόνων, τόμ. Ε', σελ. 415):

719. Գերմանոս պատրիարքի:

720. Թեոփանեսը փոխանակ «ժողովի» (σύνθετος), արհամարհարար այն կոչում է «ատ-
յան» (συνέδριον): Հիերիայի պալատում 754 թ. գումարված ժողովը (վերջին նիս-
տը՝ օգոստոսի 8-ին կայացավ Վլախեոնայի տաճարում) ուղղված էր պատկերա-
մարտության դիրքերի ամրապնդմանը: Մասնակցեցին 338 եպիսկոպոս: Ժողո-
վը գլխավորում էր Եփեսոսի եպիսկոպոս Թեոդոսիոսը, նախկին կայսր Տիրեբիոս-
Ապսիմարոսի որդին, քանզի պատրիարք Անաստասիոսը մահացել էր 753 թ. վեր-
ջերին: Եվ քանի որ իրենց ներկայացուցիչներին չէին ուղարկել ո՛չ Հռոմի պապը,
ո՛չ Արևելքի պատրիարքները, հակառակորդ համբարը ժողովը կոչեց «անգլուխ»:
Ժողովը խստիվ արգելեց սրբապատկերների պաշտամունքը, կարգադրեց ոչնչաց-
նել դրանք և նզովեց պատկերապաշտների կարկառուն ներկայացուցիչներ Գերմանոս
Պատրիարքին, Հովհան Դամասկացուն և ուրիշներին:

720ա. 754 թ. եկեղեցական ժողովի «հավատո հանգանակը» պահպանվել է 7-րդ տիե-
զերական ժողովի (787 թ.) արձանագրություններում: Թեոփանեսը լուծյամբ է
անցնում այդ «հավատո հանգանակի» կողքով:

721. Կոստանդնուպոլսի պատրիարք Կոստանդին II-ը (754-766):

722. Այսինքն՝ սլավոններ:

723. Ինչպես տեսնում ենք, Աբու Մուսլիմին սպանողը վախճանված ամիրապետ Աբդա-
լայի եղբայր Աբդալան է (մյուս Աբդլան): Կաղանկատվացին գրում է, որ նրան ա-
ռաջին Աբդալան սպանեց. «...և սպան նա զաղտուկ զԱբու Մսլիմ, յորժամ եհաս յիշ-
խանութիւնն. և յետ նորա սպանմանն և ինքն վախճանեցաւ: Աբու Զափր, որ կո-
չեցաւ Աբդալլահ, նորին եղբայր, ամս քսան և երկու...» (Մովսես Կաղանկատվացի,
էջ 334):

724. Արաբների խալիֆա Աբու Ջաֆար Աբդալլահ ալ-Մանսուր իրն Մուհամմադ (754—775 թթ.):
725. Պոդոս I պապը աթոռակալել է 757—767 թթ.: Նրա փոխհարաբերությունների մասին Բյուզանդիայի հետ տե՛ս *Miller, Byzantine-papal relations*, p. 47—62:
726. Հետաքրքրական է նշել լեոն Քերականի ասածը (թեև հազիվ թե դա ճիշտ լինի), թե Կոստանդինը Թրակիայից բացի, այս հայերին ու ասորիներին նաև Կոստանդնուպոլիս բնակեցրեց (*Leon Grammaticus*, p. 185):
727. Վերջին քսանհինգ տարում մեզանում և արտասահմանում հսկայական աշխատանք է կատարված պավլիկյան շարժման ուսումնասիրության ուղղությամբ: Գլխավոր աշխատությունների մասին տե՛ս Առաջաբանում, էջ XXXVIII:
728. Իմա՛ Կոստանդնուպոլիս:
729. Կատոտիկա (ստորին) շրջանների տակ նկատի ունի Պելոպոնեսը (տե՛ս $\Sigma \pi \rho \acute{\alpha} \tau \epsilon \rho \omega$, *To Βυζάντιον*, Δ', σελ. 181):
730. Հիշատակվում է Հին կտակարանում որպես լոտի որդի Մոաբի հետնորդների երկիր: Գտնվում էր Մեռյալ ծովից արևելք: Հին կտակարանում տեղադրվում է Երիթրովի դիմաց:
731. Տե՛ս և ծանոթ. 343: Ինչպես ասվել է, բյուզանդական հեղինակները մի քանի Սկլավինիա գիտեն: Տվյալ փաստը ցույց է տալիս, որ այստեղ խոսքը Մակեդոնիայի Սկլավինիայի մասին է, ավելի ճիշտ՝ Մակեդոնիայի Սկլավինիաների (Թեոփանեսը այդ տեղանունն այստեղ հոգնակի թվով է բերում: Տե՛ս *Lemerle, Philippes: Նաև Наследова, Македонские славяне*, стр. 82): Մի փոքր ավելի ուշ շրջանի բյուզանդական հեղինակ Հովհաննես Կամենիատեսը Թեսալոնիկեի շրջանում հիշում է սլավոնների երեք ցեղ՝ զրուգուվիտներ, սագուդատներ և ստրիմոնցիներ (*Ioannes Cameniatae*, p. 496): Նրանք VI—VII դդ. այստեղ եկան Դանուբի ձախ ափից:
732. Ենթադրվում է Հալեպը: Բերիա անունը նրան տվել է Սելևկոս Նիկատորը՝ Մակեդոնիայի համանուն քաղաքի անունով: Պտղոմեոսը կոչում է Խալիբոն (*Χαλιδών*):
733. Մելաս (Սև) գետը Թոխմա-սուն է:
734. Լոգոթեստների մասին ընդհանրապես տե՛ս Կոստանդին Միքանաձին, էջ 291—292: Թեոփանեսի հիշատակած այս լեոնը աղբյուրներից հայտնի առաջին զրոմոսի լոգոթեստն է:
735. Բնագրում՝ $\Sigma \pi \eta \lambda α ι ο υ$:
736. Դոկիտես գիսավոր աստղի մասին տե՛ս ծանոթ. 291:
737. Արաբ. Դարեկ: Վայր հյուսիսային Ասորիքում, Ազադի շրջանում, Մանրիջից Անտիոք տանող ճանապարհի վրա: Հիշվում է դեռ ասորեստանյան ժամանակներից (Դարիգու): Դարեկը գտնվում է Հալեպից վերև, մի բնդարձակ դաշտում (Մարջ Դարեկ), որտեղ հաճախ և օմմայանների, և արբասյանների ժամանակ ճամբարում էին արարական զորքերը և նախապատրաստվում Բյուզանդիայի դեմ գործողությունների (տե՛ս *D. Sourdel-ի հոդվածը Encyclopédie de l'Islam-ում*, հտ. II, էջ 73—74):
738. Արաբ. ալ-Բասրա, քաղաք Միջագետքում, Շաբթ ալ-Արաբի վրա, Բաղդադից 420 կմ հարավ-արևելք: Հին Բասրան գտնվում էր ժամանակակից Զուբայր գյուղում: Պարսից տիրապետության ժամանակ կոչվում էր Վահիշտարադ Արդաշեր: Արաբական քաղաքը կառուցվել է 638 թ. մարգարեի ընկեր Ուտրա իրն Ղազվանի կողմից պարսից քաղաքի տեղում (արաբները կոչում էին ալ-Խուտայրա) Օմար իրն ալ-Խաու-

- տարի հրամանով որպես բանակատեղի: Մանրամասն տե՛ս Ch. Pellat-ի հոդվածը *Encyclopédie de l' Islam-ում*, հտ. I, էջ 1117—1119:
739. Նկատի ունի Անդրեաս Կրետացուն, Կատաղի պատկերապաշտ էր: Վարքը գրել է Սիմեոն Մետաֆրաստեսը (*Migne, Patrologia graeca*, t. 115, col. 1109—1128):
740. Հոռմի պապ Կոստանդինը (767—769):
741. «Տոհմիկ տերերի» տակ բուլղար պատմաբան Ջլատարսկին ենթադրում է Վոկիլ կամ Ուկիլ խանական ծագում ունեցողներին, որոնցից էին սերում բուլղարական առաջին խաները (տե՛ս *Златарски, История I, I, стр. 212—213*: Ապստամբության մասին հատուկ տե՛ս *Beševliev, Thronwirren in Bulgarien*, S. 67—82):
742. Տելեցիս (*Տելեց*, 761—764 թթ.):
743. Այսինքն՝ Արտանաս գետի շրջանում (տե՛ս *Nicephori Breviarium*, p. 77):
744. Բառարաններն այս բառի իմաստը չեն տալիս: «Քսիլոն» նշանակում է փայտ, «պանդուրա» հավանաբար իրանական բառ է (հմմտ. հայերեն բանտ), որ կապանք է նշանակում կամ հանցավորի ոտքը զարնված շղթան (Անառյան, Արմատական բառարան, հտ. I, էջ 409):
745. Իշխանության գլուխ անցավ 764 թ.: ենթադրվում է, որ Սարինոս (արտասանվում է Սավինոս) Թուրքերեն բառ է *sävān* (սիրոգ, *säv-ից՝ սիրել*: Տե՛ս *Moravcsik, Byzantinoturcica, Bd. II, S. 282*: Նաև՝ *Beševliev, Protobulgarische Inschrift*, S. 2):
746. Քաղաքական վտարանդիների և քաղաքական ապաստանի հարցը բյուզանդա-բուլղարական հարաբերություններում հաճախ է բարձրացել: Քաղաքական ապաստան էին հայցում երկու կողմից էլ: Բացի Սարինոսից, այդպիսին հայցել էր մոտ տասը տարի հետո նաև խան Տելերիզը (տե՛ս էջ 159): Խան Կրումի՝ Միքայել I-ի հետ վարած բանակցություններում քաղաքական ապաստանի խնդիրը ամենակարևորներից էր, բյուզանդական արքունիքում մեծ վեճեր առաջացրած (տե՛ս 6305 թ. տակ): Հարցի մասին մանրամասն տե՛ս *Ангелов, Политическите емигранты*, стр. 112 и сл.:
747. Պազանոս խանը իշխել է 767—768 թթ.:
748. Հավանաբար նույնանում է մի փոքր առաջ հիշատակված Բասրասոս (Բասրա) քաղաքի հետ, որի մասին տե՛ս ծանոթ. 738: Անաստասիոս Բիրիլիոթեկարիոսը գրում է *Basrason* (var. *Barason, Bafrason, Afrason*):
749. Իմա՝ խաղաղները:
750. Զիզքիան (*Ζιζκία*) գտնվում էր հին Սարմատիայում, Կովկասյան լեռներից Ազովի ծովը ընկած տարածության վրա:
751. Այժմ՝ Միդիե, արևելյան Թրակիայի ծովափնյա քաղաք, Թուրքիայի կազմում:
752. Կոստանդնուպոլսի Ակրոպոլսի, որ գտնվում էր քաղաքի եվրոպական մասի արևելյան ծայրամասում, սր. Սոֆիայից հյուսիս-արևելք:
753. Աղանդապետ Նեստորիոսը (Նեստոր) Մարիամին աստվածածին չէր համարում, այլ Քրիստոսածին: Տե՛ս ծանոթ. 253:
754. Խալիֆա Աբու Արդալլահ Մուհամմադ իրեն ալ-Մանսուր ալ-Մահդին (775—785):
755. Այս հաշտության պայմանագրի տարեթիվը որոշ չէ: Նիկեիոս պատրիարքը նշում է 763 թ., Թեոփանեսը՝ 765: Ըստ Ջլատարսկու տեղի ունեցավ 767 կամ 768 թ. (*Златарски, История I, I, стр. 220—224*):

756. Սկամարների ժողովրդական շարժումը բնկվեց Հռոմեական կայսրության հյուսիսային պրովինցիա Նորիկում (V դ.): Սկամարները աջակցում էին Բյուզանդիա ներխուժած սլավոններին և խարխուլում ստրկատիրական հասարակարգի հիմքերը: «Սկամար» բառը լոնգորարդական ծագում ունի և նշանակում է «գոգ», «ավազակ», «այգպես» էին կոչում իշխող դասակարգերը Հռոմեական իշխանությունների դեմ զինված պայքարի դուրս եկած շահագործվող դասակարգերին: Թեոփանեսի երկում սկամարները սլավոնների դաշնակիցներ են հանդես գալիս: Նրանց մասին տե՛ս *Дмитриев, Движение скамаров*, стр. 3—14:
757. Թեոփանեսի մի ձեռագիր տալիս է *Τούτζα*: Ընթերցումը: Ենթադրում են, որ խոսքը ժամանակակից Կամչիա գետի մասին է (հին բուլղարերեն *Тыча*): *Տե՛ս Извори*, том VI, стр. 272, прим. 6:
758. Բնագրում՝ *αὐλά*: Ոմանք կարծում են, որ խոսքը բուլղար խաների պալատների մասին է, ուրիշներ հունարեն այդ բառի տակ *αυλ*-ներն են տեսնում, գյուղեր՝ աուլներ: (*Տե՛ս Извори*, том VI, стр. 272, прим. 7):
759. Դամատրի լեռը գտնվում է Բյութանիայում, Խրիսուպուլից (Ուսկյուդար) արևելք: Կայսերական որսատեղի էր: 711 թ. այստեղ հակառակորդ տեղի ունեցավ Հուստինիանոս II-ի և Վարդան-Ֆիլիպպիկոսի միջև:
760. Ստեփան Նորավկայի վարքը պահպանվել է: Մինչև մահապատժի ենթարկվելը Ստեփանոսը Պրոկոնիսոս կղզին էր արքայություն, որտեղ նա «հրաշագործում» էր: Նրան էր գիմել անգամ նվրոպայում գտնվող «հայկական զորաբանակից» մի զինվոր՝ Նույնպես Ստեփանոս անունով, հավանաբար Թեոդոսուպուլիս-Կարինի կամ Մելիտենեի այն հայ պավլիկյաններից, որոնք Կոստանդին V-ի կողմից 756 թ. Թրակիայի Ֆիլիպպուպուլիս քաղաքն էին տեղափոխվել: Այդ մասին մենք կարդում ենք հիշյալ վարքում (տե՛ս Բարբիկյան, Հայ-բյուզանդական նոթեր, էջ 129—131: Նրա մասին տե՛ս նաև *Лопарев, Жизнь святых*, стр. 119—145, *Kaegi, The byzantine armies*, p. 58—59, *Huxley, On the Vita of St. Stephen*, p. 97—108:
761. Պրոֆեսիոնալ զորքերը, որ ընդհանուր ձևով «տազմատա» էին կոչվում, ենթարկված էին (IX դ. վերջում) վեց խմբի՝ *σχαλαί, ἐλαχουβίταις, ἱκανάτοι, ἀριμυοί, ὑδόμεραι, ὑπειράτοι*: Սխուաները կենտրոնացած էին և՛ մայրաքաղաքում, և՛ նահանգներում: Նայած ժամանակին, կային 7—12 սխուաներ, որոնց յուրաքանչյուրի կազմում կար մոտ 500 զինվոր: Էքսկուրիտորները բաղկացած էին 18 գումարտակից, յուրաքանչյուրում 700 զինվոր: Արիթմոսները հիշված են նաև վիզլա կամ կայսերական վիզլա անվամբ և նրանց պարտականությունն էր ապահովել կայսեր անվտանգությունը նրա արշավանքների ժամանակ: Իկանատոսները կաղմակերպվեցին նիկեփոր I-ի կողմից և մեծաթիվ չէին: Նումերոսները հիշված են VII դ. սկզբում, հայտնի չէ նրանց թվական կազմը: Օպտիմատները հաստատված էին Բյութանիայում, որտեղ ստեղծվեց Օպտիմատների բանակաթեմը: Նրանք բյուզանդական բանակում օժանդակ գեր էին խաղում: Հարցի մասին տե՛ս *Yannopoulos, La société*, p. 145—147:
762. Ըստ Ստեփանոս Նորավկայի վարքի՝ հեթանոսների և բռնի մահով վախճանվածների փոքր (էջ 1177): Սա ցույց է տալիս, որ դեռևս VIII դ. հեթանոսների համար առանձնացված էր հատուկ գերեզմանատուն:
763. Բնագրում՝ *Ἀρχιλον*: Մի քանի ձեռագիր և նիկեփոր պատրիարքը (*Nicephori Breviarium*, p. 82) տալիս են *Ἀρχίαλον* ընթերցումը: Ենթադրվում է Անքիալոս

ծովափնյա քաղաքը, այժմ՝ Պոմորիե Բուլղարիայում (Избори, том. VI, стр. 273, прим. 2):

764. Սպաթարի մասին տե՛ս Կոստանդին Միքանաձին, էջ 234: Եղե՛լ են երկու տեսակի՝ «սպաթար» և «կայսերական սպաթար»: Հիշվում է VII դարից: Բարձր աստիճան էր և կրում էին բարձր պաշտոնյաները: Սպաթարը և՛ պատվաստիճան էր, և՛ ռեալ պաշտոն: Կայսերական գվարդիայի մի զորամաս կազմված էր սպաթարներից, որը կոչվում էր նաև «մանգլավիտների զորամաս» (Yannopoulos, La société, p. 54—55): Թեոփանեսը հիշյալ սպաթարի մասին գրելիս ավելացնում է՝ κατὰ τὸν Βηττήρ, որ համարվում է ընդմիջարկություն: Թեոփանեսի լատիներեն թարգմանության մեջ այդ բառերը բացակայում են: Տե՛ս Hemmerdinger, ВНСНР, р. 6: Բեդյի-ի մասին տե՛ս և վերը, ծանոթ. 596:
765. Կանդիդատի մասին տե՛ս Կոստանդին Միքանաձին, էջ 298—299: Նաև՝ Yannopoulos, La société, p. 59—60: Ե՛վ պաշտոն էր, և՛ պատվաստիճան:
766. Այսինքն՝ Կոպրոնիմոսը: Իբրև թե մկրտության ավագանում Կոստանդինը կեղտոտել էր, դրա համար թշնամիները նրան կոչել են «կոպրոնիմոս» («թրքանուն»):
767. Իշխանաց կղզիների խոշորագույնը, որ թուրքերն այժմ կոչում են Բույուկադա (Մեծ կղզի): Այստեղ կային կայսերական պալատ, երեք արական և մեկ իգական վանքեր:
768. Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկետաս I-ը (766—780):
769. Բնագրում՝ γράμματα «գիր» (գրագիտություն):
770. Հյուսիսային Իսրայելի թագավոր էր: Աչքի ընկավ որպես ծայրահեղ կապաշտ և Եհովային պաշտողների հալածող: Բաադի պաշտամունքը դարձրեց պետական կրոն (տե՛ս Գ Թագաւորութեանց, ԺԶ, 28, ԻԲ, 38, Բ Մնացորդաց, ԺԸ, 1 և հտ.):
771. Սբ. Եվփեմիան ծնվել էր Քաղկեդոնում, գազանաբեկ եղավ 288 թ.: Նրա գերեզմանի վրա կառուցվեց մեծ եկեղեցի, որտեղ 451 թ. կայացավ Քաղկեդոնի տիեզերական ժողովը: Հետագայում նրա աճյունը տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, իսկ 766-ին՝ Լեմնոս կղզին:
772. Նկատի ունի Կոստանդին V-ի թոռ Կոստանդին VI կայսեր (790—797) և նրա մայր Իրենեին (797—802), որոնց օրոք առաջին իսավրացի կայսրերի պատկերամարտական քաղաքականությունը ետ մղվեց: Հիշյալ կայսրերը անգամ եկեղեցական ժողով գումարեցին և վերականգնեցին պատկերապաշտությունը:
773. Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքը (787—806):
774. Լախանոդրակոնը (թարգմանաբար նշանակում է «բանջարանոցի օձ») հիշատակվում է որպես Ասիայի արխոնտ և պատկերապաշտների ու վանականների ռիսերիմ թշնամի: Նրա մասին տե՛ս նաև սբ. Ստեփանոս Նորավկայի վարքում (Vita sancti Stephani, col. 1165):
775. Մանի անունը Բյուզանդիայում հազվագյուտ է հանդիպում: «Չար Մանիի» տակ նրկատի ունի III դ. նշանավոր աղանդապետ, մանիքեության հիմնադիր Մանիին:
776. Հռոմի պապ Ստեփանոս IV-ը (768—772):
777. Լատ. solea: Բյուզանդական եկեղեցիներում բեմի և իկոնոստասի միջև ընկած տարածությունը, որը, որպես կանոն, փակված էր լինում ցանկապատով:
778. Բնագրում՝ ἀνεψιός, որ կարելի է քեռորդի էլ թարգմանել:
779. Այսինքն Կոստանդնուպոլսի տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները, որ բազմած էին ձիարշավարանի ամֆիթատրոնում:

780. Ստամբուլի մասին տե՛ս ծանոթ. 57:
781. Կոչվում էր Պելագիոսի գերեզմանատուն՝ նրան մոտիկ այդ անունով սրբի տաճար լինելու պատճառով:
782. Բառացի նշանակում է «անհուշ», չհիշատակվող, հիշատակության ոչ արժանի, լռության արժանի: Տե՛ս նաև նոր բառգիրք Հայկազյան լեզվի («անյուշ» բառը): Կոստանդին V-ի՝ վանականներին «ամենամոռեմունտ» կոչելու մասին վկայում է և Ստեփանոս Նորավկայի վարքը, որի համաձայն Կոստանդին V-ը վանականների սրեմը «խավարտչին» անվանեց, իսկ վանականներին՝ կոապաշտ (*Vita sancti Stephani*, col. 1112, նաև 1132):
783. Նկատի ունի Փոյուզիայի առասպելական հարստության տեր Թագավոր Միդասին, որ այդ պատճառով գերահարուստ մարդու կերպար է դարձել:
784. Խլենան ձմեռային թիկնոց էր, որ հագնում էին խիտոնի վրայից:
785. Տիտղոսը հիմնադրվել է Հովհաննոս կայսեր կողմից, բայց հազվադեպ էր շնորհվում: Մեզ հետաքրքրող շրջանում երկու անգամ է հանդիպում, այստեղ և Լևոն IV-ի կողմից Եվդոկիմոսին շնորհվելու առնչությամբ (տե՛ս 6268 թ. տակ): Տիտղոսի մասին շատ բան հայտնի չէ: Տե՛ս *Yannopoulos, La société*, p. 40—41:
786. Հմմտ. Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 254. «Մանր բաժանեայ զղահեկանն լինի՝ սիմէս (իմա՛ սեմիսիոն) Բ, տրմէս (իմա՛ տրիմիսիոն) Գ, ...կերատ ի՛Դ...»: Կոստանդին V-ի և Եվդոկիայի որդիներից Խրիստոֆորոսը ծնվել էր 753 թ. առաջ, նիկեոսի ծննդյան թվականը հայտնի չէ: Երկուսն էլ Կոստանդին V-ի կողմից կեսաբ հռչակվեցին 769 թ. ապրիլի 2-ին: Նրանք ունեին երկու որդիներ ևս՝ Նիկետասին, որ ծնվել էր 763 թ., և Անթիմոսին՝ ծնված 768/769 թ.:
787. Հետաքրքիր է նշել, որ «տղամարդ» միտքը արտահայտել է *ἀνδρῶπις* բառով («մարդ»):
788. Քաղկեդոնիկ հոգևորականների գլխի ծածկոցը: Տվյալ դեպքում նա հավանաբար չալման նկատի ունի:
789. Հոռմում պալլիոն էին կոչվում ամեն տեսակի քառակուսի կամ ուղղանկյուն կտորները, որ տարբեր նպատակներով էին օգտագործվում. վարագույր, անկողնի ծածկոց, սավան, գորգ և այլն: Պալլիոն էր կոչվում նաև հունական հիմատիոնի օրինակով կարված հանդերձանքը: Եկեղեցում պալլիոն էր կոչվում երեք մատ լայնությամբ բրդից կտորը, որի վրա կային վեց սև մետաքսե խաչեր: Այդ գցվում էր մետրոպոլիտի ուսին:
790. Դեռևս Կոստանդին V-ի կենդանության օրոք, նրա որդի Լևոնը կայսր (կայսերակից) էր հռչակվել: Բյուզանդիայում դա արվում էր իշխող հարստության ապագան ապահովելու դիտավորությամբ:
791. Հոռմի պապ Ադրիանոս I-ը (772—795):
792. Բնագրում՝ Βυζαντις: Գուցե Բանու կալոս, այսինքն կայսիկները կամ նրանց ցեղապետը:
793. Սրան Թեոփանեսը այլ տեղում չի հիշատակում: Հենց Կոստանդին կայսեր Թագավորության ժամանակ Ղևոնդը հիշատակում է մի արար կառավարիչ «...որում Մալեն կոչվին, որ էր այր անօրէն և արիւնահեղ» (Ղևոնդ, էջ 133):
794. Խոսքը Միքայել Լախանողրակոնի մասին է, Թրակեսիոն բանակաթեմի ղորավարի: Տե՛ս ծանոթ. 774:
795. Այսինքն՝ Կոստանդին V կայսեր:

796. Ցուկանիստերիոն (պարսկերեն շու-քան, այժմ՝ շոքան խաղից)։ Ձիարշավարան էր Կոստանդնուպոլսում։ Հավանաբար նույն անունով այլ ձիարշավարաններ էլ կային Կայսրության այլ քաղաքներում։ Ձիու վրա նստած զնդակ էին խաղում։ Այդ խաղը հիշում է անգամ Մատթեոս Ուոհայեցին. «խաղ զնդին ի մայտանն» (Մատթեոս Ուոհայեցի, էջ 32)։
797. Ապագա Կոստանդին VI կայսրը, Կոստանդին V-ի որդի Լևոնի (Լևոն VI-ի) որդին։ Ինչպես պարզ երևում է Թեոփանեսի այս շարադրանքից, Բյուզանդիայում բնդունված էր նորածինին տալ պապի (հետևաբար՝ տատի, եթե երեխան աղջիկ էր) անունը այն դեպքում միայն, եթե այդ պապը (տատը) վախճանված էր։
798. Այսինքն՝ Թանաքով ծեծել, դաջել (տատուիրովկա), հնարավոր լինելու համար ներանց տարբերել։ Հայկական աղբյուրները ևս բնդգծում են այս Արղայայի բնդաքաղցությունը և նրա օրոք Հայաստանում ծանրացած հարկապահանջության մասին։ Ղևոնդի ասելով «...լիշխանութեանն Արղայայի միւսոյ յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց. քանզի դժոխսձե ազահութիւն անհամբոյր թշնամւոյն ոչ շատացաւ ուտել զմարմինս բնտրելոց Քրիստոսի հօտիս և ըմպել զարին իբրեւ զջուր զարհամարհանս նոցա. այլ համօրէն զբոլոր երկիրս Հայոց արկանէր բնդ անհանդուրժելի վտարանդիւր... շար կտտանօք, գելարանօք և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան։ Յորմէ փախստեալ եղեալ բազումք յայրս և ի փապարս երկրի՝ ղօղեալ թագչէին...» (Ղևոնդ, էջ 135)։
799. Բոյար (բնագրում՝ βουλᾶν) և Ցիգատոս (հիշտը՝ շիգատ) պրոտոբուլղարական տիտղոսներ են։ Թեոփանեսը Ցիգատը բերում է որպես հատուկ անուն։ Կարծիք է հայտնվել, թե մեզ հայտնի «շիգիտ»-ն է (Bury, A History, vol. II, p. 474, n. 3)։ Թեոփանեսի ուսմերեն թարգմանիչը թարգմանել է «цуган» (!)։
800. Իմա՝ խան Տելերիզը (768—777)։
801. Գտնվում էր Մակեդոնիայի կենտրոնում։ VII դարում Թեսաղոնիկեի մոտ բնակվում էր սլավոնական բերդատների ցեղը, որոնք 676 թ. մասնակցեցին քաղաքի պաշարմանը։ 685—687 թթ. քաղաքի վրա հարձակվեցին Ստրիմոն (Ստրումիցա) գետի սփին բնակվող ստրիմոնիտները։ Է. Լիպշիցի կարծիքով Հուստինիանոս II-ը հենց այս շրջանների վրա արշավեց 687 թ. (Липшиц, Славянская община, стр. 157։ Նույնի՝ Византийское крестьянство, стр. 138։ Նույնի՝ Очерки, стр. 30։ Հմմտ. ծանոթ. 904։
802. Այսինքն՝ Օպտիմատոն բանակաթեմի ղինվորներին։
803. Պատերազմն այստեղ տեղի ունեցավ 774 թ.։ Լիթուսորիան մինչև օրս հզորությամբ չի տեղադրվում։ Զլատարսկու կարծիքով գտնվում էր բուլղարական Զագորիայում, բուլղարաբյուզանդական արևելյան սահմանի մոտ (Златарски, История, I, I, стр. 232, прим. 1)։
804. Կոստանդին V-ի Բուլղարիայի վրա կատարած արշավանքների մասին հատուկ տե՛ս Beševliev, Die Feldzüge, S. 5—17։
805. Ժամանակակից Լուկե Բուրգազը Թուրքիայում։
806. Այժմ՝ Սիլիվրիա՝ Թրակիայի հարավային ծովափին։
807. Թարգմանաբար նշանակում է «Կլոր բերդ»։ Գտնվում էր Մարմարայի ծովում՝ Հերզոմոնի և Թեոդոսիոսի պարսպի միջև։
808. Հատուկ զոհունակությամբ է հիշում նրա մահը Ղևոնդ պատմիչը. «Եւ ինքն Արղալցեալ ամենայն ախորժակօք շարասէր կամաց իւրոց և ճնշեալ գոգի իւր և բաղձանս ար-

ծաթսիրութեան ախտի, և ազահեալ զազահութիւն շար տան իւրոյ՝ ընդունէր զմարգարէին նզովսն. և յուսակորոյս սատակէր անդէն ընդ հուպ ի նմին ամի...» (Ղևոնդ, էջ 153—154): Մովսես Կաղանկատվացին գրում է, որ նա «մեռաւ ի Գումրէթն Արաշամու» (էջ 334):

809. Հետև IV կայսր (775—780):

810. Ղևոնդը նրան անվանում է «Մահմետ Մահադի որդի նորա» (այսինքն՝ Արղլայի, էջ 154): Խոսքը Աբու Արղալլահ Մուհամմադ ալ-Մահդի իրն ալ-Մանսուրի մասին է, որ հայ պատմիչի ասելով, «էր ազնուական քան զհայր իւր և լաւագոյն բարութ», թեև չի մոռանում ավելացնել, որ «թէպէտև զանուր լծոյ հարկին ծանրացոյց՝ սակայն վասն գիտի արծաթոյն հանգեաւ երկիրս առ փոքր մի շար տառապանաց վրտանգին» (Ղևոնդ, էջ 154—155): Կաղանկատվացին նրան անվանում է «Մադի, որ կոչի Մահմատ, որդի Արղալլահի» (էջ 334):

811. Նա Դիդիերի որդին էր և Արիշիսի՝ Բենեվենդոսի առաջին լոմբարդացի իշխանի (758—787) ազգականը: Իսկական անունը Ադելգիս էր: (Guiland, Les patrices, p. 320—321):

812. Հիշվում է Ղևոնդի պատմութեան մեջ. «Եւ ինքն Մահմետ... զումարեալ զօրս՝ տայր ի ձեռս զօրավարի միոջ իւրոյ եղբօր, որում անուն էր Աբաս և առաքէ զնա յաշխարհն Յունաց» (Ղևոնդ, էջ 155):

813. Սա ազբյուրներում հանդիպող առաջին հիշատակութիւնն է, երբ բյուզանդական հասարակութեան բոլոր խավերը՝ սենատը, բանակը և դեմոսը, կայսեր հավատարմութեան երդում են տալիս: Սովորութեան վերաբերյալ տե՛ս Svoronos, Le serment de fidélité, p. 109: Հետագայում այդ կարգը զարձակ սովորական: Նույն տեղում, էջ 111: «Արհեստանոցների աշխատողների» տակ ենթադրվում են Կոստանդնուպոլսի համբարութիւնների ղեկավարները: Թեոփանեսի այս տվյալը պարզ ցույց է տալիս, թե արհեստավորները զգալի դեր էին խաղում երկրի քաղաքական կյանքում VIII—IX դդ. (հմմտ. Лунин, Очерки, стр. 122): Արհեստավորների հետ կարևոր դեր էին խաղում նաև դեմոսները՝ քաղաքների կազմակերպված բնակիչները, որոնք հակադրվում էին անկազմակերպ «ժողովրդին» λαός-ին:

814. Այս Կոստանդին թեոփանեսը նոր է կոչում՝ նախորդ տարին վախճանված պապի՝ Կոստանդին V-ի հետ ընդհանրապես համար: Թագավորեց 780—787 թթ. որպես Կոստանդին VI:

815. ենթադրվում է սյունաշարքը:

816. Դարեկոնի մասին տե՛ս ծանոթ. 737:

817. Բնագրում՝ Καριστερότης: Վիմադիր արձանագրութիւններում և ձեռագրերում հունարեն Β* և Κ* տառերի գրութեան ձևը նույնն է և երբ խոսքը հաղվադեպ հանդիպող օտար անվան կամ տեղանվան մասին է, հրատարակիչները տարակուսանքի մեջ են ընկնում: Օրինակ՝ էգրեկի արձանագրութեան մեջ հիշվող «Վիսկացի»-ն: Բյուզանդագետները կարդում էին այնպես, ինչպես գրված էր՝ «Վիսկացի» (տե՛ս Bartikian, La généalogie, p. 265—266): Պարզ է, որ Թեոփանեսը գրել է Βαριστερότης — Վարադտիրոց (Անաստասիոս Բիրլիոթեկարիոսը գրում է Βasterotzes: Theophanis Chronographia, rec. C. de Boor, vol. II, p. 299):

Թեոփանեսի «Կարիստերոցներ» Վարադտիրոց կարդաց (հարցականով) առաջին անգամ Ք. Պատկանյանը (տե՛ս История халифов, стр. 162: Տե՛ս և Գելցեր,

Սկզբնաւորութիւնք, էջ 33—34 (ժանոթ. հայ թարգմանիչ Գարանֆիլյանի), նաև Աղոնց, Մամիկոնյան իշխանութիւն, էջ 362)։

818. Ենթադրւում է Մուշեղիկը։ Գրիգորի հայրանունը պարզ վկայում է նրա հայազգի լինելու մասին։ Ընչպես տեսնում ենք, Թեոփանեսը հիշում է շորս հայ բարձրաստիճան գինւորականների՝ բանակաթեմերի զորավարների անուններ՝ Արտավազդ, Վարազտիրոց, Տաճատ և Մուսուլակի որդի Գրիգոր, այսինքն յրացնում է հենց հայկական աղքատւորների տվյալները։ Ղևոնդը գիտե միայն երկուսին, «Կարգէ (Ղևոնկայսրը) ի վերայ նոցա զօրավարս երիս. որք էին երկու ի նոցանէն ի նախարարացն Հայոց, անուն միում Տաճատ ի տանէ Անձնացեաց, և երկրորդն Արտավազդ ի տանէ Մամիկոնեանց, և միւսն ի զօրացն Յունաց» (Ղևոնդ, էջ 155)։

819. Թեոփանեսը ռազմական գործողութիւնները տեղադրում է Գերմանիակիայում (Մարաշ)։ Հետաքրքիր են Ղևոնդի տվյալները. «...առաքէ վաղվաղակի արքայն զօր բազում ի վերայ Բասանաստանի (ըստ Ք. Պատկանյանի՝ Ասորիքը՝ Բար-էլ-Շամ, История халифов, стр. 162, прим. 220), որում Բիշանն կոչի... որոց (իմա՝ զօրավարաց) խաղացեալ յառաջ զօրօք բազմօք՝ հասանէին ի կողմանս Կիլիկեցւոց և Բիշանու, և սփռեալ զասպատակս իւրեանց ի վերայ աշխարհին՝ առին զքաղում քաղաքս և զգաւառս և զգիւղս...» (Ղևոնդ, էջ 155—156)։

820. Բնադրում՝ Իսթաշի։

821. Այսինքն Սոֆիանն պալատում, որ սկսել էր կառուցել 568 թ. Հուստինոս II կայսրը և կոչել իր կնոջ Սոֆիայի անունով։ Գտնվում էր Բոսֆորի ասիական ափին, ժամանակակից Զենգեբյոյի տեղում։

822. Հմմտ. Ղևոնդ, էջ 156. «Եւ երթեալ յանդիման լինէին կայսերն Յունաց հանդերձ բազում աւարաւ, և բազում գովութեամբ ընդունէր կայսրն Ղևոն զզօրս իւր, և մեծամեծ պատիւս ընծայէր զօրագլխաց իւրոց...»։

823. Խոսքը հակօրինկ ասորիների մասին է։ Այս գաղթի մասին վկայում է և Միքայել Ասորին (Michel le Syrien, t. III, p. 2)։ Նրա հայ թարգմանիչը ասորիների հետ հիշում է և հայերին։

824. Միջագետքից (վայրը նշում է միայն Միքայել Ասորին) Թրակիա գաղթեցված ասորի հակօրինկները, ամենայն հավանականությամբ, հաստատվեցին Ֆիլիպպուպոլիս քաղաքում և երկար դարեր պահպանեցին իրենց գոյութիւնը։ Դեռևս Ալեքսիոս I Կոմնենոս կայսեր օրոք (1081—1118) Ֆիլիպպուպոլսում կային հակօրինկ ասորիներ, որոնք հակապետական խռովութիւնների ժամանակ միշտ միանում էին նույն քաղաքում բնակվող պալիկյաններին (տե՛ս Anne Comnène, Alexiade, t. III, p. 181)։

Այս գաղթի մասին ընդհանուր ձևով հիշատակում է և Ղևոնդը. «Եւ ինքեանք առեալ զբազմութիւն խառնիճաղանձիցն վարեցին յաւարի, զորոց զթիւ գերելոցն ասեն լինել աւելի քան ժն բիւր արանց, զորս առեալ տանէին յաշխարհն Յունաց» (Ղևոնդ, էջ 156)։ Միքայել Ասորին գաղթած ասորիներին «ուղղափառ» է անվանում, հարկաւ, իր տեսանկյունից (Michel le Syrien, t. III, p. 2։ Հմմտ. նաև Միխայել Ասորի, 1871, էջ 353)։ Հայ թարգմանիչը դրում է «Հայս և Ասորիս ուղղափառս, և բնակեցոյց ընդ ինքեան ի Թրակիա»։ «Հայս»-ը հավանաբար իր ավելացրածն է։ Այդպես է նաև 1870 թ. հրատարակության մեջ, էջ 364։

825. Կոստանդնուպոլսի պատրիարք Պավղոս IV-ը (780—784)։

826. Ապագա խալիֆա Աբու Ջաֆար Հարուն առ-Ռաշիդ իբն ալ-Մահդին: Ղևոնդի ասե-
լով (էջ 157) արշավողը Աբասն էր (Թեոփանեսի Աբասվալին), որին օղնության
հասավ և Հայաստանի արաբ ոստիկան Սզիդը:
827. Իմա՝ Երուսաղեմ:
828. Լիսիասի տակ, հավանաբար, ենթադրվում է Անտիոքոս Սպիփանեսի խորհրդական
Լիսիասը, որ մասնակցեց եբրայեցիների ապստամբության ճնշման, Երուսաղեմի
պարիսպների տապալման և բազում հրեաների կոտորման (տե՛ս Բ Մակաբայեցւոց,
ԺԱ, և հտ.), իսկ Ագրիկոլասը գուցե Հուլիոս Ագրիկոլասը, հռոմեական զորա-
վար (I դ.):
829. Հունարենում՝ Στοιροφագου: Այդպես է հույն եկեղեցում կոչվում բարեկենդանի կի-
րակիին հաջորդող շաբաթը, որի ժամանակ թեև արգելվում է միս ուտելը, թույլա-
տրվում է օգտագործել պանիր, կաթ, յուղ և ձու: Դա կատարվում է որպես նախա-
պատրաստություն մեծ պահքին: Հստականդություն տյուրոֆագոսի շաբաթը հաստա-
տեց Հերակլիոս I կայսրը՝ խոսքովի դեմ տարած հաղթանակից հետո:
830. Պրոտոսպաթարի մասին տե՛ս Կոստանդին Միքանածին, էջ 212—213:
831. Պապիաս պալատական պաշտոն էր, որի կրողը ներքինի էր լինում: Գոյություն
ունենին երեք պապիաս՝ Մեծ պալատի, Մազնավրայի պալատի և Դափնեի պալատի
(Yannopoulos, La société, p. 70 և ծանոթ. 426):
832. Այսինքն՝ ամիրապետի որդին: Տե՛ս ծանոթ. 826:
833. Հարուն առ-Ռաշիդը գրավեց 780 թ. սեպտեմբերին: Միքայել Ասորին բերդը կո-
չում է Սեմալուս (Michel le Syrien, t. III, p. 1):
834. Փոքրասիական թերակղզու արևմտյան մասը: Տե՛ս ծանոթ. 557:
835. Նկատի ունի Քրիստոսի աշակերտներին:
836. Ռ. Գիյյանը ենթադրում է, որ այս Վարդասը հետագայում ներում է ստացել, որ
792 թ. բուլղարների դեմ պատերազմին մասնակցած պատրիկ Վարդասը, հավա-
նաբար, նույն անձնավորությունն է (Guilland, Les patrices, p. 327):
837. Գտնվում էր Կիլիկիայից Տավրոս տանող լեռնանցքներից մեկի շրջանում (Ramsey,
HGAM, p. 355):
838. Այս անեկդոտի տարբերակները պահպանվել են և այլ աղբյուրներում (Reinach,
Un intrus byzantin, p. 52—62):
839. Խոսքը Կարոլոս Մեծի, Շարլմանյի մասին է (800—814):
840. Կայսեր գանձապետը:
841. Պրիմիկերիոս էին կոչվում ստորին հոգևորականության (կիսասարկավազից ցած)
վերակացուները: Գտնվում էին եպիսկոպոսների ենթակայության մեջ: IX դ. վեր-
ջում աստիճանավոր ներքինիների հիերարխիայում պրիմիկերիոսը գտնվում էր
չորրորդ տեղում: Պրիմիկերիոսը և՛ պաշտոն էր, և՛ պատվաստիճան:
842. Ἐρυσπός (կարմիր) բառից: Թեոփանեսը տալիս է Ռոտրուդա անվան հունարեն
թարգմանությունը:
843. Բնագրում Γραικῶν γράμματα καὶ τὴν γλῶσσαν: Ինչպես տեսնում ենք, երբ խոսքը
լեզվին է վերաբերում, Թեոփանեսը չի գործածում Ρωμαῖος հոտմայեցի բառը (որ
միջնադարում օգտագործվում էր նաև «հույն» նշանակությամբ): «Գրեկոս» նշանա-
կում է «հույն քրիստոնյա», իսկ «հոտմայեցի» (հայերեն՝ հոռոմ) նշանակում է
Հռոմեական կայսրության քաղաքացի՝ անկախ ազգությունից (տե՛ս Τσάρας,
Τὸ νόημα τοῦ Γραικώσας, σελ. 146—147):

844. Քաղաք Փոքր Ասիայում, Դորիլեոնից (այժմ՝ էսքի շեհիր) հարավ: VI դ. Հիերոկլեսը հիշատակում է այն որպես Փոյուդիա Սալուտարիա պրովինցիայի 23 քաղաքներից մեկը: Եպիսկոպոսության կենտրոն էր՝ Սինագոնի մետրոպոլիտոսիսը կենթակա:
845. Ռամզեյն ուղղում է Բարենոս ու տեղադրում Օպսիկիոն և Թրակեսիոն բանակաձեմերի սահմանագլխին:
846. Ռամզեյն ուղղում է Βαρύν (Βαρύν) և տեղադրում Բարենոսի (անտիկ շրջանի Գրանիկոս) գետաբերանի մոտ (Ramsey, HGAM, p. 159): Անաստասիոս Բիրլիոթեկարիոսը գրում է Barim: St'ս և ծանոթ. 845:
847. Այսինքն՝ կայսրուհի Իրենեն:
848. Տաճատի մասին շատ արժեքավոր մանրամասնություններ պահպանել է Ղևոնդը: Նա ցույց է տալիս, որ Տաճատը արաբների մոտից փախել է Կոստանդին V կայսեր մոտ, որը նրան սիրալիք կերպով էր ընդունել, «զի յառաջագոյն ի համբաւոյ ծանուցեալ էր զարիութիւն նորա» (էջ 158—159): Կայսրը սկզբնական շրջանում նրան ուղարկել էր բուլղարների դեմ, որտեղից նա վերադարձավ հաղթանակած: Դրա վրա կայսրը նրան «կարգէր զօրավար ի վերայ զ բիւր արանց, և կայր ի հնազանդութեան արքային Յունաց ամս ԻԲ» (էջ 159): Մենք գիտենք, որ նա Բուկելլարների բանակաթեմի ղորավարն էր, հավանաբար և այլ բանակաթեմերի, քանի որ 22 տարի չէր կարող նույն բանակաթեմում ծառայել: Լևոն VI կայսեր մահից հետո (780) Տաճատի հարաբերությունները Կոստանդին VI-ի և նրա մոր՝ Իրենեի հետ վատանում են և նա փախչում է արաբների մոտ: Ապագա խալիֆա Հարուն առ-Ռաշիդը Տաճատին «հայր իւր անուանեաց... և մեծամեծ պատուօք ընծայէր նա»: Իսկ խալիֆան էլ «տայր նմա պատիւ իշխանութեան ի վերայ երկրիս Հայոց, և առաքէ զնա յաշխարհն իւր մեծաւ շքեղութեամբ» (էջ 159): Հայաստանի ոստիկան Օթմանը Տաճատին այլ նախարարների հետ միասին ուղարկեց խաղարների դեմ, այդ ընթացքում էլ նա հիվանդացավ ու վախճանվեց (Ղևոնդ, էջ 160—161):
849. Կային մի քանի տեսակի լոգոթետներ: Որպես կանոն հարկային պաշտոնյաներ էին: Նրանց մասին հատուկ տե՛ս Miller, The Logothete of the Drome; Guiland, Les Logothètes:
850. Բնագրում՝ Βεργότα: Զշխոթել Հալեպի հետ, որը ևս այդպես է կոչվում, ոչ էլ Մակեդոնիայի նույնանուն քաղաքի: Այստեղ խոսքը Արևելյան Ռումելիայի Բերոն (Βεργόη) քաղաքի մասին է, այժմ՝ Կազանլըկ Բուլղարիայում (ըստ ուրիշների՝ Ստարա Զագորան): Գտնվում էր Ֆիլիպպուպոլիս-Անքիալոս և Ադրիանուպոլիս-Նիկոպոլիս ad Istrum ճանապարհների վրա և տիրապետող դիրք ունի այժմյան Շիպկայի կիրճի վրա:
851. Հավանաբար՝ վերականգնել:
852. Այժմ՝ Պլովդիվ քաղաքը Բուլղարիայում:
853. Այժմ՝ Պոմորիե Բուլղարիայում, Բուրգասի շրջանում: Խոսքը, հասկանալի է, ոչ թե քաղաքի կառուցման մասին է (այն գոյություն ունի VI դ. մ. թ. ա.), այլ, հավանաբար, վերականգնման: 740 թ. Թրակիայում երկրաշարժ էր տեղի ունեցել և այլ քաղաքների թվում տուժել էր և Անքիալոսը:
854. Արու Մուհամմադ Մուսա ալ-Հադի իրն ալ-Մահդի (785—786): Հմմտ. Ղևոնդ, էջ 161. «Ապա յետ նորա Մուսէ փոխանորդէ զիշխանութիւն հօր իւրոյ ամ ա»: Հմմտ. Մովսես Կաղանկատվացի, էջ 334. «Մուսէ ամ մի»:

855. Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքը (784—806):
856. Տե՛ս Ա Կորնթ., Թ, 27:
857. Այսինքն՝ Պետրոս առաքյալի: Հմմտ. Մատթ. ԺԶ, 18. «Զի դու ես վե՛ր, և ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ»: Յովհ. Ա, 40. «Ամմովնի, (իմա՛ Պետրոսի) վիմի»:
858. Հմմտ. Մատթ. Ը, 12. «Ելցեն ի խաւարն արտաքին»:
859. Խոսքը նիկիական հանգանակին է վերաբերում:
860. Լեոն III-ին նկատի ունի:
861. 754 թ. ժողովի:
862. Տե՛ս Բ Տիմոթեոս, Բ, 9:
863. Նկատի ունի Աբու Զաֆար Հարուն առ-Ռաշիդ իրն ալ-Մահդիին (786—809): Հմմտ. Ղևոնդ, էջ 166. «Յետ սորա կացեալ Ահարոն որդի Մահմետի եղբայր Մուսէի ազա՛ն և արծաթասէր»: Նաև՝ Կաղանկատվացի, էջ 334. «Հարուն՝ Մահդիայ որդին, զոր Մահդիունն կոչեն, ամս քսան և հինգ.—սա նեղութիւն անշափ հասոյց աշխարհի և վասն այնր բազում գաւառք Հայոց փախեան ի Հոռոմս»:
864. Արար հեղինակների համաձայն մեռավ 786 թ. սեպտեմբերի 15-ին:
865. Ժողովը գումարվեց 786 թ. հուլիսի 31-ին: Բայց ինչպես ցույց է տալիս Թեոփանեսը, կայսերական պահակախմբի զինված միջամտության պատճառով ստիպված եղավ դադարեցնել իր աշխատանքները: Այն գումարվեց 787 թ. նիկիա քաղաքում և տեեց սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 13-ը: Այն հայտնի է որպես 7-րդ տիեզերական ժողով և վերջինն էր, որ Արևելյան եկեղեցին ճանաչում է որպես տիեզերական: Հայտնի է, որ առաջին տիեզերական ժողովը 325 թ. կայացավ նույն նիկիա քաղաքում: Ժողովի վերաբերյալ նորագույն գործերից տե՛ս Darrouzes, *Listes episcopales*, p. 5—76; Munitiz, *Synoptic greec accounts*, p. 147—186:
866. «Կատեխումենա» է կոչվում պրոնատոր կամ նարթեքսը, որտեղ քրիստոնեության սկզբնական շրջանում սովորաբար կանգնում էին կատեխումենոսները (նրանք, ովքեր նախքան մկրտվելը պիտի լսեին քրիստոնեական վարդապետությունը և «փորձվեին»): Այդտեղ էին կանգնում նաև հրապարակայնորեն իրենց մեղքերը խոստովանողները:
867. Բնագրում՝ νεναγχεαχεν: Մարաթոնի ճակատամարտի հաղթական ավարտից հետո (մ.թ.ա. 490 թ.) Աթենք շտապած և պարսիկների դեմ հույների տարած հաղթանակի ավետիսը բերած զինվորի կոչն է:
868. Զինվորական կայան էր, գտնվում էր Օպտիմատոն բանակաթեմում: Վերջինիս կենտրոնը նիկոմեդիա քաղաքն էր:
869. Նիկիայի ժողովին մասնակցում էին Հոռոմի Ադրիանոս պապի, Ալեքսանդրիայի Պրիտիանոս պատրիարքի, Անտիոքի՝ Թեոդորեոսի և Եբուսաղեմի Եղիայի ներկայացուցիչները (տեսպոտերետես): Նախագահում էր Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքը:
870. Տե՛ս ծանոթ. 865:
871. Բնագրում՝ τοιχοι: Հայերը այդ բառը թարգմանում են «տումար» (որ տումարի՝ տարեցույցի, ժամանակագրական սխառեմի հետ ոչ մի առնչություն չունի): Հռոմարենում նշանակում է հատոր, գիրք, վավերագիր (տե՛ս Անառյան, Արմատական բառարան, հտ. IV, էջ 419—420), նաև որոշում:

872. Հավանաբար նույնանուն է Իսափրիայի Ապագնային, որտեղ, ըստ Պրոկոպիոս Կեսարացու Հուստինիանոս 1-ր վանք կառուցեց (Ramsey, HGAM, p. 356):
873. Ա. Գրեգուարը կարծիք է հայտնել, որ հիշյալ Դիոգենեսը բյուզանդական էպիկական հերոս Դիգենիս Ակրիտասի պատմական նախատիպն է (տե՛ս Grégoire, 'Ὁ Διγενής Ἀκρίτας, p. 36): Սակայն Դիոգենեսը (նշանակում է Զնածին), և Դիգենիսը (Երկածին) տարբեր հասկացողություններ են:
874. Ստրիմոնը նույնանուն գետի վերին հոսանքում գտնվող գավառ էր, Սերրե և Մելնիկ քաղաքների հյուսիս ընկած շրջանը: VIII դ. կլեյսուր էր, իսկ Կոստանդին Միրանածինի ժամանակ վերածվեց բանակաթեմի:
875. Ստրատիոտիկոնի լոգոթեալը վարում էր ժամանակակից ռազմական մինիստրի պաշտոնը:
876. Տե՛ս ծանոթ. 811:
877. Այսինքն սր. Մամասի պալատը, որ կառուցել էր Հեոն I կայսրը 469 թ. Կոստանդնուպոլսում բռնկված մեծ հրդեհից հետո, որի ժամանակ ավերակ դարձավ Սրբազան պալատը: Այն գտնվում էր սր. Մամաս անունը կրող թաղամասում, որ նույնանուն է ժամանակակից Բեշիկթաշի հետ:
878. Բնագրում՝ Βεγυλος, լատ. bajulus: Բառացի նշանակում է բռնակիր և ունի փոխաբերական իմաստ՝ պետական գործերի բռնները կրող: Բյուզանդական կայսրության ժամանակ այդպես էր կոչվում Վենետիկի ներկայացուցիչը (հյուպատոսը) Կոստանդնուպոլսում:
879. Տե՛ս ծանոթ. 729:
880. Այդ անունով բաղմաթիվ վայրեր կային Բյուզանդիայում՝ Կարիայում, Լիկիայում, Լյուդիայում, Պիսիդիայում և այլուր: Պարզ չէ, ո՞ր մեկը նկատի ունի:
881. Ալեքսիոս Մուսուլեմ (կամ Մուսելե՝ Մուշեղ) նշանավոր հայազգի ընտանիքից:
882. Ըստ Ռամզեսի նույնանուն է Ստրաբոնի Օտրոյայի հետ, որ գտնվում էր Բյութանիայում, Ասկանիայի լճի հարավային ափին (Ասկանիան Նիկիայի լիճն է, որ այժմ կոչվում է Իզնիկ գյուղ):
883. Այս բերդի ավերակները գտնվում են Ադրիանուպոլսից 20 կմ հյուսիս-արևելք, Պրովադի գյուղից հարավ:
884. Բուլղարիայի խան Կարդամը (777/8—803 թթ.):
885. Բնագրում՝ Ἀνδρότος πόργου:
886. Աննա Կոմնենեի տվյալներով տեղագրվում է Յամբուլի և Դոլոնի միջև: Այլ կարծիքների մասին տե՛ս Цанкова-Петкова, О территория, стр. 129:
887. Բնագրում՝ Παγχαίτιος: Անունից ելնելով կարելի է ենթադրել, որ նա, ամենայն հավանականությամբ, հայազգի էր, թեև պետք է ասել, որ հանդիպում են Παγχαίτιος անունով և ոչ հայազգի գործիչներ:
888. Ալեքսիոս Մուսուլեմին (Մուշեղին): Տե՛ս ծանոթ. 881:
889. Այսինքն Արմենիականների բանակաթեմի գինված ուժերը:
890. Բյուզանդական աղբյուրներում «արմենիականներ» ասելով նկատի ունեն Արմենիականների բանակաթեմի զորքերը կամ բնակչությունը, որ կարող է, ինչպես այստեղից պարզ երևում է, և հայեր չլինեն:
891. Թերասա (արար. Դարեսա, Միքայել Ասորին գրում է Ռաբասա) բերդը հիշում է Պոդեռես Պլինիոսը և համարում Լիկաոնիայի քաղաք՝ Տավրոսում: Գտնվում էր Պոդանդոսում հանդիպող ռազմական երկու ճանապարհներից մեկի վրա: Դրանցից

- մեկը Տիանայից, մյուսը՝ Հերակլիա-Կյուրիստրայից, Կիլիկյան դռների միջով տանում էին դեպի Տարսոս (Ramsey, HGAM, p. 339):
892. Բնագրում՝ *χαρταεργαίων*: Տե՛ս ծանոթ. 909 և 953:
893. Նույնացվում է այժմյան Սակար պլանինայի հետ, իսկ Անփայտ Աբրուերան՝ Դեր-Վիշկա մոգիլայի՝ Բուլղարիայի Սվիլենգրադի շրջանի ժամանակակից Շտիտ գյուղի (Извори, том VI, стр. 277, прим. 4):
894. Բնագրում՝ *ἀνεψιός*, որ նշանակում է և «քեռորդի»:
895. Հոռմի պապ Լեոն III-ը (795—816):
896. Բնագրում՝ *καθίστα εἰς γωνίαν* (անկյունում նստել):
897. Միրանի դահլիճը, այսինքն՝ պալատը (Παλατῶν) քառակուսի շենք էր, իր անունը պարտական է կառուցման ժամանակ օգտագործված ծիրանի-կարմիր մարմարյա սյուներին ու պատերին: Հին սովորության համաձայն կայսրուհիները այստեղ էին լույս աշխարհ բերում թագաժառանգներին, որի պատճառով էլ նրանք Միրանածին էին կոչվում: Հայտնի չէ երբ և ում կողմից էր կառուցվել: Պալատը ծովահայաց էր, գտնվում էր Սոֆիանե նավահանգստի մոտ, Պրոպոնտիսում, քաղաքի եվրոպական թերակղզու հարավ-արևելքում (Janin, Cons. byz., p. 121—122):
898. Կարույոս Մեծը թագադրվեց 800 թ. դեկտեմբերի 25-ին:
899. Նկատի ունի Իրենեի միանձնյա թագավորությունը 797-ից 802 թթ.: Նախապես նա թագավորում էր իր որդի Կոստանդին VI-ի հետ՝ 790—797 թթ.: Իրենեն առաջին կայսրուհին էր, որ թագավորեց միահեծան, բայց քանի որ հոռմեական ավանդույթի համաձայն կայսեր իշխանությունը կապված էր բանակի գերագույն հրամանատարության հետ, Իրենեն օրենսդրական հրամանագրերում կոչվում է ոչ թե «թագուհի», այլ «թագավոր» (Ostrogorsky, Histoire, p. 211):
900. Կոստանդին V-ի:
901. Թերապիայի նախնական անունը Ֆարմակես էր (թունավորող), Թերապիա (ապաքինում, բուժում) կոչվեց Ատտիկոս պատրիարքի կողմից (406—425)՝ վայրի լավ կլիմայի պատճառով: Այժմ կոչվում է Թարաքիյա և օգափոխություն վայր է: Գրանցվում է Բոսֆորի նեղուցի մեջտեղում, նրա արևմտյան ափին (Janin, Cons. byz., p. 438—439):
902. Մալազիինայի մասին տե՛ս ծանոթ. 868:
903. Այսինքն՝ Օպտիմատոն բանակաթեմի: Կենտրոնը Նիկոմեդիա քաղաքն էր:
904. Բելզետիան Թեոփանեսը հիշատակել էր և այլ տեղում: Թեև թվում է, թե պետք է նույնանա Բերգիտիայի հետ, ուսումնասիրողները տարբեր տեղանուններ են համարում: Բերգիտիան տեղադրվում է Մակեդոնիայի կենտրոնում, իսկ Բելզետիան՝ նույնացվում է հարավային Թեսալիայում գտնվող ժամանակակից Վելեստինո քաղաքի հետ: Սլավոնական վելիպիտներ ցեղի բնակվելու վայրը ցույց են տալիս Թեսալիայում, Թեբեի և Դիմիտրիադայի մոտ (տե՛ս Липшац, Очерки, стр. 30, 43, ծանոթ. 81: Տե՛ս նաև՝ Извори, том VI, стр. 278, прим. 2):
905. Կարելի է և քեռորդի թարգմանել:
906. Բոյիլասների ընտանիքը հայտնի էր Բյուզանդիայում: Անունը բուլղարական ծագում ունի՝ «բոյարին» տիտղոսն է, որ վերածվել է հատուկ անվան: Կոստանդին Բոյիլասը բյուզանդական աղքատներում հիշատակվող այդ նշանավոր ֆեոդալական ընտանիքի առաջին ներկայացուցիչն է: 923 թ. հիշատակվում է այդ ընտանիքի երկրորդ ներկայացուցիչը՝ Խաղաթի զորավար Վարդաս Բոյիլասը, որից հետո նրանց

- բաղմաթիվ անդամներ են հիշված, որոնք կարևոր դեր են խաղում Բյուզանդական կայսրության կյանքում: Նրանցից Եվստաթիոս Բոյիլասը XI դ. կեսերին հաստատվել էր Տայք-կղարչքում: Տոհմի մասին մանրամասն տե՛ս Քարքիկյան, Բոյիլասի կտակը, էջ 397 և հտ.:
907. Բնագրում հոգնակի է՝ Καπαδοχία: Վաղ շրջանի վերապրուկ է: Դեռևս Հուստինիանոս I-ի ժամանակ գոյություն ունեին Առաջին և Երկրորդ Կապադովկիաներ:
908. Բնագրում՝ Ίερω: Ի փոքր առաջ Թեոփանեսը հիշատակում է Ίερωս պալատը: Չշխոթել իրար, քանզի տարբեր պալատներ են:
909. Բնագրում՝ αὐτοκρατορία: Որպես կանոն նշանակում է հարկ, մաքս: Տե՛ս և ծանոթ. 953:
910. Համապատասխանում է ժամանակակից պրեմիեր մինիստրին (տե՛ս Beck, Der „Ministerpräsident“):
911. Կարողոսի ձգտումը ամուսնանալ տարիքն առած Իրենեի հետ, հարկավ, ուներ քաղաքական զրգապատճառներ: Նա երազում էր դառնալ վաղեմի Հռոմեական կայսրության երկու կեսերի միահեծան կայսրը: Այդ բանին դիմադրում էր ոչ միայն պատրիկ Աեսիոսը (այն էլ իբրև թե իշխանությունն իր եղբոր համար զավթելու միտումով), այլ բյուզանդական ողջ ավագանին: Այդ էր պատճառը, որ Իրենեն անհապաղ զահրեկեց արեցին (802 թ. հոկտեմբերի 31-ին և աքսորեցին Իշխանաց կղզու մի վանքը՝ Կարողոսի դեսպանների աչքի առջև): Հարցի մասին տե՛ս Tsirpanlis, Byzantine Reactions, p. 353—355:
912. Նիկեփոր I կայսրը (802—811): Նախապես վարում էր գենիկոնի լոգոթետի պաշտոնը, որի մասին տե՛ս Կոստանդին Միքանաձին, էջ 291—292:
913. Ընդունված կարգի համաձայն կայսրը հաղնում էր կարմիր կոշիկներ:
914. Դրամի փոքրագույն միավորը: Երկու Օբոլոսը հավասար էր մեկ ֆոլլի (փող), 12 ֆոլլը՝ մեկ միլիարեսիոնի, 12 միլիարեսիոնը՝ մեկ ոսկեդրամի:
915. Մականունը դեռ ոչինչ չի ասում: Նա, անկասկած, հայազգի էր: Նրա մասին տե՛ս Ալիշան, Յուշիկք, հտ. Բ, էջ 310—331: Ալիշանը նրան անգամ բյուզանդական օրինավոր կայսր է համարում:
916. Թեոփանեսը 6194 թ. տակ ցույց է տալիս, թե որոնք էին Պերատիկա բանակաթեմերը՝ Անատոլիկոնն ու Օպսիկիոնը:
917. Ժամանակակից Ուսկյուդարը, Կոստանդնուպոլսի ասիական ափին:
918. Այսինքն՝ Կոստանդնուպոլսի շուրջը:
919. Լիկաոնիա, տեղանվան և Λύκος (լիկոս) «գալլ» բառի բառախաղ:
920. Իմա՝ սբ. — Սոֆիայում:
921. Մի այլ տեղում Թեոփանեսը վայրը տեղադրում է Օպսիկիոն բանակաթեմում: Գտնվում էր բյուզանդական ուղղմական հանապարհի վրա՝ Միդեոնից անմիջապես արևելք, Տեմբրիս գետի ափին (Ramsey, HGAM, p. 144, 435):
922. Բնագրում՝ ἐκτίσει, կառուցեց, բայց հավանաբար ամրացրեց, պարսպապատեց (Թերասայի մասին տե՛ս ծանոթ. 891): Անդրաստուր գտնվում էր Կալիկադոնոս գետի վրա, Թերասայից հարավ-արևմուտք: Արաբական աղբյուրներում կոչվում է Դսուլ-լ-կալա (Ramsey, HGAM, p. 354):
923. Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեփոր I (806—815): Պահպանվել է նրա կենսագրությունը, գրված իր աշակերտ, սարկավազ Իզնատիոսի կողմից (Nicephori Vita, col. 41—168): Նիկեփորը հայտնի է ոչ միայն որպես եկեղեցական ու քաղաքական գործիչ, նա նշանավոր պատմիչ էր: Մնվել է Կոստանդին V-ի թա-

գավորության ժամանակ (741—775): Սկզբնական շրջանում արքունի գրադիր էր: Մասնակցեց 787 թ. եկեղեցական ժողովին, բայց այնուհետև բաշվեց վանք, որտեղից և նիկեոսի կայսեր առաջարկությամբ դարձավ Կոստանդնուպոլսի պատրիարք: Լեոն Հայկազնի ժամանակ 815 թ. գումարված եկեղեցական ժողովում կարգալույծ արվեց և աքսորվեց իր հիմնադրած վանքը, ապա մի ուրիշ վանք, ուր և վախճանվեց 829 թ.:

Կարևոր են նիկեոսի երկու փոքր պատմական երկերը: Մեկը՝ «Համառոտ ժամանակագրություն»՝ Ադամից մինչև 829 թ. (միջնադարում այն թարգմանվել է ռուսերեն՝ «Летописец вскоре» վերնագրով: Մատենադիտությունը տե՛ս Пломровская, К^о изучению «Летописца вскоре», стр. 170—177: Նույնի՝ О времени перевода «Летописца вскоре»: Մյուսը՝ «Համառոտություն պատմության»՝ Մավրիկիոս կայսեր մահից (602) մինչև 769 թ.: Վերջին գործը Փոտ պատրիարքը շատ բարձր է գնահատել: Նիկեոսի պատրիարքի և նրա պատմական երկի մասին տե՛ս Липшиц, Никифор, стр. 85—105: Նրա պատմական երկը հրատարակվել է բազմիցս: Ծ. է. Լիպշիցը իրականացրել է նաև նրա ոտանոթները թարգմանությունը: Տե՛ս «Византийский Временник, том III, стр. 349—382»:

923ա. Ատուդիոսի վանքը կառուցել էր պատրիկ Ատուդիոսը, Լեոն I կայսեր ժամանակ (457—474) և նվիրել սր. Հովհաննես Մկրտչին: Վանքը այժմ վերածվել է մզկիթի, որ կոչվում է Միրահորջամի, Կոստանդնուպոլսի արևմտյան մասում, Սամաթիայից հարավ (Janin, Cons. byz., p. 395—396):

924. Եպիսկոպոս (վերադիտող) բառը օգտագործվում է այստեղ պատրիարք իմաստով:

925. Բնագրում՝ Ἡρακλῆως κατὰ τρον (κατὰ τρον բառը միջնադարում նշանակում էր նաև պարսպապատ քաղաք և ընդհանրապես՝ քաղաք): Միջայել Ատտալիատեսը (Attaliates, p. 136) այն կոչում է Ἡρακλῆος κατὰ πόλιν (Հերակլեսի գյուղաքաղաք, ավան): Արարների՝ Հերակլան, Իրն Բիրիի մոտ՝ էրակլիյա, ժամանակակից էրեզլին Անատոլիայի հարավ-արևմուտքում, Կոնիայի վրայից: Բյուզանդական ժամանակաշրջանում սահմանային ամրություն էր՝ Իկոնիայից դեպի Կիլիկիա տանող ճանապարհի վրա: Հարուն առ-Ռաշիդը այն գրավեց 806 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, սակայն մնաց Բյուզանդական կայսրության կազմում մինչև 1091 թ., երբ ընկավ սելջուկ-թուրքերի ձեռքը: Տե՛ս J. H. Mordtmann-Fr. Tauschner-ի հոդվածը Encyclopédie de l'Islam-ում, հտ. II, p. 723: Դեպքի մասին հատուկ տե՛ս Canard, La prise d'Heraclee:

926. Ժամանակակից Մելիգորը Կապադովկիայում, Տիանայից հյուսիս, Նազիանզոսից փոքր արևելք, Հերակլիա-Կյուրիստրայի հետ կարևոր ստրատեգիական վայր էր այս շրջանում: Հիշատակված է անգամ բյուզանդական «Իրեզնիս Ակրիտաս» էպոսում: Արարական աղբյուրներում կոչված է Կունիա կամ Մալիուենիա (տե՛ս Ramsey, HGAM, p. 354):

927. Արարական աղբյուրներում՝ Սաֆսաֆ:

928. Բնագրում՝ ἰστορήσας: Թարգմանում ենք ենթադրաբար Անաստասիոս Բիրիոսիեկարիոսը գրում է et hac visa.

929. Պրոսպիրոս հունարեն նշանակում է «օտար», «եկվոր», «զրսեցի», և հանդիպում է առաջին անգամ Սուրբ Գրքի Յոթանասնից թարգմանության մեջ: Այդ բառը համապատասխանում է երբայեցներենի «զեր»-ին: «Գեր»-ը հունարենում թարգման-

ված է նաև «պարիկոս» (տե՛ս ծանոթ. 949), և հակադրվում է «ավտոթիթոն», «բր-նիկ», «տեղացի» հասկացություններին: Նշանակում է նաև «հրեադավան», ինչպիսիք և այդ դավանանքն ընդունած: Հայերեն Աստվածաշնչում այն թարգմանված է «եկթ» (Գործք, Բ, 11), «եկն» (Գործք, Զ, 5) «եկամուտք» (Գործք, ԺԳ, 43), իսկ «պարիկոսը»՝ «պանդուխտ»:

930. Բառախաղ Χριστός (Խրիստոս) անվան և χριστός (խրիսոս) սակի բառի:

931. Հավանաբար նույնանում է Հումայդ իբն Աբդ ալ-Համիդ ալ-Թուսիի հետ, արբասյան զորավարի, որը գլխավոր դերը խաղաց ալ-Մամունի (813—833) հաղթանակին ընդդեմ Իբրահիմ իբն ալ-Մահդիի: Նրան թունավորեցին 825 թ.: Մի շարք բանաստեղծներ ներբողել են նրա մեծագործությունն ու փառավորությունը (տե՛ս Encyclopédie de l'Islam, t. III, p. 592—593):

932. Նկատի ունի ծովագնացների պաշտպան սրբին:

933. Հյուսիսայի նշանավոր քաղաք, որ Թեոդոսիոս II-ի օրոք դարձավ նահանգի մայրաքաղաքը: Նույն կայսրն էր սբ. Նիկողայոսի մեծ տաճարի կառուցողն այնտեղ:

934. Աբու Մուսա Մուհամմադ ալ-Ամին իբն առ-Ռաշիդ (809—813): Ըստ Մովսես Կաղանկատվացու (էջ 334) «Մահմատ՝ որդի Հարունայ, ամս երեք. Հարուն՝ մինչ կենդանի էր, բաժանեաց զիշխանութիւնն երկուց որդուց իւրոյ՝ Մահմատայ և Մայմունայ. ի ստեղծեցութեանն ունէր Մահմատ զիշխանութիւնն ի Բաղդադ և ի Խորասան և Մայմուն ընդ հակառակս նմա եղեալ պատերազմաւ՝ մեռնի Մահմատ...»:

935. Խոսքը «Աբդալլահ, որ և Մայմունն կոչէր» (Կաղանկատվացի, էջ 334) անձնավորություն մասին է, որ հետագայում սպանելով եղբորը, դարձավ խալիֆա: Սա Մամուն խալիֆան է:

936. Իմա՝ Երուսաղեմում:

937. Ըգնավորական շարժման սկզբնական շրջանում լավրա էին կոչվում այն վանքերը, որտեղ յուրաքանչյուր վանական ապրում էր առանձին խցում:

938. Թեոդորոս Ստուդիտեսը (759—826) վանական դարձավ Սակկուդիոնի վանքում, Ստուդիոսի վանք փոխադրվեց 798 թ.: Մասնակցություն ունենալով կրոնական և քաղաքական տականքայություններին, երեք անգամ արսորվեց: Վերադարձավ Միքայել II-ի օրոք (820—829): Հունական եկեղեցու նշանավոր հեղինակներից ու բանաստեղծներից է: Կաղմեց Ստուդիոսի վանքի կանոնադրությունը: Ստուդիոսի վանքը նրա օրոք գրչության մեծ կենտրոն էր: Պայքարել է պետության միջամբտության դեմ՝ եկեղեցական գործերին: Երգվյալ պատկերապաշտ էր:

939. Կիրիակիդիսի կարծիքով Ստրիմոնի բանակաթեմը ստեղծվեց 789 և 809 թթ. միջև, մոտավորապես այն ժամանակ, երբ ստեղծվեց և Մակեդոնիայի բանակաթեմը (789—802), ամենայն հավանականությամբ Իրենե կայսրուհու օրոք (Κυριακή (ἡ) ἡ, Τὸ Βαλερύ, 399—400):

940. 72.720 սակեդրամ:

941. Բուլղարների նշանավոր խան Կրումը, հարստության հիմնադիր (803—814): Նշենք, որ Թեոփանեսը բուլղարների իշխանին որպես կանոն անվանում է «տեր» (χόρτος) և «իշխան» (ἄρχων): Միայն կրումին է, որ կոչվում է «առաջնորդ» (ἡγετική):

942. Ժամանակակից Սոֆիա քաղաքը:

943. Հետևաբար՝ Պիսկա քաղաքում:

944. Իմա՝ primiscrinus:

945. Թարգմանաբար նշանակում է «անցում», որտեղից նախերն անցնում էին Ոսկեդջյուրը՝ Սիկե (Գալաթա) գնալու համար։ Նրա տեղում այժմ կամուրջ է կառուցված։
946. Մանրամասն տեղեկություններ է տալիս Կոստանդին Միրանաժինը։ Իր «Կայսրության կառավարման մասին» աշխատության 49-րդ գլուխն ամբողջովին նվիրված է խնդրո առարկա դեպքերին։ Կայսրը գրում է Պելոպոնեսի սլավոնների ապստամբության մասին, որոնց օգնության էին եկել Աֆրիկայի սարակինոսները։ Ապստամբությունը 805 թ. ճնշեց Պելոպոնեսի զորավարը, որ Կորնթոսում էր նստում։ Նրա մասին ավելի հստակ վկայում է «Մոնեմվասիայի ժամանակագրությունը», որտեղ գրված է, որ «Պելոպոնեսի զորավարի» պաշտոնը վարող և «Փոքր Հայքից ծագող մի զորավար, Սկլերոս մականվանյալ ընտանիքից» (ենթադրվում է, որ խոսքը լեոն Սկլերոսի մասին է, որ հիշատակված է «Scriptor Incertus de Leone Armenio», p. 335 երկում) նիկեփոր I կայսեր օրոք պարտության մատնեց Պելոպոնեսի սլավոններին։ Նիկեփոր կայսրը Տարասիոս պատրիարքի օրոք, իմանալով այդ մասին, ի հիմանց վերականգնեց Պելոպոնեսի Պատրա քաղաքը, ինչպես և Լակեդեմոն քաղաքը, որտեղ բնակեցրեց «Քաֆիրներից (Καφερινοί), Քրակեսիոնի հայերից և այլ շրջաններից ու քաղաքներից բերված բնակչություն»։ Սա Սկլերոսների հայկական ընտանիքի հնագույն ներկայացուցիչն է՝ աղբյուրներում հիշված (տե՛ս Lemerle, La chronique de Monemvasie, p. 10, նաև 26։ Տե՛ս նաև՝ Selbst, Die Skleroi, S. 19—20)։
947. Բնագրում՝ ἀλλήλας γύρωσ: Նիկեփոր կայսրը փաստորեն կյանքի կոչեց վաղ Բյուզանդիայում գոյություն ունեցող էպիրոսի (ἐπιρώτι) ինստիտուտը։ Թեոփանեսի վերահիշյալ հիշատակությունը հաստատում է, որ, համեմայն դեպս, VIII դարում էպիրոսի կարգը գոյություն չուներ (Καждан, О феодальной собственности, стр. 61)։ Ուսումնասիրողների մի մասը կարծում է, որ Թեոփանեսի ἀλλήλας γύρωσ-ը տեխնիկական նշանակություն չունի։ Թատրագորսկին տեխնիկական է համարում (Ostrogorsky, Histoire, p. 218 և ծանոթ. 1։ նաև նույնի՝ 'Ιστορία, σελ. 261, ծանոթ. 104)։
948. Քսանչորս կերատիոնը հավասար էր մեկ ոսկեդրամի՝ նոմիզմայի։ Հմմտ. և Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 254. «Գլխի ԻԳ կերատաց լինի դահեկան մի»։
949. Աստվածաշնչում «պարիկոս» և «պրոսելիտ» բառերը հանդես են գալիս որպես հոմանիշներ (երբայցեքեն «գեր» բառը՝ «եկվոր», ոչ տեղացի, թարգմանված է և՛ «պրոսելիտ», և՛ «պարիկոս» (Գործք, է, 6, է, 29, եփես. Բ, 19, Ա Պետրոսի, Բ, 11)։ Նկատի առնելով այն հանգամանքը, որ Թեոփանեսը «պրոսելիտ» և «պարիկոս» բառերը հիշում է կողք կողքի, կարծես ինքն էլ է դրանք հոմանիշ համարում, որով կարող ենք եզրակացնել, որ նա «պարիկոսի» տակ անպայման տեխնիկական տերմին չի ենթադրում այլ օգտագործում է այն իմաստով, ինչ օգտագործված է Աստվածաշնչում՝ եկվոր, ոչ տեղացի, պանդուխտ (Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ հունարեն պարիկոսն ամենուր պանդուխտ է թարգմանված)։ Ըստ Կաթողանի, Թեոփանեսն այստեղ բառն օգտագործում է որպես տեխնիկական տերմին՝ սոցիալական կատեգորիայի բովանդակությամբ, նա առաջին բյուզանդական հեղինակն է, որ հիշատակում է «պարիկոս» տերմինը (տե՛ս Καждан, Об аграрных отношениях, стр. 106։ նույնի՝ Деревня и город, стр. 94)։ Սյուդյուսովը «պարիկոս» բառի տակ չի տեսնում տեխնիկական տերմին, բայց պարիկոսներին համարում է վանքերից կերակրվող շրավորներ (Сюзюмов, Проблемы иконо-

борчества, стр. 77, ծանոթ. 38): Հստ կիպչիցի, IX դ. պարիկոսներն իրենց կախվածությամբ նման էին վաղ շրջանի կոլոններին, երբ ձևավորվում էր ֆեոդալական տիպի կախվածությունը, որ օրենսդրության մեջ IX դ. պարիկոսները նման են ավելի ուշ շրջանի ճորտ պարիկոսներին և որ Թեոփանեսը այստեղ նկատի ունի ֆեոդալական կախման մեջ գտնվող գյուղացիների (Липшиц, О значении термина парик, стр. 74—76), որ հիշյալ բարեգործական հաստատություններում շահագործվում էր պարիկոսների աշխատանքը (Липшиц, Очерки, стр. 85), և բացառված չէ, որ նրանք օգտագործվում էին նաև այլ մասնատիրական հողերում (նույն տեղում, էջ 118): Պարիկոսների մասին ընդհանրապես տե՛ս Каждан, Деревня и город, стр. 94—98: Նույնի՝ Формирование поместья: Նաև Сметанин, О статусе париков, стр. 7—11, ուր և մանրամասն մատենագիտություն:

950. Բնագրում καπνικά (καπνός բառից, որ ծուխ է նշանակում): Հստ էության գլխահարկ էր, որ գանձվում էր յուրաքանչյուր ընտանիքից: Բյուզանդական հեղինակներից Թեոփանեսն առաջինն է, որ հիշատակում է այն: Կապնիկոնը հողահարկի հետ կազմում էր այս ժամանակաշրջանում պետության հիմնական եկամուտը: Այդ հարկը գոյություն ուներ և նիկեփորից առաջ, միայն այժմ այն տարածվում էր գյուղացիների որոշ խավի վրա, որը նախապես ազատված էր ներանից (Ostrogorsky, Histoire, p. 217): Թեոփանեսի Շարունակողի տվյալներով IX դ. 20-ական թվականներին այն կազմում էր երկու միլիարեսիոն (Theophanes Cont., p. 54: Արժաթ միլիարեսիոնը կազմում էր մեկ ոսկեդրամի 1/12 մասը): 1073 թ. մի փաստաթղթում ծխահարկը (սինոնայի հետ միասին) արգեն կազմում էր 1/4 դահեկանից մինչև մեկ դահեկան, բայց իրականում հասնում էր մինչև չորս դահեկան (Каждан, Деревня и город, стр. 147): Կապնիկոնի մասին հիշատակում են նաև Իրն Խաուկալն ու Իրն Խորդադրենը: Տե՛ս Каждан, Деревня и город, стр. 145—146: Նաև Липшиц, Очерки, стр. 127, Υανπορούλος, La société, p. 223—224:

951. Այսինքն կուրատորի (կայսերական տան ու կալվածների հոգացող պաշտոնյայի) իրավասությունը:

952. Յուրաքանչյուր ստրկի համար վաճառականը տալու էր երկու դահեկան հարկ, այսինքն՝ մոտ 10 տոկոսով ավելանում էր ստրուկների գինը: Ստրուկների գնացուցակը հայտնի է, նրանց մասին մանրամասն տե՛ս Բաբրիկյան, Նվաստաթիոս Բոյիլասի կտակը, էջ 423—424, 427—428: Նաև՝ Ostrogorsky, Histoire, p. 218 և ծանոթ. 2: Այս շրջանում ստրուկների աշխատանքի օգտագործման և ստրկավաճառության մասին տե՛ս Липшиц, Очерки, стр. 119 և հտ.: Ստրուկները գտնվում էին հասարակական սանդուղքի ամենացածր աստիճանի վրա (նրանցից բարձր գտնվում էին պարիկոսները, միսթիոսները (վարձկան), ապրները (չքավոր, աղքատ) և մորտիտները), և օգտագործվում էին հատկապես տնային տնտեսության մեջ:

953. Բնագրում՝ κορυμείριον: IX դ. այդ բառի տակ ենթադրվում էին երկու տեսակի կողմնակի հարկեր՝ հարկ առուծախից և հարկ շրջանառությունից: Թեոփանեսն այստեղ նկատի ունի հարկի երկրորդ տեսակը (տե՛ս Липшиц, Очерки, стр. 80): Ստացվում է 16³/₄ տոկոս (տե՛ս Ζαχαρίας, Βοζάντιον, σελ. 44): Նիկեփոր I-ի այս «տասերորդ» միջոցառման մասին կա հատուկ ուսումնասիրություն: Տե՛ս Cassimatis, La dixième «vexation», p. 154 և հտ.: Նաև՝ Frances, Le commerce maritime, p. 41—47:

954. Հավանաբար ժառանգելու իրավունքից զրկելու միտումով անմիջական ժառանգներին հեռավոր ազգականի ստատուսը տվեց:
955. Մոմ պատրաստող:
956. 7200 ոսկեդրամ:
957. Պաշտոնական եկեղեցին ամեն ջանք թափում էր պավլիկյաններին մանիքեցի համարելու ոչ միայն որովհետեւ, իրոք, այդ երկու հերձվածների գաղափարախոսության մեջ կային բնդհանուր գծեր (օրինակ՝ աստվածաբանական դուալիզմը), այլև որպեսզի պավլիկյանների դեմ օգտագործի մանիքեցիների դեմ գրված ամբողջ գրականությունը, բնդունված օրենսդրությունը: Այնինչ պավլիկյաններն ամեն կերպ մերժում էին որևէ կապ մանիքեցիների հետ, հրաժարվում նրանց գրական ժառանգությունից: Հետագայում պաշտոնական եկեղեցին նույն ձևով թոնդրակեցիներին պավլիկյան էր համարում (Бартикян, Источники, стр. 103, прим. 1):
958. Աթինգանների վերաբերյալ բազմաթիվ կարծիքներ են արտահայտվել: Դե Գուեի համաձայն նրանք ժամանակակից գնչուներն են (ցիգանները) (տե՛ս De Coeje, Mémoire, p. 25—26) և հանդես են եկել IX դ.: Միշլենկոն, բնդհակառակը, մերժում է այդ կարծիքը (Мищенко, 'Αθιγγανοί: не цыгани, стр. 183—196): Նույն կարծիքին է և Սուլիսը (Soulls, The Gypsies, p. 145 և 163): Ստարրը նրանց հանդես գալը դնում է նիկեփոր I կայսեր ժամանակ (Starr, The Athinganoi, p. 93 և 101): Թեոփանեսի Շարունակողը (էջ 42) նրանց տեղադրում է Ամորիոն քաղաքում՝ հրեաների հետ: Երբ 820 թ. բռնկվեց Թովմա Գաղիրացու ապստամբությունը, Գենեսիոս պատմիչի ասելով, նրան մասնակցեցին բազմաթիվ ժողովուրդների ներկայացուցիչներ, այդ թվում նաև հայեր, պավլիկյաններ և աթինգաններ (Genesii Regum, p. 33):
959. Բնագրում՝ ἀπόβας πολιτεύεσθαι: Լիպշիցը ճիշտ թարգմանելով «беспрепятственно пользоваться всеми правами», մեկնաբանման մեջ ավելացնում է «Манихеи получили разрешение жити в столице» (ընդգծումն իրենն է) մի բան, որ Թեոփանեսի բնագրում չկա (տե՛ս նրա «Павликианское движение», стр. 56): Ինչ վերաբերում է Լիպշիցի խոսքերին, որ պավլիկյանները իրեն թի Թեոփանեսի ասելով «հենց մայրաքաղաքում զինվեցին ոչնչացնելու համար ուղղափառ հավատքը» (նույն տեղում, էջ 57), թյուրիմացություն է: Ինչպես կհամոզվի ընթերցողը, խոսքը «սուտանուն անապատական» նիկողայոսի և նրա մարդկանց մասին է, և ոչ պավլիկյանների:
- Նիկեփոր կայսեր իշխանության ժամանակաշրջանը զուգադիպում է պավլիկյանների խոշորագույն աղանդապետ Սերգիոսի (801—834) գործունեության սկզբնական շրջանի հետ, երբ իսկապես պավլիկյան շարժումն անշափ հղորացավ ու տարածվեց: Այդ տարիներին պավլիկյանների պարագլուխն էր նաև Հովսեփ-Եպափրոզիտոսը, որ շարժումը գլխավորել էր ամբողջ երեսուն տարի: Նա, խուսափելով կայսրության հալածանքներից, հաստատվել էր Փոյուգիայում և Պիսիդիայի Անտիոք քաղաքում: Ինչպես տեսնում ենք, Թեոփանեսն աղանդավորներ է գտնում Փոյուգիայում, հետևաբար նկատի ունի Հովսեփ-Եպափրոզիտոսի հենց այնտեղ հիմնադրած պավլիկյան համայնքները: Հովսեփ-Եպափրոզիտոսին հաջորդեց հայազգի Վահանը և վերոհիշյալ Սերգիոսը (Бартикян, Источники, стр. 140 и сл.):

960. Պատահական չէ, որ Նիկեփորի մահից անմիջապես հետո իշխած կայսրերը, Մի-
քայել I-ը և հատկապես Լևոն V Հայկազնը, Պետրոս Սիկիլիացու տվյալներով,
«տեսնելով, որ հոռոմների մեծ մասը վարակվել է նրանց վարդապետությունից,
հոռոմեական պետության բոլոր շրջանները հրաման արձակեցին՝ կոտորել այդ պիղծ
աղանդի հետևորդներին» (Бартукаян, Источники, стр. 148):
961. Թարգմանաբար նշանակում է «դրսի սյունաշարք»: Գտնվում էր Թեոդոսիոսի և Կոս-
տանդնի պարիսպների միջև: Հետագայում ժողովուրդը այլ կերպ ստուգաբանեց
անունը՝ «վեց սյուններ», որից էլ առաջացել է ժամանակակից «Ալթը մերմեր» (վեց
մարմարիոն) թուրքական անվանումը: Գտնվում էր ժամանակակից Սուլու մանաս-
տերից (հնում՝ Պերիբլեպոսոս) հյուսիս (տե՛ս Μ π ο υ ρ η ς, Α ι δ ι π λ α ι γ ρ α φ α ι,
σελ. 48—55):
962. Հավանաբար նկատի ունի Քրիստոսի ասույթը. «Սիրեցեա զընկեր քո իբրև զանձն
քո» (Մատթ. ԺԺ, 19, ԻԲ, 39, Մարկոս ԺԲ, 31):
963. Եվխայիտյան սր. Թեոդորոս Տիրոնի պաշտամունքային կենտրոնն էր: Հելենոպոնտո-
սի քաղաք էր Ամասիայից մեկ օր ճանապարհ դեպի արևմուտք: Մտնում էր Ար-
մենիակների բանակաթեմի կազմում: Ա. Գրեգուարը նույնացրել էր թուրքական Ավ-
քատ կամ Ավխատ գյուղի հետ, որտեղ գտնվում են բյուզանդական բազմաթիվ ավե-
րակներ (Mango-Ševčenko, Three Inscriptions, p. 379—380):
964. Աքաարը Իսրայելի թագավոր էր (IX դ. մ. թ. ա.), ընդունեց կոապաշտությունը և
հալածեց Եհովային պաշտողներին: Սպանվեց Ասորիքի դեմ պատերազմում (Գ Թա-
գաւորութեանց, ԺԶ, 28, ԻԲ, 38 և հտ. և Բ Մնացորդաց, ԺԸ, 1 և հտ.): Ֆալա-
րիսը Սիկիլիայի Ակրագանտ քաղաքի բռնակալն էր (VI դ. մ. թ. ա.), որի անունը
ատելի դարձավ այն կրոնի դաժանությունների ու գործած ոճիրների պատճառով:
Միգասը Փոյուգիայի թագավոր էր (VIII դ. մ. թ. ա.), հարուստ ու ազահ մի մարդ,
որ, ավանդության համաձայն, ինչին ձեռք էր տալիս, ոսկու էր վերածվում:
965. Զեռագրերում ամսաթիվը չի նշված: Լատիներեն թարգմանության մեջ նշված է
հուլիս ամիսը:
966. Այսինքն՝ իր թագավորության սկզբից:
967. Հմմտ. Երկրորդումն օրինաց, Բ, 30:
968. Տե՛ս Գ Թագաւորութեանց, ԻԲ, 20 (հմմտ. Բ Մնացորդաց, ԺԸ, 19):
969. Բնագրում՝ αὐλῆς: Տե՛ս ծանոթ. 758:
970. 378 թվականից (երբ Ադրիանուպոլսում վեստգոթների դեմ մղված մարտում սպան-
վեց Վաղես կայսրը), ոչ մի բյուզանդական վեհապետ թշնամու կողմից չէր սպան-
վել: Այդ պատճառով Նիկեփոր I-ի կորուստը ժամանակակիցների վրա հսկայական
սպաւորություն գործեց:
971. Այսինքն՝ Կոստանդնուպոլսի քաղաքապետին:
972. Նիկեփոր I-ի 811 թ. հուլիսի 26-ին կրած պարտության և բյուզանդական զոր-
քի կոտորածի մասին պահպանվել է մի շատ արժանահավատ ու հետաքրքիր անա-
ուն շարադրանք, որ պահպանվել է Վատիկանի մատենադարանի հունարեն ժողո-
վածուի № 2014 ձեռագրում, և առաջին անգամ հրատարակվել Իվան Գուլչևի կող-
մից (Дуличев, Нови житийски дани, стр. 147—188: Նույնի՝ La Chronique by-
zantine de l'an 811, p. 205—254: Grégoire, Un nouveau fragment, p. 417—427:

- Komnits*, Echi della bathaglia dell'anno 811, p. 313—318): հունարեն բնագրի վերջին հրատարակությունը տե՛ս *Издору*, том. VIII, стр. 11—15:
- Նիկեփոր-կրում պատերազմների մասին տե՛ս նաև *Grégoire*, L'empereur Nicéphore et Kroum, p. 261—272:
973. Սովորության մասին տե՛ս *Beševliev*, Ein byzantinischer Brauch, S. 17—21:
974. Այսինքն՝ 300 լիտր՝ 21.600 ոսկեդրամ:
975. Միքայել 1 Ռանգարե կայսրը (811—813):
976. Այսինքն՝ սբ. Սոֆիայի տաճարի հոգևորականության:
977. Այստեղ (812 թ.) Թեոփանեսը կարողութուն անվանում է արդեն ոչ թե *ρῆξ* (rex) ինչպես առաջ (A. M. 6293), այլ *βασιλεύς* (թագավոր): Նիկեփոր 1-ի և կարողութունի փոխհարաբերությունների մասին տե՛ս *Tsirpanlis*, Byzantine Reactions, p. 356 և հտ.: Բանակցությունները վարելու համար *Aquisgranum* (այժմ՝ Աախեն, կամ Aix-La-Chapelle) էին գնացել բյուզանդական կայսեր դեսպանները, որոնք կարողութունի հունարեն *βασιλεύς* հորջորջեցին: Կնքված պայմանագրի համաձայն կարողութունը բյուզանդիային, վերադարձրեց Վենետիկը և ճանաչեց վերջինիս գերիշխանությունը Դալմատիայի վրա:
978. Տետրավելը (*τετραβήλα*) Սոֆոկլեսը (տե՛ս *Greek Lexicon*) համարում է անստույգ բառ: Բաղկացած է *τετρα-* (չորս) և *βῆλον* (լատ. *velum*, առաջաստ, վարագույր, եկեղեցու բեմի վարագույր, դրոշ) բառերից: Լատին (Patristic Lexicon, p. 1389) թարգմանում է *square veil* (քառակուսի քող, ծածկոց):
979. Քրիստոսի ծննդյան տոներ՝ դեկտեմբերի 25:
980. Իգնատիոս Սարկավազի ասելով, Նիկեփոր պատրիարքը կայսեր համար պալլիկյանների վերաբերյալ հատուկ գիրք է գրել, որտեղ մանրամասն խոսք էր լինում աղանդավորների գաղափարախոսության մասին (*Nicephori Vita*, col. 69): Այդ գործը չի պահպանվել:
981. Տե՛ս Գործք առաքելոց, Ծ, 1—5:
982. Հմմտ. Ա. Հոովմ. Ա, 32:
983. Միքայել 1-ի հալածանքների մասին խոսում է և Պետրոս Սիկիլիացին, որի համաձայն կայսրը, տեսնելով, որ այդ աղանդը վարակել է քրիստոնյաների մեծ մասը, հոռմեական կայսրության բոլոր շրջանները պատժիչ արշավախմբեր ուղարկեց աղանդավորներին կոտորելու: Միքայելի հրամանը հասավ և Արմենիականների բանակաթեմը: Աղանդավորները, սպանելով հալածանքների կազմակերպիչներ Նեոկեսարիայի եպիսկոպոս Թովմասին և էքսարքոս Պարակոնդակեսին, փախան Մելիտենե, որի ամիրայից ստանալով Արգուվան քաղաքը, հաստատվեցին այնտեղ (*Бартукаѣ, Источники*, стр. 148):
984. Ռոդոսառոյից 32 կմ հյուսիս-արևելք, այժմ կոչվում է Զորլու՝ արևելյան Թրակիայում: Հնում կոչվում էր *Տյուրոլոն*:
985. Դերելտոս քաղաք արևելյան Թրակիայում: Հիշվում է դեռևս Պլինիոսի կողմից: Նրա միջով էր անցնում Կոստանդնուպոլսից Անքիալոս և Դանուբ տանող ճանապարհը:
986. Տաքսատոսը (կամ տաքսատիոն): Տե՛ս ծանոթ. 231:
987. Խոսքը Թրակիայի նիկիա քաղաքի մասին է: Կոչվում էր նաև Փոքր Նիկիա, տարբերվելու համար Բյուսթանիայի նիկիայից: Ընդամենը անվանումը Նիկե է (*Νίκη*): Արևելյան Թրակիայի քաղաք՝ Ադրիանուպոլսի և Արկադիուպոլսի միջև, Ադրիանու-

- պոլսից Կոստանդնուպոլիս տանող ճանապարհի վրա: Կառուցել է Կոստանդին Մեծը ի պատիվ Լիկինիոսի դեմ տարած հաղթանակի (323):
988. Ֆիլիպպոպոլիսը այժմյան Պլովդիվն է Բուլղարիայում, Ֆիլիպպեն՝ քաղաք արևելյան Մակեդոնիայում, Կավալայի և Դրամայի միջև, անտիկ շրջանի Կրենիդեսը:
989. Տետրադիտներ (հավանաբար՝ quartodecimani) էին կոչվում Ջատիկը հրեաների հետ երբայական նիսան ամսի 14-ին նշող քրիստոնյաները:
990. Նկատի ունի Կոստանդին V-ին:
991. Ընթադրաբար նույնացնում են ժամանակակից Բանդերմայի հետ (Mango—Ševčenko, Three Inscriptions, p. 389):
992. Կղզի Մարմարայի ծովի հարավ-արևմուտքում, անտիկ շրջանի Օֆիուսան (թուրք. Արարլար):
993. Հայազգի Լեոնը, ապագա Լեոն V Հայկազն կայսրը (813—820):
994. Արաք զորավար Ֆարիտ իրն նասր իրն Մալիքը: Թեոփանեսը մի այլ Թեբիաի հիշում է 6236 թ. տակ:
995. Բուլղար պատմաբանների մի մասը (Գ. Բալաշչև, Վ. Զլատարսկի) գտնում է, որ Թեոփանեսը ճիշտ չէ, ելք գրում է, թե 716 թ. խնդրո առարկա պայմանագիրը կրեքվեց Կորմեսիոսի հետ: Նրանց համաձայն այն կնքել է խան Տերվելիսը, քանզի վերջինս 718—719 թթ. դեռևս իշխանության գլուխ էր կանգնած: Վ. Բեշևլիևը, ընդհանրապես, Թեոփանեսի տվյալները արժանահավատ է համարում, քանզի Մադարայի արձանագրության հիման վրա ապացուցել է, թե 716 թ. Բուլղարիայի խան էր Կորմեսիոսը (Бешевлиев, Мадарският конник, стр. 71—72: Տե՛ս նաև Цанкова-Петкова, О територии, стр. 125: Նույնի՝ Bulgarians and Byzantium, p. 42—43): Թեոդոսիոս Ադրամիտենոսը Թեոդոսիոս III կայսրն է (715—717), Գերմանոս պատրիարքը աթոռակալել է 715—730 թթ.: Հետևաբար պայմանագիրը կնքվել է 716 թ. կամ 717 թ. սկզբին: Հարցի մասին տե՛ս և Цанкова-Петкова, Българо-византийските отношения, стр. 168 и сл.
996. Գրության այդ ձևը թարգմանաբար նշանակում է «հնձորենու այգիներ»: Թրակիայի Մելեոսները, որ տեղանունն է համարվում, ճշտությամբ չեն տեղադրված: Այն հանդիպում է միայն ու միայն Թեոփանեսի երկում, այն էլ ըստ ոմանց աղավաղված ձևով, քանզի իրականում պիտի կարդալ ἀπὸ μελιῶν τῆς Θράκης, որ նշանակում է «Թրակիայ իմդոնանշաններից» (Цанкова-Петкова, О територии, стр. 183):
997. Տե՛ս Յովհ. 2, 37:
998. Տե՛ս Ա. Տիմոթ., Ե, 8:
999. Հմմտ. Սաղմոս ԸԺԹ, 6. «Բազում անգամ բնակեաց անձն իմ ընդ այնսոսիկ, ոյք ատէին զողջոյն: Ես էի խաղաղարար...»:
1000. Բյուզանդիայում սիֆոն էին կոչվում հատուկ պղնձե խողովակներ, որոնցով պոմպի օգնությամբ թշնամու վրա հեղուկ կրակ էին մղում: Այդպիսի սիֆոններով էին դիմում բերդերն ու ռազմանավերը, որոնք կոչվում են սիֆոնակիր և հրակիր (հեղուկ կրակի մասին տե՛ս Կոստանդին Միքանաժին, էջ 282: Նաև DAI, II, p. 66):
1001. Իմա՝ Երուսաղեմի:
1002. Իմա՝ Գողգոթան:
1003. Տե՛ս վերը, ծանոթ. 215:

1004. Բնագրում՝ πέταλον: Անաստասիոս Բիրիթոթեկարիոսը թարգմանել է argenteo petalo: Մեր թարգմանությունը ենթադրական է:
1005. Պատկերամարտ Կոստանդին V կայսեր, որ բուլղարների դեմ բազում հաղթանակներ էր տարել:
1006. Մ. Յա. Սյուզյումովը, հիշելով Թեոփանեսի այս խոսքերը, թե Կոստանդին V-ը ձի հեծած երևաց ժողովրդին, գտնում է, որ սրանով ստեղծվեց լեգենդի սկիզբը: Հետագայում բյուզանդական էպոսի ստեղծման ժամանակ, իբրև թե, Կոստանդին V-ի կերպարը փոխարինելու եկան Անդրոնիկոս և Կոստանդին Դուկասի կերպարները (տե՛ս Сюсюмов, Проблемы иконоборчества, стр. 65): Պարզ ենթադրություն է, ոչ չէ՞ով չհաստատվող:
1007. Նկատի ունի Ասորեստանի թագավոր Սենեքերիմին, Սարգսնի որդուն, որ աչքի ընկավ իր դաժանություններով: